- ambition** *f* փառամոլություն, փառասիրություն, իշխանատենչություն, նկրտում, հավակնություն ~ territoriale տարածքային հավակնություններ
- ambitionner** *vt* ձգտել, հասնել; հավակնել, տենչալ
- âme** *f* 1. հոգի 2. բնակիչ, շունչ  $\diamond$  par ~ d'habitant բնակչության ամեն մի շնչին
- aménagement** *m* 1. տեխնիկական կառուցվածք, սարք, սարքավորում, հարմարանք 2. կարգավորում, կազմակերպում; պլանավորում, հատակագծում, նախագծում
- aménager** *vt* 1. սարքավորել; կարգի բերել, կարգավորել 2. հարմարեցնել
- amende** *f* տուգանք, տույժ  $\diamond$  frapper d'~ տույժի ենթարկել; infliger une ~ տուգանք նշանակել; mettre à l'~ տուգանել; recouvrir une ~ տուգանք բռնագանձել ~ administrative վարչական տուգանք
- amendement** *m* 1. ուղղում, բարելավում 2. փոփոխություն, շտկում  $\diamond$  apporter un ~ փոփոխություն կատարել; proposer un ~ փոփոխություն առաջարկել; accepter un ~ փոփոխություն ընդունել; repousser un ~ մերժել որևէ փոփոխություն ~ à la constitution սահմանադրության փոփոխություն ~ rédactionnel խմբագրական փոփոխություն
- ~ au traité միջազգային պայմանագրի փոփոխություն
- amender** *vt* ուղղել, ուղղումներ անել, փոփոխել, փոփոխություն կատարել, վերանայել (նորմատիվ ակտը կամ պայմանագիրը) ~ un projet նախագծի մեջ փոփոխություններ մտցնել
- amener** *vi* 1. բերել, բերման ենթարկել 2. հասցնել, տանել 3. առաջ բերել, հարուցել, պատճառել, առաջացնել ~ la conversation sur... խոսակցության մեջ շոշափել, խոսակցությունն ուղղել դեպի...
- américain** *adj* ամերիկյան
- américanisme** *m* բուռն հակում այն ամենի հանդեպ, ինչ ամերիկյան է
- ameutement** *m* 1. գրգռվածություն, հուզում, հրահրում, զայրույթ, ընդվզում, խռովություն 2. կուտակում, կիտում, խռնում (ամբոխի, ժողովրդի)
- ameuter** *vt* գրգռել; խռովություն հրահրել, վրդովվել, տագնապ, իրարանցում առաջացնել, ապստամբել; ժողովել, հավաքել (ամբոխ, ժողովուրդ)
- amicale** *f* ընկերություն, միավորում; հայրենակցական միություն; ընկերակցություն; համագործակցություն
- amiral** *m* ծովակալ
- amiralissime** *m* ռազմածովային ուժերի գլխավոր հրամանատար
- amirauté** *f* 1. ծովակալություն 2. ծովակալի աստիճան
- amitié** *f* ընկերություն, բարեկամու-

- թյուն  $\diamond$  avoir de l'~ pour զո սիրել մեկին; սերտորեն կապված լինել մեկի հետ; se lier d'~ avec զո, lier ~ avec բարեկամանալ՝ բարեկամություն հաստատել մեկի հետ  
 ~, étroite սերտ բարեկամություն  
 ~ indéfectible անխախտ բարեկամություն  
 ~ solide et durable ամուր և տևական բարեկամություն
- amnistie** *f* 1. ներում 2. ամնիստիա, համաներում  $\diamond$  accorder une ~ ներում շնորհել  
 ~ générale համընդհանուր համաներում  
 ~ judiciaire դատական համաներում  
 ~ partielle մասնակի համաներում
- amorcer** *vt* 1. *փխբ.* հրապուրել, գրավել 2. ձեռնամուխ լինել, սկսել, սկիզբ դնել  $\diamond$  s'~ նշարվել, գծագրվել, սկսվել  
 ~ un dialogue երկխոսություն սկսել  
 ~ les pourparlers սկսել բանակցությունները  
 ~ la question ձեռնամուխ լինել հարցի լուծմանը
- amortir** *vt* 1. խլացնել, հարվածը թուլացնել, բթացնել 2. մարել, ամորտիզացիա կատարել, մաշվածքամարել, դուրս գրել  
 ~ une dette պարտք մարել  
 ~ un emprunt փոխառություն մարել
- ample** *adj* 1. ընդարձակ, լայն, լայնարձակ, լայնատարած 2. առատ
- ampleur** *f* 1. լայնություն, ընդարձակություն 2. թափ, ուժ, ծավալ, ընդգրկում  $\diamond$  d'une grande ~ մեծ ծավալի, մեծածավալ; se poursuivre avec ~ լայնորեն ծավալվել; prendre de l'~ ~ թափ առնել, զարգանալ
- amplification** *f* 1. մեծացում, ավելացում, ուժեղացում, ընդլայնում 2. *փխբ.* չափազանցում
- amplifier** *vt* 1. մեծացնել, ընդարձակել; ուժեղացնել, ընդգծել (նշանակությունը) 2. *փխբ.* ուռճացնել, չափազանցնել  
 ~ une lutte պայքարն ուժեղացնել  
 ~ un scandale խայտառակությունն ուռճացնել
- amplitude** *f* 1. *հնգծ.* մեծություն; երկարություն, տարածականություն; չափ 2. ամպլիտուդա, տատանման մեծություն  
 ~ d'un bond *նազմ.* նետման երկարությունը, մեկ-մեկ կամ փոքրիկ խմբերով մի տեղից մյուսը վազելու երկարությունը  
 ~ du jet արկի թռիչքի երկարությունը  
 ~ de la journée du travail աշխատանքային օրվա տևողությունը
- analphabétisme** *m* անգրագիտություն
- analphabète** *adj* անգրագետ
- analyse** *f* վերլուծություն, ուսումնասիրություն, հետազոտություն; քննություն, քննում, գիտական գնահատություն  $\diamond$  en dernière ~ վերջիվերջո, վերջին հաշվով; porter à l'~ հետազոտել, քննության ենթարկել  
 ~ sommaire թվարկում, ցանկ, ցուցակ
- analyser** *vt* 1. վերլուծել, ուսումնա-

սիրել, հետազոտել 2. քննարկել  
**analytique** *adj* վերլուծական  
**anar** *m* անիշխանական (anarchiste  
 բառի կրճատ ձևը)  
**anarchie** *f* 1. անարիսիա, իշխանու-  
 թյան բացակայություն, անիշ-  
 խանություն 2. անկարգություն,  
 քաոս, անարիսիա  
 ~ de la production արտադրու-  
 թյան անարիսիա  
**anarchiste** *m* անարիսիստ, անիշխա-  
 նական  
**ancestral**, -e *adj* 1. պապական, նախ-  
 նիների, նախապապերի 2. հին,  
 հնադարյան 3. ատավիստական  
**ancêtres** *m pl* նախնիներ, նախա-  
 պապեր  
**ancien**, -ne *adj* 1. հին, հնադարյան,  
 հինավուրց, վաղեմի 2. նախկին  
 ◇ l'Ancien Régime հին վարչա-  
 կարգ, թագավորական վարչա-  
 կարգ Ֆրանսիայում  
**anciens** *m pl* *խսկց.* նախնիներ;  
 ծերունիներ  
**ancienneté** *f* 1. հնություն, անցյալ  
 ժամանակներ 2. ստաժ, երկա-  
 րամյա ծառայություն ◇ de toute  
 ~ անհիշելի ժամանակներից  
 prime d'~ հավելում երկարամյա  
 ծառայության համար  
**ancre** *f* խարիսխ  
 ~ de salut վերլուծության խարիսխ,  
 վերջին հույս  
**ancré**, -e *adj* խարսխված, ամրա-  
 պնդված ◇ une idée ~e ամուր  
 նստած միտք  
 ~ dans ses préjugés նախապաշա-  
 րումների մեջ թաղված, նախա-  
 պաշարումներով կապված  
**anéantir** *vt* 1. ոչնչացնել, վերացնել,

քնացնել 2. սպանել (բարոյա-  
 պես), ճնշել  
**anéantissement** *m* 1. ոչնչացում 2.  
 հոգեկան ճնշվածություն  
**angarie** *f* *ղվնգ.* անգարիա (ռազմա-  
 կան գործողություններ իրակա-  
 նացնող պետության կողմից այլ  
 երկրներին (սովորաբար չեզոք)  
 պատկանող տրանսպորտային  
 միջոցների զավթում՝ ռազմական  
 գործողություններում օգտագոր-  
 ծելու նպատակով)  
**angle** *m* անկյուն ◇ aplanir les ~s սուր  
 անկյունները հարթել; sous cet ~  
 այդ անկյան տակ  
**anglo-américain**, -e *adj* անգլոամե-  
 րիկյան  
**anglo-saxon**, -ne *adj* անգլոսաքսո-  
 նական  
**animation** *f* ոգևորություն, ոգե-  
 շնչում; խանդավառություն, կայ-  
 տառություն, աշխուժություն,  
 կենդանություն  
**animé**, -e *adj* աշխույժ, կենդանի;  
 ոգևորված, խանդավառված,  
 ոգեշնչված ◇ débats ~s աշխույժ,  
 կենդանի քննարկումներ; dis-  
 cours ~ ոգեշունչ ելույթ, խանդա-  
 վառ ելույթ  
**annal**, -e *adj* տարեկան, տարվա,  
 միամյա, մի տարվա  
**annales** *f pl* տարեգրություն, ժամա-  
 նակագրություն; տարեգիրք  
**annaliste** *m* տարեգիր  
**année** *f* տարի, թվական  
 ~ qui court, ~ en cours, ~ courante  
 ընթացիկ տարի  
 ~ d'exercice բյուջետային տարի,  
 ֆինանսական տարի  
 ~ passée, ~ dernière անցյալ տարի

- ~ *prochaine* եկող տարի
- annexe** *f* հավելված, առդիր, լրացում, կցում (պայմանագրին, ակտին և այլն)
- ~ *de douane* մաքսային կես
- ~ *d'un traité* միջազգային պայմանագրի հավելված
- annexer** *vt* 1. միակցել, բռնակցել, բռնազավթել 2. կցել, ավելացնել (փաստաթղթին)
- annexion** *f* *դվնգ.* միակցում, բռնակցում, բռնազավթում, անեքսիա (այլ պետությանը պատկանող տարածքի բռնի միացում, զավթում)
- annihilable** *adj* արգելման ենթակա, վերացման ենթակա, չեղյալ հայտարարելի
- annihilation** *f* 1. ոչնչացում, բնաջնջում 2. վերացում, չեղյալ հայտարարելը
- annihilator** *vt* 1. ոչնչացնել 2. չեղյալ հայտարարել, վերացնել
- anniversaire** *m* տարեդարձ
- annoncer** *vt* հայտարարել, հաղորդել, հայտնել, տեղեկացնել, ծանուցել, զեկուցել; ազդարարել, ավետել
- annuaire** *m* տեղեկատու, տեղեկագիրք; տարեգիրք, տարեկան ամփոփագիր, միամյա հանդես
- ~ *diplomatique* դիվանագիտական տեղեկագիրք
- ~ *statistique* վիճակագրական տեղեկագիրք
- annuel**, *-le* *adj* տարեկան, ամենամյա
- annulation** *f* 1. ոչնչացում, վերացում 2. *դվնգ.* պայմանագրի անուլացիա՝ չեղյալ հայտարարում՝
- անվավեր համարում
- annuler** *vt* 1. ոչնչացնել, վերացնել 2. չեղյալ հայտարարել, անվավեր համարել, արգելել, չկայացնել
- ~ *un scrutin* քվեարկությունը չեղյալ հայտարարել
- anonymat** *m* 1. անանուն բնույթի, առանց հեղինակի անվան, ծպտյալություն 2. դիմագրկություն  $\diamond$  *garder l'~* պահպանել անանուն բնույթը
- anonyme** *adj* անանուն, անհայտ; անստորագիր  $\diamond$  *société ~* բաժնետիրական ընկերություն; *foule ~* անդեմ ամբոխ; անհայտ մարդկանց հավաքույթ
- antagonisme** *m* հակամարտություն, անտագոնիզմ, թշնամանք, անհաշտ հակասություն
- ~ *es de classe* դասակարգային հակասություններ
- antagoniste** *m* հակառակորդ, թշնամի, ախտյան
- antécédent**, *-e* *adj* նախորդող, նախընթաց, անցած; նախկին  $\diamond$  *faits ~s* նախորդող իրադարձություններ
- antécédents** *m pl* նախկին գործունեությունը, անցած կյանքը; անցյալը
- antérieur** *adj* նախորդ, նախորդող  $\diamond$  *la valeur des arrangements ~s* նախորդող համաձայնությունների ազդեցությունը
- antériorité** *f* նախորդում; առաջնություն
- antiaérien** *adj* հակաօդային  $\diamond$  *canon ~* պաշտպանական զենք; *abri ~* ռմբապաստարան
- anticipation** *f* կռահում, կանխագու-

- շակում; վաղաժամություն, վաղահասություն; նախագուշացում, կանխում; վաղաժամկետ հարձակում  $\diamond$  par ~ ժամանակից շուտ, վաղաժամկետ  
~ de service վաղաժամկետ զինվորական ծառայության ընդունվելը
- anticipé**, -e *adj* վաղաժամկետ, ժամկետից շուտ, վաղաժամ  $\diamond$  élections ~es վաղաժամկետ ընտրություններ
- anticonstitutionnel**, -le *adj* հակասահմանադրական
- antidémocratique** *adj* հակադեմոկրատական
- antifascisme** *m* հակաֆաշիզմ
- antigouvernemental**, -e *adj* հակաառավարական
- antigrève** *adj* հակագործադուլային  $\diamond$  loi ~ գործադուլները արգելող օրենք
- antihumain**, -e *adj* հակամարդկային; ոչ մարդասիրական
- antilégal**, -e *adj* հակաօրինական
- antiparlementaire** *adj* հակախորհրդարանային
- antipopulaire** *adj* հակաժողովրդական
- antiprohibitionniste** *adj* ընդդեմ արգելիչ համակարգի
- antiprohibitionniste** *m* արգելիչ համակարգի հակառակորդ
- antique** *adj* հին, անտիկ, հնադարյան, հինավուրց; հնաոճ
- antiquité** *f* անտիկ դարաշրջան, հնադար  $\diamond$  la haute ~ խոր հնադար; de toute ~ շատ հնուց, վաղուց  $\diamond$  ի վեր,  $\diamond$  ի սկզբանե
- antireligieux**, -se *adj* հակակրոնական
- antirépublicain**, -e *adj* հակահանրապետական
- antisémite** *m* հրեատյաց, հակասեմիտ
- antisémitisme** *m* հակասեմիտիզմ, հրեատյացություն
- antisyndical**, -e *adj* ընդդեմ արհմիությունների  $\diamond$  répression ~ ճնշումներ ընդդեմ արհմիությունների
- antithèse** *f* հակաբեզ, հակադրություն
- aparté** *m* առանձնագրույց, մեկուսի գրույց
- apartheid** *m* ռասայական խտրականության քաղաքականություն
- apatride** *m* անհայրենիք անձ, քաղաքացիություն չունեցող անձ
- aperçu** *m* 1. համառոտ շարադրանք; ընդհանուր ակնարկ; ամփոփում 2. դատողություն, կարծիք; դիտողություն
- aplanir** *vt* հավասարեցնել, հարթել, հարթեցնել; հղկել  
~ les difficultés դժվարությունները, խոչընդոտները վերացնել, ճանապարհ բացել
- aplatir** *vt* 1. տափակացնել; հավասարեցնել, ուղղել 2. *փխբ.* ճզմել, պարտության մատնել, ոչնչացնել  $\diamond$  s'~ 1. տափակել 2. ճկվել, կռանալ, թեքվել, սեղմվել գետնին
- aplomb** *m* 1. ուղղաձիգ դիրք 2. հավասարակշռություն 3. ինքնավստահություն, սնապարծություն  $\diamond$  mettre d'~ հավասարակշռության բերել; մանրակրկիտ մշակել; առույգացնել; remettre d'~ հավասարակշռությունը վերականգնել; վերականգնել ուժե-

- րը; հետ բերել նախկին հեղինակությունը
- apocalyptic** *adj* 1. կրոն. հայտնություն, Հովհաննոս հայտնության 2. մութ, անորոշ; այլաբանական 3. փխբ. աղետալի
- apogé** *m* փխբ. գագաթնակետ, բարձրակետ ◊ être à l'~ de sa gloire փառքի գագաթնակետին լինել
- apolitique** *adj* ապաքաղաքական
- apolitisme** *m* քաղաքացիություն չունեցող անձի իրավական կարգավիճակ
- apologétique** *adj* ջատագովական, գովաբանական, արդարացուցիչ; պաշտպանական
- apologie** *f* ջատագովություն, գովաբանություն; պաշտպանական ճառ
- apostasie** *f* ուրացողություն, ուխտադրություն
- apostat** *m* ուրացող, ուխտադրուժ
- a posteriori** *loc.adv.* փորձի վրա հիմնված, եզրակացությունների միջոցով, հետևությունների ճանապարհով
- apostille** *f* դվնգ. ապոստել (փաստաթղթերի վավերացման պարզեցված ձև, որը կիրառվում է այն երկրներում, որոնք միացել են Հաագայի կոնվենցիային)
- apostolique** *adj* 1. առաքելական 2. պապական ◊ nonce ~ պապի նվիրակ, դեսպան
- apothéose** *f* 1. թատերական եզրափակիչ և փառաբանող զանգվածային տեսարան; *պոմ.* աստվածացում, փառաբանում; 2. հանդիսավոր մեծարում (անձի, երևույթի, իրադարձության)
- apparat** *m* ճոխություն, շքեղություն ◊ discours d'~ հանդիսավոր ելույթ, հանդիսավոր ճառ
- appareil** *m* 1. սարք, հարմարանք, գործիք, պարագա 2. ապարատ, աշխատակազմ; մարմին (պետական)
- ~ administratif վարչական մարմին
- ~ bancaire բանկային մարմին
- ~ d'Etat պետական մարմին
- ~ exécutif վարչական մարմին, գործադիր մարմիններ
- ~ gouvernemental կառավարական ապարատ
- ~ présidentiel նախագահական աշխատակազմ
- apparence** *f* 1. արտաքին, տեսք; առերևույթ բան 2. հավանականություն ◊ en ~ արտաքինից, արտաքուստ; sauver les ~s, garder les ~s, ménager les ~s պահպանել քաղաքավարության կանոնները; selon toute ~ ամենայն հավանականությամբ
- apparent**, -e *adj* 1. ակնհայտ, բացահայտ, տեսանելի 2. առերևույթ, թվացյալ, կարծեցյալ, շինծու ◊ raison ~e շինծու պատճառ
- apparentement** *m* կուսակցությունների միավորումը ընտրությունների ժամանակ, բլոկ կազմելը
- apparenter** *vt* քղք. միավորել թեկնածուների ցուցակները (ընտրությունների ժամանակ) ◊ s'~ միավորվել, բլոկ կազմել
- apparentés** *m pl* քղք. գաղափարական համակիրներ; միություն կազմ



- մած կուսակցություններ, խմբեր ◊ socialistes et ~ unghiaխստներ և նրանց մոտ խմբավորումներ
- appartenance** *f* պատկանելություն  
~ au parti պատկանելություն կուսակցությանը  
~ politique քաղաքական պատկանելություն
- appartenir** *vi* 1. պատկանել 2. մեկի պատասխանատվության տակ լինել 3. վերաբերել
- appauvrissement** *m* աղքատացում, սնանկացում
- appel** *m* 1. կոչ, դիմում 2. զինակոչ 3. *հրվք.* գանգատարկում, բողոքարկում ◊ adresser, lancer un ~ à հանդես գալ կոչով, կոչով դիմել; faire ~ à դիմել, կոչ անել; faire ~ de գանգատարկել, բողոքարկել ~ aux armes իսկական զինվորական ծառայության կոչ; գորահավաք  
~ par anticipation ժամկետից շուտ զինակոչ  
~ de combat մարտակոչ  
~ différencié զինակոչը հետաձգելը  
~ au peuple ժողովրդին կոչով դիմելը  
~ s réitérés à բազմիցս կրկնվող կոչեր  
~ sous les drapeaux գորակոչ
- appeler** *vt* 1. անվանել, կոչել 2. կոչ անել; կանչել 3. *vi* *հրվք.* բողոքարկել  
~ sous les drapeaux զինվորական ծառայության կանչել  
~ d'un jugement բողոքարկել դատական որոշումը վերաքննիչ կարգով  
~ qn en justice դատի տալ մեկին
- applaudissements** *m pl* ծափահարություններ ◊ les ~ éclatent (retentissent) ծափահարությունները պայթում են (թնդում են); les ~ courent, accueillent ces paroles այդ բառերը ընդհատվում են, ընդունվում են ծափահարություններով  
~ vifs, enthousiastes, vigoureux (prolongés) բուռն, խանդավառ, ուժգին (երկարատև) ծափահարություններ
- applicable** *adj* կիրառելի, կիրարկելի, գործածելի
- application** *f* կիրառում, գործադրում (որոշումների և այլն) ◊ être en voie d'~ կենսագործվել, կյանքում կիրառվել; entrer en ~ ուժի մեջ մտնել; l'exacte ~ des dispositions որոշումների ճշգրիտ կատարում; faire ~ des articles de la loi կյանքի կոչել օրենքի հոդվածները; mettre en ~ գործողության մեջ դնել, իրականացնել; en ~ d'une loi օրենքի հիման վրա, օրենքի ուժով; par ~ համեմատ, կիրարկմամբ, նկատմամբ, վերաբերմամբ  
~ de la loi օրենքի կիրառում  
~ de l'ordre juridique օրենքների կիրառում  
~ de la peine պատժի կիրառում  
~ de la sanction սանկցիաների կիրառում, տույժի կիրառում
- appliquer** *vt* կյանքի կոչել, կիրարկել, կիրառել, իրականացնել ◊ s'~ 1. կիրառվել, կիրարկվել, իրականացվել, գործադրվել 2. տարածվել 3. ջանալ, ջանասիրաբար աշխատել; s'~ à l'ennemi

- հետապնդել թշնամուն  
 ~ d'autorité իրականացնել ինքնակամ կամ հետագայում տեղեկացնելու պայմանով  
 ~ des décisions կյանքի կոչել որոշումներ  
 ~ une loi օրենք կիրառել  
 ~ une politique իրականացնել քաղաքականություն  
 ~ les principes կիրառել սկզբունքներ  
 ~ un sceau կնիք դնել
- appoint** *m* 1. լրացուցիչ գումար; լրացուցիչ անդամավճար, դրամական մուտք 2. աճ, ավելացում, մեծացում; լրացուցիչ միջոց 3. օգնություն  $\diamond$  d'~ լրացուցիչ; avoir un ~ de 15 pour cent 15 տոկոսով ավել ստանալ; venir en ~ օգնություն ցույց տալ
- appointements** *m pl* ծառայողի աշխատավարձ, ռոճիկ
- appointer** *vt* 1. աշխատավարձ վճարել 2. նշանակել (պաշտոնի)
- apport** *m* ներդրում, ավանդ; մուծում, վճարում  $\diamond$  faire un ~ à qch ներդրում կատարել;  
 ~ en numéraire դրամական վճար
- apporter** *vt* 1. բերել 2. ներդնել, մտցնել 3. *փխք.* տալ, պատճառել, առաջացնել, ստեղծել  
 ~ des amendements ուղղումներ, լրացումներ մտցնել  
 ~ un appui, une aide օժանդակություն, օգնություն ցույց տալ  
 ~ du chagrin ցավ պատճառել, վշտացնել  
 ~ des difficultés դժվարություններ ստեղծել  
 ~ des modifications փոփոխություններ մտցնել
- ~ des obstacles արգելքներ հարուցել  
 ~ des raisons փաստարկներ բերել  
 ~ des soins հոգ տանել, հոգալ
- apposer** *vt* դնել, կայցնել  
 ~ un sceau կնիք դնել, կնքել  
 ~ la signature ստորագրել  
 ~ un visa վիզա դնել, նշագրել
- appositif**, -ve *adj* լրացուցիչ, կցովի
- apposition** *f* դնում, կցում; հավելված; կնիք դնելը, մակագրելը
- appréciation** *f* 1. գնահատական, գնահատում, արժևորում 2. դատողություն, եզրակացություն  $\diamond$  selon les ~ s ըստ գնահատականների, ըստ կանխատեսումների  
 ~, haute բարձր գնահատական  
 ~ juste ճիշտ եզրակացություն
- apprécier** *vt* գնահատել; գինը որոշել, արժեքը որոշել, արժևորել  
 ~ hautement բարձր գնահատել, բարձր գնահատական տալ
- appréhender** *vt* 1. վախենալ, սարսափել, երկյուղել 2. բռնել, կալանավորել, ձերբակալել 3. հասկանալ, ըմբռնել, ընկալել
- appréhension** *f* 1. վախ, սարսափ, երկյուղ 2. *հոգք.* ընկալում, ըմբռնում, հասկանալու ընդունակություն
- approbation** *f* խրախուսանք, քաջալերանք, հավանություն  $\diamond$  donner son ~ հավանություն տալ, համաձայնվել
- approche** *f* 1. մոտեցում 2. *pl* մատույցներ  $\diamond$  de difficile ~ դժվարամատչելի; aux ~s de մատույցներում

- ~ intégrée կոմպլեքսային մոտեցում
- ~ sociologique du problème սոցիոլոգիական (հասարակագիտական) մոտեցում խնդրի նկատմամբ
- approfondir** *vt* 1. խորացնել 2. խորանալ, ներթափանցել, ուսումնասիրել; խորամուխ լինել  
~ une question հարցի մեջ խորանալ, հարցն ուսումնասիրել
- approfondissement** *m* 1. խորացում 2. ուսումնասիրում  
~ d'un sujet թեմայի զարգացում
- appropriation** *f* յուրացում, տիրապետում
- appropriier** *vt* հարմարեցնել ◊ *s'*~ 1. յուրացնել, սեփականացնել 2. իրեն վերագրել 3. հարմարվել, ընտելանալ
- approuver** *vt* հավանություն տալ, համաձայնություն տալ, պաշտպանել; հաստատել, վավերացնել  
~ l'écriture ստորագրությունը վավերացնել  
~ un projet նախագիծը ընդունել
- approvisionnement** *m* 1. մատակարարում; ապահովում; մթերում 2. պաշարներ; պարենային պաշարներ 3. զենքի լիցքավորում  
~ de campagne գործող բանակի պարենային պաշարները  
~ en munitions ռազմամթերք  
~ de sûreté անձեռնմխելի պաշար
- approvisionner** *vt* 1. մատակարարել; ապահովել 2. լիցքավորել (զենքը) ◊ *s'*~ 1. գնումներ կատարել 2. իր համար մթերել, պաշար ստեղծել
- approximatif**, -ve *adj* մոտավորապես
- appui** *m* հենարան, նեցուկ, օգնություն, օժանդակություն ◊ prendre ~ sur հենվել; à l'~ de ի հաստատումն, հաստատելու համար; faits à l'~ հաստատելու համար բերված փաստեր; point d'~ հենման կետ  
~ réciproque փոխադարձ օգնություն, փոխօգնություն
- appuyer** 1. *vt* հենել; 2. *փխբ.* պաշտպանել, օժանդակել, աջակցել, սատարել 3. *vi փխբ.* հիմնավորել; շեշտել, ընդգծել ◊ *s'*~ (sur) *փխբ.* ապավինել, վստահել, հույս դնել; հիմք ընդունել, հիմնվել  
~ une candidature պաշտպանել թեկնածությունը  
~ les initiatives պաշտպանել նախաձեռնությունները; միանալ նախաձեռնություններին  
~ son opinion հիմնավորել իր կարծիքը  
~ une proposition պաշտպանել առաջարկությունը
- après-guerre** *m* հետպատերազմյան շրջան, հետպատերազմյան տարիներ
- à priori** *loc. adv.* ապրիորի, փորձից անկախ
- à – propos** *m* 1. հարմար պահ; տեղին՝ հարմար՝ ժամանակին՝ պատշաճ լինելը 2. *դվնգ.* ի միջի այլոց, ասվածին վերաբերող
- apte** *adj* ընդունակ, պիտանի  
~ au combat մարտունակ  
~ au travail աշխատունակ
- aptitude** *f* 1. ընդունակություն, ունակություն, կարողություն; հակում

2. պիտանիություն  $\diamond$  brevet *d'*~ դիպլոմ (մասնագիտական) կուրս ավարտելու մասին; certificat *d'*~ վկայական մասնագիտական դասընթաց ավարտելու մասին ~ au service զինվորական ծառայության համար պիտանի լինելը, պիտանելիությունը ~ au travail աշխատունակություն
- apurement** *m* 1. ստուգում, ճշտում, մաքրում 2. վերացում, լիկվիդացիա ~ du compte *ֆին.* հաշվի ստուգում ~ du déficit *ֆին.* պակասորդի վերացում ~ d'un permis անցագրի, վկայականի ստուգում
- arabe** *adj* արաբական
- arbitrage** *m* արբիտրաժ, միջնորդ դատարան (պետությունների միջև ծագած վեճերի կարգավորումն իրենց կողմից ընտրած արբիտրի (դատավորի) կամ արբիտրների կողմից)  $\diamond$  conseil *d'*~ արբիտրաժային խորհուրդ; la Cour Permanente *d'*~ Արբիտրաժի Մշտական Պալատ
- arbitraire** *m* 1. կամայականություն, ապօրինություն 2. իրավագրկություն ~ policier ոստիկանական կամայականություն
- arbitraire** *adj* կամայական, անօրեն, ապօրինի  $\diamond$  arrestation ~ ապօրինի ձերբակալություն; procédure ~ կանխակալ դատավարություն
- arbitre** *m* դատավոր, միջնորդ դատավոր, հաշտարար; արբիտրաժային հանձնաժողովի անդամ; միջնորդ  $\diamond$  libre ~ կամքի ազատություն; de son propre ~ սեփական նախաձեռնությամբ
- arbitrer** *vt* հարցը լուծել միջնորդ դատարանով
- arborer** *vt* կանգնեցնել, ամրացնել, բարձրացնել ~ un drapeau դրոշակը կանգնեցնել
- arcane** *m* 1. խորհրդավոր էլիքսիր (պատրաստված ալքիմիկոսների կողմից) 2. *pl հեզգն.* գաղտնիքներ ~ s de la diplomatie դիվանագիտության գաղտնիքներ ~ s de la politique քաղաքականության գաղտնիքներ
- archaïque** *adj* հնամենի, հնամյա, արխայիկ
- archifaux**, - *sse adj* չափազանց կեղծ, սխալ, անհիմն, ամբողջովին կեղծ
- architecte** *m* ճարտարապետ
- ardent** *adj* կրքոտ, բուռն, կրակոտ
- ardu**, -*e adj* դժվար, դժվարին  $\diamond$  une question très ~ *e* շատ դժվարին խնդիր
- arène** *f* 1. մրցասպարեզ 2. ասպարեզ, գործունեության ոլորտ, բնագավառ ~ internationale միջազգային ասպարեզ ~ politique քաղաքական ասպարեզ
- argent** *m* 1. արծաթ 2. փող, դրամ  $\diamond$  payer ~ comptant (կամ ~ sec, ~ bas, ~ sur table) կանխիկ դրամով վճարել ~ comptant կանխիկ դրամ

- ~ liquide կանխիկ միջոցներ  
 ~ sec կանխիկ դրամ
- argentin**, -e *adj* արգենտինական
- arguer**, argüer 1. *vt* ա) եզրակացություն անել, հետևություն անել բ) *hñgð*. մեղադրել, առարկել, վիճարկել գ) փաստարկել, ապացուցել 2. *vi* պատճառաբանել, հիմնվել ~ գո d'hérésie մեղադրել մեկին հերետիկոսության մեջ  
 ~ un témoignage վկայությունը վիճարկել
- argument** *m* փաստարկ, փաստ, ապացույց ◊ fournir (կամ apporter, invoquer) des ~s փաստարկներ բերել; tirer ~ de ... հետևություն անել, օգտագործել որպես փաստ  
 ~ concluant համոզիչ փաստարկ  
 ~, grand հիմնական փաստարկ  
 ~ massue սպանիչ փաստարկ  
 ~ de poids ծանրակշիռ փաստարկ, ապացույց
- argumentation** *f* պատճառաբանություն; փաստարկում
- arguer** *vi* պատճառաբանել; փաստարկել, փաստարկներ բերել
- argutie** *f* նրբանկատություն, բժախնդրություն, մանրախնդրություն; հնարք; խորամանկություն
- arme** *f* 1. զենք, զինատեսակ 2. գործի տեսակ ◊ brandir, faire sonner les ~s զենք ճոճել; déployer des ~s զենքը տեղաբաշխել; déposer les ~s, rendre les ~s զենքը վայր դնել; doter les troupes d' ~s, équiper les troupes en ~s գործը զինել, հանդերձել; fournir des ~s contre soi իրեն հարվածի տակ դնել; passer
- par les ~s գնդակահարել; prendre les ~s զենք վերցնել; recourir aux ~s զենքի դիմել; aux ~s ! ի զեն; en venir aux ~s պատերազմ սկսել; les trois ~s երեք տեսակի գործ; le fardeau d' ~s սպառազինությունների բեռը; non-prolifération, non-dissémination des ~s nucléaires միջուկային զենքի չտարածելը; réduction des ~s militaires ռազմական ծախսերի կրճատում  
 ~ contre avions զենիթային զենք  
 ~ (s) A (atomique(s)) ատոմային զենք  
 ~ bactériologique բակտերիոլոգիական զենք  
 ~ blanche սառը զենք  
 ~ chimique քիմիական զենք  
 ~ s classiques, conventionnelles սովորական զենք  
 ~ défensive պաշտպանական զենք  
 ~ (s) d'extermination massive զանգվածային ոչնչացման զենք  
 ~ à feu հրազեն  
 ~ intermédiaire(s) միջին հեռահարության զենք  
 ~ s H (à hydrogène) ջրածնային զենք  
 ~ radiologique ռադիոլոգիական զենք  
 ~ (s) à réaction (nucléaire) ռեակտիվ (միջուկային) զենք  
 ~ stratégique(s) ռազմավարական զենք  
 ~ (s) tactique(s) տակտիկական զենք  
 ~ thermonucléaire ջերմամիջուկային զենք
- armé**, -e *adj* զինված ◊ les forces ~es

- զինված ուժեր  
**armée** *f* բանակ, զորք  
 ~ active գործող բանակ  
 ~ de l'air ռազմաօդային ուժեր  
 ~ de libération nationale ազգային  
 - ազատագրական բանակ  
 ~ de mer ռազմածովային ուժեր  
 ~ d' occupation օկուպացիոն  
 զորք  
 ~ de terre ցամաքային զորք
- armement** *m* 1. սպառազինում;  
 սպառազինություն 2. զենք, զինամթերք, զինատեսակ 3. զինում, զինելը  $\diamond$  la réduction et la limitation des ~s սպառազինությունների կրճատում և սահմանափակում; course aux ~s սպառազինությունների մրցավազք; course effrénée aux ~s սպառազինությունների կատաղի մրցավազք; accumuler les ~s զինամթերքի կուտակում  
 ~s offensifs հարձակողական սպառազինություն
- arménien**, -ne *adj* հայկական
- armer** *vt* 1. զինել, սպառազինել 2. լցնել, փամփուշտ դնել 3. մատակարարել, միջոցներ հայթայթել; համալրել անձնակազմով  $\diamond$  s'~ զինվել, սպառազինվել
- armes** *f pl* 1. ռազմական զործ, զինվորական ծառայություն 2. զինանշան  $\diamond$  la carrière des ~ զինվորական ծառայություն, զինվորական մասնագիտություն; être sous les ~ զինվորական ծառայության մեջ լինել; faire ses premières ~ մարտական մկրտություն ստանալ; quitter les ~ զինվորական ծառայությունը թողնել; les ~ de Paris Փարիզ քաղաքի զինանշանը
- armistice** *m* զինադադար  $\diamond$  conclure (կամ signer) un armistice զինադադար կնքել; la conclusion d'un ~ զինադադարի կնքում
- armoiries** *f pl* զինանշան
- armorier** *vt* զինանշանով զարդարել
- armure** *f* 1. *պսմ.* զենք ու զրահ, սպազենք, հեծյալի սպառազինություն 2. գրահագգեստ, պաշտպանական զրահ
- arracher** *vt* պոկել, դուրս քաշել, արմատախիլ անել  
 ~ un aveu խոստովանություն կորզել  
 ~ des concessions par marchandage զիջումներ պոկել սակարկելով  
 ~ à la mort մահից փրկել
- arrestation** *f* ձերբակալություն, կալանք, կալանավորում, ազատագրկում, բանտարկություն  $\diamond$  se soustraire à l'~ թաքնվել ձերբակալումից
- arrêt** *m* 1. *իրվք.* դադար, դադարեցում, կարճում, կասեցում 2. կանգառ 3. որոշում, վճիռ, դատավճիռ 4. ձերբակալություն, կալանավորում  $\diamond$  faire un ~ կանգ առնել; lever les ~ s կալանքից ազատել; mettre aux ~ s կալանքի տակ վերցնել; prononcer, rendre un ~ դատավճիռ կայացնել; sans ~ անդադար  
 ~ de condamnation մեղադրական դատավճիռ  
 ~ définitif վերջնական դադարեցում  
 ~ des hostilités ռազմական զոր-

- ծողությունների դադարեցում  
 ~ immédiat անհապաղ դադարեցում  
 ~ de mort մահվան դատավճիռ  
 ~ de travail աշխատանքի դադարեցում, կարճատև գործադուլ
- arrêté** *m* որոշում, վճիռ, հրաման, կարգադրություն (գործադիր իշխանությունների)
- arrêté**, -e *adj* 1. որոշված, հաստատված, սահմանված 2. ընդունված, վճռված ◊ affaire ~e վճռված գործ; volonté bien ~e հաստատ մտադրություն
- arrêter** *vt* 1. կանգնեցնել, դադարեցնել 2. ձերբակալել, բռնել, կալանավորել, կալանք դնել 3. պատվիրել 4. որոշել, վճռել 5. փակել, ավարտել, կնքել, եզրափակել ◊ s'~ 1. կանգ առնել, կանգնել 2. ավարտվել  
 ~ un adversaire բռնել, ձերբակալել հակառակորդին  
 ~ un compte հաշիվը փակել  
 ~ court ընդհատել  
 ~ un marché գործարք կնքել  
 ~ un plan պլան կազմել  
 ~ les prix գներ սահմանել  
 ~ un taxi տաքսի վերցնել
- arriération** *f* հետամնացություն  
 ~ mentale մտավոր հետամնացություն
- arrière** *m* 1. թիկունք ◊ les ~s թիկունքային՝ օժանդակ զորամասեր  
 ~ de l'armée բանակի թիկունքը
- arriéré** *m* ապառք; պարտք  
 ~ de permission չօգտագործված արձակուրդ  
 ~ de salaire չստացված աշխատավարձ
- arriéré**, -e *adj* 1. հետամնաց 2. ժամկետանց; չվճարված ◊ affaires ~es բարձիթողի գործեր; civilisation ~e հետամնաց քաղաքակրթություն; dette ~e ժամկետանց պարտք; pays ~ հետամնաց երկիր
- arrière-pensée** *f* հետին միտք  
 ~ politiques քաղաքական աստատ
- arriérer** *vt* հետաձգել, ժամկետի մեջ չկատարել
- arrivée** *f* ժամանում, գալուստ, գալը  
 ~ au pouvoir իշխանության գլուխ անցնելը
- arriver** *vi* 1. գալ, ժամանել, տեղ հասնել 2. վրա հասնել 3. (à + *infin.*) կարողանալ 4. պատահել, կատարվել  
 ~ à un accord, à une entente համաձայնության գալ  
 ~ à ses fins հասնել իր նպատակներին  
 ~ au terme նպատակին հասնել
- arriviste** *m* կարիերիստ
- arrondissement** *m* շրջան; տարածք (վարչատարածքային միավոր) ◊ scrutin d'~ քվեարկության սիստեմ ըստ շրջանների  
 ~ consulaire հյուպատոսական տարածք  
 ~ électoral ընտրատարածք  
 ~ judiciaire դատական տարածք
- arsenal** *m* 1. զինանոց, զինապահեստ; ռազմական նավահանգիստ 2. *փխբ.* միջոցների ամբողջություն  
 ~ des lois օրենքների, օրինագծերի ամբողջություն
- art** *m* 1. արվեստ 2. հմտություն, ձիրք, վարպետություն

- ~, beaux գեղեցիկ արվեստներ  
 ~ militaire ռազմական արվեստ  
 ~ non professionnel ինքնագործունեություն  
 ~s plastiques կերպարվեստ  
 ~ populaire ժողովրդական արվեստ
- artère** *f* 1. զարկերակ, շնչերակ 2. *փ/հսք.* մայրուղի  
 ~s principales de la ville քաղաքի գլխավոր մայրուղիները
- article** *m* 1. հոդված (թերթի և այլն) 2. հոդված (օրենքի, պայմանագրի, կանոնադրության), կետ, պարբերություն, ենթագլուխ 3. իր, սպրանք, սպրանքատեսակ  
 ◇ l'effet de l'~ հոդվածի գործողությունը; se prévaloir d'un ~ վկայակոչել օրենքի հոդվածը; relever de l'~ հոդվածի գործողության տակ ընկնել; en vertu de l'~ հոդվածի համաձայն  
 ~s de large (de grande) consommation լայն սպառման սպրանքներ
- articuler** *vt* 1. արտասանել հստակ, պարզ 2. շարադրել ըստ հոդվածների, ըստ ենթագլուխների
- artifice** *m* 1. *հնգծ.* արվեստ, վարպետություն 2. արհեստականություն, անբնականություն 3. հնարք, խորամանկություն  
 ~s de l'éloquence ճարտասանության եղանակները  
 ~s de procédure քաշքշուկարարություն
- artificieux** *adj* դավադիր, նեղ, խարդախ, խորամանկ
- artisan** *m* 1. արհեստավոր, տնայնագործ 2. մասնակից; մեղավոր, հանցավոր 3. ստեղծող, ստեղծիչ
- artisanal**, -e *adj* արհեստավորական
- artisanat** *m* 1. արհեստավորական դաս 2. արհեստավորի մասնագիտություն
- as** *m* 1. *թղթիս.* մեկնոց, տուգ 2. առաջինը, լավագույնը 3. *խսկց.* իր գործի վարպետ, հմուտ մարդ, լավագույն աշակերտ  
 ~ de l'aviation առաջնակարգ օդաչու
- ascendance** *f* վերընթաց ազգակցության գիծ; նախնիներ
- ascendant** *m* 1. ազդեցություն, հեղինակություն 2. ազգակից ◇ avoir (կամ exercer) de l'~ sur զո մեկի վրա ազդեցություն ունենալ; prendre (կամ acquérir) de l'~ sur հեղինակություն, գերազանցություն ձեռք բերել; subir l'~ de զո մեկի ազդեցությունը կրել
- ascension** *f* 1. բարձրանալը, վերելք, թռիչք 2. *փ/հսք.* վերելք, թռիչք, զարգացում 3. *ֆին.* բարձրացում, աճում  
 ~ d'une monnaie արժույթի փոխարժեքի բարձրացում  
 ~ professionnelle մասնագիտական առաջընթաց, հաջողություն
- asiatique** *adj* ասիական
- asile** *m* *դվնգ.* ապաստան (քաղաքական) ◇ demander d'~ քաղաքական ապաստան խնդրել; donner ~ ապաստան տալ; droit d'~ ապաստանի իրավունք  
 ~ d'aliénés հոգեբուժարան  
 ~ politique քաղաքական ապաստան  
 ~ de vieillards ծերանոց
- aspect** *m* տեսակետ, տեսանկյուն, հայեցակետ, մոտեցում; կողմ,



- առում  $\diamond$  examiner sous tous les ~ s  
բազմակողմանիորեն քննության  
առնել; au premier ~ առաջին  
հայացքից; sous tous les ~ s  
տարբեր կողմերից
- aspiration** *f* ձգտում, նկրտում  
~s ցանկություններ, սպասում-  
ներ, ակնկալություններ
- aspirer** *vt* մի բանի ձգտել, տենչալ  
~ aux honneurs ձգտել հարգան-  
քի, մեծարանքի
- assaillir** *vt* հարձակվել, գրոհել; պա-  
շարել
- assainissement** *m* առողջացում  
~ de la circulation fiduciaire դրա-  
մական շրջանառության ամրա-  
պնդում  
~ du climat politique քաղաքա-  
կան մթնոլորտի առողջացում
- assaut** *m* գրոհ, հարձակում  $\diamond$  d'~  
գրոհով; միանգամից
- assemblée** *f* 1. զագաթնաժողով, ժո-  
ղով, վեհաժողով, հավաք, սասմ-  
բլեա 2. ներկայացուցչական  
մարմին  $\diamond$  convoquer une ~ ժողով  
գումարել; Assemblée Générale de  
l'ONU ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբ-  
լեա; Assemblée de la Société des  
Nations Ազգերի լիգայի Ասամբ-  
լեա; Haute Assemblée սենատ  
(Ֆրանսիայում); présider l'~ ժո-  
ղովը նախագահել  
~ Constituante Մահմանադիր ժո-  
ղով  
~ extraordinaire արտահերթ ժո-  
ղով  
~ générale ընդհանուր ժողով  
~ officielle պաշտոնական նիստ  
~ plénière լիակազմ նիստ
- assentiment** *m* համաձայնություն,  
հավանություն; ճանաչում (մի-  
ջազգային հարաբերություննե-  
րում)  $\diamond$  donner son ~ հավանու-  
թյուն տալ; refuser son ~ à զեհ  
հավանություն չտալ
- asseoir** *vt* 1. նստեցնել 2. հաստա-  
տել, դնել; սահմանել 3. հիմնա-  
վորել  $\diamond$  s'~ նստել; s'~ sur le  
terrain conquis ամրապնդվել  
գրավված տարածքի վրա  
~ sa domination հաստատել իր  
տիրապետությունը  
~ les fondements հիմք դնել  
~ un impôt sur... հարկել, հարկ  
դնել, տուրք դնել  
~ son jugement sur... հիմնավորել  
իր կարծիքը  
~ sa supermatie հաստատել իր  
գերազանցությունը
- assertion** *f* հաստատում, հիմնավո-  
րում, վավերացում, իրավունքնե-  
րի պահանջում
- asservir** *vt* ճորտացնել, ստրկացնել,  
կախման մեջ դնել
- asservissement** *m* ստրկացում, են-  
թարկում, կախման մեջ պահում
- assiduité** *f* 1. ջանք, եռանդ, ջանա-  
սիրություն; տոկունություն 2.  
մշտական ներկայություն; մշտա-  
կան հոգսեր
- assiégé, -e** *adj* պաշարված
- assignation** *f* 1. դատակոչ; դատա-  
կան ծանուցագիր 2. հատկացում  
(դրամական գումարի); վճարա-  
յին կարգադրություն
- assigner** *vt* 1. նշանակել, որոշել 2.  
դատարան կանչել 3. հատկաց-  
նել (դրամական միջոցներ)  
~ une residence *իր/ը*. որոշել ար-  
տաքսվողի բնակության վայրը

- ~ un terme ժամկետ նշանակել, ժամկետը որոշել
- assimilation** *f* 1. յուրացում, տիրապետում, սեփականացում 2. հավասարեցում
- assimiler** *vt* 1. յուրացնել, տիրապետել 2. նմանեցնել, նույնացնել  
~ les acquisitions նվաճումները յուրացնել  
~ les méthodes մեթոդները յուրացնել  
~ la théorie en liaison intime avec la pratique սերտորեն կապել տեսությունը պրակտիկայի հետ
- assises** *f pl* 1. նիստ, համագումար 2. երդվյալ ատենակալներ  $\diamond$  cour d'~ երդվյալների դատարան; sur des ~ démocratiques ժողովրդավարական (դեմոկրատական) հիմունքներով; tenir ses ~ նիստ գումարել; նիստին մասնակցել  
~ de la société հասարակության հիմքեր
- assistance** *f* 1. օգնություն, աջակցություն, օժանդակություն 2. ունկնդիրներ, ժողով, լսարան  $\diamond$  prêtre ~ օգնություն ցուցաբերել  
~ financière ֆինանսական օգնություն  
~ juridique իրավաբանական օգնություն  
~ médicale բժշկական օգնություն  
~ mutuelle փոխօգնություն  
~ publique հասարակական, պետական օգնություն  
~ technique տեխնիկական օգնություն
- assistant**, -e *m* օգնական, տեղակալ, ընթերակա  $\diamond$  maître ~ ավագ դասախոս
- ~ administratif արմինիստրատորի օգնական  
~ social սոցիալական աշխատող
- assisté** *m* օգնություն ստացող (սոցիալական ապահովության կարգով)
- assister** *l. vi* ներկա գտնվել 2. *vt* օգնել, աջակցել, օժանդակել, սատարել
- association** *f* ընկերակցություն, միություն, միավորում, կազմակերպություն  $\diamond$  l' ~ des Amis de la France Ֆրանսիայի բարեկամների ընկերակցություն
- associer** *vt* մասնակից դարձնել, ներգրավել  $\diamond$  s'~ միավորվել, հարել, միանալ, ընկերության անդամ դառնալ
- assujettir** *vt* 1. ենթարկել, հնազանդեցնել 2. հպատակեցնել 3. կայցնել, դնել; ամրացնել, հարմարեցնել  $\diamond$  être assujetti à un impôt հարկ վճարել, հարկատու լինել; être assujetti à l'internement ներկալված լինել  
~ à des règles օրենքներին ենթարկել  
~ à un travail պարտադրել աշխատելու
- assujettissement** *m* 1. հնազանդեցում, հպատակեցում 2. ստրկացում
- assumer** *vt* իր վրա վերցնել, ստանձնել  
~ la charge de ... պատասխանատվություն կրել  
~ les frais ծախսերն իր վրա կրել  
~ une tâche, une responsabilité գործը, պատասխանատվությունը իր վրա վերցնել

**assurance** *f* 1. վստահություն, համոզվածություն 2. հավաստիք, հավաստիացում (միջազգային հարաբերություններում), վստահեցում, երաշխիք 3. ապահովագրություն  $\diamond$  *contracter une ~* ապահովագրության պայմանագիր կնքել; *couvrir l'~* վճարել ըստ ապահովագրության պայմանագրի; *effectuer (կամ soigner) l'~* ապահովագրության պայմանագիր կնքել; *en toute ~* լիովին վստահ  
 ~ *contre le chômage* ապահովագրություն գործազրկության դեպքում  
 ~ *contre les accidents du travail* ապահովագրություն դժբախտ պատահարներից աշխատանքի վայրում  
 ~ *contre l'invalidité* ապահովագրություն անաշխատունակության դեպքում  
 ~ *sur la vie* կյանքի ապահովագրություն  
 ~ *vieillesse* ծերության ապահովագրություն

**assurances** *f pl* ապահովագրական ընկերություն  
 ~ *sociales* սոցիալապահովագրական ընկերություն

**assurer** *vt* 1. վստահեցնել, հավաստիացնել 2. ապահովել, երաշխավորել 3. ապահովագրել  $\diamond$  *s' ~* 1. համոզվել, հավաստիանալ 2. իրեն ապահովագրել  $\diamond$  *s' ~ d'un fait* հավաստիանալ, համոզվել ինչ-որ փաստի մեջ  
 ~ *la présidence* նախագահել  
 ~ *le service* սպասարկել

**assuré** *m* ապահովագրված անձ

~ *s sociaux* սոցիալական ապահովությունից օգտվող անձինք

**assyrien, -ne** *adj* ասորական

**astreindre** *vt* ստիպել, հարկադրել  $\diamond$  *astreint au service militaire* զինապարտ; *être astreint de faire qch* պարտավորված լինել ինչ-որ բան անելու

**atermoiement** *m* 1. հետաձգում 2. վճարման հետաձգում

**atermoyer** *vt* 1. հետաձգել վճարումը 2. հետաձգել, ուշացնել

**atlantique** *adj* ատլանտյան  $\diamond$  *Pacte ~* Ատլանտյան պայմանագիր

**atmosphère** *f* մթնոլորտ, իրադրություն  $\diamond$  *dans une ~ d'amitié* բարեկամական մթնոլորտում; *dans une ~ de confiance* վստահության մթնոլորտում; ~ *d'inquiétude* տագնապալի իրադրություն; *dans une ~ de tension* լարվածության մթնոլորտում

**atome** *m* 1. ատոմ 2. *փ/ւր.* մասնիկ

**atomique** *adj* ատոմային  $\diamond$  *bombe ~* ատոմային ռումբ; *énergie ~* ատոմային էներգիա; *centrale ~* ատոմային կայան; *âge ~* ատոմային դար; *noyau ~* ատոմային միջուկ; *guerre ~* ատոմային պատերազմ; *brise-glace ~* ատոմային սառցահատ

**atout** *m* հաղթաթուղթ  $\diamond$  *mettre tous les ~s dans le jeu* գործի դնել բոլոր միջոցները

**attaché** *m* կցորդ, դիվանագիտական աստիճան կամ պաշտոն  
 ~ *d'ambassade* դեսպանատան կցորդ  
 ~ *commercial* առևտրական հարցերով կցորդ

- ~ culturel մշակութային հարցերով կցորդ  
 ~ militaire զինվորական կցորդ  
 ~ de presse մամլո քարտուղար (պրես-ատաշե)
- attachement** *m* անձնվիրություն, նվիրվածություն
- attacher** *vt* 1. ամրացնել, կցել, կապել, միացնել 2. ծառայության նշանակել, գործուղել, տրամադրության տակ գործուղել  $\diamond$  s'~ ջանալ, աշխատել, ճգնել, ձգտել; s'~ à qch իր առջև նպատակ դնել, խնդիր դնել; s'~ à démontrer աշխատել ապացուցելու համար; s'~ à la poursuite de qn անընդհատ հետապնդել; s'~ à l'ennemi անդադրում հետևել թշնամուն
- attaches** *f pl* անխզելի կապեր, անքակտելի կապեր, ծանոթություններ
- attaque** *f* 1. հարձակում, գրոհ 2. մեղադրանք, սուր քննադատություն  $\diamond$  suspendre l'~ դադարեցնել հարձակումը  
 ~ s des journaux լրագրային հարձակումներ, մեղադրանքներ
- attaquer** *vt* 1. հարձակվել, հարձակում գործել, գրոհել 2. մեղադրել, քննադատել, վիճարկել, գանգատարկել 3. սկսել, ձեռնամուխ լինել  
 ~ un discours սկսել ելույթը  
 ~ en justice գործ հարուցել մեկի դեմ  
 ~ une opinion կարծիքը քննադատել, վիճարկել  
 ~ les préjugés պայքարել նախապաշարումների դեմ
- ~ un principe պաշտպանել սկզբունքը  
 ~ un roman ձեռնամուխ լինել վեպ գրելուն  
 ~ le sujet թեմային անցնել
- atteindre** *vi* հասնել, ձեռք բերել, ստանալ  
 ~ son but, son objectif իր նպատակին հասնել  
 ~ la retraite հասնել զառամյալ հասակի
- atteinte** *f* *ψ/ψp*. ոտնձգություն, չարամիտ նկրտում, վնասելու փորձ, վնաս  $\diamond$  à l'abri de toute ~ լիակատար անվտանգության մեջ; être hors d'~ ~ վտանգից զերծ լինել; porter ~ à վնաս հասցնել, վնասել; sans porter ~ չվնասելով, չխախտելով  
 ~ aux droits իրավունքների ոտնահարում  
 ~ à la loi օրենքի խախտում  
 ~ s à la neutralité չեզոքության ոտնահարում  
 ~ à la sûreté de l'Etat ոտնձգություն պետական անվտանգության դեմ
- attentat** *m* մահափորձ; ոտնձգություն  
 ~ à la pudeur անառակաբար գործողություններ
- atténuant**, -e *adj* մեղմացուցիչ  $\diamond$  circonstances ~ es մեղմացուցիչ հանգամանքներ
- atténuation** *f* մեղմացում, նվազեցում, թուլացում  
 ~ de la peine պատժի մեղմացում  
 ~ de la tension internationale միջազգային լարվածության թուլացում

**atténuer** *vt* 1. մեղմացնել, թուլացնել, թեթևացնել, նվազեցնել, փոքրացնել 2. մեղմել, զսպել

**attestation** *f* 1. վկայական, վկայագիր, հավաստագիր 2. ատեստավորում 3. վկայի գրավոր ցուցմունք (քաղաքացիական դատավարությունում), վկայություն, հավաստում  
 ~ d'auteur հեղինակային հավաստագիր  
 ~ notariée նոտարական վկայություն

**attester** *vt* 1. հաստատել, վավերացնել, հավաստել 2. վկայել, գրավոր ցուցմունք տալ

**attiser** *vt* բորբոքել, արթնացնել, դրդել  
 ~ les désirs ցանկություններ արթնացնել

**attitré**, -e *adj* 1. մշտական 2. ճանաչված, հանրաճանաչ, հայտնի, հանրահայտ 3. լիազորված, հավատարմագրված 4. պատենտավորված, արտոնագրված ◊ gouvernement ~ ճանաչում ստացած կառավարություն

**attitrer** *vt* նշանակել, լիազորել

**attitude** *f* 1. դիրք, դիրքորոշում, տեսակետ 2. վերաբերմունք ◊ abandonner (կամ renoncer à) son ~ իր դիրքորոշումից հրաժարվել; adopter une ~ nette dans... հստակ դիրք գրավել; garder son ~ պահպանել նախկին դիրքորոշումը; reconsidérer (modifier) son ~ վերանայել, փոփոխել իր դիրքորոշումը; ~ à l'égard (կամ en face) de... դիրքորոշում մեկի կամ մի բանի նկատմամբ

~ bienveillante բարյացակամ վերաբերմունք  
 ~ ferme ամուր դիրքորոշում  
 ~ hostile թշնամական դիրքորոշում  
 ~ menaçante սպառնալի, վտանգավոր դիրքորոշում  
 ~ résolue համարձակ դիրքորոշում

**attribuer** *vt* 1. վերագրել, վերապահել 2. շնորհել 3. տրամադրել, տալ, հատկացնել  
 ~ des avis կարծիքներ վերագրել  
 ~ une dignité կոչում շնորհել  
 ~ gratuitement անհիմն կերպով վերագրել  
 ~ des prix մրցանակներ տալ  
 ~ des sommes գումարներ հատկացնել

**attribution** *f* 1. շնորհում (մրցանակի) 2. տալը, հատկացնելը, հատկացում, տրամադրում  
 ~ d'une aide օգնության տրամադրում  
 ~ de la nationalité քաղաքացիություն տալը

**attributions** *f pl* տնօրինություն, պարտականություն, իրավասություն, լիազորություն, արտոնություն, առանձնաշնորհություն ◊ cela entre dans vos ~ սա մտնում է ձեր իրավասությունների մեջ; cela sort de ses ~ սա նրա իրավասություններից դուրս է; délimiter les ~ de la commission որոշել հանձնաժողովի իրավասությունների շրջանակները; il est doté d'~ exceptionnelles նա օժտված է արտակարգ լիազորություններով  
 ~ d'un fonctionnaire ծառայողի

պարտականությունները  
**attrition** *f* հյուժվածություն, ուժասպառություն, սաստիկ հոգնածություն ◊ *guerre d'~* ուժասպառության պատերազմ  
**au-delà** *loc. adv.* դուրս, սահմաններից դուրս; բացի դրանից, դրանից զատ; չնայած որ ◊ *aller au-delà de qch* ավելի հեռուն գնալ, չսահմանափակվել  
**audience** *f* 1. *դվնգ.* ատոլենցիա (երկրի ղեկավարի, վարչապետի կամ արտաքին գործերի նախարարի հանդիպումը դիվանագիտական ներկայացուցչի հետ) 2. դատական նիստ 3. լսարան, ունկնդիր, հանդիսատես ◊ *accorder* (կամ *donner*) *une ~* ընդունելություն նշանակել; *obtenir une ~* ունկնդրություն ստանալ; *recevoir en ~* ընդունել; *tenir ~* նիստ գումարել; *trouver ~* ունկնդիրներ գտնել  
~ *de départ* ընդունելություն մեկնումից առաջ  
~ *à huis clos* դռնփակ դատական նիստ  
~ *publique* դռնբաց դատական նիստ  
**augmentation** *f* 1. ավելացում, աճ, մեծացում, ընդլայնում 2. ավելացում, բարձրացում (աշխատավարձի, գների)  
**augure** *m* նախանշան ◊ *de bon [mauvais]* ~ լավ [վատ] նախանշան համարվել  
**augurer** *vt* նախանշել, կանխագուշակել, գուշակել  
**auspice** *m* նախանշան ◊ *sous les ~* de զո մեկի հովանավորության

ներքո; *sous d'heureux* (կամ *de favorables, de riants*) ~s բարեհաջող ժամին; *sous de fâcheux* (կամ *de funestes, de tristes*) ~s չարաստիկ ժամին  
**austérité** *f* խստություն, դաժանություն; խնայողության խիստ միջոցներ  
**australien**, *-ne adj* ավստրալիական  
**autarcie** *f* *դվնգ.* ավտարկիա (ինքնաբավարար, երկրի ինքնաբավարար տնտեսություն հաստատելու քաղաքականություն)  
**auteur** *m* 1. ստեղծիչ, արարիչ 2. հեղինակ, ստեղծագործող, գրող 3. մեղավոր, հանցագործություն կատարող ◊ *droit d'~* հեղինակային իրավունք  
~ *adultère* արտասամուսնական զավակի հայր  
~ *de la commande* պատվիրատու  
~ *du crime* հանցագործ  
~s  *multiples* հեղինակային կոլեկտիվ, համահեղինակներ  
**authenticité** *f* արժանահավատություն, հավաստիություն, ճշտություն, ստույգություն, իսկություն, վավերականություն  
**authentifier** *vt* իսկությունը պարզել; պատճենը վավերացնել; վկայել, հավաստել:  
**authentique** *adj* իսկական, հավաստի, իրական, չկեղծված ◊ *les expéditions ~ s* վավերացված պատճեններ  
**authentique** *m* 1. բնագիր, բնօրինակ 2. *դվնգ.* ատթենտիկ տեքստ (լիազորված անձերի ստորագրություններով և կնիքներով ամրագրված դիվանագիտական

փաստաթղթի բնօրինակը)  
**autochtone** *m* բնիկ, հիմնական  
բնակիչ, տեղաբնակ  
**autocrate** *m* ինքնակալ միապետ,  
տիրակալ, գերիշխան  
**autocratie** *f* ինքնակալություն  
**autocritique** *f* ինքնաքննադատու-  
թյուն  
**autodéfense** *f* ինքնապաշտպանու-  
թյուն  
**autodénonciation** *f* ինքնամերկացում  
**autodétermination** *f* *քղք.* ինքնորո-  
շում  $\diamond$  le droit à l' ~ ինքնորոշման  
իրավունք  
**autoéducation** *f* ինքնակրթություն  
**autofinancement** *m* ինքնաֆինան-  
սավորում, տնտեսաշվարկ  
**autogestion** *f* ինքնակառավարում  
**autocratie** *f* ավտոկրատիա (կառա-  
վարման համակարգ, որում գե-  
րագույն և անսահմանափակ իշ-  
խանությունը պատկանում է մեկ  
անձի)  
**autodéfense** *f* ինքնապաշտպանու-  
թյուն  
**automatisation** *f* ավտոմատացում  
**automatiser** *vt* մեքենայացնել  
**autonome** *adj* ինքնավար  $\diamond$  région ~  
ինքնավար մարզ  
**autonomie** *f* 1. ինքնավարություն,  
ինքնակառավարում 2. անկա-  
խություն, ինքնուրույնություն  $\diamond$   
bénéficiaire de l' ~ ինքնավարու-  
թյունից օգտվել; droit à l' ~ ինք-  
նավարության իրավունք  
~ d'action գործունեության ինք-  
նուրույնություն  
~ déléguée լիազոր ինքնավարու-  
թյուն  
~ financière ֆինանսական ինք-

նուրույնություն, տնտեսաշվարկ  
~ de la volonté կամքի ազա-  
տություն  
**autoprotection** *f* ինքնապաշտպա-  
նություն  
**autorisation** *f* 1. թույլտվություն, հա-  
մաձայնություն 2. լիազորում,  
լիազորություն  $\diamond$  délivrer une ~  
թույլտվություն տալ  
~ préalable նախնական թույլ-  
տվություն  
**autorisé** *adj* լիազոր, լիազորված  $\diamond$   
personne ~e լիազորված անձ  
**autoriser** *vt* 1. թույլ տալ, թույլատրել  
2. *հնցծ.* լիազորել, արտոնել  
~ l'emploi օգտագործման իրա-  
վունք տալ  
**autoritaire** *adj* 1. հեղինակավոր 2.  
ազդեցիկ, տիրական, իշխող 3.  
*դվնգ.* ավտորիտար (իշխանու-  
թյուններին անվերապահ ենթա-  
կայության համակարգի մասին)  
 $\diamond$  régime ~ ավտորիտար համա-  
կարգ  
**autorité** *f* 1. իշխանություն 2. ազդե-  
ցություն, կշիռ, հեղինակություն  
 $\diamond$  faire ~ հեղինակություն ունե-  
նալ, վճռորոշ ազդեցություն  
ունենալ; invoquer l' ~ du président  
վկայակոչել նախագահի հեղի-  
նակությունը; de pleine ~ լիա-  
կատար իրավունքով  
~ de la loi օրենքի ուժը  
~ morale հեղինակություն  
~ suprême գերագույն իշխանու-  
թյուն  
**autorités** *f pl* ղեկավարություն, իշ-  
խանություններ, պետական վար-  
չական մարմիններ; պատաս-  
խանատու պաշտոնական ան-

- ձինք  $\diamond$  avoir recours aux ~ compé-  
 tentes դիմել իրավասու իշխա-  
 նություններին; remettre aux ~  
 policières հանձնել ոստիկաննե-  
 րին  
 ~ civiles քաղաքացիական իշ-  
 խանություններ  
 ~ locales տեղական իշխանու-  
 րություններ  
 ~ militaires ռազմական իշխա-  
 նություններ
- auto-suffisance** *f* ինքնապահովում  
 ~ alimentaire պարենով ինքնաա-  
 պահովում
- à tout prix** տես՝ prix
- autrichien**, -ne *adj* ավստրիական
- avance** *f* 1. կանխավճար, կանխա-  
 վարձ 2. առաջխաղացում 3. գե-  
 րակշռություն, գերազանցություն  
 $\diamond$  payer d'~ ժամկետից շուտ  
 վճարել; en ~ ժամկետից շուտ,  
 նախօրոք, կանխապես; d'~, par  
 ~ նախօրոք, նախապես  
 ~ d'argent դրամական կանխա-  
 վճար  
 ~ sur règlement կանխավճար
- avancé**, -e *adj* 1. առաջադեմ, առա-  
 ջադիմական 2. նախապես  
 վճարված, կանխավճարված  $\diamond$   
 idées ~es առաջադիմական հա-  
 յացքներ; sommes ~es նախապես  
 վճարված գումարներ
- avancement** *m* բարձրացում (պաշ-  
 տոնական դիրքի), առաջխաղա-  
 ցում (աշխատանքում), առա-  
 ջադրում, առաջընթաց
- avancer** *vt* 1. առաջադրել, առաջ  
 քաշել 2. արագացնել 3. պարտք  
 տալ, փոխ տալ; կանխավճար  
 տալ
- ~ un argument փաստարկ բերել  
 ~ une candidature թեկնածությունը  
 առաջադրել  
 ~ une opinion կարծիք հայտնել
- avances** *f pl* առաջին քայլ (օր.  
 հաշտության)  $\diamond$  nos ~ ont été  
 reçues մեր առաջարկությունը ըն-  
 դունվեց; faire les ~ ընդառաջել,  
 ընդառաջ գնալ
- avantage** *m* 1. շահ, օգուտ, առավե-  
 լություն 2. արտոնություն  $\diamond$  béné-  
 ficié des ~s արտոնություններից  
 օգտվել; offrir des ~s արտոնու-  
 րություններ տալ; tirer ~ օգուտ քա-  
 դել; à son ~ իր օգտին, ի օգուտ  
 իրեն
- ~ réciproque, ~ mutuel փոխա-  
 դարձ օգուտ
- avantager** *vt* առավելություն տալ,  
 արտոնություններ տալ, ավելի  
 բարենպաստ պայմանների մեջ  
 դնել
- avantageux**, -se *adj* շահավետ, օգ-  
 տավետ, շահեկան, օգտակար  $\diamond$   
 à des conditions avantageuses շա-  
 հավետ պայմաններով
- avant-coureur** *m* նախակարապետ,  
 նախագուշակ, նախանշանակ;  
 սուրհանդակ, բանբեր
- avant-garde** *f* ավանգարդ, առաջա-  
 պահ ջոկատ  $\diamond$  se mettre à l'~  
 գնալ առջևից, գլխավորել
- avant-guerre** *f* նախապատերազմա-  
 կան ժամանակաշրջան
- avant-projet** *m* նախնական նախա-  
 գիծ
- avant-propos** *m* առաջաբան, նա-  
 խաբան
- avatar** *m* փոփոխություն; վերա-  
 մարմնավորում; փոփոխակա-



- նություն, անկայունություն
- avenant**, -e *adj* սիրալիր, բարեհամբույր ◊ à l'~ համապատասխան, համեմատ; à l'~ de համապատասխանարար
- avènement** *m* 1. գահի վրա բարձրացում, գահակալում 2. գալը, գալուստ, սկսվելը, վրա հասնելը ◊ l'~ d'une ère nouvelle նոր դարաշրջանի գալուստը
- avénir** *m* ապագա, գալիք ◊ scruter l'~ avec certitude վստահորեն նայել ապագային; à l'~ այսուհետև, ապագայում, հետագայում; plein d'~ մեծ հույսեր ներշնչող  
~ assuré ապահով ապագա  
~ radieux պայծառ ապագա
- aventure** *f* արկածախնդրություն, բախտախնդրություն ◊ ploitique d'~ արկածախնդիր քաղաքականություն  
~ guerrière ռազմական արկածախնդրություն
- avenu**, -e *adj* : non ~ անվավեր; անհիմն
- avéré**, -e *adj* ապացուցված, հավաստի, հաստատված
- avérer** *vt* հաստատել, հավաստել, ապացուցել ◊ s'~ լինել; հաստատվել; s'~ nul անվավեր լինել; s'~ progressif դրսևորվել, որպես առաջադեմ մարդ; s'~ bon organisateur իրեն դրսևորել, որպես լավ կազմակերպիչ
- averti**, -e *adj* գիտակ, փորձառու, իրազեկ, տեղյակ ◊ ~ par l'expérience փորձով հմտացած
- avertir** *vt* նախազգուշացնել; ծանուցել, հայտնել
- avertissement** *m* ծանուցում, տեղեկացում; նախազգուշացում ◊ donner un ~ իմաց տալ, զգուշացնել
- aveu** *m* 1. խոստովանում, խոստովանություն 2. համաձայնություն, հավանություն ◊ arracher (կամ extorquer) des ~x խոստովանեցնել, խոստովանություն կորզել; passer aux ~x հանցանքները խոստովանել; de son ~ իր համաձայնությամբ; sans votre ~ առանց ձեր համաձայնության
- aviation** *f* ավիացիա, օդագնացություն  
~ de chasse կործանիչ ավիացիա  
~ civile քաղաքացիական ավիացիա
- avilir** *vt* 1. ստորացնել, նվաստացնել 2. արժեզրկել
- avilissement** *m* 1. ստորացում, նվաստացում 2. արժեզրկում; անկում, իջեցում  
~ des niveaux de vie կենսամակարդակի իջեցում  
~ des salaires աշխատավարձի իջեցում
- avion** *m* ինքնաթիռ, օդանավ ◊ à bord d'un ~ ինքնաթիռի մեջ  
~ de ligne ուղևորատար ինքնաթիռ  
~ à réaction ռեակտիվ ինքնաթիռ  
~ spatial տիեզերական ինքնաթիռ
- avion-fusée** *m* հրթիռային շարժիչով ինքնաթիռ; թևավոր հրթիռ; ինքնաթիռ-արկ, ամօդաչու ինքնաթիռ
- avis** *m* 1. կարծիք 2. ծանուցում, հա-

 ~ romains հռոմեական թվանշաններ
- chiffre** *vi* 1. հաշվել, հաշվարկել 2. թվագրել 3. ծածկագրել, գաղտնագրել ◊ se ~ ա) (à) հասնել (որոշակի գումարի) բ) (par, en) գնահատվել, հաշվվել, հաշվարկվել; se ~ par millions հաշվվել՝ գնահատվել միլիոններով
- chinoise**, *-e adj* չինական
- choix** *m* 1. ընտրություն 2. ընտրում, ընտրելը, ջոկելը ◊ au ~ de ըստ ընտրության; de ~ ընտրովի, ընտիր, լավագույն; embarras de ~ մեծ ընտրություն; faire un bon choix ճիշտ ընտրություն կատարել; faire son ~ ընտրություն կատարել; de premier ~ բարձրակարգ, բարձրորակ, առաջին կարգի
- chômeur** *m* 1. գործազրկություն 2. անգործություն, պարապություն ◊ allocation (կամ indemnités, secours) de ~ գործազրկության նպաստ; assistance ~ գործազրկության ապահովագրություն; croissance du ~ գործազրկության աճ; être en (au) ~ գործազուրկ լինել; être inscrit au ~ գործազուրկի կարգավիճակ ունենալ և նպաստ ստանալ  
 ~ caché գաղտնի, աննկատ գործազրկություն
- ~ partiel մասնակի գործազրկություն  
 ~ structurel կառուցվածքային գործազրկություն (քիչ զարգացած երկրներում)  
 ~ technique աշխատանքի դադարեցում տեխնիկական պատճառներով  
 ~ technologique տեխնիկական առաջընթացով պայմանավորված գործազրկություն  
 ~ saisonnier սեզոնային գործազրկություն
- chômeur** *vi* 1. գործազուրկ լինել 2. չաշխատել, դադարեցնել աշխատանքը ◊ laisser ~ les capitaux կապիտալը անգործության մատնել
- chômeur** *m* գործազուրկ  
 ~ inscrit գրանցված գործազուրկ
- chute** *f* 1. անկում, ընկնելը 2. նվազում, կրճատում 3. *փխբ.* կործանում, տապալում, ձախողում  
 ~ du cabinet, ~ du ministère նախարարության, կառավարության տապալում  
 ~ d'une monnaie արժույթի փոխարժեքի նվազում  
 ~ des prix գների անկում
- ci-annexé**, *-e adj* կցվող, կից դրվող
- ci-après** *adv* ստորև, այնուհետև
- ci-contre** *adv* կողքին; մյուս էջին, հաջորդ էջին
- ci-dessous** *adv* ստորև, ներքևում, ներքնիչյալ
- ci-dessous** *adv* հետևյալ, հաջորդ
- ci-dessus** *adv* վերը, վերևում, վերնիչյալ
- ci-inclus** *adv* ներդիրով, դրան կցվում է

**ci-inclus**, -e *adj* ներառված  
**ci-joint** *adv* կից, մոտիկ  
**ci-joint**, -e *adj* կցվող, կից գրվող  
**ci-présent** *adv* ներկա գտնվող, ներկա, առկա գտնվող  
**circinscription** *f* սահմանափակում; շրջան, տարածք  
 ~ électorale ընտրատարածք  
 ~ militaire ռազմական տարածք  
**circinscrire** *vt* սահման հանդիսանալ, շրջափակել, սահմանափակել  
**circumstance** *f* հանգամանք, պարագա, կացություն; պայման ◊ concours de ~s հանգամանքների բերում՝ զուգադիպում; dans les ~s présentes (կամ actuelles) ներկա պայմաններում; en la ~ տվյալ պարագայում, այժմ; par la force des ~s հանգամանքների պատճառով; suivant les ~s, selon les ~s ըստ հանգամանքների; se plier aux ~s հանգամանքներին հարմարվել  
 ~s aggravantes ծանրացուցիչ հանգամանքներ  
 ~s atténuantes մեղմացուցիչ հանգամանքներ  
 ~s déterminantes *հրվք.* հանցագործին բացահայտող հանգամանքներ  
 ~s exceptionnelles արտակարգ հանգամանքներ  
 ~s imprévisibles չնախատեսված հանգամանքներ  
**circuit** *m* 1. շրջան, պտույտ, օղակ 2. շրջուղի, շրջանցիկ (գարտուղի) ճանապարհ 3. *pl* ուղիներ, միջոցներ; ցանց ◊ être hors de ~, ne plus être dans le ~

հեռու մնալ, չխառնվել  
 ~s bancaire բանկային ցանց  
 ~ fermé փակ շրջան; *փխք.* փակ համակարգ  
 ~s de financement ֆինանսավորման միջոցներ  
 ~s financiers ֆինանսական հաստատությունների ցանց  
 ~s parallèles ստվերային տնտեսություն  
 ~ de la production արտադրական շրջապտույտ (ցիկլ)  
 ~ de distribution կիսովարձույթ  
**circulaire** *f* շրջաբերական, շրջաբերական նամակ  
**circulation** *f* 1. շրջանառություն, շրջապտույտ, պտույտ 2. երթևեկություն ◊ mettre en ~ շրջանառության մեջ դնել; retirer de la ~ շրջանառությունից հանել  
 ~ à un [à deux] sens միակողմանի [երկկողմանի] երթևեկություն  
 ~ des marchandises ապրանքաշրջանառություն  
 ~ monétaire դրամաշրջանառություն  
**circuler** *vi* 1. շարժվել, ընթանալ (ավտոմեքենայի մասին), երթևեկել 2. շրջանառել, շրջանառության մեջ լինել 3. *հնցծ.* շրջապտույտ գործել 4. տարածվել (լուրեր և այլն) ◊ faire ~ շրջանառության մեջ դնել  
**citadelle** *f* 1. ամրոց, միջնաբերդ 2. *փխք.* պատվար, հենարան  
**citadin** *m* քաղաքի բնակիչ, քաղաքաբնակ  
**citation** *f* 1. մեջբերում, քաղվածք 2. դատարան կանչելը, որպես վկա կամ պաշտպան; ծանուցագիր 3.

- ազգ.* շնորհակալության հայտնում՝ հրամանով
- cité** *f* քաղաք; ավան; բնակավայր ◊ *droit de* ~ քաղաքացիության իրավունք; *la Cité* քաղաքի հին հատվածը; Միտե (Փարիզում); Միտի (Լոնդոնում)
- ~ *militaire* զինվորական ավան  
~ *sainte* սուրբ քաղաք (Երուսաղեմի մասին)
- citer** *vt* 1. մեջբերել, մեջբերում անել; վկայակոչել 2. դատարան կանչել 3. նշել, հիշատակել
- citoyen** *m* քաղաքացի
- citoyenneté** *f* հպատակություն, քաղաքացիություն
- civil**, -*e adj* 1. քաղաքացիական 2. *հնգծ.* քաղաքավարի, բարեկիրթ, հարգալի ◊ *code* ~*e* քաղաքացիական օրենսգիրք; *droit* ~ քաղաքացիական իրավունք; *état* ~ քաղաքացիական դրություն; *guerre* ~*e* քաղաքացիական պատերազմ; *mariage* ~ քաղաքացիական ամուսնություն
- civilisation** *m* քաղաքակրթություն, մշակույթ
- civilisé**, -*e adj* քաղաքակիրթ, բարեկիրթ
- civiliser** *vt* 1. քաղաքավարի դարձնել 2. կրթել, լուսավորել, դաստիարակել
- civilité** *f* քաղաքավարություն, բարեկրթություն
- civique** *adj* քաղաքացուն բնորոշ, քաղաքացիական ◊ *droits* ~*s* քաղաքացիական իրավունքներ; *dégradation* ~ իրավունքների սահմանափակում; *éducation* ~, *instruction* ~ քաղաքացիական իրավունքների ուսուցում; *sens* ~ գիտակցականություն; քաղաքացիական պարտքի զգացում
- civisme** *m* քաղաքացիական արիություն; օրինապահություն; քաղաքացիական պարտքի գիտակցություն
- claironner** *vi, vt* 1. շեփորել 2. *փիլս.* հռչակել, ավետել, տարածել
- clairvoyant**, -*e adj* խորաթափանց, սրաթափանց, հեռատես, պայծառատես
- clandestin**, -*e adj* գաղտնի, ընդհատակյա ◊ *action* ~*e* ընդհատակյա աշխատանք
- classe** *f* 1. դասակարգ, շերտ, խավ 2. դաս, կարգ ◊ *conscience de* ~ դասակարգային գիտակցություն; *contradictions de* ~ դասակարգային հակասություններ; *lutte de* ~*s* դասակարգային պայքար; *société de* ~*s* դասակարգային հասարակություն; *société sans* ~*s* անդասակարգ հասարակություն; *rapports de* ~*s* դասակարգային հարաբերություններ ~*s* *dirigentes* կառավարող դասակարգեր  
~ *dominante* տիրապետող դասակարգ  
~*s* *hostiles* անտազոնիստական դասակարգեր  
~ *laborieuse* աշխատավոր դասակարգ  
~*s* *moyennes* բնակչության միջին դաս  
~ *ouvrière* բանվոր դասակարգ  
~*s* *possédantes*, ~*s* *nanties* ունևոր դասակարգեր  
~ *au pouvoir* իշխող դասակարգ

**classement** *m* դասակարգում, բա-  
ժանում ըստ կարգերի, տեսակա-  
վորում

**classer** *vt* տեսակավորել, դասա-  
կարգել 2. որակավորել  
~ une affaire գործը կարճել

**classification** *f* դասակարգում

**classifier** *vt* դասակարգել

**clause** *f* պայմանագրի հոդված,  
դրույթ, կետ; համաձայնագիր;  
վերապահում, վերապահություն,  
սահմանափակիչ պայման ◊  
dans les ~s de l'armistice զինա-  
դադարի պայմաններում; abolir  
une ~ վերապահությունը հանել;  
inclure une ~, insérer une ~ վերա-  
պահություն մտցնել  
~ du contrat պայմանագրի հոդ-  
ված, կետ

~s discriminatoires խտրականու-  
թյուն դնող հոդվածներ

~ de garantie երաշխիքային պայ-  
ման

~ de la nation la plus favorisée  
առավել բարենպաստ վերապա-  
հություն

~ de non-concurrence վերապա-  
հություն չմրցակցելու մասին

~s restrictives սահմանափակող  
պայմանագրեր, սահմանափա-  
կող համաձայնագրեր

~ de sauvegarde պաշտպանա-  
կան վերապահություն

~ standard կանոնադրության  
կարգավորման հոդված

**clausula rebus sic stantibus** (*լատ.*)

«անփոփոխ հանգամանքների  
վերապահում» (վերապահում,  
որը պայմանավորվող կողմերից  
մեկին կամ մի քանիսին հիմք է

տալիս պայմանագրի միակողմ  
կասեցման համար այն դեպքե-  
րում, երբ այդ պայմանագրի  
կնքման և գործողության հան-  
գամանքները կրել են լուրջ փո-  
փոխություններ)

**clé, clef** *adj* կարևորագույն, վճռորոշ,  
գլխավոր ◊ concepts-clés հիմնա-  
բար հասկացություններ; prob-  
lème-clé կարևորագույն խնդիր;  
secteur-clef կարևորագույն բնա-  
զավառ

**clé, clef** *f* բանալի ◊ à la ~ գործի  
ավարտին, ի լրումն; industries ~s  
արդյունաբերության առաջա-  
տար ճյուղերը

~ de voûte հիմք, բազա; գլխա-  
վորը

**clergé** *m* հոգևորականություն, հո-  
գևորական դաս

**climat** *m* մթնոլորտ, իրադրություն,  
իրավիճակ, հանգամանք ◊ dans  
un climat cordial (chaleureux),  
d'amitié (amical), de compréhen-  
sion mutuelle, de sincérité ջերմ,  
բարեկամական, փոխըմբռնման,  
անկեղծության մթնոլորտում

~ international միջազգային իրա-  
վիճակ

~ de paix խաղաղ իրադրություն

~ politique քաղաքական մթնո-  
լորտ

**clore** *vt* 1. փակել, կողպել, փական-  
քի տակ դնել 2. ավարտել, կա-  
տարել (գործարք)

~ un compte հաշիվը փակել

~ un marché գործարք կնքել

**clos**, -e *adj* 1. փակ 2. ավարտված,  
փակված ◊ à huis ~ *իրվք.*  
դռնփակ, փակ դռների հետևում;

- à porte ~e գաղտնի, առանց վկաների; déclarer ~e la session parlementaire խորհրդարանական նստաշրջանը հայտարարել փակված
- clôture** *f* փակում, ավարտ ◊ discours de ~ եզրափակիչ ելույթ; séance de ~ եզրափակիչ նիստ  
~ des débats մտքերի փոխանակումների եզրափակում  
~ de séance նիստի փակում
- coaliser** *vt* միավորել մեկ միության մեջ, համախմբել ◊ se ~ միավորվել, կռալիցիա կազմել
- coalisé**, -e *adj* միավորված, դաշնակից
- coalisés** *m pl* դաշնակիցներ, դաշնակից պետություններ
- coalition** *f* կռալիցիա, դաշինք, միություն
- code** *m* 1. օրենսգիրք, օրենքների ժողովածու 2. դրույթ; օրենք; կանոն  
~ agraire հողային օրենսգիրք  
~ civil քաղաքացիական օրենսգիրք  
~ militaire զինվորական կանոնադրություն  
~ pénal քրեական օրենսգիրք  
~ de politesse քաղաքավարության կանոններ  
~ de procedure civile քաղաքացիական դատավարության օրենսգիրք  
~ de la route երթևեկության կանոններ  
~ de travail աշխատանքային օրենսգիրք
- codification** *f* 1. օրինակարգավորում, կոդիֆիկացում, օրենքների համակարգում 2. կոդավորում, ծածկագրում
- coercitif**, -ve *adj* հարկադրական, հարկադիր, ստիպողական ◊ par voie coercitive հարկադրաբար, ստիպողաբար
- coexistence** *f* գոյակցություն, համագոյություն, համատեղ կյանք  
~ pacifique խաղաղ գոյակցություն
- coexister** *vi* գոյակցել, համագոյակցել
- cohésion** *f* 1. սերտ միաբանություն, սերտ կապվածություն, համախմբվածություն, միասնություն 2. կապ, միացում 3. համաձայնեցվածություն, շղկապվածություն  
~ du front populaire ազգային ճակատի միասնություն  
~ du peuple ժողովրդի համախմբվածություն
- coïncidence** *f* համընկում, զուգադիպություն, զուգադիպում
- coïncider** *v* համընկնել, զուգադիպել
- colis** *m* փաթեթ, ծանրոց, կապոց  
~ postal փոստային ծանրոց
- collaborateur** *m* աշխատակից, գործընկեր
- collaboration** *f* 1. համագործակցություն, փոխգործակցություն; համատեղ գործունեություն, համաձայնեցված գործողություններ 2. թշնամու հետ գործակցում
- collaborationnisme** *m* կոլաբորացիոնիզմ (թշնամու, բռնագավթիչ իշխանությունների հետ գործակցում)
- collaborationniste** *m f* կոլաբորացիոնիստ (թշնամու, բռնագավթիչ

- իշխանությունների հետ գործակցող)
- collecte** *f* 1. հավաքում, ժողովում (ստորագրությունների) 2. կուտակում, կենտրոնացում 3. գանձում  
~ de données տվյալների հավաքում  
~ des dépôts ավանդների ընդունում  
~ des impôts հարկերի գանձում  
~ des ressources, ~ fonds դրամական միջոցների կուտակում  
~ de statistiques վիճակագրական տվյալների հավաքում
- collectif**, -ve *adj* միասնական, միատեղ, միացյալ, հավաքական, համատեղ, կոլեկտիվ, կոլեգիալ  
◇ conscience ~ve հասարակական, խմբային գիտակցություն; contrat ~, convention ~ve համատեղ պայմանագիր; économie ~ve, exploitation ~ve կոլեկտիվ տնտեսություն
- collectif** *m* 1. աշխատակազմ, աշխատանքային խումբ 2. : ~ (bud-jétaire) բյուջեում փոփոխությունների վերաբերյալ օրինագիծ
- collecter** *vt* 1. հավաքել, ժողովել 2. կուտակել, կենտրոնացնել 3. գանձել
- collectivité** *f* 1. կոլեկտիվ, խումբ, հանրություն 2. մարմին, կազմակերպություն 3. վարչատարածքային միավոր  
~ locale (territoriale) տեղական ինքնակառավարման մարմին; վարչատարածքային կազմավորում  
~ publique պետական մարմին;
- կառավարման մարմին  
~ de travail աշխատանքային կոլեկտիվ
- collision** *f* ընդհարում, բախում, կոլիզիա ◇ entrer en ~ ընդհարվել, բախման մեջ մտնել  
~ des intérêts շահերի բախում
- colloque** *m* առանձնագրույց, խոսակցություն; հարցազրույց, զրույց, սեմինար; միջազգային գիտական խորհրդակցություն
- collusion** *f* *հրվթ.* գաղտնի համաձայնություն, գաղտնի կապ, գործարք; դավադրություն ◇ politique de ~ համաձայնության քաղաքականություն
- colon** *m* 1. նորաբնակ, գաղութաբնակ 2. վարձակալ 3. ճամբարում հանգստացող երեխա
- colonial**, -e *adj* գաղութային, գաղութատիրական ◇ politique ~e գաղութատիրական քաղաքականություն; pays coloniaux գաղութային երկրներ; troupes ~es գաղութատիրական զորքեր
- colonialisme** *m* գաղութատիրություն; գաղութային համակարգ
- colonialiste** *m* գաղութաբնակ
- colonialiste** *adj* գաղութային, գաղութատիրական ◇ oppression ~ գաղութային ճնշում; guerre ~ գաղութային պատերազմ; politique ~ գաղութային քաղաքականություն
- colonie** *f* գաղութ; գաղթօջախ
- colonisateur** *m* գաղութարար
- colonisation** *f* 1. գաղութացում, գաղութների գավթում 2. վերաբնակեցում
- coloniser** *vt* 1. գաղութացնել, գաղութ

- դարձնել 2. գաղութարճակեցնել, վերարճակեցնել
- combat** *m* 1. մարտ, կռիվ 2. ճակատամարտ 3. *փխբ.* վեճ, պայքար ◊ *amitié de ~* մարտական ընկերություն; *livrer ~* ճակատամարտ տալ; *mettre hors de ~* շարքից հանել  
~ *corps à corps* ձեռնամարտ  
~ *offensif [défensif]* հարձակողական [պաշտպանողական] մարտ
- combativité** *f* 1. մարտունակություն 2. մարտական ոգի
- combattant** *m* մարտիկ, ռազմիկ; պատերազմի մասնակից ◊ *ancien ~* նախկին ճակատային զինվոր, պատերազմի վետերան; *les ~s de la paix* խաղաղության մարտիկներ
- combinaison** *f* կոմբինացիա, համակցություն, զուգակցություն
- combiné**, *-e adj* համաձայնեցված, համակցված ◊ *action ~e* համատեղ գործողություններ; *les armées ~es* միավորված բանակներ
- combiner** *vt* միավորել, միացնել, միակցել, համակցել; համաձայնեցնել
- comble** *m* *փխբ.* գագաթնակետ, բարձրագույն աստիճան ◊ *être au ~ de la gloire* փառքի գագաթնակետին լինել; *mettre le ~ à* ավարտել, վերջացնել, լրացնել; *c'est le (կամ սո) ~* սա վերջն է; էլ տեղ չկա, վերջին սահմանն է; սա չափազանց է; *pour ~ (de...)* ի լրումն ամեն ինչի
- combler** *vt* 1. ամբողջովին լցնել, համակել, տոգորել 2. լրացնել, ծածկել 3. առատորեն վրան տեղալ, շաղ տալ, շռայլորեն նվիրել, օժել, շնորհել, պարգևել 4. բավարարել ◊ *vous me comblez* դուք շատ բարեհաճ եք իմ նկատմամբ  
~ *la fissure* բացը լրացնել  
~ *d'honneurs* առատ մեծարանքներ շնորհել  
~ *les lacunes* բաց տեղերը լրացնել
- comité** *m* կոմիտե ◊ *Comité économique et social* Տնտեսական և սոցիալական կոմիտե (Ֆրանսիայում)  
~ *des arts* արվեստների գծով կոմիտե  
~ *d'action*, ~ *d'assistance* համագործակցության կոմիտե  
~ *consultatif* խորհրդակցական կոմիտե  
~ *des désignations* թեկնածուների առաջադրման կոմիտե  
~ *de direction* վարչություն  
~ *exécutive* գործադիր կոմիտե  
~ *gestion* կառավարման կոմիտե (ձեռնարկության և այլն)  
~ *intérimaire* ժամանակավոր կոմիտե  
~ *local syndical* տեղական կոմիտե, տեղկոմ  
~ *de lecture* գրական - գեղարվեստական խորհուրդ (հրատարակչությունում)  
~ *mixte* խառը կոմիտե  
~ *d'usine*, ~ *d'entreprise* գործարանային կոմիտե
- commandant** *m* 1. հրամանատար 2. մայոր 3. պարետ  
~ *de l'armée* բանակի հրամանատար



- ~ en chef գլխավոր հրամանատար
- commande** *f* 1. պատվեր 2. հրաման 3. կառավարում, ղեկավարում ◊ annuler une ~ պատվերը չեղյալ հայտարարել; enregistrer une ~ պատվեր ընդունել; exécuter une ~ պատվեր կատարել; faire une ~ պատվեր տալ; obtenir une ~ պատվեր ստանալ; passer une ~ պատվեր հանձնել; les leviers de ~ ղեկավարման լծակները
- commander** 1. *vt* ա) հրամայել, հրաման տալ, հրաման արձակել, կարգադրել բ) պատվիրել գ) *փ/հսք.* ներշնչել, արթնացնել, հարուցել 2. *vi* կառավարել, տնօրինել, իշխել, իշխանություն ունենալ  
~ l'admiration հիացմունք առաջացնել  
~ l'estime հարգանք ներշնչել  
~ en maître տնօրինել, կամայականորեն գործել
- comme il faut** պատշաճ, ինչպես որ կարգն է, վայելուչ
- commentaire** *m* մեկնաբանություն ◊ n'avoir pas besoin de ~s, se passer de ~s մեկնաբանություններ չպահանջել; sans ~s !, point de ~s ! առանց մեկնաբանությունների; on vous épargne vos ~s, pas de ~ լավ կլինի, որ լռեք
- commerce** *m* առևտուր, գործ ◊ ouvrir un ~ խանութ՝ ընկերություն բացել; գործ դնել  
~ de détail մանրածախ առևտուր  
~ extérieur արտաքին առևտուր  
~ de gros մեծածախ առևտուր  
~ illégal սև շուկա
- ~ intérieur ներքին առևտուր  
~ privé մասնավոր առևտուր
- commercer** *vi* առևտուր անել
- commercial**, -e *adj* առևտրային, առևտրական ◊ accord ~ առևտրային պայմանագիր; entreprise ~e առևտրային ձեռնարկություն
- commettre** *vt* 1. կատարել, գործել 2. *հրվք.* նշանակել, կարգել  
~ un crime հանցագործություն կատարել  
~ qn à un emploi մեկին տեղավորել որևէ պաշտոնի  
~ un parjure երդմնազանցություն կատարել, ուխտադրություն կատարել
- commis** *m* ծառայող (գրասենյակային, առևտրային); առևտրական միջնորդ, կոմիսիոներ ◊ Grand ~ de l'Etat բարձրաստիճան պաշտոնյա  
~ de banque բանկի ծառայող  
~ voyageur շրջիկ գործակալ
- commissaire** *m* 1. լիազոր 2. կոմիսար 3. հանձնաժողովի անդամ (օր. խորհրդարանական) ◊ haut ~ գերագույն կոմիսար  
~ adjoint de la République իշխանության ներկայացուցիչ օկրուգում  
~ aux comptes հաշվարկները ստուգող վերահսկիչ, ռևիզոր  
~ du gouvernement կառավարության լիազոր (որը ստուգում է հանրային ձեռնարկության աշխատանքը); պետական իշխանության ներկայացուցիչ (դատական մարմիններում)  
~ de police ոստիկանական կոմիսար

~ de la République կենտրոնական իշխանության ներկայացուցիչ դեպարտամենտում

**commission** *f* հանձնաժողով, կոմիտե, խորհուրդ ◊ Commission des Affaires étrangères de la Chambre Արտաքին գործերի խորհրդարանական հանձնաժողով; délimiter la compétence de la ~ սահմանել հանձնաժողովի կառավարման շրջանակը; être membre d'une ~ հանձնաժողովի անդամ լինել; Première ... Sixième ~ de l'Assemblée Générale Գլխավոր ասամբլեայի առաջին... վեցերորդ կոմիտե

~ ad hoc հատուկ կոմիտե

~ d'arbitrage միջնորդ հանձնաժողով

~ de conciliation համաձայնողական հանձնաժողով (միջազգային վեճերի խաղաղ կարգավորման ծրագիր մշակելու համար)

~ électorale ընտրական հանձնաժողով

~ conjointe խառը կոմիտե

~ du droit international միջազգային իրավունքի հանձնաժողով

~ des droits de l'homme մարդու իրավունքների հանձնաժողով

~ d'enquête քննչական հանձնաժողով

~ des immunités parlementaires խորհրդարանական անձեռնմխելիության հանձնաժողով

~ des mandats մանդատային հանձնաժողով

~ militaire արտակարգ ռազմական դատարան

~ paritaire պարիտետային (հասարության) հանձնաժողով

վասարության) հանձնաժողով

~ des réparations ռեպարացիոն հանձնաժողով

~ spéciale հատուկ հանձնարարություն

~ de vérification des pouvoirs լիազորությունների վերստուգման կոմիտե

**commun**, -e *adj* 1. ընդհանուր, համատեղ 2. հասարակական, հանրային 3. սովորական, առօրյա ◊ les biens ~s *իր/ը*. ամուսինների համատեղ ունեցվածքը; faire cause ~e միասնաբար գործել; intérêt ~ համընդհանուր բարօրություն; հասարակական շահ; mettre en commun հանրայնացնել; maison ~e քաղաքային ռատուշա, քաղաքապետարան; un protocole ~ ընդհանուր արձանագրություն; la séance ~e համատեղ նիստ; sens ~ առողջ դատողություն; d'une voix ~e միաձայն; en ~ միահամուռ, համատեղ

**communal**, -e *adj* քաղաքային, տեղական, համայնքային ◊ services communaux կոմունալ սպասարկում

**communautaire** *adj* 1. համայնական, ընդհանուր 2. հանրային, քաղաքային, կոմունալ 3. Եվրոպական համագործակցությանը վերաբերող, ընդհանուր շուկային վերաբերող ◊ société ~ primitive նախնադարյան համայնական հասարակարգ; maison ~ հանրակացարան

**communauté** *f* 1. ընդհանրություն (շահերի և այլն) 2. հասարակություն, կոլեկտիվ, համայնք 3.

- ընկերակցություն, միություն, միավորում, համագործակցություն  
 ~ britannique ազգերի բրիտանական միություն  
 ~ européenne եվրոպական միություն  
 ~ d'habitation համակեցություն  
 ~ nationale ազգային միավորում, պետություն  
 ~ de vues, d'idées տեսակետների, գաղափարների ընդհանրություն  
 ~ urbaine քաղաքային միավորում (խոշոր քաղաքների ծայրամասային համայնքների միավորում)
- Communauté** *f* միություն, ընկերակցություն, համագործակցություն  
 ~ Économique Européenne Եվրոպայի տնտեսական համագործակցություն  
 ~ des Etats indépendants (CEI) Անկախ պետությունների միություն  
 ~ Internationale Միջազգային համագործակցություն
- commune** *f* կոմունա (Ֆրանսիայի վարչատարածքային միավորում); համայնք ◊ Commune de Paris *սյուժե*. Փարիզյան Կոմունա; Chambre des ~s Համայնքների պալատ (Անգլիայում)  
 ~ agraire հողագործական կոմունա  
 ~ rurale գյուղական համայնք
- communication** *f* 1. հաղորդում, հաղորդագրություն, տեղեկություն, ծանուցում 2. հաղորդակցություն, կապ, կապի միջոցներ 3. *դվնգ*. հարաբերություն; կապ, շփում (մարդկանց միջև) ◊ obtenir ~ de ծանոթանալ (գործին); տեղեկություններ ստանալ; prendre ~ de l'affaire (des pièces du dossier) *հրվք*. ծանոթանալ գործի նյութերին; voies de ~ հաղորդակցության ուղիներ, կապի միջոցներ  
 ~s diplomatiques դիվանագիտական հարաբերություններ  
 ~ maritime ծովային հաղորդակցություն  
 ~ téléphoniques հեռախոսային կապ
- communiqué** *m* կոմյունիկե, պաշտոնական հայտարարություն միջազգային բանակցությունների կամ համաձայնագրերի վերաբերյալ  
 ~ conjoint համատեղ կոմյունիկե  
 ~ officiel պաշտոնական հայտարարություն  
 ~ des opérations ռազմական գործողությունների ամփոփագիր (պատերազմի ժամանակ)
- communiquer** *vt* հաղորդել, տեղեկացնել, հայտնել, ծանուցել
- communisme** *m* կոմունիզմ, համայնավարություն
- communiste** *adj* կոմունիստական, համայնավարական ◊ camp ~ կոմունիստական ճամբար; conviction ~ կոմունիստական համոզմունք; doctrine ~ կոմունիստական ուսմունք; idéologie ~ կոմունիստական գաղափարախոսություն; Parti ~ de l'Union Soviétique Խորհրդային միության կոմունիստական կուսակցություն
- communiste** *m* կոմունիստ, հա-

- մայնավար  $\diamond$  jeune ~ կոմերիտական
- compagnie** *f* ընկերություն, ընկերակցություն, միություն, կազմակերպություն; առևտրային ձեռնարկություն  
~ d'assurance ապահովագրական ընկերություն  
~ par actions սկզիոներական ընկերություն
- compagnon** *m* 1. ընկեր 2. ուղեկից 3. գործընկեր, ընկերության անդամ  $\diamond$  les Compagnons de la Libération Գիմադրության շարժման մասնակիցներ (շքանշան); traiter de pair à ~ վերաբերվել հավասարը հավասարի պես  
~ d'armes զինակից, զենքի ընկերներ  
~ de table սեղանակից
- compatibilité** *f* համապատասխանություն; համատեղելիություն
- compatible** *adj* համապատասխան; համատեղելի
- compatriote** *m* հայրենակից, համերկրացի
- compensation** *f* փոխհատուցում, հատուցում  $\diamond$  sans ~ անհատույց
- compenser** *vt* փոխհատուցել, հատուցել
- compétence** *f* 1. իրավասություն 2. իրազեկություն, բանիմացություն  $\diamond$  être de la ~ de մեկի իրավասության շրջանակներում լինել
- compétent** *adj* 1. իրավասու, իրավագոր, լիիրավ 2. իրազեկ, բանիմաց, գիտակ
- compétition** *f* մրցույթ, մրցակցություն, մրցակցում  
~ pacifique économique խաղաղ տնտեսական մրցակցություն
- compétitif**, -ve *adj* մրցունակ, մրցակցային  $\diamond$  entreprise ~ive մրցունակ ձեռնարկություն; sec-teur ~ մրցակցային տնտեսական ոլորտ  
~ sur le marché mondial համաշխարհային շուկայի պահանջներին համապատասխան
- complémentarité** *f* կոմպլեմենտարիզմ, փոխլրացում (կոմպլեմենտար արտաքին քաղաքականություն, երբ հարաբերությունները տարբեր երկրների հետ ոչ թե հակադրվում, այլ փոխլրացնում են միմյանց)
- compléter** *vt* լրացնել, համալրել
- complexe** *adj* բարդ, բաղադրյալ, բազմատարր
- complexe** *m* ամբողջություն  
~ architectural ճարտարապետական համալիր  
~ urbain քաղաքային համալիր
- complication** *f* 1. բարդություն; խրթինություն, խառնաշփոթություն, խճճվածություն 2. բարդացում, սրացում
- complice** *adj* 1. մասնակից 2. *փխր.* աջակցող, նպաստող
- complice** *m* հանցակից, մեղսակից
- complicité** *f* 1. մասնակցություն, մեղսակցություն, հանցակցություն 2. համաձայնություն  $\diamond$  agir de ~ avec գործել մեկի հետ համաձայնեցված; en étroite ~ avec սերտ համագործակցությամբ
- compliment** *m* 1. բարև, ողջույն 2. հաճոյախոսություն  $\diamond$  faire ~ à զո հաճոյախոսել մեկին; présenter ses ~s իր հարգանքը հավաստել

**complicuer** *vt* բարդացնել, դժվարացնել, խճճել

**complot** *m* դավադրություն, դավ, սադրանք  $\diamond$  être de ~ մեկի հետ միաբան լինել; tramer (կամ monter, ourdir) un ~ դավադրություն կազմակերպել

**comploter** *vt, vi* դավադրությանը մասնակցել; դավադրություն լարել

**comportement** *m* վարք, վարքագիծ, վարմունք, արարք; վերաբերմունք; գործելակերպ

**comporter** *vt* 1. ենթադրել, ընդունել, հնարավոր համարել 2. ներառնել, կազմված լինել

**composer** 1. *vt* ա) կազմել; կարգի բերել բ) հավաքել (հեռախոսի համար) գ) շարադրել, հորինել դ) ստեղծագործել 2. *vi* (avec զո) գործարքի մեջ մտնել, բանակցությունների մեջ մտնել  $\diamond$  se ~ de բաղկացած լինել  
~ le numéro հեռախոսի համարը հավաքել

**composition** *f* 1. կազմ, կազմություն, կառուցվածք 2. ստեղծագործություն, հորինվածք (երժշտ., նկար., գրակ.) 3. բաղադրություն, խառնուրդ 4. *hngd.* համաձայնություն, փոխադարձ համաձայնություն  $\diamond$  amener զո à ~ փոխադարձ համաձայնության հասնել; de bonne ~ խաղաղասեր, հաշտ, հեշտ համոզվող; entrer en ~ avec... փոխադարձ համաձայնության գալ; en venir à ~ համաձայնել, զիջել  
~ de la commission հանձնաժողովի կազմը

~ des forces ուժերի գումար  
~ sociale սոցիալական կազմ  
~ de classe դասակարգային կազմ

**compréhension** *f* 1. հասկանալու կարողություն, հասկացողություն, ըմբռնողություն, ըմբռնում, խելամտություն 2. բարյացակամություն, ներողամտություն  $\diamond$  avoir la ~ facile շուտ ըմբռնող՝ խելամիտ՝ դյուրիմաց՝ դյուրըմբռնող լինել; être plein de ~ à l'égard de ...ըմբռնումով վերաբերել  
~ mutuelle փոխըմբռնում

**comprendre** *vt* 1. հասկանալ, ըմբռնել 2. պարունակել, բովանդակել, ամփոփել, ներառել  $\diamond$  y compris այդ թվում, ներառյալ; se ~ հասկացվել, ըմբռնվել, ենթադրվել, մտածվել; cela se comprend ինքնին հասկանալի է

**compromettre** *vt* 1. վարկաբեկել, անվանարկել, արատավորել, վնասել (հեղինակությանը) 2. վտանգի ենթարկել, անախորժությունների մեջ գցել 3. ձախողել (աշխատանքը, բանակցությունները)  $\diamond$  se ~ ինքն իրեն վարկաբեկել

**compromis** *m* 1. փոխզիջում 2. հատուկ համաձայնություն (միջնորդական դատարանում), միջնորդական համաձայնություն 3. քաղաքական կամ դիվանագիտական գործարք  $\diamond$  accepter un ~ փոխզիջման գնալ; en arriver à un ~ փոխզիջման հասնել

**comptant** *m* կանխիկ գումարով վճարում  $\diamond$  acheter au ~ գնել կան-

խիկ գումարով; au ~ կանխիկ դրամով; argent ~ կանխիկ դրամ, կանխիկ գումար; payer ~ վճարել կանխիկ (դրամով); prendre pour argent ~ հալած յուղի տեղ ընդունել

**compte** *m* 1. հաշիվ 2. հաշվարկ, վերջնահաշվարկ, վերջնահաշիվ 3. հաշվետվություն  $\diamond$  au bout du ~, en fin de ~ նկատի առնելով, վերջին հաշվով, վերջիվերջո; demander son ~ վերջնահաշիվ պահանջել; demander des ~s à զո հաշվետվություն պահանջել մեկից; devoir des ~s հաշվետու լինել; donner le ~ à զո վերջնահաշիվ տալով պաշտոնից ազատել, հաշիվը փակել; passer (mettre) en ~ հաշվին գրանցել; prendre son ~ ազատվել; recevoir son ~ վերջնահաշիվ ստանալ; rendre ~ de qch հաշիվ տալ, հաշվետվություն ներկայացնել; se rendre ~ que... (de) հասկանալ, գիտակցել; ինքն իրեն հաշիվ տալ, որ... ; tenir ~ de, prendre en ~ հաշվի առնել, նկատի ունենալ; tu te rends ~? պատկերացնում Ես ~ d'avances դրամական վարկերի հաշիվ  
~ courant ընթացիկ հաշիվ  
~ tenu հաշվի առնելով, նկատի առնելով

**compter** *l. vt a)* հաշվել *p)* կարծել, համարել *2. vi a)* մտադրություն ունենալ, կարևորություն ունենալ *p)* հաշվարկել *q)* հույսը դնել, վստահել, ապավինել  $\diamond$  à ~ de... սկսած; à ~ son actif իր հաշվին ունենալ

**compte** – rendu *m* հաշվետվություն, զեկույց, արձանագրություն

**compulser** *vt* տեղեկություններ հավաքել, հարցուփորձ անել

**compulsif**, -ve *adj* հարկադրական, հարկադիր, ստիպողական

**concéder** *vt* շնորհել; տալ, տրամադրել

~ le droit իրավունք տալ

**concentration** *f* կենտրոնացում, համակենտրոնացում, կուտակում; միավորում  $\diamond$  camp de ~ համակենտրոնացման ճամբար  
~ des entreprises ձեռնարկությունների միավորում

**concentrer** *vt* կենտրոնացնել; միավորել

**concept** *m* գաղափար, ընդհանուր հասկացություն, ըմբռնում, պատկերացում  
~ de discrimination խտրականության գաղափար

**conception** *f* 1. հասկացողություն, ըմբռնում, ընկալում, ճանաչողություն 2. հայեցակարգ, աշխարհայացք 3. *ղվնգ.* կոնցեպցիա (գլխավոր, առաջնորդող գաղափար, որի շուրջ կառուցվում է դիրքորոշումը, տեսակետը)  
~ matérialiste մատերիալիստական աշխարհայացք  
~ du monde աշխարհայացք

**concerner** *vt* վերաբերել, կապ ունենալ որևէ բանի հետ  $\diamond$  en ce qui concerne ինչ վերաբերում է նրան

**concert** *m* համաձայնություն, միաբանություն, համերաշխություն  $\diamond$  de ~ avec միասնաբար, միասին; համատեղ; փոխադարձ համաձայնությամբ

**concerté**, -e *adj* համաձայնեցված, նախապես պայմանավորված ◊ activité ~e համաձայնեցված գործողություններ

**concerter** *vt* համաձայնեցնել, կոորդինացնել ◊ se ~ խորհրդակցել; պայմանավորվել, համաձայնվել, համաձայնության գալ ~ les actions գործողությունները կոորդինացնել

**concession** *f* կոնցեսիա (համաձայնագիր կամ պայմանագիր, ըստ որի պետությունը թույլատրություն է տալիս օտարերկրյա ընկերությանը, անհատ անձին՝ տնտեսական գործունեություն ծավալելու իր երկրում), արտոնագիր, թույլտվություն 2. զիջում, տրամադրում, հանձնում ◊ accorder une ~ կոնցեսիա տալ; demander (կամ solliciter) une ~ ; obtenir une ~ կոնցեսիա ստանալ; prolonger une ~ retirer une ~ կոնցեսիան դադարեցնել ~ gouvernementale կառավարական համաձայնագիր ~ de garanties երաշխավորություն տրամադրելը ~ de la pension թոշակի նշանակում ~ d'un prêt վարկի տրամադրում ~ d'usage վարձակալության հանձնում

**conciliateur** *m* միջնորդ, հաշտարար

**conciliation** *f* հաշտություն, հաշտեցում, խաղաղեցում; համաձայնություն; միջնորդություն ◊ appeler (կամ citer) en ~ վիճող կողմերին հաշտության մղել; commission de ~ հաշտարար հանձնաժո-

ղով; par ~ amiable կամավոր համաձայնությամբ, հոժարակամ ~ des parties կողմերի հաշտեցում

**concilier** *vt* հաշտեցնել; համաձայնեցնել; հարաբերությունները կարգավորել

**concis**, -e *adj* սեղմ, համառոտ, լակոնիկ, կարճ

**concitoyen** *m* համաքաղաքացի; հայրենակից, համերկրացի

**conclude** *vt* 1. կնքել (պայմանագիր և այլն) 2. եզրակացնել, հետևություն անել 3. եզրափակել, ամփոփել ◊ pour ~ ի վերջո, վերջացնելով, վերջում, եզրափակելով ~ une affaire գործարք կնքել ~ un armistice զինադադար կնքել ~ un marché գործարք կնքել ~ la paix խաղաղություն կնքել

**conclusion** *f* 1. կնքում (պայմանագրի և այլն) 2. եզրակացություն, մտահանգում, հետևություն 3. ավարտ, եզրափակում, ամփոփում ◊ tirer des ~s հետևություններ անել; en ~ de ... ի վերջո, վերջում, հանրագումարում; en guise de ~ եզրափակելով, վերջացնելով ~ erronée սխալ եզրակացություն ~ d'une affaire գործարքի կնքում ~ d'un contrat պայմանագրի կնքում ~ du mariage ամուսնություն ~ des opérations գործարքների կնքում ~ d'un traité միջազգային պայմանագրի կնքում

**conclusions** *f pl* 1. դատախազի եզրակացությունը 2. կողմերի պահանջները (քաղաքատավարու-

թյան ընթացքում) 3. քաղաքատարությունում կողմերի պահանջները պարունակող փաստաթուղթ

**concomitance** *f* գոյակցություն; գուգադիպություն

**concordance** *f* 1. համապատասխանություն 2. համաձայնություն

**concordat** *m* կոնկորդատ (երկրի կառավարության և Հռոմի պապի միջև կնքված պայմանագիր, որը որոշում է կաթոլիկ եկեղեցու դիրքը և արտոնությունները տվյալ պետության տարածքում)

**concorider** *vi* 1. համապատասխանել, համընկնել 2. համաձայնվել

**concourir** *vi* 1. աջակցել, օժանդակել, օգնել; նպաստել 2. մրցել, մրցակցել  
~ au succès նպաստել հաջողությանը:

**concours** *m* 1. աջակցություն, օժանդակություն, օգնություն 2. մրցույթ, մրցանակաբաշխություն 3. *հնգծ.* մարդկանց հոսք, ամբոխ 4. համընկնում, գուգադիպում ◊ avec votre ~ ձեր օգնությամբ; avec le ~ de ... մասնակցությամբ, աջակցությամբ; être hors ~ մրցույթից դուրս լինել; grand ~ de peuple ժողովրդի մեծ հոսք; mettre au ~ մրցույթի դնել; prêter son ~ աջակցություն ցույց տալ, օժանդակել, նպաստել ~ de circonstances հանգամանքների գուգադիպում  
~ financier ֆինանսական օգնություն  
~ d'honneur մրցույթ առաջնության համար

**conçu**, -e *adj* մտածված, հղացված ◊ un plan bien ~ լավ մտածված պլան; ainsi ~ հետևյալ շարադրմամբ

**concurrency** *f* մրցակցություն ◊ affronter la ~ դիմակայել մրցակցությանը; battre la ~ հաղթահարել մրցակցությունը; à ~ de... չափով; jusqu'à ~ de... ոչ ավելին, քան... չափով; մինչև... գումարը; entrer en ~ մրցակցության մեջ լինել; faire face à la ~ մրցակցությանը դիմանալ; limiter les effets de la ~ մեղմացնել մրցակցության հետևանքները; mettre en ~ ներքաշել մրցակցության մեջ; supporter la ~ մրցակցությանը դիմանալ; supprimer la ~ մրցակցությունը վերացնել; survivre à la ~ մրցակցությանը դիմանալ; tenir tête à la ~ մրցակցությանը դիմակայել  
~ acharnée, ~ agressive, ~ âpre դաժան մրցակցություն  
~ déloyale, ~ malsaine անազնիվ մրցակցություն  
~ effective իրական մրցակցություն  
~ illicite հակաօրինական մրցակցություն  
~ latente գաղտնի մրցակցություն  
~, libre ազատ մրցակցություն  
~ loyale ազնիվ մրցակցություն  
~ monopolistique մենաշնորհային մրցակցություն  
~ à outrance անողորմ մրցակցություն  
~ réglementé սահմանափակված մրցակցություն

**concurrer** *vt* մրցակցել



**concurrent** *m* մրցակից  
 ~ de poids լուրջ մրցակից  
**concussion** *f* կաշառք; կաշառակերություն  
**condamnation** *f* 1. դատապարտում  
 2. դատավճիռ ◊ passer ~ իրեն մեղավոր ճանաչել, մեղքը խոստովանել; prononcer une ~ մեղադրական դատավճիռ կայացնել; subir ~ առանց վճռափոխության գանգատ տալու ընդունել դատավճիռը  
 ~ antérieure նախորդ դատվածություն  
 ~ capitale մահապատիժ սահմանող դատավճիռ  
 ~ conditionnelle պայմանական դատապարտում  
 ~ par défaut հեռակա դատավճիռ  
 ~ à mort մահվան դատավճիռ  
 ~ à (avec) sursis պայմանական դատապարտում  
**condamné**, -e *adj* դատապարտյալ; դատապարտված  
 ~ irrémédiablement անվերադարձ դատապարտված  
 ~ à mort մահվան դատապարտված  
 ~ sous condition պայմանականորեն դատապարտված  
**condamner** *vt* 1. դատապարտել 2. պարսավել, դատափետել  
 ~ énergiquement, résolument դատապարտել խստորեն, վճռակալորեն  
**conditio** sine qua non (*լատ.*) անհրաժեշտ պայման  
**condition** *f* 1. դրություն, վիճակ 2. պայման 3. դիրք, կոչում ◊ à ~ de պայմանով, որ; à des ~ s avanta-

geuses շահավետ պայմաններով; à quelles ~s ինչ պայմաններով; de bonne ~ լավ պայմաններում; de ~ obscure անհայտ ծագումով; dans ces ~s այդ պայմաններում; arrêter (կամ régler) les ~s պայմաններ սահմանել, պայմաններ հաստատել; faire (կամ mettre, poser) les ~s պայմաններ դնել; imposer les ~s պայմաններ պարտադրել; réunir (կամ réaliser, remplir) les ~s պայմանները կատարել, պայմաններ ստեղծել; satisfaire aux ~s պայմաններին բավարարել; sous ~ de պայմանով, որ  
 ~, basse ցածր՝ ոչ ազնվական ծագում  
 ~ s d'emploi աշխատանքի պայմանները  
 ~ s de faveur արտոնյալ պայմաններ  
 ~ de fortune գույքային ցեմզ  
 ~ humaine մարդու ճակատագիր; մարդկային գոյության պայման  
 ~ implicite ենթադրելի պայման, նախապես ընդունելի պայման  
 ~ d'instruction կրթական ցեմզ  
 ~ s onéreuses ծանրացուցիչ պայմաններ  
 ~ sine qua non պարտադիր պայման  
 ~ sociale սոցիալական վիճակ  
**conditionné**, -e *adj* 1. պայմանավորված 2. որոշակի վիճակում գտնվող ◊ bien ~ լավ վիճակում գտնվող; mal ~ վատ վիճակում գտնվող  
**conditionnel**, -le *adj* պայմանական ◊ offre ~le պայմանական առաջարկություն; engagé ~ *լատ.* կա-

- մավոր, որը զինվորական ծառայության է մտնում մեկ տարի ժամանակով (1872-1889 թթ.)
- condoléance** *f* ցավակցություն, վշտակցություն  $\diamond$  faire (կամ présenter, offrir, exprimer) ses ~s ցավակցություն հայտնել, վշտակցել; lettre de ~s ցավակցական նամակ
- condominium** *m* կոնդոմինիում, միջազգային-իրավական համատիրություն, միևնույն տարածքի հանդեպ գերագույն իշխանության համատեղ և անբաժան իրականացում երկու կամ ավելի պետությունների կողմից
- conduire** *vt* 1. տանել, առաջնորդել, ուղեկցել, տեղ հասցնել 2. կառավարել, ղեկավարել, գլխավորել  
~ bien sa barque հմտորեն կառավարել իր գործերը
- conduite** *f* վարում, կառավարում, ղեկավարում, առաջնորդում  
~ d'une affaire գործի վարում  
~ de l'Etat պետության ղեկավարում
- confection** *f* պատրաստում, արտադրում, թողարկում, մշակում  
~ des listes électorales ընտրողների ցուցակների կազմում
- confectionner** *vt* անել, պատրաստել, արտադրել, թողարկել
- confédération** *f* 1. միություն, դաշինք 2. կոնֆեդերացիա, կոնֆեդերատիվ պետություն, համադաշնություն (բարդ պետության տեսակ, որը միավորում է մի քանի սուբյեկտ, որոնցից յուրաքանչյուրն ունի ինքնակառավարման չափազանց մեծ իրավունքներ)  $\diamond$  Confédération Suisse Շվեյցարիայի կոնֆեդերացիա
- confédéré**, -e *adj* դաշնակից  $\diamond$  puissances ~es դաշնակից տերություններ
- confédérer** *vt* դաշինք կազմել, միության մեջ միավորվել
- conférence** *f* խորհրդաժողով, խորհրդակցություն, համագումար; գիտաժողով  $\diamond$  être (կամ entrer) en ~ avec... խորհրդակցել մեկի հետ  
~ diplomatique դիվանագիտական խորհրդաժողով  
~ générale գլխավոր համաժողով  
~ intergouvernementale միջկառավարական խորհրդաժողով  
~ de la Paix հաշտության համաժողով  
~ de presse մամուլի ասուլիս
- conférencier** *m* զեկուցող, դասախոս
- conférer** *vi* խորհրդակցել; գրուցել
- confiance** *f* 1. վստահություն; հավատ 2. *քղք.* վստահություն (կառավարությանը)  $\diamond$  abus de ~ վստահության չարաշահում; avoir ~ en (կամ dans) վստահել, վստահություն տաձել, հավատալ ինչ-որ բանի; faire ~ à մեկին վստահել, հավատ ընծայել; gagner (կամ obtenir, mériter) la ~ արժանանալ վստահության, մեկի վստահությունը շահել; homme de ~ վստահելի անձ; inspirer ~ հավատ ներշնչել; justifier la ~ վստահությունը արդարացնել; mettre (կամ placer) sa ~ en զո հավատալ, վստահությամբ օժտել; perdre ~ հավատը կորցնել;

- poser la question de ~ վստահության հարց բարձրացնել; poste de ~ պատասխանատու դիրք; qui mérite ~ վստահության արժանի; rétablir la ~ վերականգնել վստահությունը; retirer à qn sa ~ գրկել մեկին իր վստահությունից; se sentir en ~ ինքնավստահ զգալ; tromper (կամ trahir) la ~ մեկի վստահությունը չարդարացնել; voter la ~ au gouvernement կառավարությանը վստահության քվե տալ  
 ~ excessive ինքնավստահություն  
 ~ réciproque փոխադարձ վստահություն
- confidentiel**, -le *adj* գաղտնի, գաղտնաբար, գաղտնապես; վստահելի, ապահով
- confier** *vt* 1. վստահել, հանձնարարել 2. հաղորդակից դարձնել  $\diamond$  se ~ հավատ ընծայել, հավատալ  
 ~ des responsabilités առաջ քաշել պատասխանատու պաշտոնի
- confinement** *m* 1. բանտարկություն, ազատագրվում, կալանք, արքոր 2. սահմանափակում
- confiner** 1. *vi* սահմանակից լինել; մոտենալ, ընդհանրություն ունենալ 2. *vt* բանտարկել, ազատագրել
- confins** *m pl* սահմաններ; վերջնակետ  $\diamond$  aux ~ de la terre աշխարհի ծայրին; aux ~ de deux siècles երկու դարաշրջանների սահմանագծին
- confirmation** *f* հաստատում, վավերացում, ամրապնդում, պնդում  
 ~ des accords համաձայնությունների վավերացում
- confiscable** *adj* բռնագրավման ենթակա
- confiscation** *f* բռնագրավում, բռնագանձում
- conflagration** *f* ընդհարում, բախում, լուրջ տարածայնություն, ցնցում  
 ~ mondiale համաշխարհային հրդեհ; պայթյուն
- conflit** *m* 1. հակամարտություն, սուր ընդհարում, բախում 2. *փխբ.* հակասություն, պայքար 3. *իրվբ.* վեճ, ընդհարում  
 ~ armé զինված ընդհարում  
 ~ collectif du travail կոլեկտիվ աշխատանքային վեճ  
 ~ des intérêts շահերի բախում  
 ~ des lois օրենքների բախում, կոլիզիա
- conforme** *adj* 1. նույնանման, միատեսակ 2. համապատասխան, համաձայնեցված 3. ճիշտ; մեծամասնության կարծիքին, ընդունված նորմերին համապատասխան  $\diamond$  pour copie ~ իսկականի հետ ճիշտ է; peu ~ ոչ սովորական, չընդունված; non ~ aux spécifications ոչ կոնդիցիոն, պահանջված որակը չունեցող  
 ~ à la loi օրինաչափ, օրենքին համապատասխան  
 ~ à la raison բանական
- conformément** *adv* ( à ) որևէ բանի հետ համապատասխան, համապատասխանաբար, համեմատ
- conformisme** *m* 1. հարմարվողականություն, համաձայնողականություն, համակերպվողություն 2. քարացածություն, պահպանողականություն, հետամնացություն

**conformiste** *m* 1. հարմարվող անձ, համակերպվող անձ 2. պահպանողական, ավանդապահ

**conformité** *f* համապատասխանություն, նմանություն  $\diamond$  en conformité de... (avec...) զի որևէ բանի հետ համապատասխան; en pleine ~ լիակատար համապատասխանության մեջ; en stricte (կամ parfaite) ~ խիստ համապատասխան

**confraternité** *f* եղբայրություն, բարեկամություն, համերաշխություն

**confrontation** *f* 1. առճակատում, բախում, դիմակայում 2. համեմատում, բաղդատում, համադրում, զուգադրում 3. *իրվք.* առերեսում  
~ des preuves ապացույցների համադրում

**confronter** *vt* 1. դեմ առ դեմ կանգնել, դիմադրել, դիմակայել, առճակատել 2. համեմատել, զուգադրել, համադրել, բաղդատել 3. առերեսում անել  $\diamond$  être confronté à un problème որևէ խնդրի հետ բախվել, խնդրին դեմ առնել

**confusion** *f* 1. անորոշություն, անհստակություն, խառնաշփոթ 2. իրարանցում, խուճապ, խռովություն  $\diamond$  jeter de la ~ sur... իրարանցում, խառնաշփոթ առաջացնել  
~ des idées մտքերի մեջ անորոշություն, խառնաշփոթ; հասկացությունների անորոշություն  
~ mentale գիտակցության մեջ խառնաշփոթ, անորոշություն  
~ de noms, de dates անունների, ամսաթվերի խառնում՝ շփոթում

**congé** *m* 1. արձակուրդ; ոչ աշխատանքային օր 2. ազատում, արձակում, հեռացում; պաշտոնաթողություն, հրաժարական  $\diamond$  accorder un ~ de maladie արձակուրդ տրամադրել հիվանդության պատճառով; demander son ~ վերջնահաշիվ պահանջել; donner ~ à ազատել, հեռացնել; être en ~ արձակուրդի մեջ լինել; prendre un ~ արձակուրդ վերցնել; prendre son ~ թոշակի անցնել  
~ d'ancienneté *նազմ.* ծառայությունից ազատում՝ առավելագույն տարիքին հասնելու պատճառով  
~ de convalescence արձակուրդ՝ առողջական նպատակներով  
~ de maternité հղիության (դեկրետային) արձակուրդ  
~ payé (կամ rémunéré) արձակուրդ՝ աշխատավարձի պահպանմամբ

**congédier** *vt* 1. աշխատանքից ազատել, հեռացնել 2. թոշակի ուղարկել 3. ազատ արձակել, վտարել

**congratulation** *f* շնորհավորանք

**congrès** *m* 1. վեհաժողով, համագումար 2. կոնգրես (օրենսդիր մարմին)  $\diamond$  le Congrès Կոնգրես (ԱՄՆում); le ~ aborde l'examen de la question de... համագումարը սկսում է... հարցի քննարկումը; le ~ passe à l'examen du point deux de l'ordre du jour համագումարը անցնում է օրակարգի երկրորդ կետի քննարկմանը; le ~ se réunit... (կամ se déroulera, se tient à...) համագումարը հրավիրվում է; le ~ renvoie le projet à l'examen

- de la commission համագումարը ուղարկում է նախագիծը հանձնաժողովի քննարկմանը; convoquer (կամ réunir) le ~ համագումար գումարել; clore (կամ clôturer) le ~ համագումարը փակել; déclarer clos les travaux du ~ համագումարը հայտարարել փակված; clôture du ~ համագումարի փակումը; inaugurer (կամ ouvrir) le ~ համագումարը բացել, համագումարը հայտարարել բացված; préparatifs du (pour le) ~ նախապատրաստություն համագումարին; présider le ~, assurer la présidence du ~ նախագահել համագումարում ~ ordinaire [extraordinaire] հերթական [արտահերթ] համագումար
- congressiste** *m* 1. համագումարի անդամ, վեհաժողովի անդամ 2. կոնգրեսական (ԱՄՆ-ում)
- congressman** *m* ամերիկյան կոնգրեսի անդամ
- conjecture** *f* ենթադրություն, կռահում, գուշակություն  $\diamond$  faire des ~s ենթադրություններ անել; être réduit aux ~s, se perdre en ~s ենթադրություններից իրեն կորցնել, շվարել; se livrer à des ~s ենթադրություններ անել
- conjoint**, -e *adj* միացյալ, միավորված, համատեղ, համընդհանուր, միասնական, ընդհանուր  $\diamond$  efforts ~ միացյալ ջանքեր
- conjointement** *adv* միասնաբար, համատեղ, միասին  $\diamond$  agir ~ գործել միասնաբար
- conjonction** *f* միացում, միավորում  $\diamond$  en ~ միասին, համատեղ
- conjoncture** *f* 1. իրադրություն, իրավիճակ, տնտեսական իրավիճակ, կոնյունկտուրա 2. հանգամանքների զուգադիպում, դեպք  $\diamond$  dans la ~ actuelle [présente] արդի տնտեսական պայմաններում ~ historique պատմական իրադրություն ~ politique քաղաքական իրավիճակ
- connaisseur** *m* գիտակ, քաջատեղյակ մարդ
- connexe** *adj* միացյալ; կապված, միացած
- connexion** *f* կապ, միացում; փոխկապվածություն, միացություն  $\diamond$  en ~ avec (de) որևէ բանի կապակցությամբ; mettre en ~ կապել, միացնել
- connexité** *f* կապ, հարաբերակցություն, փոխադարձ կապ, կապվածություն
- connivence** *f* 1. գործակցություն, մասնակցություն 2. հանցակցություն, հանցավոր համաձայնություն, թողտվություն  $\diamond$  de ~ միասնաբար, միաբանորեն
- conquérant** *m* նվաճող, զավթիչ, տիրակալ
- conquérir** *vt* նվաճել, տիրել, հաղթել
- conquête** *f* նվաճում, զավթում  $\diamond$  guerre de ~ զավթողական պատերազմ ~ de l'espace տիեզերքի նվաճում ~ de la majorité մեծամասնության ներգրավումը ~s de la science գիտության նվաճումներ
- consacrer** *vt* 1. նվիրել, ձոնել 2.

տրամադրել, հատկացնել 3. ամրապնդել; հավերժացնել  
 ~ la primauté ամրապնդել առաջնությունը  
 ~ une somme գումար հատկացնել  
 ~ par voie législative ամրապնդել օրենսդրական ճանապարհով

**consciement** *adv* գիտակցաբար

**conscience** *f* 1. գիտակցություն 2. խիղճ 3. բարեխղճություն  $\diamond$  avoir ~ de... գիտակցել, հասկանալ; avoir de la ~ ազնիվ լինել; avoir la ~ élastique կեղծել, կեղծավորություն, երկերեսանություն անել; avoir la ~ nette խիղճը մաքուր լինել; par acquit de ~ խղճի հանգրստության համար; état (կամ fait) de ~ գիտակցական փաստ; se faire ~ խղճի խայթ զգալ; homme de (haute) ~ բարեխիղճ՝ ազնիվ՝ օրինակելի մարդ; liberté de ~ խղճի ազատություն; հավատքի ազատություն; prendre ~ գիտակցել; perdre ~ գիտակցությունը կորցնել, ուշաթափվել; prise de ~ գիտակցում; գիտակցության աճ; en ~, en toute ~, en bonne ~ *loc. adv.* խղճով; բարեխղճորեն  
 ~ de classe դասակարգային գիտակցություն  
 ~ professionnelle մասնագիտական բարեխղճություն, ազնվություն

**conscienceusement** *adv* բարեխղճորեն

**conscient**, -e *adj* 1. գիտակից 2. գիտակցող, հասկացող 3. գիտակցված  
 ~ de sa responsabilité իր պատաս-

խանատվության գիտակցմամբ

**conscriptible** *adj* զինապարտ

**conscription** *f* զինակոչիկների հավաք

**conscrit** *m* նորակոչիկ, զինակոչիկ

**consécration** *f* 1. ձոնում, ընծայում 2. ճանաչում; ամրացում; հաստատում  
 ~ législative օրինականացում

**conseil** *m* խորհուրդ (հաստատություն, կոլեգիալ մարմին) 2. խորհրդակցություն, նիստ 3. դատարան  $\diamond$  Conseil constitutionnel Սահմանադրական խորհուրդ; Conseil économique et social Տնտեսական և սոցիալական խորհուրդ; Conseil d'Etat Պետական խորհուրդ; Conseil de l'Europe (CE) Եվրոպայի խորհուրդ (ԵԽ); Conseil général Գլխավոր խորհուրդ; Conseil législatif Օրենսդիր խորհուրդ; Conseil des Ministres Նախարարների խորհուրդ; Conseil des Nationalités Ազգությունների խորհուրդ; Conseil régional Ռեգիոնալ խորհուրդ (Ֆրանսիայում); Conseil de sécurité Անվտանգության խորհուրդ; Conseil Supérieur de la magistrature Մագիստրատուրայի (դատական վարչության) բարձրագույն խորհուրդ; Conseil Suprême de l'U.R.S.S. ԽՍՀՄ գերագույն խորհուրդ; Conseil de Tutelle Խնամակալության խորհուրդ; tenir ~ նիստ գումարել, խորհրդակցել  
 ~ d'administration վարչական խորհուրդ; կառավարում  
 ~ de cabinet կառավարության

նիստ՝ վարչապետի գլխավորությամբ  
 ~ de guerre *հնգծ*. զինվորական դատարան  
 ~ des ministres նախարարների խորհրդի նիստ  
 ~ municipal մունիցիպալ խորհուրդ, համայնքի ավագանի  
 ~ des Prudhommes միջնորդական դատարան (Ֆրանսիայում)  
 ~ de révision *ռազմ*. գորակոչային խորհուրդ  
 ~ des suppléants փոխնախարարների խորհրդակցություն  
 ~ de surveillance դիտորդական խորհուրդ  
**conseiller** *վ* խորհուրդ տալ  
**conseiller** *m* 1. խորհրդական; խորհրդի անդամ 2. խորհրդատու  
 ~ économique տնտեսական հարցերով խորհրդատու  
 ~ d'Etat պետական խորհրդական (պետական խորհրդի անդամ)  
 ~ juridique իրավախորհրդատու  
 ~ général դեպարտամենտի խորհրդի անդամ; գլխավոր խորհրդական  
 ~ municipal մունիցիպալիտետի խորհրդական  
 ~ principal d'éducation ուսումնական մասի վարիչ (լիցեյում)  
**consensus** *m* կոնսենսուս, ընդհանուր համաձայնություն, որին գալիս են միջազգային բանակցությունների մասնակիցները վիճելի հարցերի շուրջ  
**consentement** *m* համաձայնություն, հավանություն, թույլտվություն ◊ du ~ de tous ընդհանուրի համա-

ձայնությամբ; par ~ des parties կողմերի համաձայնությամբ; refuser son ~ իր համաձայնությունը չտալ  
 ~ d'un emprunt փոխառության տրամադրում  
 ~ forcé հարկադրված համաձայնություն  
 ~ libre կամավոր համաձայնություն  
 ~ mutuel փոխադարձ համաձայնություն  
**consentir** *վ* տրամադրել, թույլ տալ; համաձայնություն տալ, համաձայնել ◊ librement consenti կամավոր; une vérité consentie par tous բոլորի կողմից ընդունված ճշմարտություն  
 ~ des crédits վարկեր տրամադրել  
 ~ un effort ջանք գործադրել  
 ~ des sacrifices զոհողությունների գնալ  
**coséquence** *f* 1. հետևանք, արդյունք, հետևություն 2. կարևորություն, նշանակություն ◊ affaire de ~ կարևոր գործ; avec ~ հետևողականորեն; en ~ համապատասխանաբար, հետևաբար; en ~ de... հետևանքով, պատճառով; de peu de ~ չնչին, աննշան, փոքրիկ; tirer à ~ լուրջ հետևանքների բերել  
 ~s, funestes կործանարար հետևանքներ  
**conservateur** *m* 1. *քղք*. պահպանողական 2. պահապան, օրենքի պահապան, ոստիկան  
 ~ des eaux et des forêts ջրի և անտառների պահապան  
 ~ des hypothèques հիպոթեքների

մատենավար (անձ, որը կատարում է անշարժ գույքի իրավունքի գրանցում)

**conservation** *f* 1. պահում, պահպանում, պահ տալը; պաշտպանում 2. պահպանվածություն 3. գործունեության ժամանակավոր դադարեցում 4. օկրուգ, շրջան ◊ *instinct de ~* ինքնապաշտպանական բնագոյ  
~ *forestière* անտառապետություն

**considérer** *vt* 1. քննել, քննության ենթարկել, լավ կշռադատել, խորհրդածել, լավ մտածել, հաշվի առնել, ուշադրության արժանացնել 2. հարգանք ցույց տալ, գնահատել 3. համարել, ենթադրել, կարծել

**consignataire** *m* ունեցվածքը պահպանող, դրամական միջոցների հսկիչ

**consignation** *f* 1. պահպանման տալը, պահ տալը (դրամական միջոցների, արժեթղթերի) 2. պահպանման տրված ունեցվածք 3. հանձնում՝ դատարանի դեպոզիտ

**consigne** *f* 1. հրահանգ, կանոն; հրաման 2. արգելք ◊ *forcer la ~* արգելքը խախտել; *lever la ~* արգելքը հանել

**consigner** *vt* 1. հրահանգներ տալ 2. արձակուրդից գրկել; *naqul*. արգելել ելք գորանոցից

**consister** *vi* կազմված լինել, բաղկացած լինել

**consolidation** *f* 1. ամրապնդում, ամրացում, պնդացում 2. *տնտ.* կոնսոլիդացում  
~ *de la dette publique* պետական

պարտքի մարման ժամկետի հետաձգում  
~ *de la paix* խաղաղության ամրապնդում  
~ *de la victoire* հաղթանակի ամրապնդում

**consolider** *vt* 1. ամրապնդել, ամրացնել, ուժեղացնել 2. *փխք.* ամրապնդել, հաստատուն դարձնել, կայունապես ապահովել 3. *տնտ.* կոնսոլիդացնել

**consommateur** *m* սպառող

**consommation** *f* սպառում, ծախս ◊ *articles de grande ~* լայն սպառման ապրանքներ; *biens de ~* սպառման առարկաներ; *impôt de ~* սպառման հարկեր; *normes de ~* ծախսի, ելքի նորմեր; *produits de large ~* լայն սպառման ապրանքներ; *société de ~* սպառողական հասարակություն  
~ *courante* լայն սպառում

**consommer** *vt* սպառել, ծախսել

**consorts** *m pl* գործակիցներ

**consortium** *m* կոնսորցիում (խոշոր բանկերի միավորում)

**conspirateur** *m* դավադիր

**conspiration** *f* 1. դավադրություն, գաղտնի համաձայնություն; մեքենայություններ, բանասարկություններ, նենգություններ 2. գաղտնագործություն, գաղտնապահություն ◊ *ourdir une ~*, *tramer une ~* դավադրություն կազմակերպել, դավադրություն ծրագրել

**conspirer** *vi* 1. պայմանավորվել, խոսքը մեկ անել, համաձայնության գալ; դավադրություն ծրագրել 2. գաղտնի աշխատել



**constant**, *-e adj* հաստատուն, մշտական, անփոփոխ, կայուն ◊ un intérêt ~ չթուլացող հետաքրքրություն

**constat** *m* փաստերի պաշտոնական արձանագրում; արձանագրություն, ակտ ◊ faire le ~ փաստել, արձանագրել, հավաստել, հաստատել; արձանագրություն կազմել

**constatation** *f* փաստում, հաստատում, հավաստում, արձանագրում  
~ d'un fait փաստի արձանագրում

**constater** *vt* հաստատել, փաստել, հավաստել, արձանագրել  
~ avec satisfaction գոհունակությամբ արձանագրել, փաստել

**constituer** *vt* 1. հիմնել, ստեղծել, հիմնադրել 2. կազմել, ձևավորել 3. որոշել, նշանակել  
~ un gouvernement, ~ un ministère կառավարություն ձևավորել  
~ une pension à qn թոշակ նշանակել մեկին  
~ qn prisonnier կալանքի տակ վերցնել մեկին; գերի վերցնել մեկին  
~ qn son héritier որևէ մեկին իրեն ժառանգորդ նշանակել

**constitutif** *adj* 1. որոշող, սահմանող, կանխորոշող 2. բաղկացուցիչ ◊ éléments ~s բաղկացուցիչ տարրեր

**constitution** *f* 1. սահմանադրություն, հիմնական օրենք 2. հիմնում, կազմակերպում, սահմանում ◊ abroger la ~ սահմանադրությունը չեղյալ հայտարարել; appliquer

(կամ observer) la ~ սահմանադրությունը կիրառել; approuver la ~ սահմանադրությանը հավանություն տալ; inviolabilité de la ~ սահմանադրության անձեռնմխելիություն; proclamation de la ~ սահմանադրության հռչակում; projet de ~ սահմանադրության նախագիծ; ratifier la ~ սահմանադրությունը վավերացնել; selon (կամ d'après, en vertu de, aux termes de) la ~ համաձայն, ըստ սահմանադրության; contravention de la ~ սահմանադրության խախտում  
~ de droits իրավունքների սահմանում  
~ d'une société ընկերության հիմնադրում

**constitutionnel**, *-le adj* սահմանադրական ◊ amendement ~ սահմանադրական բարեփոխում; droit ~ պետական իրավունք; garanties ~les սահմանադրական երաշխիքներ; loi ~le հիմնական օրենք; modification ~le սահմանադրական փոփոխություն; monarchie ~le սահմանադրական միապետություն; procédure ~le սահմանադրական ընթացակարգ; projet ~ սահմանադրական նախագիծ; restrictions ~ les սահմանադրական սահմանափակումներ

**constructif**, *-ve adj* կառուցողական ◊ pourparlers ~s կառուցողական բանակցություններ; propositions ~ves կառուցողական առաջարկություններ; solution ~ve կառուցողական լուծում; forces ~ves ստեղծագործական ուժեր

**construction** *f* 1. շինություն, կառույց 2. շինարարություն, կառուցում ◊ grand travaux de ~ կապիտալ շինարարություն

**consul** *m* հյուպատոս  
~ général գլխավոր հյուպատոս

**consulaire** *adj* հյուպատոսական ◊ convention ~ հյուպատոսական կոնվենցիա՝ պայմանագիր; corps ~ հյուպատոսական կորպուս; immunité ~ հյուպատոսական անձեռնմխելիություն; privilèges ~s հյուպատոսական արտոնություններ; service ~ հյուպատոսական ծառայություն; statut ~ հյուպատոսական կարգավիճակ

**consulat** *m* հյուպատոսություն, հյուպատոսարան

**consulatif**, -ve *adj* խորհրդատվական, խորհրդակցության ◊ voix ~ve խորհրդակցական ձայն

**consultation** *f* խորհրդատվություն, խորհուրդ 2. խորհրդակցություն 3. հարցում, հանրաքվե 4. խորհրդատվական ծառայություն (հիմնարկ)  
~ nationale, ~ populaire համաժողովրդական հարցում, ժողովրդի կամքի արտահայտություն; հանրաքվե:  
~ électorale համընդհանուր ընտրություններ

**consulter** *vt* խորհրդակցել, խորհուրդ կամ կարծիք հարցնել; հարցուփորձ անել

**contact** *m* շփում, կապ, սերտ հարաբերություն, հաղորդակցություն ◊ en ~ փոխգործողությամբ; entrer (կամ se mettre) en ~ avec զո մեկի

հետ հարաբերության մեջ մտնել; établir des ~s կապեր հաստատել; être en ~ avec զո մեկի հետ շփման մեջ լինել; mettre en ~ կապ ստեղծել, կապել; prendre ~ սերտ հարաբերություն հաստատել; rompre le ~ հարաբերությունները խզել  
~ d'affaires գործնական հանդիպում  
~ culturels մշակութային կապեր  
~ personnel անձնական կապ

**contemporain**, -e *adj* արդի, ժամանակակից

**contentieux** *m* 1. վիճելի հարց 2. իրավախորհրդատվական մաս, իրավաբանական բաժին (հաստատության)

**contentieux**, -se *adj* դատավիճելի, վիճելի, վիճարկելի

**contestable** *adj* վիճելի, վիճարկելի

**contestant**, -e *adj* վիճարկող ◊ les parties ~es վիճարկող կողմերը

**contestation** *f* 1. վեճ, առարկություն, վիճարկում; վիճաբանություն, խոսքակռիվ 2. վիճելի, վիճահարույց հարց 3. *իրվք*. բացարկում, մերժում ◊ mettre en ~ վիճարկել; sans ~ անվիճելիորեն, աներկբայորեն; անկասկած, անտարակույս:

**contesté**, -e *adj* վիճելի, վիճարկելի

**contigu**, -ë *adj* կից, սահմանակից, հարակից ◊ idées ~ës նման մտքեր

**continuer** *vt* շարունակել, չդադարեցնել

**contracter** *vt* 1. պայմանագիր կապել, պայմանավորվել 2. ընդունել, ձեռք բերել

- ~ un emprunt փոխառություն կնքել  
 ~ des obligations պարտավորություններ վերցնել
- contractuel**, -le *adj* պայմանագրային ◊ obligation ~le պայմանագրային պարտավորություն; responsabilité ~le պայմանագրային պատասխանատվություն
- contradictoireur** *m* ընդդիմախոս
- contradiction** *f* հակասություն ◊ aggravation des ~ s հակասությունների սրում; éliminer les ~ s վերացնել հակասությունները; en ~ flagrante ակնհայտ հակասության մեջ; esprit de ~ հակառակության ոգի; se trouver en ~ avec հակասության մեջ գտնվել; հակասել որևէ բանի  
 ~s de classe դասակարգային հակասություններ  
 ~s insolubles անլուծելի հակասություններ  
 ~s internes ներքին հակասություններ  
 ~s irréconciliables անհաշտ հակասություններ
- contradictoire** *adj* 1. հակասական 2. վիճելի, վիճահարույց ◊ jugements ~s վիճահարույց դատողություններ; opinions ~s հակասական կարծիքներ; réunion ~ բանավեճ
- contraindre** *vt* հարկադրել, ստիպել
- contrainte** *f* հարկադրում, հարկադրանք, ստիպում, բռնադատում ◊ état de ~ բռնադատված վիճակ; par ~ հարկադրաբար, ստիպողաբար; mesures de ~ հարկադրանքի միջոցներ; sans ~ ան-
- կաշկանդ, ազատորեն
- contraire** *adj* հակադիր, հակառակ; հակասող, անհամապատասխանող  
 ~ aux intérêts հետաքրքրությունների հակառակ
- contraire** *m* հակադրություն, անգուցադիրություն ◊ la lutte des ~s հակադրությունների պայքար; tout au ~ ընդհակառակը, լիովին հակառակ
- contrairement** *adv* հակառակ, ընդդեմ, չնայած
- contrat** *m* պայմանագիր, համաձայնագիր ◊ annuler un ~ պայմանագիրը լուծել; conclure un ~ պայմանագիր կնքել; dénoncer un ~ դադարեցնել պայմանագրի գործունեությունը; se désister du ~ պայմանագրից հրաժարվել; dresser un ~ պայմանագիր կազմել; exécuter un ~ պայմանագիրը իրականացնել; résilier un ~ պայմանագիրը լուծել; rompre un ~ պայմանագիրը խախտել; signer un ~ պայմանագիր ստորագրել; suivant ~ պայմանագրի համաձայն; aux termes du ~ պայմանագրի համաձայն; violer un ~ պայմանագիրը խախտել  
 ~ administratif վարչական պայմանագիր  
 ~ d'assurance սպահովագրության պայմանագիր  
 ~ d'édition հեղինակային պայմանագիր  
 ~ léonin, ~ écrasant անիրավահավասար, ստրկական պայմանագիր  
 ~ notarié նոտարով հաստատ-

- ված համաձայնագիր  
 ~ de salaire աշխատավարձի պայմանագիր  
 ~ sous seing privé նոտարով չվավերացված համաձայնագիր  
 ~ synallagmatique երկկողմանի պայմանագիր  
 ~ travail աշխատանքային պայմանագիր  
 ~ type տիպային պայմանագիր  
 ~ unilateral միակողմանի պայմանագիր  
 ~ de vente առքուվաճառքի պայմանագիր
- contravention** *f* 1. խախտում (օրենքի, պայմանագրի, կանոնների և այլն) 2. արձանագրություն (կարգի խախտման վերաբերյալ); տուգանք ◊ dresser (կամ flanquer) une ~ արձանագրություն կազմել; տուգանել
- contre-assurance** *f* վերաապահովագրություն, լրացուցիչ ապահովագրում
- contrebalancer** *vt* հավասարակշռել
- contrebande** *f* մաքսանենգություն, մաքսանենգ ապրանքներ ◊ de ~ մաքսանենգ(ային); faire la ~ մաքսանենգությամբ զբաղվել
- contrecarrer** *vt* հակազդել, հակառակվել, ընդդիմանալ, դիմադրել, դեմ կանգնել, խանգարել  
 ~ les projets de ... մեկի պլանները խափանել
- contrecœur**: à ~ *loc.adv.* չկամենալով, դժկամորեն, կամքին հակառակ
- contrecoup** *m* *hնցծ.* հակահարված
- contredire** *vt* հակաճառել, հակադրվել, ընդդիմախոսել  
 ~ une proposition առաջարկությունը վիճարկել
- contre-épreuve** *f* կրկնական քվեարկություն
- contrefaçon** *f* կեղծում, խարդախում, նմանակում
- contrefaire** *vt* 1. պատճենել, նմանակել 2. կեղծել, կեղծ փաստաթուղթ կազմել  
 ~ une signature ստորագրությունը կեղծել
- contre-information** *f* դեզինֆորմացիա, ապատեղեկատվություն
- contrepartie** *f* 1. պատճեն, կրկնօրինակ 2. *ֆին.* համարժեք  
 ~ en euros համարժեք եվրոյով  
 ~ en francs համարժեք ֆրանկով  
 ~ de la masse monétaire դրամի զանգվածի ապահովում
- contresens** *m* 1. անմտություն, անհեթեթություն 2. իմաստի խեղաթյուրում (թարգմանության ժամանակ) ◊ à ~ *loc.adv.* անմիտ, անհեթեթ, իմաստին հակառակ; հակառակ ուղղությամբ
- contresignataire** *m* իր ստորագրությամբ վավերացնող անձը
- contresigner** *vt* ստորագրությամբ վավերացնել
- contrevenir** *vi* խախտել, դրժել, զանց առնել  
 ~ un arrêt վճիռը խախտել  
 ~ à la constitution սահմանդրությունը խախտել  
 ~ à un engagement պարտավորությունը խախտել
- contribuer** *vi* 1. նպաստել, օգնել, օժանդակել, աջակցել 2. *ֆին.* մուծումներ կատարել

~ au succès նպաստել հաջողությամբ

**contribution** *f* 1. ավանդ, օգնություն, նվիրատվություն, աջակցություն 2. մուծում, վճար, ներդրում 3. հարկ, հարկում; ռազմատուգանք 4. հարկային բաժին, հարկային վարչություն  $\diamond$  apporter une large ~ մեծ ներդրում բերել

~ à la cause de la paix խաղաղության գործի մեջ ներդրում

~s directes ուղղակի հարկեր

~s fixées պարտադիր մուծումներ

~ foncière հողի հարկ

~s indirectes անուղղակի հարկեր

~s internationales մուծումներ միջազգային կազմակերպությունների

~ mobilière գույքահարկ

~s volontaires կամավոր մուծումներ

**contrôle** *m* 1. հսկողություն, հսկում, վերահսկում, վերահսկողություն, վերստուգում, կարգավորում 2. կառավարում, ղեկավարում  $\diamond$  durcir le ~ հսկողությունը խստացնել; exercer un ~ sur հսկողություն իրականացնել; établir un ~ sur հսկողություն սահմանել; partager le ~ կիսել վերահսկման պարտականությունը; prendre le ~ վերահսկում իրականացնել; soumettre au (կամ placer sous) ~ հսկողության տակ առնել, վերահսկել, ստուգել

~ annuel տարեկան վերստուգում

~ des deniers publics պետական ֆինանսների ղեկավարում

~ de l'Etat, ~ étatique պետական վերահսկում

~ fiscal հարկային վերահսկում

~ des prix գների կարգավորում

**controversé**, -e *adj* վիճելի, վիճարկելի

**convaincre** *vt* համոզել, հորդորել

**convaincu**, -e *adj* համոզված, վստահ  $\diamond$  être ~ que, se déclarer ~ que համոզված լինել, վստահ լինել, որ...

**convenir** *vi* 1. համաձայնել... հետ, ընդունել 2. պայմանավորվել 3. համապատասխանել, պատշաճել  $\diamond$  il convient հետևում է; convenez que համաձայնեք, որ

~ à համապատասխանել

~ du prix պայմանավորվել գնի հարցում

**convention** *f* 1. կոնվենցիա, միջազգային համաձայնագիր կամ պայմանագիր հատուկ հարցի շուրջ 2. պայմանականություն 3. արտակարգ ժողով, կուսակցության համագումար՝ նախագահի թեկնածություն առաջադրելու համար (ԱՄՆ-ում)  $\diamond$  appliquer une ~ կոնվենցիա կիրառել; négocier une ~ համաձայնագիր կնքել; se départir de la ~ պայմանագրից հրաժարվել; signer une ~ համաձայնագիր ստորագրել

~ additionnelle լրացուցիչ համաձայնագիր

~ d'armistice զինադադարի համաձայնագիր

~ bilatérale երկկողմանի համաձայնագիր

~ collective կոլեկտիվ պայմանագիր

- ~ commerciale առևտրային համաձայնագիր  
 ~ de compensation փոխհատուցման համաձայնագիր  
 ~ consulaire հյուպատոսական կոնվենցիա  
 ~ d'exclusivité բացարձակ իրավունքի պայմանագիր  
 ~ internationale de travail աշխատանքի միջազգային կոնվենցիա  
 ~ de longue durée երկարաժամկետ համաձայնագիր  
 ~ verbale բանավոր համաձայնագիր  
 ~ vigueur գործող համաձայնագիր
- conventionnel**, -le *adj* 1. պայմանական 2. պայմանագրային 3. սովորական, դասական, ոչ միջուկային (զենքի մասին) ◇ armements ~s ընդունված՝ թույլատրված սպառազինություններ; armes ~les սովորական զենք (ի տարբերություն հրթիռա - միջուկային զենքի); langage ~ պայմանական լեզու; moyens ~s դասական, սովորական միջոցներ; signes ~s պայմանական նշաններ
- convenu**, -e *adj* 1. պայմանական; պայմանավորված, փոխադարձ համաձայնությամբ; պայմանագրային, դաշնագրային 2. բոլորի կողմից ընդունված ◇ prix ~ սահմանված գին; c'est ~ որոշված է, վճռված է; comme convenu պայմանավորվածության համաձայն; ինչպես պայմանավորվել ենք
- convergence** *f* 1. համընկնում, զուգադիպություն 2. միասնություն, ընդհանրություն, նույնականություն ◇ points de ~ շփման կետեր  
 ~ des efforts ջանքերի կենտրոնացում  
 ~ des idées գաղափարների մերձեցում
- convergent**, -e *adj* համընկնող, զուգադիպող
- converger** *vi* համընկնել, զուգադիպել, նույնական լինել
- conversation** *f* 1. խոսակցություն, զրույց 2. բանակցություններ, հանդիպում (բանակցելու համար) 3. կարծիքների ազատ փոխանակություն
- converser** *vi* զրուցել
- conversion** *f* 1. փոխարկում, վերածում 2. փոխանակում 3. վերահաշվարկ, վերահաշվում, դրամական փոխադրություն  
 ~ en euros վերահաշվում եվրոյով
- convertibilité** *f* *ֆին.* փոխանակելիություն, փոխարկելիություն, դարձունակություն  
 ~ entière ամբողջական փոխարկելիություն  
 ~ externe արտաքին փոխարկելիություն  
 ~ en francs փոխարկելիություն ֆրանկով  
 ~ intégrale ամբողջական փոխարկելիություն  
 ~ interne ներքին փոխարկելիություն  
 ~, libre ազատ փոխարկելիություն  
 ~ limitée սահմանափակ փոխարկելիություն  
 ~ monétaire արժույթի փոխարկելիություն

- ~ en or ոսկով փոխարկելիություն  
 ~ permanente մշտական փոխարկելիություն
- convertible** *adj* փոխարկելի, դարձունակ ◊ valeurs ~s փոխարկելի արժեքներ
- convertir** *vt* 1. *ֆիզ.* փոխարկել, փոխանակելի դարձնել, վերածել 2. վերահաշվել  
 ~ un billet de banque en espèces բանկատոմսը վերածել կանխիկ դրամի
- conviction** *f* 1. համոզմունք 2. համոզվածություն ◊ exprimer sa (ferme) ~ արտահայտել իր կայուն համոզմունքը; parler avec ~ համոզվածությամբ խոսել; pièce de ~ իրեղեն ապացույց
- convocation** *f* 1. հրավիրում, գումարում (ժողովի, համագումարի) 2. դատարան ներկայանալու կանչ, ժողովի հրավեր  
 ~ du Parlement համագումարի գումարում
- convoyer** *vt* հրավիրել, գումարել  
 ~ une conférence խորհրդակցություն գումարել  
 ~ à la réunion ժողովի հրավիրել  
 ~ devant le tribunal դատարան կանչել
- coopération** *f* 1. համագործակցություն, համատեղ գործունեություն 2. *նազմ.* համատեղ գործողություններ, փոխգործություն (ռազմական տարբեր միավորումների) 3. *քղք.* օգնություն զարգացող երկրներին ◊ consolider (կամ raffermir) la ~ ամրապնդել համագործակցությունը; développer la ~ զարգացնել համագործակցությունը; en ~ միասնաբար, միասին; en étroite et amicale ~ սերտ և բարեկամական համագործակցության մեջ; politique de ~ համագործակցության քաղաքականություն; service de la ~ կամավոր ծառայություն զարգացող երկրներում  
 ~ économique տնտեսական համագործակցություն  
 ~ internationale միջազգային համագործակցություն
- coopérative** *f* կոոպերատիվ, կոոպերատիվ ընկերություն  
 ~ de crédit վարկային ընկերություն  
 ~ de crédit agricole վարկային գյուղատնտեսական ընկերություն
- coopérer** *vi* 1. գործակցել, համագործակցել 2. աջակցել, օգնել
- coopter** *vt* կոոպտացիայի ենթարկել, կազմը համալրել
- coordination** *f* համաձայնեցում
- coordonnées** *f pl* կոորդինատներ
- coordonner** *vt* համաձայնեցնել, համակարգել  
 ~ les efforts ջանքերը միավորել
- corps** *m* 1. կորպորացիա, միավորում; անձնակազմ, կազմ, կորպուս 2. *նազմ.* զորամիավորում, կորպուս ◊ doyen du ~ ղեկանազիտական անձնակազմի ղեկավար; en ~ լրիվ կազմով; կազմակերպված, պատվիրակությամբ  
 ~ administratif վարչական մարմին, վարչական անձնակազմ  
 ~ diplomatique ղեկանազիտական անձնակազմ՝ կորպուս  
 ~ électoral ընտրական մարմին

~ էլս ընտրովի կոլեգիա  
 ~ expéditionnaire *ռուս.* էքսպե-  
 դիցիոն ռազմամիավորում  
 ~ législatif օրենսդիր մարմին  
 ~ de la Magistrature դատական  
 գերատեսչություն  
 ~ médical բժշկական անձնա-  
 կազմ  
 ~ municipal մունիցիպալիտետ  
 (քաղաքային կամ գյուղական տե-  
 դական ինքնավարության մար-  
 մին  
 ~ politique պետություն  
 ~ social հասարակություն  
 ~ de ville քաղաքային իշխանու-  
 րյուններ  
**correction** *f* ուղղում, սրբագրում,  
 շտկում  
**correspondance** *f* 1. համապատաս-  
 խանություն, նմանություն 2.  
 կապ, հաղորդակցություն; նա-  
 մակազրություն 3. թղթակցու-  
 րյուն, լրագրային հոդված ◊ par  
 ~ հեռակա  
 ~ diplomatique դիվանագիտա-  
 կան նամակագրություն  
**corrompre** *vt* 1. փչացնել, քայքայել  
 2. գնել, կաշառել, կաշառք տալ  
 3. ապականել, այլասերել, երես  
 տալ, շփացնել  
**corruptibilité** *f* ծախվածություն,  
 կաշառվածություն  
**corruption** *f* 1. նեխում, փչացում 2.  
 կաշառակերություն, կաշառք 3.  
 այլասերում, այլասերվածություն  
 ~ électorale ընտրակաշառք  
**corvée** *f* 1. *պոմ.* կոռ 2. չարքաշ աշ-  
 խատանք, ծանր, անհրապույր  
 աշխատանք, բեռ  
**cote** *f* 1. բաժին, բաժնենաս 2. *ֆին.*

զնանշում, զնադրում, արտար-  
 ժույթի փոխարժեք ◊ chute de la ~  
 en Bourse բաժնետոմսերի կուրսի  
 անկում բորսայում  
 ~ d'appréciation բարձրացող փո-  
 խարժեք  
 ~ comparative համեմատական  
 փոխարժեք  
 ~ provisoire նախնական գնա-  
 նշում  
**côté** *m* կողմ, ուղղություն ◊ à ~ de  
 կողքին, մոտ; de mon ~ ինչ  
 վերաբերում է ինձ; իմ կողմից; du  
 ~ կողմում, ուղղությամբ; մեկի  
 կողմից; être au ~ (կամ aux ~ s)  
 de զո մեկին սատարել; մեկի  
 կողմը լինել; les gens d'~ ~ հա-  
 րևանները; se ranger du ~ de...  
 մեկի կողմը բռնել, պահել  
**coter** *vt* 1. գնանշել, գնահատել, ար-  
 ժենշել 2. համարակալել; նշան  
 անել ◊ être bien coté լավ համա-  
 րում ունենալ  
**cotisant** *m* փայտեր  
**cotisation** *f* 1. մասնաբաժին, բաժ-  
 նենաս 2. վճար, անդամավճար,  
 մուծում 3. փայտաբաժին ◊ acquit-  
 ter, verser, payer la ~ անդամա-  
 վճար մուծել; մուծումներ կատա-  
 րել  
 ~ d'entrée անդամության վճար  
 ~ à la Sécurité sociale, ~ sociale  
 մուծումներ սոցիալական ապա-  
 հովագրության հիմնադրամին  
**couche** *f* շերտ ◊ de vastes ~ s լայն  
 շերտեր, զանգվածներ  
**couleurs** *f pl* դրոշ ◊ rendre les  
 honneurs aux ~, saluer les ~  
 պատիվ տալ դրոշին; rentrer  
 (կամ amener) ses ~ դրոշը



իջեցնել; hisser les ~ դրոշմ բարձրացնել  
 ~ fausses ուրիշի դրոշ  
 ~ nationales պետական դրոշ  
**coup** *m* հարված, զարկ; գործ ◊ après ~ իրողությունից հետո; à ~ sûr անվտանգ, ապահովաբար; arrêter le ~ de force դավադրությունը կասեցնել; bon ~ բարի գործ; համարձակ գործողություն; համարձակ քայլ; commettre un ~ de force հեղաշրջում իրականացնել; donner un ~ հարվածել; être hors du ~ գործից դուրս լինել, չխառնվել; faire son ~ իր գործը կատարել; manquer (կամ rater) son ~ անհաջողություն կրել; mauvais ~ վատ գործ, հանցավոր գործողություն; mettre dans le ~ ներգրավել գործի մեջ; monter un ~ խաբել; réussir son ~ հաջողության հասնել; tenir le ~ դիմանալ, տոկլալ; tenter (կամ risquer) le ~ հանդգնել, փորձել  
 ~ éclat նվաճում, հաջողություն  
 ~ d'essai առաջին փորձ  
 ~ d'Etat պետական հեղաշրջում  
 ~ de feu կրակոց  
 ~ de force հեղաշրջում; բռնություն; *muqđ.* հարված խոշոր ուժերով  
 ~ de génie հանճարեղ քայլ  
 ~ de main, d'épaule օգնություն, աջակցություն  
 ~ de maître հաջողությամբ, հմտորեն իրականացված գործ  
 ~ de téléphone հեռախոսազանգ  
 ~ Trafalgar աղետ

**coupe** *f* կտրում, հատում ◊ être sous la ~ de կախման մեջ լինել; tom-

ber sous la ~ կախման տակ ընկնել  
**Coupole** (la) Ֆրանսիական Ակադեմիա ◊ être reçu sous la ~ ընդունվել Ակադեմիա  
**coupure** *f* 1. կրճատում (տեքստի և այլն) 2. կտրվածք 3. *ֆին.* թղթադրամ  
 ~ budgétaire բյուջեի կրճատում  
**cour** *f* 1. պալատ 2. դատարան, ատյան ◊ Cour des Comptes Հաշվարկային պալատ; Cour Permanente d'Arbitrage Միջազգային իրավաբար դատարան (Հաագայում); Cour Suprême, Haute Cour Գերագույն դատարան; tenir ~ plénière անցկացնել ընդլայնված նիստ  
 ~ d'appel վերաքննիչ դատարան  
 ~ d'assises երրվյալ ատենակալների դատարան  
 ~ de cassation վճռաբեկ դատարան  
 ~ constitutionnelle սահմանադրական դատարան  
 ~ européenne des droits de l'homme Մարդու իրավունքների եվրոպական դատարան  
 ~ Internationale de Justice Միջազգային դատարան  
 ~ de justice դատարան  
 ~ martiale ռազմադաշտային դատարան  
**courant** *adj* ընթացիկ, ներկա, այսօրվա, այժմյան ◊ affaires ~es ընթացիկ գործեր; monnaie ~e գնայուն դրամ; type ~ սովորական մուշ  
**courant** *m* 1. հոսանք, ուղղություն 2. ընթացք, շարժում ◊ être au ~ de

- կուրսի մեջ լինել, տեղյակ լինել;  
mettre au ~ տեղյակ պահել, իրա-  
զեկել  
~s politiques քաղաքական ուղ-  
ղություններ (հոսանքներ)  
~ de population գաղթ, տեղափո-  
խություն
- couronne** *f* պսակ, ծաղկեպսակ ◊  
déposer une ~ devant un monu-  
ment ծաղկեպսակ դնել հուշար-  
ձանի առջև  
~ de lauriers դափնեպսակ
- courrier** *m* 1. սուրհանդակ, բանբեր,  
լրաբեր; ցրիչ 2. փոստային  
առաքումներ, նամակագրություն  
◊ bureau de ~ փոստային առա-  
քում; dépouiller son ~ իր նամակ-  
ները կարգի բերել, նամակները  
բացել  
~ diplomatique դիվանագիտա-  
կան սուրհանդակ (անձ, որին  
հանձնարարված է դիվանագի-  
տական փոստի առաքումը)
- cours** *m* 1. ընթացք, շարժում, տևո-  
ղություն 2. *Ֆին.* փոխարժեք, ար-  
ժեք, արժույթների օրվա գինը ◊  
l'année en ~ ընթացիկ տարի;  
avoir ~ պահանջարկ ունենալ,  
շրջանառության մեջ լինել; la  
chute des ~ բաժնետոմսերի ան-  
կում; être en ~ տեղի ունենալ,  
իրականացվել; plan en ~ գոյու-  
թյուն ունեցող պլան; au ~ de ըն-  
թացքում; en ~ իրականանալի;  
գոյություն ունեցող; ընթացիկ; en  
~ de կատարման ընթացքում  
~ achat [vente] առքի [վաճառքի]  
փոխարժեք  
~ du change արտարժույթի փո-  
խարժեք
- ~ d'euro եվրոյի փոխարժեք  
~ forcé հարկադրական փոխար-  
ժեք  
~ légal պաշտոնական փոխար-  
ժեք  
~ du marché շուկայական արժեք;  
բորսայի արժեք
- course** *f* 1. վազք, վազարշավ 2.  
էքսկուրսիա, զբոսանք, ճամփոր-  
դություն 3. մրցավազք ◊ accélérer  
la ~ ուժեղացնել սպառազինու-  
թյունների մրցավազքը; poursui-  
vre (կամ se livrer) à la ~ իրակա-  
նացնել սպառազինությունների  
մրցավազքը; refréner la ~, mettre  
un frein à la ~ սանձել սպառա-  
զինությունների մրցավազքը; ref-  
rènement de la ~ սպառազինու-  
թյունների մրցավազքի սանձում  
~ aux armements սպառազինու-  
թյունների մրցավազք  
~ éfrenée aux armements սպառա-  
զինությունների անզուսպ մրցա-  
վազք  
~ aux profits շահույթ ստանալու  
մրցավազք  
~ de (կամ par) relais էստաֆետա,  
էստաֆետային վազք
- court**, -e *adj* 1. կարճ, կարճահասակ  
2. կարճատև ◊ politique à ~e vue  
անհեռատես քաղաքականու-  
թյուն; de ~e durée կարճաժամ-  
կետ
- coût** *m* 1. ծախսեր, ծախքեր 2. *Վիսք.*  
արժեք, գին, ինքնարժեք ◊  
abaisser (կամ réduire) le ~ ար-  
ժեքն իջեցնել; hausse du ~ de la  
vie գների բարձրացում, թան-  
կացում; majorer le ~ արժեքը  
բարձրացնել; rémunérer le ~

արժեքը փոխհատուցել  
 ~s administratifs վարչական ծախսեր  
 ~ de distribution առևտրային ծախքեր  
 ~ de fabrication արտադրության ծախքեր  
 ~ original սկզբնական արժեք  
 ~ de production արտադրության ծախսեր  
 ~ de la vie կյանքի արժեք

**coûter** *vi* արժեք, արժենալ  $\diamond$  coûter que coûter ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի  
 ~ gros թանկ արժենալ  
 ~ les yeux de la tête շատ մեծ գումարներ արժենալ

**couvre-feu** *m* պարետային ժամ

**couvrir** *vt* 1. ծածկել, վրան բան գցել  
 2. թաքցնել, պատսպարել 3. փակել (վնասները), վճարել (ծախսերը) 4. պաշտպանել, արդարացնել 5. լուսաբանել  $\diamond$  être couvert par l'immunité parlementaire (կամ diplomatique) օգտվել խորհրդարանական՝ դիվանագիտական անձեռնմխելիությունից  
 ~ les frais ծախսերը փակել  
 ~ sa responsabilité պատասխանատվությունից խույս տալ

**créance** *f* 1. հավատ, վստահություն  
 2. պարտավորություն, հանձնառություն, պարտք, պարտքի հանձնառություն, չվճարած պարտք 3. պահանջելու իրավունք, պարտքի պահանջ  $\diamond$  avoir une ~ sur զո իրավունք ունենալ պահանջելու որևէ մեկից վճարելու պարտքը; céder une ~ պահանջ զիջել; con-

tester une ~ պահանջի իրավունքը վիճարկել; donner (կամ prêter, accorder, ajouter) ~ à...հավատալ; éteindre une ~ վճարել պարտքը; վճարել պահանջը; lettres de ~ հավատարմագրեր; recouvrer une ~ պարտքը հետ ստանալ; trouver une ~ հավատ ներշնչել  
 ~ active չվճարված պարտք  
 ~ d'argent դրամական պահանջ  
 ~ exigible վճարման ենթակա պարտք  
 ~ liquide *ֆին.* իրացվելի հանձնարարություն, դրամական պարտք  
 ~ pécuniaire դրամական հանձնառություն  
 ~ à recouvrer չվճարած պարտք

**créancier** *m* վարկատու, պարտատեր

**crédit** *m* 1. վարկ 2. հավատ, վստահություն 3. ազդեցություն, կշիռ  $\diamond$  à ~ պարտքով; accorder (կամ consentir) des ~s վարկեր տրամադրել; acheter à ~ գնել ապառիկ; affecter des ~s à վարկեր առանձնացնել, վարկեր դուրս գրել; contracter (կամ toucher) des ~s վարկեր ստանալ; lettre de ~ հաշվարկագիր, հաշվարկաթուղթ; miner le ~ տակը քանդել, անվստահություն սերմանել; octroi de ~ վարկավորում; ouvrir un ~ վարկ բացել; perdre son ~ վստահությունը կորցնել; porter au ~ վարկավորել; retirer (կամ suspendre) un ~ վարկավորումը դադարեցնել; trouver ~ auprès du public հասարակության գնահատանքին արժանանալ; voter

- les ~s հաստատել վարկերը (խորհրդարանում)  
 ~s allouées հատկացում  
 ~ foncier հողային վարկ  
 ~ à long terme, ~ à moyen terme, ~ à court terme երկարաժամկետ, միջին ժամկետի, կարճաժամկետ վարկեր  
 ~ onéreux բանկարժեք վարկ  
 ~ personnel անձնական ազդեցություն  
 ~ à la petite semaine վաշխառվական վարկ
- credo** *m* համոզմունք  
 ~ politique քաղաքական համոզմունք, քաղաքական հայացքներ
- crime** *m* հանցագործություն, հանցանք, չարագործություն, ոճիր, ոճրագործություն ◊ commettre un ~ հանցագործություն կատարել; les éléments du ~ հանցակազմը; imputer à ~ հանցանքի մեջ մեղադրել; se rendre complice d'un ~ ոճրագործությանը հանցակից դառնալ  
 ~ de droit commun քրեական հանցագործություն  
 ~ d'Etat պետական հանցագործություն  
 ~ de guerre պատերազմական հանցագործություն
- criminel** *m* հանցագործ
- crise** *f* ճգնաժամ, լարվածություն ◊ prévenir une ~ կանխել ճգնաժամը; traverser une ~ ճգնաժամ ապրել  
 ~ de confiance վստահելիության ճգնաժամ (արժույթի մասին)  
 ~ des débouchés սպառողական ճգնաժամ
- ~ économique տնտեսական ճգնաժամ  
 ~ financière ֆինանսական ճգնաժամ  
 ~ générale համընդհանուր ճգնաժամ  
 ~ du logement բնակարանային ճգնաժամ  
 ~ ministérielle կառավարական ճգնաժամ  
 ~ monétaire internationale արժույթի միջազգային ճգնաժամ  
 ~ politique քաղաքական ճգնաժամ
- critique** *adj* 1. քննադատական 2. ճգնաժամային, օրհասական, տագնապալի, վտանգավոր, ծանր ◊ esprit ~ քննադատական միտք; âge ~ ճգնաժամային տարիք; situation ~ տագնապալից, ճգնաժամային իրավիճակ
- critique** *f* քննադատություն ◊ au-dessous de toute ~ ամեն տեսակ քննադատությունից ցածր; soumettre à une vive ~ խիստ քննադատության ենթարկել  
 ~ d'art արվեստագիտություն  
 ~ et autocritique քննադատություն և ինքնաքննադատություն  
 ~ constructive դրական՝ կոնստրուկտիվ քննադատություն  
 ~ destructive կործանարար՝ վնասակար քննադատություն  
 ~ musicale երաժշտագիտություն  
 ~ publique հասարակական դիտում
- critiquer** *vt* 1. քննադատել 2. կշտամբել, նախատել, դատապարտել
- croisade** *f* խաչակրաց արշավանք
- croisé** *m* խաչակիր

- croissance** *f* աճ, զարգացում, ավելացում  
 ~ des moyens de production արտադրության միջոցների աճ  
 ~ de la zone euro եվրոյի գոտու զարգացում
- croissant**, -e *adj* աճող, հարաճուն, զարգացող
- croix** *f* խաչ ◊ Croix de guerre Մարտական ծառայության խաչ (Ֆրանսիայում); Croix Rouge Կարմիր խաչ  
 ~ gammée սվաստիկա (Ֆաշիստական խորհրդանիշ)
- crovable** *adj* հավանական
- croynance** *f* 1. հավատ, վստահություն 2. հավատ, հավատամք, դավանանք ◊ contre toute ~ հակառակ ամեն հավանականության; cela passe toute ~ միանգամայն անհավանական է  
 ~s politiques քաղաքական համոզմունքներ, քաղաքական հայացքներ
- cru**, -e *adj* կտրուկ, կոպիտ, սուր ◊ dire la chose toute ~e ասել այնպես, ինչպես կա; réponse ~e շիտակ, կտրուկ պատասխան; en termes ~es կոպտորեն
- cruauté** *f* դաժանություն, վայրագություն
- crucial**, -e *adj* 1. խաչաձև 2. վճռական, համարձակ; վճռորոշ ◊ points cruciaux հանգուցային կետեր
- cui bono** ? (*լատ.*) ու՞մ է օգտակար
- cui prodest** ? (*լատ.*) ո՞վ կշահի
- culture** *f* 1. մշակույթ 2. կրթություն, կրթվածություն  
 ~ générale ընդհանուր կրթություն  
 ~ classique դասական կրթություն  
 ~ historique պատմական գիտելիքներ  
 ~ philosophique փիլիսոփայական կրթություն  
 ~ politique քաղաքական մշակույթ  
 ~ des lettres գրականության ուսումնասիրություն  
 ~ de masse զանգվածային մշակույթ  
 ~ physique ֆիզկուլտուրա, ֆիզիկական կրթություն
- culturel**, -le *adj* 1. մշակույթի, մշակութային 2. կիրթ, կրթված ◊ attaché ~ *դ/ն/գ.* մշակույթի գծով կցորդ; industries ~les մշակութային ինդուստրիա
- curriculum vitae** *m* հակիրճ կենսագրական տվյալներ
- cycle** *m* 1. փուլ, շրջան, շրջապտույտ, ամբողջական շարք 2. ուսումնական շրջան, աստիճան ◊ premier ~ միջնակարգ դպրոցի առաջին աստիճան (6-3 դասարաններ); second ~ միջնակարգ դպրոցի երկրորդ աստիճան (2-րդ, 1-ին և ավարտական դասարաններ)  
 ~ de conférence դասախոսությունների դասընթաց  
 ~ élémentaire տարրական կրթություն  
 ~ fermé փակ շրջան  
 ~ réversible հետադարձելի գործընթաց

## D

- daigner** *vt* բարեհաճել, հաճել; արժանացնել, պատվել ◊ daignez agréer... հաճեցեք ընդունել ... (քաղաքավարական դիմելաձև)
- damnable** *adj* կշտամբանքի, հանդիմանության՝ նախատինքի արժանի, դատապարտելի
- damnation** *f* 1. դատապարտում, պարսավանք, կշտամբանք 2. անեծք, նզովք
- damner** *vt* դատապարտել տառապանքների, նզովել, անիծել
- danger** *m* վտանգ, սպառնալիք ◊ aggraver le ~ վտանգը մեծացնել; braver les ~s արհամարհել վտանգը; constituer (présenter) un grave ~ լուրջ վտանգ ներկայացնել; courir le ~ վտանգի ենթարկվել; le ~ pèse վտանգը կախված է; délivrer (կամ débarasser, libérer) l'humanité du ~ de guerre մարդկությանը փրկել, ազատել պատերազմի վտանգից; mettre en ~ վտանգի ենթարկել; s'exposer au ~, courir le ~ վտանգի ենթարկվել; faire peser le ~ sur վտանգ առաջացնել; prévenir (կամ éloigner, écarter, conjurer, éliminer) le ~ վտանգը կանխել (վերացնել, հեռացնել) ~ de guerre պատերազմի սպառնալիք ~ d'inflation, ~ inflationniste արժեզրկման վտանգ ~ public, ~ pour l'ordre social, ~ pour la société հանրորեն վտանգավոր; հասարակության թշնամի
- danois**, -e *adj* դանիական
- danse** *f* 1. պար 2. *խսկց.* գործ, գործունեություն ◊ entrer en (կամ dans la) ~ գործի մեջ մտնել, գործը սկսել; ճակատամարտ սկսել; mener la ~ գործը ղեկավարել
- danser** *vi* պարել ◊ faire ~ զո կոպտորեն վերաբերվել մեկին; faire ~ les écus *հնցծ.* փողը ցփնել, դրամը մսխել, վատնել; ne savoir sur quel pied ~ չիմանալ անելիքը, գլուխը կորցնել, շվարել, շփոթվել ~ sur la corde *փխբ.* մազից կախված լինել
- dard** *m* խայթոց (մեղվի, օձի); *փխբ.* խայթոց, կծոց ~ de la satire երգիծանքի սուր ծայրը
- date** *f* 1. ամսաթիվ, տարեթիվ, թվական 2. ժամկետ, ժամանակաշրջան ◊ à ~fixe նշված ժամկետում; en ~ de ... սույն ամսաթվից; faire ~ դարաշրջան կազմել, սկիզբ դնել; de longue ~, de vieille ~ վաղեմի, վաղուցվա, հնամենի; hնուց, վաղուց; de fraîche ~ նոր, վերջերս, ոչ վաղուցվա; grandes ~s de l'histoire պատմական հիշարժան տարեթվերը ~ de l'adhésion անդամագրության թվական ~ d'amortissement վճարման ժամկետ

~ d'effet du contrat պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվ  
 ~ d'entrée en vigueur ուժի մեջ մտնելու ամսաթիվ  
 ~ d'expiration ժամկետը լրանալու ամսաթիվ  
 ~ limite վերջնական ժամկետ  
 ~ de remboursement վճարման ժամկետ  
**daté**, -e *adj* թվագրված  
**dater** *vt* 1. թվագրել, տարեթիվը, ամսաթիվը նշել 2. *vi* ա) սկսվել, սկիզբ առնել, հաշվվել բ) հնանալ զ ~ à ~ de ce jour այդ օրվանից սկսած  
 ~ de ... սկսած, հաշված; գոյություն ունենալ սկսած...  
 ~ une lettre նամակի վրա դնել ամսաթիվ  
 ~ terriblement հետ մնալ (ժամանակից), սարսափելի հնանալ  
**débâcle** *f* *փխք*. ջախջախում, տապալում, փլուզում  
 ~ de l'économie տնտեսության փլուզում, սնանկացում  
 ~ financière ֆինանսական կրախ, սնանկացում  
 ~ générale իրարանցում, ընդհանուր տագնապ; անկազմակերպ փախուստ  
**débâillonner** *vt* *փխք*. վերադարձնել խոսքի ազատությունը  
 ~ la presse վերադարձնել մամուլի ազատությունը  
**débander** *vt* *հնցծ*. ջախջախել՝ ցիրուցան անել թշնամուն  
**débarquer** 1. *vt* բեռնաթափել; ափհանում կատարել, իջեցնել (դեսանտ) 2. *vi* ափ իջնել, ափ դուրս գալ

~ en parachute օդապարիկով վայրէջք կատարել  
**débat** *m* 1. վեճ, վիճաբանություն 2. քննարկում, բանավեճ, մտքերի փոխանակություն զ ajournement du ~ քննարկման՝ բանավեճի հետաձգում՝ ընդմիջում; dîner- ~ գործնական ընթրիք (քննարկումներով); éclaircir le ~ պարզաբանել վեճի էությունը; արտահայտվել ըստ էության; entrer dans le vif du ~ շոշափել վիճաբանության ամենակարևոր հարցը; être en ~ վիճել; վեճի առարկա լինել; intervenir dans un ~ մասնակցել բանավեճին; mettre qch en ~ քննարկման դնել; les ~s se portent sur մտքերի փոխանակություն է ընթանում... ի շուրջը; prendre la parole au cours des ~s ելույթ ունենալ քննարկումների ժամանակ; se pronocer sans ~ որոշում ընդունել առանց քննարկման; la question a fait l'objet de grands ~s հարցը առաջ բերեց բուռն վիճաբանություն; vider un ~ վեճը լուծել  
 ~ budgétaire բյուջեի քննարկում  
 ~s judiciaires դատաքննություն  
 ~ au parlement, parlementaire խորհրդարանական վեճեր  
 ~ sur le rapport մտքերի փոխանակում զեկուցման վերաբերյալ, զեկուցման քննարկում  
**débattre** *vt* քննարկել, քննության ենթարկել, վիճաբանել, վիճել, բանավիճել զ une question à ~ քննարկման ենթակա հարց  
 ~ un prix սակարկել  
**débauchage** *m* 1. հրապուրելով աշ-

- խատանքից տանել; դասալքության ստորանք 2. աշխատանքից ազատում (բանվորներին)
- débaucher** *vt* 1. դրդել թողնելու աշխատանքը, աշխատատեղը, դասալքության դրդել; *փխբ.* գործից կտրել 2. աշխատանքից ազատել (բանվորներին)
- débilité** *f* 1. անկարողություն, անգորություն 2. սնանկություն 3. *բժշկ.* մտավոր տկարություն
- débiteur** *m* 1. պարտատեր, պարտապան 2. *հնգծ.* նորություններ, լուրեր տարածող  
~ insolvable սնանկացած՝ անվճարունակ պարտապան  
~ de mensonges սուտասան, փչան, դատարկախոս
- déblatérer** 1. *vi* (contre) *խսկգ.* չարախոսել, պարսավել, անպատվել, հայհոյել, բարձրաձայն մեղադրել 2. *vi*: ~ des critiques մեղադրանքներով հարձակում գործել, քննադատել; ~ des injures հայհոյանքներ տեղալ
- déblayer** *vt* մաքրել, խոչընդոտներից ազատել  
~ le terrain հող նախապատրաստել; ճանապարհ բանալ, խոչընդոտները վերացնել
- déblocage** *m* շրջափակման վերացում, ապաշրջափակում  
~ d'une situation politique խոչընդոտների վերացում՝ քաղաքական խնդրի լուծման նպատակով
- débloquement** *m* շրջափակման վերացում
- débloquent** *vt* 1. *հնգծ.* շրջափակումը հանել, ապաշրջափակել 2. *քղբ.* խոչընդոտները վերացնել
- ~ les salaires աշխատավարձի վրա վերահսկողությունը չեղյալ հայտարարել
- déboire** *m* 1. տհաճություն, ցավ, դառնություն, վիշտ 2. *փխբ.* տհաճ զգացում, հիասթափություն, անբավարարվածություն ◊ essayer des ~s հիասթափություն սպրել
- déboires** *m pl* բարդություններ, անախորժություններ
- débordant**, -e *adj* 1. ավերից դուրս եկող, հորդող, թափվող 2. անզուսպ, անդիմադրելի ◊ activité ~e անդադրում գործունեություն; joie ~e անզուսպ ուրախություն; mouvement ~ շրջանցելու շարժում
- débordé**, -e *adj* աշխատանքով ծանրաբեռնված
- débordement** *m* 1. հորդացում, ջրառատություն 2. հեղեղ (բառերի, հայհոյանքի և այլն) 3. հորդում (զգացմունքների) 3. *քղբ.* շրջանցում, առաջ անցնելը  
~ sur sa gauche շրջանցում ձախից  
~ de la réaction ռեակցիայի անսահմանափակ ծավալում
- déborder** 1. *vi* սահմաններից՝ ավերից՝ շրջանակներից դուրս գալ 2. *vi* *նսզմ.* շրջառել, թևանցել; *փխբ.* տապալել, խորտակել  
~ l'adversaire հակառակորդին շրջանցել  
~ le cadre de la question *փխբ.* դուրս գալ խնդրի շրջանակներից  
~ les plans պլանները տապալել
- débotté** *m*: ◊ au ~ 1. անմիջապես ժամանելուց հետո 2. *փխբ.*



- առանց նախապատրաստության, հանկարծակի
- débouché** *m* 1. վաճառահանում, իրացում (ապրանքների); իրացման շուկա  $\diamond$  loi des ~s շուկայի օրենքը; la lutte pour les ~s պայքար շուկաների համար; manquer de ~s անելանելի վիճակում լինել
- déboullonner** *vt* *խսկց.* վնասել, վնաս տալ հեղինակությանը; չընտրել, տապալել ընտրությունները ~ un champion, un as չեմպիոնին հաղթել ~ une réputation հեղինակությանը վնասել
- débourgeoiser** *vt* քաղքենիական սովորույթներից հետ վարժվել
- débours** *m pl* ծախսեր, ծախքեր  $\diamond$  rentrer dans ses ~ ծախսածը հետ բերել; ծախսերը փոխհատուցել
- déboursement** *m* ծախս, ծախք, սպառում; վճարում
- débouter** *vt* *իրվք.* հայցը մերժել
- débrayage** *m* աշխատանքի կարճաժամկետ դադարեցում, կարճաժամկետ գործադուլ ~ d'une heure մեկժամյա գործադուլ
- débrayer** *vi* *խսկց.* գործադուլ անել, աշխատանքը դադարեցնել՝ ի նշան բողոքի
- début** *m* սկիզբ, ծագում, առաջացում
- décadence** *f* 1. անկում, անկումայնություն; քայքայում, կազմալուծում; բարոյալքում 2. *սլոմ.* դեկադանս, անկման դարաշրջան Հին Հռոմում  $\diamond$  tomber en ~ անկման հասնել
- décalage** *m* խզում, անջրպետ, անհամապատասխանություն, տարբերություն; թյուրիմացություն, սխալմունք ~ des prix գների տարբերություն
- décaler** *vt* տեղաշարժել; պաշտոնանկ անել ~ une date ամսաթիվը տեղափոխել
- décentraliser** *vt* ապակենտրոնացնել, ապախոշորացնել
- décerner** *vt* 1. պարգևատրել, շնորհել 2. *իրվք.* վճիռ կայացնել
- décevoir** *vt* 1. հիասթափեցնել 2. չարդարացնել, հուսախաբ անել ~ les attentes հույսերը չարդարացնել
- déchaîné** *adj* *փխք.* սանձարձակ, անսանձ, անզուսպ, կատաղած
- déchaînement** *m* սանձարձակություն, կամայականություն; դաժանություն, գազանություն ~ de haine ատելության պոռթկում; կատաղության մոլուցք
- déchaîner** *vt* 1. շղթաներից ազատագրել 2. առաջացնել, արթնացնել (կիրք և այլն)  $\diamond$  se ~ մոլեգնել, վայրագություններ անել; se ~ contre զո սրընթաց հարձակվել, թափով վրա տալ ~ des applaudissements ծափահարությունների տարափ առաջացնել ~ l'opinion contre զո մարդկանց տրամադրել մեկի դեմ
- décharge** *f* 1. բեռնաթափում 2. համազարկ, կրակոց 3. *իրվք.* ազատում պարտավորություններից 4. *իրվք.* արադարացնող փաստաթուղթ 5. *իրվք.* ցուցմունք hoգուտ մեղադրյալի  $\diamond$  à la ~ de

զո մեկին արդարացնելու համար; *témoïn à ~* պաշտպանության վկա  
 ~ *publique* թափոնների աղբանոց  
**décharger** *vt* 1. բեռնաթափել 2. *իր/ը*. ազատել պարտավորություններից; բարենպաստ վկայություն տալ  $\diamond$  *se ~* ազատագրվել, հրաժարվել, պատասխանատվությունը իր վրայից վայր դնել  
 ~ *un accusé* վկայել հոգուս մեղադրվողի  
 ~ *la responsabilité* իրենից պատասխանատվությունը գցել  
**déchéance** *f* իրավագրկում, իրավունքի կորուստ  $\diamond$  *être frappé de ~* իրավունքից զրկվել  
 ~ *judiciaire* դատական իրավագրկում  
 ~ *nationale* քաղաքացիության իրավունքից զրկում  
 ~ *professionnelle* մասնագիտական գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկում  
 ~ *du terme* *ֆին.* ժամկետային վճարման իրավունքի կորուստ  
**déchets** *m pl* 1. թափոններ, մնացորդներ 2. *փ/սք.* մարդկային տականքներ, թափթփուկներ  
 ~ *industriels* արտադրական թափոններ  
 ~ *ménagers* կենցաղային թափոններ  
 ~ *radioactifs* ռադիոակտիվ թափոններ  
 ~ *de la société* հասարակության տականքներ  
**déchoir** *vi* անկման հասնել, անկում ապրել, ընկնել  $\diamond$  *être déchu du pouvoir* իշխանությունից զրկվել,

զահրնկեց լինել, զահավիժել; *être déchu de ses fonctions* աշխատանքից, պաշտոնից հեռացվել  
**déchu**, *-e adj* 1. ընկած, տապալված 2. զրկված 3. ուժը, նշանակությունը կորցրած  
 ~ *de ses droits* իր իրավունքներից զրկված  
 ~ *dans sa nationalité* քաղաքացիությունից զրկված  
**décidé**, *-e adj* 1. վճռական, ինքնավաստի 2. վճռված, որոշված, լուծված 3. որոշակի, անվիճելի, ակնհայտ  $\diamond$  *c'est une chose ~e* սա վճռված գործ է  
**décider** *vt* որոշել, որոշում ընդունել; վճռել, լուծել  $\diamond$  *se ~ (à)* պատրաստ լինել ինչ-որ բանի  
 ~ *un différend* վեճը լուծել  
 ~ *en faveur de* զո որոշում կայացնել ի օգուս մեկի  
**décimer** *vt* ոչնչացնել, կտորել, բնաջնջել, ամայացնել շարքերը  $\diamond$  *population décimée par la guerre* պատերազմի հետևանքով խիստ կրճատված բնակչություն  
**décisif**, *-ve adj* վճռական, վերջնական, անառարկելի; վճռորոշ, որոշիչ  $\diamond$  *bataille ~ve* վճռական ճակատամարտ; *facteur ~* վճռորոշ գործոն; *moment ~* վճռական պահ; *victoire ~ve* վերջնական հաղթանակ  
**décision** *f* 1. որոշում, վճիռ, եզրակացություն 2. համարձակություն, վճռականություն  $\diamond$  *adopter une ~* որոշում ընդունել; *accepter les ~s* որոշումների հետ համաձայնել, համաձայնություն տալ որոշումների; *accomplir (կամ appliquer)*

les ~s որոշումները իրագործել, կյանքի կոչել; attaquer une ~ որոշումը զանգատարկել; avoir de la ~ համարձակ, վճռական լինել; casser une ~ որոշումը բեկանել վճռաբեկության կարգով; élaborer une ~ որոշում մշակել; formuler (կամ prendre) une ~ որոշել, որոշում ընդունել; respecter les ~s որոշումները ճշտորեն կատարել; revenir sur la ~ որոշումը վերանայել; surseoir à une ~ որոշումը հետաձգել; à la suite de la ~ որոշման համաձայն ~ arbitrale միջնորդ դատարանի որոշում ~s concertées համաձայնեցված որոշումներ ~ définitive վերջնական որոշում ~ exécutoire գործադիր որոշում, օրինական ուժ ստացած որոշում ~ judiciaire դատական որոշում ~s à la majorité des ¾ ձայների ¾ - ի մեծամասնական որոշում ~s à la majorité simple ձայների պարզ մեծամասնական որոշում

**déclaration** *f* 1. հռչակագիր, դեկլարացիա (դիվանագիտության մեջ՝ քաղաքական հռչակագիր, հայտարարություն) 2. հայտարարություն, դիմում, հայտարարագիր 3. *իրվք*. բացատրություն, ցուցմունք ◊ Déclaration des droits de l'Homme et du Citoyen Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր; dernières ~s de l'accusé մեղադրյալի վերջին խոսքը; donner acte d'une ~ ի գիտություն հայտարարել; faire une ~ սեր խոստովանել; prendre acte

(note) d'une ~ արձանագրել հայտարարությունը ~ de candidature թեկնածուի ծրագրային հայտարարություն ~ commune համատեղ հայտարարություն ~ de décès մահվան գրանցում ~ faite à la presse հայտարարություն մամուլի համար ~ fausse կեղծ դիմում ~ fiscale, ~ d'impôts հարկային հայտարարագիր ~ en douane մաքսային հայտարարագիր ~ de guerre պատերազմի հայտարարում ~ de naissance ծննդյան գրանցում ~ des revenus հայտարարագիր եկամուտների մասին ~ de volonté կամքի արտահայտություն

**déclarer** *vt* 1. հայտարարել, հայտարարություն անել, հրապարակել, հռչակել 2. հայտարարագրել ◊ rien à ~ ? ի՞նչ եք տանում (հարց մաքսատանը); se ~ արտահայտվել, արտահայտել իր կարծիքը; se ~ pour... (contre) արտահայտվել կողմ... կամ դեմ... ; se ~ adversaire իրար հակառակորդներ հայտարարվել ~ en faillite հայտարարել սնանկ ~ la guerre պատերազմ հայտարարել ~ ses intentions հայտնել իր մտադրությունների մասին ~ une naissance գրանցել ծնունդը, հայտնել ծննդի մասին ~ nul հայտարարել անվավեր

- ~ ses revenus հայտարարագիր ներկայացնել իր եկամուտների մասին  
 ~ la séance ouverte նիստը հայտարարել բացված
- déclassé**, -e *adj* ապադասակարգանացված
- déclenchement** *m* *փխբ.* արձակում, սանձազերծում, հրահրում; առաջացում, հարուցում  
 ~ d'un conflit կոնֆլիկտի առաջացում  
 ~ de la guerre, ~ de l'agression պատերազմի սանձազերծում  
 ~ de poursuite դատական հետապնդման հարուցում
- déclencher** *vt* *փխբ.* սկսել, սանձազերծել, ծավալել, առաջացնել  
 ~ une campagne արշավ ծավալել  
 ~ le feu կրակ բացել  
 ~ une grève գործադուլ հայտարարել  
 ~ un mouvement շարժում ծավալել  
 ~ une offensive հարձակման անցնել  
 ~ un rire ծիծաղ առաջացնել
- déclin** *m* *փխբ.* անկում, իջեցում, նվազում; վնաս ◊ être en ~ անկման մեջ լինել  
 ~ économique տնտեսական անկում  
 ~ de l'exploitation agricole գյուղական տնտեսության անկում
- décliner** *vt* 1. շեղել, թեթել 2. մերժել, չընդունել, հրաժարվել  
 ~ la compétence d'un tribunal վիճարկել դատարանի իրավասությունը  
 ~ les honneurs մեծարանքներից հրաժարվել
- ~ son identité հաստատել իր ինքնությունը  
 ~ une invitation հրավերքը չընդունել  
 ~ toute responsabilité ամեն տեսակի պատասխանատվություն իր վրայից գցել; հրաժարվել պատասխանատվություն կրելուց
- décoller** *vi* օդ բարձրանալ, պոկվել, գետնից կտրվել (ինքնաթիռի մասին)
- décommander** *vt* հրամանը՝ պատվերը չեղյալ հայտարարել ◊ se ~ *խսկց.* հրավերից հրաժարվել
- déconfire** *vt* *հնցծ.* ջարդել, ջախջախել (հակառակորդին)
- déconfiture** *f* *խսկց.* լիակատար պարտություն 2. սնանկացում, սնանկություն 3. անվճարունակություն ◊ politician en ~ սնանկ քաղաքագետ; société en pleine ~ քայքայվող հասարակություն  
 ~ financière ֆինանսական սնանկություն, անվճարունակություն
- déconseiller** *vt* տարհանոզել, խորհուրդ չտալ, հետ կանգնեցնել
- décor** *m* *փխբ.* կեղծ, ցուցադրական ◊ tout cela n'est qu'un ~ այս բոլորը խաբուսիկ է
- décoration** *f* շքանշան, պարգև ◊ décerner une ~ պարգևատրել շքանշանով
- décoré**, -e *adj* պարգևատրված; պարգևատրված շքանշանով
- décorer** *vt* պարգևատրել շքանշանով, պարգև տալ
- décorum** *m* արտաքին քաղաքավարություն; պարկեշտություն ◊ garder (կամ observer) le ~ պահպանել արտաքին քաղաքավար

- րությունը, քաղաքավարության կանոնները; pour le ~ քաղաքավարության համար, քաղաքավարությունից
- découronnement** *m* 1. տապալում, գահընկեց անելը 2. *փխբ.* թագազրկում
- décréditer** *vt* *հնգծ.* վարկաբեկել, վստահությունը խարխալել
- décrépitude** *f* *փխբ.* փտում, նեխում, անկում
- décret** *m* որոշում, վճիռ, հրաման, հրամանագիր ◇ prendre un ~ որոշում ընդունել ~ d'administration publique վարչական որոշում
- décréter** *vt* որոշել, վճռել, հրամանագրել, հրամայել, մակագրել ~ une grève գործադուլ հայտարարել ~ qn de prise de corps որոշում կայացնել ձերբակալության մասին
- décret-loi** *m* *պտմ.* արտակարգ օրենք; հռչակագիր (օրենքի ուժ ունեցող կառավարական որոշում)
- décri** *m* 1. *հնգծ.* արժեզրկում (դրամի, ապրանքի) 2. խայտառակություն, ամոթ, փառազրկություն ~ public հասարակական պարսավանք
- décrier** *vt* 1. արժեզրկել 2. անվանարկել, խայտառակել, փառազրկել, սևացնել
- décroissance** *f* նվազում, անկում ◇ aller en ~ պակասել, նվազել ~ de la mortalité մահացության նվազում
- décroissement** *m* անկում, նվազում ~ de la tension լարվածության նվազում՝ անկում
- dédit** *m* 1. հրաժարում, հրաժարվելը (խոսքից), մերժում 2. տույժ, տուժավճար
- dédite** *f* պարտականությունների կատարումից հրաժարում
- dédouaner** *vt* 1. բեռը հանձնել մաքսատուրքի վճարմամբ 2. մաքսային կապարակնիքը քանդել 3. *փխբ.* պաշտպանել; վերականգնել, արդարացնել
- de facto** (*լատ.*) *loc. adv.* փաստորեն, դե-ֆակտո, իրականում
- défaillance** *f* 1. ուժերի անսպասելի անկում, անկումայնություն 2. անհետևողականություն; պարտավորության ոչ պատշաճ կատարում 3. թուլակամություն, անկարողություն, թուլություն ◇ sans ~ հետևողականորեն, անշեղորեն, անդադար ~s administratives վարչական թերություններ, անսարքություններ ~ des pouvoirs publics իշխանությունների անկարողություն
- défaillant** *adj* 1. անգոր, անուժ, թույլ, տկար 2. անլիարժեք, թերարժեք 2. վերապրած, հնացած, անցած-զնացած
- défaire** *vt* հաղթել, գլխովին ջախջախել, ջարդել
- défaite** *f* պարտություն, ջախջախում ◇ essayer une ~ պարտություն կրել ~ électorale ընտրական պարտություն ~ militaire ռազմական պարտություն ~ politique քաղաքական պարտություն
- défaitiste** *adj* պարտվողական

**défaitiste** *m, f* պարտվող (անձ, կուսակցություն և այլն)

**défaut** *m* 1. բացակայություն, պակաս 2. թերություն, արատ, խտտան 3. *հրվք.* դատարան չներկայանալը  $\diamond$  condamner par ~ դատապարտել հեռակա; en ~ բացակա; être en ~ անվճարունակ լինել; faire ~ չներկայանալ դատարան; *փ/հք.* բացակայել; թողնել, հեռանալ; mettre en ~ փակուղու մեջ դնել, անելանելի դրության մեջ դնել; խաբել

**défavorer** *f* շնորհազրկություն, անբարյացակամություն, աչքից ընկնելը  $\diamond$  jeter de la ~ sur... մեկի նկատմամբ անբարյացակամություն ցուցաբերել; tomber en ~ շնորհազուրկ լինել, աչքից ընկնել, պատվից զրկվել

**défavoriser** *vt* ոչ բարենպաստ պայմանների մեջ դնել

**défection** *f* դավաճանություն, ուխտադրություն, ուրացում  $\diamond$  faire ~ դավաճանել, անցնել թշնամու կողմը

**défectionnaire** *m* դավաճան, ուրացող

**défectueux**, -se *adj* 1. անկատար, անբավարար, թերի 2. վատ կատարված; անճիշտ, սխալ, թերի, արատավոր 3. *հրվք.* սահմանված պահանջներին չհամապատասխանող

**défendre** *vt* 1. պաշտպանել 2. արգելել  $\diamond$  se ~ պաշտպանվել; արդարանալ; հրաժարվել, ժխտել; խուսափել, իրեն թույլ չտալ  $\diamond$  il se défend de conclure նա հրաժարվում է եզրակացություններ ասել; il se défend d'avoir fait cela

նա ժխտում է, որ դա ինքն է արել ~ un accusé պաշտպանել ամբաստանյալին

~ les intérêts շահերը պաշտպանել

**défense** *f* 1. պաշտպանություն, պաշտպանական միջոցների ամբողջություն 2. արգելք 3. առարկություն  $\diamond$  courir à la ~ de զո շտապել մեկին օգնության; se charger de la ~ de... իր վրա վերցնել... պաշտպանությունը; en état de ~ légitime ինքնապաշտպանության վիճակում; instinct de ~ ինքնապաշտպանության բնագր; mettre un pays en ~ ամրապնդել երկրի պաշտպանունակությունը; se mettre en ~ նախապատրաստվել պաշտպանվելու; prendre la ~ de զո հանդես գալ մեկի պաշտպանությամբ; ստանձնել մեկի պաշտպանությունը

~ contre avions, ~ antiaérienne հակաօդային պաշտպանություն ~ contre les gaz հակաքիմիական պաշտպանություն

~ d'afficher հայտարարություններ ստանձնել արգելվում է

~ de fumer ծխելն արգելվում է

~ légitime *հրվք.* ինքնապաշտպանություն

~ nationale ազգային պաշտպանություն

~ de la paix խաղաղության պաշտպանություն

~ passive պասիվ պաշտպանություն

~ rapprochée մերձակա պաշտպանություն

~ du territoire հակահետախուզություն

**défensive** *f* պաշտպանություն, պաշտպանողական դրություն ◊ être (կամ se tenir) sur la ~ պաշտպանվել; պատրաստ լինել հակահարված տալու; se mettre sur la ~ անցնել պաշտպանության

**déférer** 1. *vt* ա) ուղարկել դատարան ք) *hégð.* մատուցել, տալ, ցույց տալ, հատուցել գ) *հրվք.* հանձնել իշխանություններին 2. *vi* վստահել, հույսը դնել, ապավինել ◊ j'en défère à votre expérience ես ապավինում եմ ձեր փորձառությանը; je défère à ses mérites ես հարգում եմ նրա արժանիքները

~ à l'avis de զո մեկի կարծիքին անձնատուր լինել

~ une cause à une cour գործը հանձնել դատարան

~ au désir de մեկի ցանկությանը ընդառաջ գնալ

~ les honneurs պատիվներ տալ, հարգանք մատուցել, մեծարել

**défi** *m* մարտահրավեր ◊ lancer un ~ մարտահրավեր նետել; relever le ~ մարտահրավեր ընդունել

~ au danger հոխորտանք

~s de l'environnement էկոլոգիական՝ բնապահպանական մարտահրավեր

**défiance** *f* անվստահություն, թերահավատություն ◊ mettre զո en ~ անվստահություն սերմանել մեկի մեջ; voter la ~ au gouvernement անվստահության քվե տալ կառավարությանը

**déficit** *m* դեֆիցիտ, հաշվեպակասորդ; պակասորդ, պակասում, պակասելը ◊ aggraver le ~ դեֆի-

ցիտը խորացնել; boucler (կամ combler, corriger, couvrir, éliminer, éponger) un ~ պակասորդը լրացնել, ծածկել

~ des finances publiques պետական ֆինանսների պակաս

~ global ընդհանուր դեֆիցիտ

~, grave խոշոր դեֆիցիտ

~ immunitaire իմունոդեֆիցիտ

~ des pouvoirs publics պետական բյուջեի ճեղքվածք

**défier** *vt* մարտահրավեր նետել; չվախենալ ◊ se ~ (de զո; de զո) չվստահել; զգուշանալ

~ la critique քննադատությունից չվախենալ

~ le danger գնալ վտանգին ընդառաջ

**définitif**, -ve *adj* վերջնական, լիակատար, որոշիչ

**déforestation** *f* անտառազրկում

**défrayer** *vt* ծախսերից ազատել, վճարել մեկի փոխարեն ◊ être défrayé de tout ամեն ինչով ապահովված լինել

~ la conversation խոսակցությունը շարունակել; խոսակցության առարկա լինել

**défriché**, -e *adj* հերկած, մշակած ◊ terre ~e հերկած խոպան

**dégager** *vt* 1. հետ գնել (գրավը՝ գրավատնից) 2. մաքրել, տեղ ազատել 3. ազատել, ազատ արձակել, ազատագրել

~ sa responsabilité պատասխանատվությունից խույս տալ

**dégât** *m* անալսցում, ավերածություն; վնասվածք; վնաս, կորուստ ◊ causer des ~s վնաս հասցնել

~s matériels նյութական վնասներ

- ~s occasionnés պատճառած վնասներ
- dégel** *m* 1. ձնհալ, ձնհալք, հալոցք 2. *փ/սք.* մեղմացում, ջերմացում, լարվածության թուլացում 3. *Ֆին.* սառեցում, ազատականացում 4. *փ/սք.* աշխուժացում (տնտեսական և այլն)  
~ des crédits վարկերի սառեցում, ազատականացում  
~ du marché շուկայի ազատականացում
- dégenerer** *vi* 1. այլասերվել, բարոյալքվել 2. վերածվել, փոխարկվել, վերափոխվել (ավելի վատի)
- dégonflage** *m* 1. *փ/սք.* մերկացում, դիմակազերծում 2. անկում, կրրճատում (զների) 3. հրաժարում, մերժում, դավաճանում (համոզմունքներին)
- dégradation** *f* 1. աստիճանագրկում 2. ստորացում, անարգանք, վիրավորանք, խայտառակություն 3. *փ/սք.* աստիճանական անկում, վատթարացում ◊ condamné à la ~ nationale à vie՝ քաղաքացիական իրավունքներից ցմահ զրկվելուն դատապարտված  
~ civique, ~ civile *իր/սք.* իրավունքների սահմանափակում; քաղաքացիական մահ
- dégrader** *vt* 1. աստիճանագրկել, պաշտոնից հեռացնել, զրկել շքանշաններից և զինվորական կոչումներից 2. ստորացնել, նվաստացնել, վիրավորել, անարգել ◊ se ~ ստորանալ, իր արժանապատվությունը զցել; վատանալ, վատթարանալ (իրավիճակը)
- degré** *m* աստիճան, մակարդակ ◊ élections à deux ~s երկաստիճան ընտրություններ; élever à un ~ supérieur բարձրագույն աստիճանի բարձրանալ; au plus haut ~ վերին աստիճանի; par ~(s) աստիճանաբար  
~ de culpabilité, de faute մեղքի աստիճան  
~ de juridiction դատական համակարգի օղակներ  
~ de parenté ազգակցության աստիճան  
~ de qualité որակի ցուցանիշ
- dégrévement** *m* հարկերի իջեցում, հարկերից ազատում
- dehors** *adv* դուրսը, դրսում, փողոցում, բակում ◊ en ~ de service ոչ ծառայողական ժամին; en ~ des heures de travail արտաժամյա; mettre (կամ jeter) qn ~ դուրս շարտել մեկին, վռնդել; tous les pays en ~ de բոլոր երկրները, բացի...
- dehors** *m* արտաքին տեսք; արտաքին մաս ◊ l'ennemi du ~ արտաքին թշնամի; sauver (կամ garder, ménager) les ~ պատշաճություն պահպանել
- déjouer** *vt* պլանները, մտադրությունները խափանել, ձախողել  
~ les manœuvres մեքենայությունները տապալել  
~ la vigilance զգոնությունը խաբել
- déjuger** *vt* որոշումը փոխել, նոր վճիռ կայացնել, վերանայել ◊ se ~ հրաժարվել սեփական կարծիքից  
~ son propre arrêt սեփական վճիռը փոխել



**de jure** (*լատ.*) *loc. adv.* դեյուրե, իրավաբանորեն, իրավապես

**délabrement** *m* ջախջախում, ավերածություն; անկում, քայքայում ~ des affaires գործերի ձախողում ~ économique տնտեսական քայքայում

 ~ hors d'usage սպառել իրեն, գործածությունից դուրս գալ
- devenir** *m* *փ/իլ*. կազմավորում, ձևավորում, լինելիություն, գոյացում  
 $\diamond$  en ~ ձևավորման ընթացքում, լինելիության մեջ
- déverrouiller** *vt* կալանքից ազատել
- devers** : par - ~ *loc.prép.*: par- ~ զոմեկի ներկայությամբ; par- ~ soi իր մոտ, իր ձեռքերում
- déversement** *m* դուրս հոսում, արտահոսում
- déverser** *vt* 1. արտահոսել, լցնել, չափից դուրս լցնել, լցնել մինչև թափվելը 2. դուրս նետել, դուրս գցել, դուրս թափել; ափ իջեցնել, ցած իջեցնել  
 ~ le blâme sur զո պարսավել, նախատել, հանդիմանել, կշտամբել  
 ~ les bombes ռումբեր նետել  
 ~ des parachutistes պարաշյուտային դեսանտ իջեցնել
- déviation** *f* 1. շեղում, թեքում, խտտ
- րում, բաժանում, ճյուղավորում  
 2. *թղթ.* թեքում; աղավաղում, խեղաթյուրում, աղճատում 3. զարտուղի ճանապարհ  
 ~ bureaucratique բյուրոկրատական աղճատում  
 ~ de droite աջ թեքում
- déviacionniste** *m* *թղթ.* ուկլոնիստ
- dévier** 1. *vi* թեքել, շեղել, խտտորել 2. *vi* մի կողմ թեքվել, շեղվել, գնալ շրջանց, կողմնակի ճանապարհով  $\diamond$  faire ~ ստիպել մի կողմ թեքվել՝ շրջանց կատարել
- devis** *m* նախահաշիվ  $\diamond$  établir un ~ նախահաշիվ կազմել
- deviser** *f* 1. նշանաբան 2. *pl* արտաբերություն, տարադրամ  
 ~ convertibles փոխարկելի տարադրամ  
 ~s étrangères օտարերկրյա արժույթ  
 ~ nationales ազգային արժույթ  
 ~s or ոսկու արժույթ
- de visu** *loc.adv.* սեփական աչքերով  
 $\diamond$  parler de qch de visu խոսել ականատեսի աչքերով
- dévoilement** *m* մերկացում, բացահայտում
- dévoiler** *vt* մերկացնել, բացահայտել, քողը վերցնել
- devoir** *vt* 1. պարտք լինել 2. պարտական լինել 3. պարտավորված լինել  $\diamond$  se ~ (de) իրեն պարտավորված զգալ մի բան անելու; se ~ à զո իրեն պարտական զգալ մեկի հանդեպ
- devoir** *m* 1. պարտականություն, բարոյական, քաղաքացիական պարտք 2. *pl* հարգանք, պատիվ, մեծարանք  $\diamond$  croire de son ~ իր



պարտքը, իր պարտականությունը համարել; être à son ~ իր պաշտոնին լինել; faire son ~ իր պարտականությունը կատարել; se mettre en ~ de ... իրեն պարտավորված համարել մի բան անելու; պատրաստվել մի բան անելու; par ~ պարտքի զգացումից ելնելով; ramener զո au ~ մեկին կոչ անել իր պարտականությունները կատարելու; rendre ses ~s à զո իր հարգանքը մատուցել մեկին ~ conjugaux ամուսնական պարտականություններ  
~ d'honneur պատվի գործ

**dévolu**, -e *adj* բաժին հասած, բախտին արժանացած; օրենքով փոխանցված; վրան դրված

**dévolu** *m* : jeter son ~ sur... ի վերջո որևէ բան ընտրել; par ~ ընտրությամբ

**dévolutif**, -ve *adj* : appel ~ *իրվք*. բողոքարկում՝ բարձրագույն ինստանցիա

**dévolution** *f* 1. *իրվք*. փոխանցում, հանձնում (իրավունքների, գույքի) 2. *քղք*. հանձնում (իշխանության, լիազորությունների և այլն)

**dévo**t *m* բարեպաշտ ◊ faux ~ սուտ սուրբ, կեղծ բարեպաշտ, սուտ Քրիստոս, սուտ ճգնավոր

**dévotion** *f* 1. աստվածավախություն, բարեպաշտություն 2. երկյուղածություն, ակնածանք ◊ avoir une grande ~ pour զո պաշտել, աստվածացնել, մեծարել մեկին; être à la ~ de զո անսահման նվիրված լինել մեկին; ծառայել մեկին; par ~ ակնածանքով, երկյուղածությամբ

**dévo**ué, -e *adj* հավատարիմ, անձնվեր, նվիրված ◊ votre ~ Ձեզ նվիրված՝... (նամակը վերջացնելու քաղաքավարական ձևակերպում) ; veuillez croire à mes sentiments ~s խորին հարգանքով..., ընդունեք հարգանքներիս հավաստիքը

**dévouement** *m* անձնվիրություն, նվիրվածություն; անձնագոհություն

**dévouer** *vt* 1. նվիրել 2. տալ, նվիրաբերել, զոհել; զոհ մատուցել, մատաղ անել ◊ se ~ նվիրվել; ինքն իրեն զոհաբերել

**dévo**yé, -e *adj* 1. ճանապարհից շեղված, մոլորված 2. շփոթված, իրեն կորցրած

**dévoyer** *vt* 1. ճանապարհից շեղել, մոլորեցնել 2. շփոթեցնել

**diaire** *adj* մեկօրյա

**dialectique** *adj* դիալեկտիկական ◊ matérialisme ~ դիալեկտիկական մատերիալիզմ

**dialogue** *m* 1. երկխոսություն, խոսակցություն, զրույց 2. *քղք*. բանակցություններ, շփումներ, երկխոսություն (ոչ պաշտոնական) ~ politique քաղաքական երկխոսություն

**dialoguer** 1. *vi* զրուցել, խոսել; երկխոսություն վարել 2. *vt* երկխոսության ձևով գրել

**diapason** *m* 1. *երժշտ*. դիապազոն, ձայնածավալ 2. *փիլս*. տոն, մակարդակ ◊ baisser le ~ տոնը ցածրացնել; se mettre au ~ de զո հարմարվել, ընտելանալ; ընդհանուր լեզու գտնել, համակերպվել; ramener le ton au ~ համաձայ-

նեցնել... հետ  
**diatribe** *f* սուր քննադատություն;  
 պամֆլետ, պարսավագիր  
**dictamen** *m* : le ~ de la conscience  
 խղճի ձայնը  
**dictateur** *m* *քղք.* դիկտատոր,  
 բռնակալ, բռնատեր  
**dictature** *f* *քղք.* դիկտատուրա, բռն-  
 նակալություն, բռնատիրություն,  
 բռնապետություն  
 ~ absolue բացարձակ՝ անսահ-  
 ման դիկտատուրա  
**dictée** *f* 1. թելադրություն, թելադ-  
 րանք 2. *փխք.* ուժեղ ազդեցու-  
 թյուն, ներգործություն; պահանջ,  
 հրաման  $\diamond$  écrire sous la ~ գրել  
 թելադրանքով; sous la ~ ազդե-  
 ցության տակ  
**dicter** *vt* թելադրել  
 ~ des conditions պայմաններ թե-  
 լադրել  
**diète** *f* սեյմ, ընտրյալների ժողով  
**diffamant**, -e *adj* խայտառակող,  
 վարկաբեկող, փառագրկող,  
 գրպարտող  
**diffamateur** *m* գրպարտիչ  
**diffamation** *f* գրպարտություն  
**diffamatoire** *adj* գրպարտչական  
**diffamer** *vt* խայտառակել, սևացնել,  
 գրպարտել  
**différé**, -e *adj* 1. հետաձգած, երկա-  
 րաձգած 2. *m* : diffuser en ~ հա-  
 դորդել (ձայնագրությամբ) ռա-  
 դիոլով, հեռուստատեսությամբ  
**différence** *f* 1. տարբերություն, գա-  
 նազանություն 2. *pl* տարաձայ-  
 նություններ  $\diamond$  à cette ~ près դրա-  
 նից բացի, բացառությամբ; avec  
 cette ~ que... միայն այն տարբե-  
 րությամբ, որ... ; faire (la) ~ տար-

բերել; à la ~ de... *loc. prép.* ի  
 տարբերություն  
 ~ logique տրամաբանական  
 տարբերություն  
 ~ spécifique *տրմք.* ակնհայտ  
 տարբերություն  
**différencier** *vt* տարբերել, գանազա-  
 նել, ջոկել  $\diamond$  se ~ (de) տարբերվել,  
 գանազանվել, ջոկվել  
**différend** *m* տարաձայնություն,  
 տարակարծություն; վեճ, վիճա-  
 բանություն, երկպառակություն;  
 վիճելի հարց  $\diamond$  ajuster le ~ վեճը  
 հարթել; avoir un ~, être en ~ տա-  
 րաձայնություն ունենալ, վիճել;  
 partager le ~ հաշտեցնել կողմե-  
 րին; régler un ~ վեճը կարգավո-  
 րել  
**différent**, -e *adj* տարբեր, գանա-  
 զան, իրար ոչ նման; ուրիշ, այլ  $\diamond$   
 c'est ~ դա նույն բանը չէ; ~ de par  
 sa nature իր բնույթով օտար; de-  
 venir ~ փոխվել, տարբերվել  
**différer** 1. *vt* հետաձգել, դանդաղեց-  
 նել 2. *vi* ա) տարբերվել, առանձ-  
 նանալ բ) տարակարծիք լինել,  
 չհամաձայնել, չհամընկնել (կար-  
 ծիքներով, հայացքներով)  
**difficile** *adj* 1. դժվար, դժվարին 2.  
 ծանր; դաժան, տանջալից,  
 խիստ 3. խտրություն դնող, քմա-  
 հաճ; պահանջկոտ, բծախնդիր,  
 մանրախնդիր  $\diamond$  faire le ~ շատ  
 պահանջկոտ լինել; situation ~  
 դժվարին կացություն; temps ~  
 ծանր ժամանակներ  
**difficulté** *f* 1. դժվարություն, բարդու-  
 թյուն 2. խոչընդոտ, արգելք  $\diamond$   
 aplanir (կամ lever, trancher) des  
 ~s խոչընդոտները վերացնել;

- causer (կամ créer, élever, soulever) des ~s խոչընդոտներ ստեղծել; une ~ se dresse, se présente, surgit դժվարություն է առաջանում; éprouver des ~s դժվարություններ կրել; éviter des ~s դժվարություններից խուսափել; présenter une ~ դժվարություններ կայացնել; se heurter à des ~s հանդիպել խոչընդոտների՝ դժվարությունների; surmonter des ~s դժվարություններ հաղթահարել; triompher les ~ հաղթահարել դժվարությունները; en ~ դժվարին կացության մեջ; sans ~ առանց դժվարության, անարգել; թեթևությամբ, սիրով  
~ d'audition վատ լսելիություն  
~ de terrain բնական խոչընդոտ
- diffus**, -e *adj* 1. մանրամասն, բազմաբառ, ընդարձակ 2. մութ, անհասկանալի, խառնակ, շփոթ
- diffusément** *adv* մանրամասնորեն, ընդարձակ
- diffuser** *vt* 1. *փխբ.* տարածել, սփռել (տպագիր նյութերը) 2. տեղեկացնել, ազդարարել, հոդորդել (ռադիոյով)
- diffusion** *f* 1. լայնահաղորդում, հաղորդում ռադիոյով 2. *հնգծ.* շատախոսություն; ավելորդ երկարություն 3. տարածում, սփռում (տպագիր նյութերի); *փխբ.* թափանցում
- digérer** *vt* 1. մարսել (ուտելիքը) 2. *խսկց.* լավ մտածել, լավ կշռադատել 3. *խսկց.* տանել, հանդուրժել  
~ un affront վիրավորանքը «կուլ տալ»
- digne** *adj* արժանավոր, արժանի (հարգանքի և այլն)  $\diamond$  prendre un air ~ լուրջ տեսք ընդունել
- dignement** *adv* արժանապատվորեն, ըստ արժանվույն, արժանավայել ձևով
- dignitaire** *m* մեծատոհմիկ, բարձր դիրք ունեցող անձ  $\diamond$  haut ~ բարձրաստիճան պաշտոնատար անձ
- dignité** *f* 1. աստիճան, կոչում 2. արժանապատվություն  $\diamond$  conférer une ~ կոչում տալ; honorer աստիճանի բարձրացնել
- digne** *f* 1. ամբարտակ, պատվար, պատնեշ 2. *փխբ.* արգելք, խոչընդոտ, անջրպետ
- dilapidateur** *adj* վատնող, մսխող, շռայլ
- dilapidation** *f* վատնում, մսխում, շռայլում, ծախսում
- dilapider** *vt* վատնել, մսխել, ծախսել, շռայլել
- dilatatoire** *adj* *իրվբ.* հետաձգող; ձգձգման ենթակա; հետաձգում պահանջող  $\diamond$  combat ~ ժամանակ շահելու վրա հիմնված մարտ; procédés ~ ձգձգում, երկարաձգում, հետաձգում; réponse ~ խուսափողական պատասխան
- dilemme** *m* 1. դիլեմա, երկսայրաբանություն 2. *փխբ.* երկընտրանք, այլընտրանք
- diligence** *f* 1. ճարպկություն, արագաշարժություն, ժրություն 2. *փխբ.* ջանասիրություն, ձգտում  $\diamond$  à la ~ de... խնդրանքով, հայցով; en toute ~ անմիջապես, շտապ; faire ~ շտապել; ջանալ
- dimension** *f* 1. թափ, մասշտաբ, ընդգրկում 2. *փխբ.* կարևորություն,

նշանակություն; մեծություն ◊  
donner une nouvelle ~ à նոր թափ  
հաղորդել, նոր մակարդակի  
բարձրացնել; prendre la ~ (les ~s)  
de զժ հասկանալ որևէ բանի  
կարևորությունը; նշանակություն  
ստանալ; prendre ses ~s նախա-  
զուշական միջոցներ ձեռնար-  
կել

~ historique d'un événement իրա-  
դարձության պատմական նշա-  
նակությունը

**diminuer** 1. *vt* ա) պակասեցնել,  
կրճատել բ). նվազեցնել, թուլաց-  
նել 2. *vi* ա) նվազել, ընկնել բ)  
թուլանալ ◊ être diminué aux yeux  
de զո մեկի աչքից ընկնել

**diminution** *f* 1. պակասեցում, կրճա-  
տում, փոքրացում; նվազեցում,  
իջեցում (զմերի, արժեքի) 2. թու-  
լացում, նվազում

**diplomate** *m* դիվանագետ

**diplomatie** *f* դիվանագիտություն ◊ le  
chef de la ~ արտաքին քաղաքա-  
կանության ղեկավարը; entrer  
dans la ~ դիվանագետ դառնալ;  
user de ~ դիվանագիտություն  
բանեցնել, խորամանկել  
~ bilatérale երկկողմանի դիվա-  
նագիտություն

**diplomatique** *adj* դիվանագիտական  
◊ corps ~ դիվանագիտական  
կորպուս; courrier ~ դիվանագի-  
տական փոստ; crise ~ դիվանա-  
գիտական ճգնաժամ; efforts ~s  
դիվանագիտական ջանքեր;  
établir des relations ~s հաստա-  
տել դիվանագիտական հարաբե-  
րություններ; immunité ~ դիվա-  
նագիտական անձեռնմխելիու-

թյուն; message ~ դիվանագիտա-  
կան հաղորդակցություն, ուղերձ;  
poste ~ դիվանագիտական պաշ-  
տոն; privilèges ~s դիվանագի-  
տական արտոնություններ; ré-  
ception ~ դիվանագիտական ըն-  
դունելություն; rédacteur ~ ար-  
տաքին քաղաքական մեկնա-  
բան; relations ~s դիվանագիտա-  
կան հարաբերություններ; repré-  
sentant ~ դիվանագիտական ներ-  
կայացուցիչ; représentation ~ դի-  
վանագիտական ներկայացուց-  
չություն; rupture des relations ~s  
դիվանագիտական հարաբերու-  
թյունների խզում; solution ~ դի-  
վանագիտական լուծում՝ մեկնա-  
բանություն՝ պատասխան; sour-  
ce ~ դիվանագիտական աղբյուր;  
statut ~ դիվանագիտական կար-  
գավիճակ; termes ~s դիվանագի-  
տական տերմիններ; valise ~ դի-  
վանագիտական փոստ

**dire** *vt* 1. խոսել; ասել; արտահայ-  
տել; արտասանել 2. (vouloir) ~  
նշանակել հրամայել ◊ l'art de  
bien ~ հռետորական արվեստ,  
ճարտասանություն; à l'heure dite  
պայմանավորված ժամին; à vrai  
~ ճիշտն ասած; cela va sans ~  
ինքնին հասկանալի է; cela veut ~  
նշանակում է, որ; c'est dit որոշ-  
ված է; des on-dit ասելոսել, լու-  
րեր, բամբասանքներ; disons  
ասենք թե..., ենթադրենք; entre  
nous soit dit մեր մեջ ասած, խոս-  
քը մեր մեջ; pour tout ~ մի խոս-  
քով; proprement dit բուն իմաս-  
տով; sans mot ~ առանց բառ ան-  
գամ ասելու; soit dit en passant ի

- միջի այլոց ասած; soi-disant իբր, իբրև, իբրև թե  
 ~ sa joie արտահայտել իր ուրախությունը  
 ~ son opinion արտահայտել իր կարծիքը
- dire** *m* հայտարարություն; ցուցմունք ◊ au ~ de... խոսքերով, պատմածներով  
 ~ d' experts փորձագետների եզրակացությունը
- directeur** *m* տնօրեն, վարիչ, կառավարիչ; գլխավոր վարչության պետ; ղեկավար խմբագիր-հրատարակիչ  
 ~ adjoint փոխտնօրեն  
 ~ de banque բանկի կառավարիչ  
 ~ commercial առևտրային գծով տնօրեն  
 ~ délégué լիազոր տնօրեն  
 ~ financier ֆինանսական գծով տնօրեն  
 ~ général գլխավոր տնօրեն  
 ~ général adjoint գլխավոր տնօրենի տեղակալ  
 ~ gérant գործադիր տնօրեն; լրագրի պատասխանատու հրատարակիչ  
 ~ régional տարածքային տնօրեն  
 ~ de succursale մասնաճյուղի տնօրեն  
 ~ de vente վաճառքի գծով տնօրեն
- direction** *f* 1. ուղղություն 2. վարում, կառավարում, ղեկավարում, ղեկավարություն, 3. տնօրինություն, վարչություն, կառավարչություն ◊ assumer la ~ իր վրա վերցնել ղեկավարությունը; sous la ~ de ղեկավարությամբ
- ~ collective կոլեկտիվ ղեկավարություն  
 ~ de comptabilité հաշվապահություն  
 ~ de contentieux իրավաբանական բաժին  
 ~ d'entreprise ձեռնարկության ղեկավարում  
 ~ expéditive օպերատիվ ղեկավարություն  
 ~ financière ֆինանսական վարչություն  
 ~ générale գլխավոր վարչություն  
 ~ unipersonnelle միանձնյա ղեկավարություն
- directive** *f* դիրեկտիվ, հրահանգ, ցուցում  
 ~ électorale ընտրողների հրահանգ
- dirigeant**, -e *adj* 1. իշխող, տիրող, կառավարող 2. ղեկավարող, ուղղություն տվող, առաջնորդող, առաջատար ◊ classe ~e իշխող դասակարգ; rôle ~ ղեկավար դեր; cadres ~s de l'industrie արդյունաբերության ղեկավար կադրեր
- dirigeant** *m* ղեկավար, առաջնորդ; լիդեր  
 ~ de base ստորին կազմակերպության ղեկավար  
 ~s d'entreprises տնտեսավարներ, տնտեսական աշխատողներ;
- diriger** *vt* 1. կառավարել, ղեկավարել 2. ուղղություն տալ, առաջնորդել, ղեկավարել 3. ուղղորդել, կողմնորոշել ◊ économie dirigée պլանային տնտեսություն; տնտեսության պլանավորման համակարգ

- dirigisme** *m* 1. վարչարարություն; կառավարում 2. տնտեսության պետական կարգավորում  
~ bureaucratique կառավարման գրասենյակային մեթոդ
- dirimer** *vt* *իրվք.* վերացնել, լուծարել, լուծարքի ենթարկել
- discernement** *m* 1. ճանաչում, տարբերում, զանազանում 2. խոհեմություն, խելամտություն, շրջահայացություն, դատողականություն  $\diamond$  agir avec ~ գիտակցաբար գործել; agir sans ~ գործել անգիտակցաբար, անխոհեմ կերպով; manque de ~ անմտություն, անխելություն, անխելամտություն ~ moral լավը վատից զանազանելու կարողություն  
~ des nuances նրբերանգները զանազանելը  
~ de la vérité d'avec l'erreur ճիշտը սխալից տարբերելու կարողություն
- disciple** *m* սան, աշակերտ, հետևորդ
- disciplinaire** *adj* ուղղիչ, կարգապահական  $\diamond$  bataillon ~ տուգանային գումարտակ, punition ~, peine ~ կարգապահական տույժ
- discipline** *f* 1. կարգապահություն, կարգ ու կանոն, հնազանդություն 2. գիտության ճյուղ, ուսումնական առարկա  
~ de travail աշխատանքային կարգապահություն
- discontinuité** *f* ընդհատություն, խզում, ճեղքվածք  $\diamond$  sans ~ անընդհատ, անընդմեջ
- disconvenance** *f* անհամապատասխանություն
- disconvenir** *vi* 1. չհամաձայնվել, չհամաձայնել, ժխտել 2. չհամապատասխանել
- discordance** *f* 1. անհամաձայնություն 2. անհամապատասխանություն, տարբերություն
- discordant**, -e *adj* անհամաձայն, անհամապատասխան, հակասական, աններդաշնակ
- discorde** *f* երկպառակություն, գժտություն, անհամաձայնություն, տարաձայնություն  $\diamond$  brandon (կամ sujet) de ~ երկպառակության, գժտության պատճառ; pomme de ~ կռվախնձոր; semer la ~ երկպառակություն սերմանել
- discourir** *vi* դատել, խորհել, մտածել; խոսել, ճառել; ճամարտակել, շաղակրատել
- discours** *m* ճառ, ելույթ, խոսք  $\diamond$  faire un ~ ելույթ ունենալ  
~ de cloture եզրափակիչ խոսք  
~ inaugural, d'ouverture, d'inauguration ներածական խոսք, բացման խոսք  
~ de salutation ողջույնի խոսք  
~ en l'air դատարկ՝ փուչ խոսքեր  
~ -programme ծրագրային ելույթ
- discourtois**, -e *adj* անպարկեշտ, անվայելուչ, անհարգալիր, անքաղաքավարի
- discoutoisement** *adv* անպարկեշտորեն, անքաղաքավարի
- discourtoisie** *f* անքաղաքավարություն, անպարկեշտություն, անհարգալիր վերաբերմունք
- discredit** *m* 1. վարկաբեկում, շնորհազրկում, հեղինակազրկում 2. անվստահություն  $\diamond$  tomber en ~ հեղինակազրկվել, աչքից ընկնել
- discrediter** *vt* 1. վարկաբեկել, արա-

տավորել, հեղինակագրել 2. չվստահել, կասկածի տակ դնել

**discrètement** *adv* 1. զուսպ, համեստորեն 2. աննկատ, գաղտնաբար, զգույշ, շրջահայաց

**discrétion** *f* 1. գազվածություն, համեստություն, բարեկրթություն 2. լռություն, գաղտնապահություն 3. *հնգծ.* խոհեմություն, շրջահայացություն ◊ à la ~ հայեցողությամբ; des personnes de ~ մարդիկ, որոնց կարելի է վստահել; se mettre (կամ s'en remettre) à la ~ de զո մեկի տնօրինությանը հանձնվել; վստահել մեկին, ապավինել մեկին; se rendre à ~ անձնատուր լինել հաղթողի գթածությանը, անվերապահ անձնատուր լինել

**discrétionnaire** *adj* սեփական հայեցողությունից կախված, կամայական ◊ pouvoir ~ անսահմանափակ իշխանություն

**discrimination** *f* *ղվնգ.* դիսկրիմինացիա, խտրականություն, իրավունքների ոտնահարում ◊ sans ~s առանց խտրականության ~ raciale ռասայական խտրականություն

**discriminatoire** *adj* խտրականություն դնող, խտրական ◊ clauses ~s հոդվածներ, որոնք խտրականություն են սահմանում

**disculpation** *f* հանցանքի հանում, արդարացում

**discussion** *f* 1. քննարկում, բանավեճ, մտքերի փոխանակություն 2. *խսկց.* գրույց, խոսակցություն ◊ cela est sujet à ~ սա քննարկման ենթակա հարց է, սա վիճելի

հարց է; la ~ s'ouvre քննարկումը՝ բանավեճը սկսվում է; la ~ se poursuit քննարկումը՝ բանավեճը շարունակվում է; la ~ s'engage autour de... բանավեճը ծավալվում է; entamer (կամ soulever) la ~ բանավեճ սկսել; entrer en ~ բանավեճի մեջ մտնել; être en ~ քննարկվել; mettre en ~ քննարկման դնել; reprendre la ~ շարունակել բանավեճը; venir en ~ դառնալ քննարկման առարկա ~, ample լայնածավալ քննարկում

~ animée աշխույժ քննարկում

~ constructive դրական՝ կոնստրուկտիվ քննարկում

~ fertile արգասավոր՝ բեղմնավոր քննարկում

~ générale (de principe) ընդհանուր քննարկում (սկզբունքային հարցերի շուրջ)

~ parlementaire խորհրդարանական քննարկում

**discutable** *adj* վիճելի

**discuter** 1. *vt* ա) քննարկել, բանավիճել գ) վիճարկել, կասկածի տակ առնել 2. *vi* ա) վիճել, վիճաբանել բ) *խսկց.* խոսել

~ avec l'ennemi թշնամու հետ բանակցություններ վարել

~ de politique խոսել քաղաքականության մասին

~ du problème վիճաբանել խնդրի շուրջը

~ de l'état des relations entre վիճաբանել փոխհարաբերությունների վիճակի շուրջը

**disert**, -e *adj* պերճախոս

**disette** *f* 1. պակասություն, կարիք 2.

- սով; անբերքատվություն, անբերրիություն  
 ~ de marchandises ապրանքի սով  
 ~ monétaire դրամային սով, մանր դրամի պակասություն
- disgrâce** *f* 1. շնորհագրություն, աչքից ընկնելը 2. *հնգծ.* անշնորհություն, անճարակություն  $\diamond$  avec ~ անշնորհ կերպով, անճոռնի կերպով; tomber en ~ աչքից ընկնել, շնորհագրկվել
- disgracier** *vt* շնորհագրկել, աչքից զցել
- disjoindre** *vt* անջատել, բաժանել, առանձնացնել, հեռացնել, գատել, մասնատել
- dislocation** *f* 1. անդամահատում, բաժանում; քայքայում, տարրալուծում 2. *նազմ.* տեղաբաշխում (դիսլոկացիա)
- disloquer** *vt* 1. անդամատել, բաժան-բաժան անել; տարրալուծել, քայքայել 2. *նազմ.* տեղաբաշխել, տեղավորել 3. ցրել (օր. ցույցը)
- disparaître** *vi* 1. անհետանալ, աներևութանալ 2. անհետ կորել, չքանալ, չքվել  $\diamond$  faire ~ վերացնել; հափշտակել, թաքցնել; սպանել 3. մահանալ, զոհվել  $\diamond$  être porté disparu համարվել անհետ կորած
- disparate** *f* անհամապատասխանություն; խզում
- disparité** *f* տարբերություն, անհավասարություն, անհամաչափություն, անհամասնություն; անհամաձայնություն
- disparition** *f* 1. անհետացում, չքանալը, վերացում 2. մահ
- dispense** *f* 1. ընդհանուր կանոնից բացառում 2. ազատում, արտոնություն  $\diamond$  obtenir une ~ d'âge ստանալ ազատություն՝ տարիքի հետևանքով
- dispenser** *vt* 1. բաժանել, բաշխել, բաժին տալ 2. ազատել, զերծ պահել  
 ~ d'un examen քննությունից ազատել  
 ~ de la loi commune ընդհանուր օրենքից բացատել
- disperser** *vt* շաղ տալ, ցրել, հարուցանել; ցրել, քշել, հավաժել  
 ~ ses efforts ուժերը վատնել  
 ~ une manifestation ցույցը ցրել
- disponibilité** *f* 1. անզբաղվածություն, ոչ զբաղված լինելը 2. տրամադրելի կանխիկ դրամ 3. *pl* կանխիկ դրամական միջոցներ; *նազմ.* պահեստային ուժեր, պահեստագործ 4. *փխք.* ազատություն  $\diamond$  constituer les ~s պաշարներ կուտակել; être en ~ պահեստում, ռեզերվում լինել; mettre en ~ ժամանակավորապես ծառայությունից ազատել, թողնել պահեստում; se trouver en ~ գործից հեռու հայտնվել, պարապության մեջ հայտնվել  
 ~ d'esprit հոգու ազատություն
- disponible** *adj* 1. տրամադրության տակ եղած, կանխիկ, իրացվելի; ազատ, չզբաղված 2. պահեստում, ռեզերվում գտնվող  $\diamond$  appartement ~ ազատ բնակարան; capital ~ կանխիկ կապիտալ
- disposer** 1. *vt* տեղադրել, զետեղել, բաշխել, տեղաբաշխել, դասավորել; տրամադրել, համոզել; նա-



խապատրաստել 2. *vi* տնօրինել, տրամադրության տակ ունենալ  
~ d'un bien տնօրինել ունեցվածքը  
~ en faveur de զո տրամադրել մեկի օգտին

**dispositif** *m* 1. հարմարանք, կառուցվածք, սարք 2. *հրվք.* դատավճիռ; միջազգային պայմանագրի հիմնական մաս, դրույթներ  
~ d'alarme վթարային ազդանշանային սարք  
~ d'écoute լսելու սարք

**disposition** *f* 1. տեղադրություն, տեղաբաշխում, դասավորում, դասավորություն, բաշխում 2. տրամադրվածություն, վերաբերմունք, հակվածություն 3. տնօրինում, կազմակերպում, կարգավորում 4. որոշում, կարգադրություն; դրույթ 5. միջոցառում  $\diamond$  à la ~ de... տրամադրության տակ; contrevénir à la ~ խախտել որոշումը; être en ~ de... տրամադրված լինել, մտադրություն ունենալ; libre ~ de son bien իր ունեցվածքի ազատ տնօրինում; mettre à la ~ տրամադրության տակ դնել; portée d'une ~ դրույթի կիրառության ոլորտը; prendre des ~s միջոցներ ձեռք առնել; se mettre (կամ se tenir, être) à la ~ de զո մեկի տրամադրության տակ լինել

~s administratives վարչական կարգադրություններ  
~ des affaires գործերի դրությունը  
~ de l'article հոդվածի դրույթներ  
~s d'un contrat պայմանագրի կետեր

~s facultatives ֆակուլտատիվ՝ ոչ պարտադիր դրույթներ

~s fiscales հարկային կարգադրություններ

~s générales ընդհանուր դրույթներ

~s législatives օրենսդրական դրույթներ

~, libre ինքնորոշում

~ des lieux տեղանքի դիրքը

~s obligatoires պարտադիր դրույթներ

~s du Pacte de la Société des Nations Ազգությունների Լիգայի կանոնադրության դրույթներ

~s réglementaires կանոնավորիչ ակտի որոշումներ

~s de statuts կանոնադրության դրույթներ

~s de traité պայմանագրի հոդվածներ

**disproportion** *f* անհամաչափություն, անչափակցություն, անհամամասնություն *disputable adj* վիճելի

**dispute** *f* 1. խոսքակռիվ, վեճ, վիճաբանություն; ընդհարում 2. *հնգծ.* բանավեճ, (հրապարակային քննարկում)

**disputer** 1. *vi* վիճել, վիճաբանել, հակաճառել, 2. *vt* վիճարկել, կասկածի տակ առնել; պաշտպանել, պայքարել հանուն ...

~ le concours մասնակցել մրցույթին

~ la Coupe, le championnat խաղարկել Գավաթը, առաջնությունը

~ le terrain պաշտպանել հողի յուրաքանչյուր թիզը; պաշտպա-

նել իր կամ ուրիշի կարծիքը, իր կամ ուրիշի շահերը  
**dissection** *f* *փխք*. մանրակրկիտ վերլուծություն  
**dissémination** *f* տարածում (նորությունների, գաղափարների)  
 ~ de l'information տեղեկատվության տարածում  
**disséminer** *vt* ցրել, սփռել, տարածել  
**dissension** *f* 1. երկպառակություն, անմիաբանություն, գժտություն, պառակտում, խռովություն, վեճ  
 2. *pl* խոր տարածայնություններ, անհամաձայնություններ ◊ aggraver la ~ խորացնել գժտությունը; créer une ~ ստեղծել տարածայնություն  
**dissentiment** *m* տարածայնություն, անհամաձայնություն, տարակարծություն  
**disséquer** *vt* *փխք*. վերլուծել, մանրակրկիտ քննել  
**dissidence** *f* 1. պառակտում 2. տարակարծություն, այլադավանություն  
**dissident**, -e *adj* պառակտիչ, պառակտչական  
**dissimilitude** *f* տարբերություն, նմանության բացակայություն  
**dissimulateur** *m* իր մտքերը, զգացմունքները թաքցնող, գաղտնապահ  
**dissimulation** *f* գաղտնիություն, թաքունություն, թաքցնում; ծածկատություն, գաղտնապահություն  
 ~ de bénéfices շահույթը թաքցրնելը  
 ~ comptable հաշիվների կեղծում  
 ~ de prix կեղծ գնանշում, սխալ գնանշում

**dissimuler** *vt* 1. թաքցնել, գաղտնի պահել, ծածկել 2. վարագուրել, քողարկել, թաքցնել իր մտքերը  
**dissocier** *vt* անջատել, բաժանել, գատել, բաժան-բաժան անել, հեռացնել; կազմալուծել, քայքայել, բարոյալքել  
**dissolution** *f* 1. լուծում, տարրալուծում, կազմալուծում, քայքայում 2. լուծում, քանդում, խզում 3. գործունեության դադարեցում; կազմալուծում, արձակում, լուծարում  
 ~ de la Chambre պատգամավորների պալատի լուծարում  
 ~ du contrat պայմանագրի լուծում  
 ~ du Parlement Խորհրդարանի արձակում՝ լուծարում  
 ~ de la personne morale իրավաբանական անձի գործունեության դադարեցում  
 ~ d'une société ընկերության լուծարում  
**dissous** *m pl* արգելված կազմակերպության անդամներ  
**dissuasion** *f* 1. տարհանոգում 2. կասեցում ◊ forces de ~ միջուկային ուժերի կասեցում  
**distance** *f* հեռավորություն, տարածություն; հեռվություն; ժամանակահատված ◊ de ~ en ~ որոշ տեղեր, տեղ-տեղ; rapprocher les ~s հեռավորությունը վերացնել; tenir à ~ հեռավորության վրա պահել  
**distancer** *vt* 1. հետևում թողնել, առաջ անցնել, առաջ ընկնել 2. բաժանել ժամանակահատվածով

**distiller** *vt*: ~ le venin de la calomnie  
 գրպարտանքի թույն թափել

**distinction** *f* 1. տարբերում, տարբերակում, զանազանում, սահմանազատում 2. տարբերություն, զանազանություն, առանձնահատկություն 3. գերազանցություն, հանրաճանաչություն, բացառիկություն 4. հարգանք, պարզև, բարձր պաշտոն *◇* avoir de la ~ տարբերվել վեհանձնությամբ; faire la ~ entre ... տարբերություն դնել ... միջև; manquer de ~ վատ դաստիարակված լինել; personne de ~ հայտնի մարդ; բացառիկ, արժանապատիվ մարդ; անվանի անձ; sans ~ de ... անկախ; sans ~ de pavillon առանց դրոշների (ազգության) խտրականության; sans ~ de personne առանց անձը հաշվի առնելու; sans ~ quant à ... անկախ մի բանի, բացարձակորեն; sans ~ de race ou de sexe առանց ռասայական և սեռական խտրականության; traiter qn avec ~ մեկին հարգանքով վերաբերվել, մեկին պատիվ տալ՝ հարգանք մատուցել

~ de naissance ազնվական ծագում

~s nationales ազգային առանձնահատկություններ

~ des pouvoirs լիազորությունների բաժանում

~s régionales տարածաշրջանային առանձնահատկություններ

**distingué**, -e *adj* նշանավոր, անվանի; ականավոր, հանրաժանոթ, հանրաճանաչ *◇* savant ~ ակա-

նավոր գիտնական

**distribuer** *vt* բաժանել, բաշխել; տարածել, ցրել

~ un procès գործը հանձնել դատավորին՝ ուսումնասիրելու և գեկուցելու համար

**distribution** *f* բաժանում, բաշխում, իրացում *◇* assurer la ~ des documents ապահովել փաստաթղթերի բաշխումը սահմանված սխեմայով

~ d'une bénéfice շահույթի բաշխում

~ du crédit վարկի բաշխում

~ du dividende շահաբաժնի վճարում

~ restreinte սահմանափակ բաշխում

**district** *m* 1. շրջան, գավառ 2. գերատեսչություն

~ urbain քաղաքային շրջան

**dit**, -e *adj* այսպես կոչված, կոչեցյալ

**divagation** *f* 1. (թեմայից) շեղում 2. *pl* ճամարտակություններ, մեծախոսություններ, շաղակրատություններ

**divaguer** *vi* 1. բուն նյութից շեղվել, դատարկախոսել 2. զառանցել, անկապ-անկապ խոսել

**divergence** *f* տարբերություն, տարակարծություն, տարածայնություն

~ d'idées գաղափարական տարածայնություններ

~ de vues, d'opinions կարծիքների տարբերություն

**divan** *m* դիվան (Թուրքիայի պետական խորհուրդ)

**divergence** *f* *փ/իք*. տարածայնություն, անհամապատասխանություն, տարամիտում

- ~ d'opinions, ~ vues տարակարծություն, գաղափարական տարածայնություն
- divergent**, -e *adj* *փխբ.* տարբեր, տարբերվող, զանազանվող; տարակարծիք, տարամետ
- diverger** *vi* 1. հեռանալ, բաժանվել, տարամիտվել 2. տարբերվել, առանձնանալ, տարակարծիք լինել 3. խոտորվել, թեքվել, շեղվել
- divers**, -e *adj* տարբեր, զանազան ◊ faits ~ օրվա իրադարձություններ, խրոնիկա, լրատու (թերթում)
- diversion** *f* *նազմ.* 1. վնասագործություն (դիվերսիա) 2. ուշադրության շեղում ◊ agent de ~ վնասագործ (դիվերսանտ); faire ~ à ուշադրությունը շեղել; այլ ընթացք տալ; բազմազանություն մտցնել; manoeuvre de ~ այլընթաց գորախաղեր; trouver ~ à բազմազանություն գտնել ... մեջ
- diversionniste** *m* վնասագործ, դիվերսանտ
- divide et impera** (*լատ.*) «բաժանիր և տիրիր»
- division** *f* 1. բաժանում, մասնատում, անջատում 2. *նազմ.* դիվիզիա, ստորաբաժանում, բաժին 3. անհամաձայնություն, տարածայնություն, երկպառակություն, տարակարծություն ◊ ~ du travail աշխատանքի բաժանում; chef de ~ դիվիզիայի պետ; mettre de la ~ dans... երկպառակություն մտցնել ~ des fonctions պարտականությունների բաժանում ~ des opinions կարծիքների անջատում
- divorce** *m* 1. բաժանություն, ամուսնալուծություն 2. *փխբ.* խզում, պառակտում; տարածայնություն, երկպառակություն, անհամաձայնություն ◊ agir (կամ assigner) en ~ ամուսնալուծության հայց ներկայացնել; demander le ~ ամուսնալուծության հայց ներկայացնել; prononcer le ~ ամուսնալուծության մասին վճիռ կայացնել
- divulgateur** *m* տարածող, հրապարակող, հռչակող; շատախոս
- divulgateur** *f* հռչակում, հրապարակում, տարածում; մերկացում, բացահայտում  
~ d'un secret գաղտնիքի հրապարակում
- divulguer** *vt* հրապարակել, հռչակել, տարածել ◊ à ne pas ~ հրապարակման ենթակա չէ
- docker** *m* դոկեր, նավահանգստի բանվոր, բեռնակիր
- docte** *adj* գիտուն, ուսյալ
- doctement** *adv* գիտականորեն
- doctrinaire** *m* կուրադավան մարդ, որևէ ուսմունք կուրորեն դավանող մարդ; տեսաբան
- doctrinal**, -e *adj* տեսական; գիտական ◊ mise au point ~e et tactique հարցի տեսական գործնական մշակում
- doctrine** *f* դոկտրինա, ուսմունք, տեսություն; *կրոն.* վարդապետություն, դավանանք
- document** *m* փաստաթուղթ ◊ classification des ~s փաստաթղթերի դասակարգում; compilation des ~s փաստաթղթերի կոմպիլյացիա՝ բանաբաղում; préparer un ~

- փաստաթուղթ պատրաստել  
 ~ authentique բնագրային փաստաթուղթ, իսկական փաստաթուղթ  
 ~ budgétaire բյուջեի փաստաթուղթ  
 ~ fort bien rédigé հիանալի խմբագրված փաստաթուղթ  
 ~ officiel պաշտոնական փաստաթուղթ  
 ~ original ինքնագիր՝ բնագիր փաստաթուղթ
- documentation** *f* 1. փաստաթղթերով հիմնավորում 2. փաստաթղթեր, աղբյուրներ, նյութեր 3. տեղեկությունների՝ նյութերի հավաքում; սկզբնաղբյուրների ուսումնասիրում
- documenter** *vt* փաստաթղթերով հիմնավորել; իրազեկել  $\diamond$  être documenté sur qch ունենալ անհրաժեշտ նյութեր որևէ հարցի վերաբերյալ; rapport documenté փաստաթղթերով հիմնավորված զեկույց; se ~ տեղեկանալ սկզբնաղբյուրներից; նյութերն ուսումնասիրել; նյութերն ընտրել
- dogmatiser** *vi* 1. դոգմա դարձնել, որպես դոգմա սահմանել 2. *փխք.* խոսել հեղինակավոր, խրատական տոնով, խրատել, հորդորել; արտահայտվել կատեգորիկ՝ կտրական՝ անառարկելի տոնով
- dogme** *m* 1. դոգմա, դավանություն, անառարկելի պնդում 2. *կրոն.* դավանանք, դոգմա
- doléances** *f pl* գանգատ, տրտունջ, բողոք  $\diamond$  faire (կամ présenter) ses ~s գանգատվել, բողոքել
- domaine** *m* 1. տիրույթ, կալվածք, սեփականություն, գույք 2. *փխք.* բնագավառ, ոլորտ, ասպարեզ  $\diamond$  ce n'est pas de mon ~ այդ գործում ես մասնագետ չեմ; դա իմ իրավասության մեջ չէ; service des ~s պետության մասնավոր սեփականության վարչություն; tomber dans le ~ public դառնալ հանրային սեփականություն; անցնել համընդհանուր օգտագործման  
 ~ culturel մշակույթի բնագավառ  
 ~ de l'Etat, le Domaine պետական սեփականություն  
 ~ financier ֆինանսական բնագավառ  
 ~s forestiers անտառային հանդեր  
 ~ politique քաղաքականության բնագավառ  
 ~ privé պետության մասնավոր սեփականությունը հանդիսացող գույք  
 ~ public պետության հասարակական սեփականությունը հանդիսացող գույք
- domestication** *f* ստրկացում, նվաճում, հնազանդեցում
- domestique** *adj* ներքին, տեղական, ազգային  $\diamond$  guerres ~s ներքին երկպառակություններ, քաղաքացիական կռիվներ
- domicile** *m* տուն, բնակարան, կացարան; բնակության վայր, բնակավայր, գտնվելու վայր  $\diamond$  gens à (կամ sans) ~ instable (կամ fixe) որոշակի բնակության վայր չունեցող մարդիկ; sans ~ անտուն

- ~ légal օրինական բնակության վայր  
 ~ de secours հասցե, որով վճարվում են սոցիալական ապահովագրության նպաստները  
 ~ d'une société ֆիրմայի իրավաբանական հասցեն
- domicilié**, -e *adj* բնակվող ◊ être ~ բնակվել
- dominance** *f* տիրապետություն, ազդեցություն, իշխանություն, գերիշխում, գերակշռություն  
 ~ de la loi օրենքի գերակայություն
- dominant**, -e *adj* իշխող, տիրապետող, տիրող, գերիշխող ◊ les classes ~es տիրապետող դասակարգեր; position ~e գերիշխող դիրք
- dominateur**, -rice *adj* իշխող, տիրապետող; իշխանատենչ, տիրական, հրամայողական, ազդու
- domination** *f* տիրապետություն, իշխանություն, գերիշխանություն ◊ chercher à établir (կամ asseoir) sa ~ mondiale (կամ dans le monde) ձգտել հասնելու համաշխարհային տիրապետության; ranger sous la ~ de ...հնազանդեցնել; soumettre un peuple à sa ~ հպատակեցնել մի ժողովրդի, գցել իր տիրապետության տակ
- dominer** *vi* 1. իշխել, տիրակալել, իր տիրապետության տակ վերցնել, տիրել 2. գերակշռել, գերիշխել
- dommage** *m* վնաս, կորուստ ◊ causer de grands ~s մեծ վնասներ պատճառել; réparer le ~ վնասը հատուցել; sans aucun ~ առանց որևէ վնասի
- ~ consécutif անուղղակի վնաս  
 ~ corporel մարմնական վնաս  
 ~ direct ուղղակի վնաս  
 ~ effectif պատճառած վնաս  
 ~ matériel նյութական վնաս  
 ~ moral բարոյական վնաս  
 ~ souffert, subi, survenu կրած վնաս  
 ~s et intérêts վնասների փոխհատուցում  
 ~s de guerre պատերազմական վնասներ
- dompter** *vt* հնազանդեցնել, հպատակեցնել, սանձահարել, զսպել
- don I** *m* 1. նվեր, ընծա, պարգև 2. շնորհք, ձիրք, ընդունակություն ◊ faire ~ de... նվիրել  
 ~ de la parole խոսելու ձիրք  
 ~ de soi ինքնագոհողություն, ինքնանվիրում  
 ~s de la terre երկրային բարիքներ
- don II** *m* դոն (ազնվականական տիտղոս իսպաներեն և պորտուգալերեն խոսող երկրներում)
- donataire** *m* պարգև ստացող
- donation** *f* 1. *իրվք*. նվիրատվություն 2. նվիրատվության պայմանագիր ◊ révoquer une ~ նվիրատվությունը չեղյալ հայտարարել
- donnée** *f* 1. տրված մեծություն 2. հիմնական գաղափար 3. *pl* տվյալներ, տեղեկություններ ◊ d'après les ~s préalables ըստ նախնական տվյալների կամ տեղեկությունների
- donner** *vt* 1. տալ, հանձնել, տրամադրել; նվիրել 2. ցուցադրել 3. ավելացնել, հաղորդել 4. առաջացնել, դրդել, հարուցել 5. հան-

դես բերել, դրսևորել, ցուցաբերել  
 ~ une adhésion հարել, անդամագրվել  
 ~ le branle խթանել  
 ~ le change մոլորեցնել  
 ~ communication հայտնել, տեղեկացնել  
 ~ congé ազատել, հեռացնել  
 ~ une cote à un document փաստաթուղթը համարակալել  
 ~ des directions հրահանգներ տալ  
 ~ en jouissance pour une durée illimitée հաստատել անժամկետ գործածության համար  
 ~ l'éveil ահազանգել, ուռքի հանել  
 ~ gain de cause à որոշում կայացնել հոգուտ մեկի  
 ~ lecture de ... հրապարակել, բարձր ընթերցել  
 ~ libre cours à ազատ գործելու հնարավորություն տալ  
 ~ la mesure ամբողջ ընդարձակությանը ծավալվել, ամբողջ ուժով դրսևորվել  
 ~ naissance կյանքի կոչել  
 ~ pleins pouvoirs լիակատար լիազորություններով օժտել  
 ~ préférence նախընտրել  
 ~ sa voix իր ձայնը տալ  
**dormir** *vi* չգործածվել, չօգտագործվել, ընկած լինել, ընթացք չտալ, անգործության մեջ լինել  
 ~ dans les cartons թղթապանակների մեջ երկար մնալ; laisser ~ les fonds կապիտալը ստեղծել; laisser ~ une affaire գործը մահուդի տակ դնել, գործը երկար ժամանակով հետաձգել  
**dosage** *m* *փ/չք.* բաշխում (ձայների),

նախարարական պաշտոնների և այլն)  
**dossier** *m* փաստաթղթերի՝ նյութերի հավաքածու; անձնական գործ ◊ compulser un ~ տեղեկանքներ կցել գործին; constituer un ~ գործ հարուցել; ouvrir un ~ գործ բացել; verser au ~ գործին կցել  
 ~ de personnalité անձնական գործ, դույն  
 ~ de la procédure գործի նյութեր  
**dotation** *f* 1. դոտացիա, լրավճար, պահում, հատկացում 2. նվեր, պարգև, նվիրաբերություն, նվիրատվություն; ներդրում  
**doter** *vt* 1. մատակարարել, պարգևել 2. դոտացիա տալ  
**douane** *f* մաքսատուն ◊ droits de ~ մաքսատուրք; présenter à la ~ մաքսային հսկողությանը ներկայացնել; sous ~ մաքսային հսկողության ներքո  
**douaner** *vt* 1. մաքսային կնիք դնել 2. հարկել, տուրքագրել  
**douanier**, -ère *adj* մաքսային ◊ union ~ ère մաքսային միություն  
**douanier** *m* մաքսատան աշխատող, մաքսավոր  
**double** *adj* կրկնակի, երկակի ◊ à ~ fin երկու նպատակով; à ~ sens երկիմաստ; en ~ exemplaire երկու օրինակով  
 ~ original երկու հավասարազոր օրինակ  
**doute** *m* կասկած ◊ émettre un ~ կասկած հայտնել; mettre (կամ révoquer) en ~ կասկածի տակ առնել; hors de ~ կասկածից վեր; sans ~ հավանաբար, ըստ երևույթին; անշուշտ; sans aucun ~ առանց

որևէ կասկածի, անտարակույս

**douteux**, -se *adj* 1. կասկածելի, տարակուսելի 2. ոչ բավականաչափ ստույգ; անորոշ ◊ succès ~ կասկածելի հաջողություն; raisonnement ~ վիճելի դատողություն; réponse douteuse երկիմաստ պատասխան

**doyen** *m* 1. ավագ, ավագանի 2. ֆակուլտետի ղեկան 3. *ղվնգ*. դիվանագիտական կորպուսի ավագն ըստ հավատարմագրերի հանձնման ժամկետի  
~ d'âge Ազգային խորհրդի ավագազույն անդամ  
~ d'ancienneté ավագազույն անդամ  
~ du corps diplomatique դիվանագիտական կորպուսի ավագազույն անձ

**doyenneté** *f* ավագություն

**drapeau** *m* դրոշ, դրոշակ ◊ abaisser (կամ rentrer) le ~ դրոշը իջեցնել; appeler sous les ~x գորակոչել; déployer un ~ դրոշ պարզել; être sous les ~x զինվորական ծառայության մեջ լինել; hisser le ~ դրոշ բարձրացնել; mettre le ~ en berne դրոշակը մի փոքր իջեցնել; mourir pour le ~ զոհվել հանուն հայրենիքի; porter le ~ որևէ գաղափարի դրոշակակիրը լինել; se rallier au ~ *փխբ*. դրոշի շուրջը հավաքվել; se ranger sous les ~x de զո որևէ մեկի կողմը կանգնել  
~ challenge փոխանցիկ դրոշ  
~ national ազգային՝ պետական դրոշ  
~ tricolore եռագույն դրոշ, Ֆրանսիայի ազգային դրոշը

**dresser** *vt* 1. կանգնեցնել, դնել, տեղադրել, բարձրացնել 2. կազմել ~ un acte d'accusation մեղադրական եզրակացություն կազմել ~ ses batteries նախապատրաստվել հակահարվածի  
~ un camp բանակ դնել  
~ le constat des dégats ակտ կազմել վնասների վերաբերյալ  
~ le contrat պայմանագիր կազմել  
~ le premier bilan հանրագումարի բերել առաջին արդյունքները  
~ un procès-verbal արձանագրություն կազմել  
~ un programme ծրագիր կազմել

**droit** *m* 1. իրավունք 2. *իրվբ*. օրենք 3. իրավագիտություն ◊ à bon ~ լիովին հիմնավորված; accorder (կամ conférer) un ~ իրավունք տալ; cela va de ~ լիովին արդարացի է; codification du ~ international միջազգային իրավունքի կոդիֆիկացիա (գործող միջազգային իրավունքի նորմերի դասակարգում); contraire au ~ հակաիրավական; défense des ~s de l'homme մարդու իրավունքների պաշտպանություն; égal en ~ իրավահավասար; empiréter sur le ~ իրավունքը խախտել; être de ~ իրավական լինել, օրինական լինել; être déchu du ~ իրավունքից զրկվել; être en ~ իրավունք ունենալ; étudiant en ~ իրավաբանական ֆակուլտետի ուսանող; exercer un ~ իրավունք կիրառել; jouer (կամ user) du ~ իրավունքից օգտվել; en plein ~ իրավամբ, ըստ իրավունքի, իրավունքով;



faire ~ à une demande խնդրանքը  
 բավարարել; faire ~ aux réquisi-  
 tions պահանջները բավարարել;  
 invoquer un ~ իրավունքը վկա-  
 յակոչել; nul de plein ~ անվավեր,  
 օրինական ուժից զուրկ; de plein  
 ~ իրավամբ, օրենքով; prélever  
 les ~s մասք գանձել; à qui de ~  
 իրավագոր անձին, իրավասու  
 դատական մարմնին; se réserver  
 le ~ իրեն իրավունք վերապահել;  
 sans ~ առանց օրինական հիմքե-  
 րի; violer le ~ իրավունքը խախ-  
 տել  
 ~ administratif վարչական իրա-  
 վունք  
 ~ d'asile ապաստանելու իրա-  
 վունք  
 ~ d'auteur հեղինակային իրա-  
 վունք  
 ~, bon արդար գործ, անառար-  
 կելի իրավունք  
 ~ des brevets d'invention արտո-  
 նագրային իրավունք  
 ~ canon (կամ canonique) եկեղե-  
 ցական իրավունք  
 ~ de cité քաղաքացիության իրա-  
 վունք  
 ~ civil քաղաքացիական իրա-  
 վունք  
 ~ commercial առևտրային իրա-  
 վունք  
 ~ commun ընդհանուր (քրեա-  
 կան) իրավունք  
 ~ constitutionnel սահմանադրա-  
 կան իրավունք  
 ~ coutumier սովորույթի իրա-  
 վունք  
 ~ à disposer librement de soi-  
 meme իրավունք՝ ազատորեն

տնօրինելու իր ճակատագիրը  
 ~ criminel (կամ pénal) քրեական  
 իրավունք  
 ~ exclusif բացառիկ իրավունք  
 ~ fiscal հարկային իրավունք  
 ~ immuable անասան իրավունք  
 ~ inaliénable անկապտելի իրա-  
 վունք  
 ~ international միջազգային իրա-  
 վունք  
 ~ interne ներքին (ներպետական)  
 իրավունք  
 ~ légitime օրինական իրավունք  
 ~ à la libre disposition ինքնորոշ-  
 ման իրավունք  
 ~, mauvais ապօրինի պահանջա-  
 խնդրություն  
 ~ d'option քաղաքացիության  
 ընտրության իրավունք  
 ~ pécuniaire գույքային իրավունք  
 ~ pénal քրեական իրավունք  
 ~ de pourvoi en cassation բողո-  
 քարկման իրավունք վճռաբեկ-  
 ման կարգով  
 ~ préférenciel նախապատվու-  
 թյան իրավունք  
 ~ de procédure civile քաղաքա-  
 ցիական դատավարական իրա-  
 վունք  
 ~ à la propriété personnelle անձ-  
 նական սեփականության իրա-  
 վունք  
 ~ public հանրային իրավունք  
 ~ de recours (կամ de porter  
 plainte) բողոքարկման՝ գանգա-  
 տարկման իրավունք  
 ~ au repos հանգստի իրավունք  
 ~ sacré սուրբ իրավունք  
 ~ à la santé առողջության պահ-  
 պանության իրավունք

~ à la secession անջատման իրավունք  
 ~ à la sécurité sociale անցիալական ապահովության իրավունք  
 ~ de succession ժառանգման իրավունք  
 ~ au travail աշխատանքի իրավունք  
 ~ viager ցմահ իրավունք  
 ~ en vigueur գործող իրավունք  
 ~ de vote ձայնի իրավունք, քվեարկության իրավունք  
**droits** *m pl* իրավունքներ ◊ La Convention européenne des droits de l'homme Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա; fouler aux pieds les ~ ռունահարել իրավունքները; priver des ~ իրավունքներից զրկել; restreindre les ~s իրավունքները սահմանափակել; violer les ~ իրավունքները խախտել  
 ~ civils քաղաքացիական իրավունքներ  
 ~ culturels մշակութային իրավունքներ  
 ~ économiques տնտեսական իրավունքներ  
 ~ individuels անհատական իրավունքներ  
 ~ de la personne անձի իրավունքներ  
 ~ politiques քաղաքական իրավունքներ  
 ~ sociaux անցիալական իրավունքներ  
**droite** (la) *f* աջերը, աջ ուժերը, աջ

կուսակցությունները ◊ extrême ~ ծայրահեղ աջերը  
**dû, due** *adj* պատշաճ, հարկ եղած ◊ en bonne et due forme ընդունված կարգով, պատշաճ վիճակում  
**dualité** *f* երկակիություն  
 ~ du pouvoir երկիշխանություն  
**duc** *m* հերցոգ  
**duché** *m* հերցոգություն  
**dûment** *adv* պատշաճ ձևով, պատշաճ կերպով ◊ le présente acte ~ signé պատշաճ կերպով ձևակերպված սույն արձանագրությունը; des agents ~ accréditiés օրինական կարգով լիազորված գործակալներ  
**duplicité** *f* երկերեսանություն  
**durcissement** *m* անողորքացում, անողորք դառնալը, կատաղի դառնալը  
**durée** *f* տևողություն; ժամանակ, ժամանակահատված, ժամկետ ◊ de courte ~, de peu de ~ կարճաժամկետ; de longue ~ երկարաժամկետ; limitation de ~ ժամկետի սահմանափակում; pendant toute la ~ ամբողջ ժամանակահատվածում  
 ~ de l'accord (կամ d'un contrat) պայմանագրի ժամկետ  
 ~ du mandat պաշտոնավարման ժամկետը, լիազորությունների ժամկետը  
 ~ de l'utilisation օգտագործման ժամկետ  
**dynastie** *f* դինաստիա, հարստություն, գահատոհմ

## E

- EAPC** (Euro-Atlantic Partnership Council) ԵԱՀԽ (Եվրատլանտյան համագործակցության խորհուրդ)
- eau** *f* ջուր  
 ~ douce խմելու, քաղցրահամ ջուր
- eaux** *f pl m* 1. գետեր, ջրամբարներ 2. աղբյուրներ 3. շատրվաններ ◊ Eaux et Forêts անտառային գերատեսչություն; les grandes ~ (այգու) շատրվանների բաց թողնելը; prendre les ~ բուժվել  
 ~ minérales հանքային ջրեր, աղբյուրներ  
 ~ territoriales տերիտորիալ ջրեր  
 ~ thermales տաք, բուժիչ աղբյուրներ
- ébauchage** *m* ուրվագծում, նախանշում, նախնական նախագծում
- ébauche** *f* ուրվանկար, ուրվագիծ, սևագիր նախագիծ, էսքիզ, նախնական պլան
- ébaucher** *vt* 1. ուրվագծել ընդհանուր գծերով, նշել, սևագրել, էսքիզ անել, ուրվագծել, նախագծել ◊ la détente ébauchée միջազգային լարվածության նկատելի թուլացում; s'~ երևան գալ, գծագրվել, նշմարվել, սկզբնավորվել, ձևավորվել
- éblouir** *vt* 1. շլացնել, կուրացնել 2. *փխբ.* գայթակղել, հրապուրել, նվաճել, գերել, հմայել
- ébranlement** *m* 1. ցնցում, տարուբերում 2. *փխբ.* սաստիկ հուզում, ցնցում
- ébranler** *vt* ճոճել, շարժել, տարուբերել, տատանել, տեղից խախտել, սասանել 2. *փխբ.* հուզել, խռովել ◊ s'~ 1. տեղից շարժվել 2. *փխբ.* ցնցվել, երերալ, տատանվել
- ébrécher** *vt փխբ.* վնաս հասցնել  
 ~ sa réputation իր հեղինակությանը վնաս հասցնել
- ébruitement** *m* հրապարակում, հռչակում, տարածում
- ébruiter** *vt* հրապարակել, հայտարարել, հռչակել, տարածել (լուրը) ◊ s'~ տարածվել, հայտնի դառնալ
- ébullition** *f փխբ.* հուզմունք, հուզում, պոռթկում, գայրոյթ, գրգռվածություն ◊ en ~ գրգռված, հուզված վիճակում
- écart** *m* 1. հեռավորություն, բացվածք 2. տարբերություն, խզում, անհամապատասխանություն 3. շեղում, խախտում ◊ fixer l'~ տարբերությունը հաստատել; rétrécir l'~ տարբերությունը կրճատել; se tenir à l'~ հեռու կանգնել, չմիջամտել, մի կողմ քաշվել  
 ~ important նկատելի շեղում; նկատելի խզում  
 ~ maximum առավելագույն շեղում; առավելագույն խզում  
 ~ des salaires et des prix խզում աշխատավարձի և գների միջև
- écarté**, -e *adj* 1. հեռու կանգնած, մի

- կողմ քաշված 2. հեռացված, ազատված (աշխատանքից և այլն)
- écartement** *m* հեռացում, ազատում, ազատ աձակում
- écarter** *vt* 1. հեռացնել, հեռու պահել, մի կողմ հրել; հեռացնել, ազատել պաշտոնից, վտարել 2. վերացնել, բացառել  
~ une difficulté դժվարությունը վերացնել  
~ des soupçons կասկածները հեռացնել՝ վանել
- ecclésiastique** *adj* եկեղեցական, հոգևոր
- ecclésiastique** *m* եկեղեցու սպասավոր, հոգևորական
- échafaud** *m* 1. կառավարան 2. *փխբ.* մահապատիժ (գլխատելով) ◇ monter sur l'~ կառավարան բարձրանալ
- échafaudage** *m* 1. կուտակում, դիզում 2. կառուցում, կանգնեցում
- échafauder** *vt* 1. կուտակել, միմյանց վրա դիզել, կիտել 2. *փխբ.* կառուցել, շինել, կանգնեցնել, պատրաստել  
~ des plans պլաններ մտածել  
~ une hypothèse վարկած առաջ քաշել
- échange** *m* 1. փոխանակություն, փոխանակում 2. առևտուր; ապրանքափոխանակություն ◇ en ~ de... փոխարեն, փոխանակ; liberté des ~s առևտրի ազատություն; procéder à un ~ de vues (approfondies, détaillées) (հանգամանալից, մանրամասն) կարծիքների փոխանակություն կատարել  
~ d'expérience փորձի փոխանակում
- ~ international համաշխարհային առևտուր  
~ libre ազատ փոխանակում  
~ de notes diplomatiques *դվնգ.* դիվանագիտական նոտաների փոխանակում  
~ plus actif փոխանակումների ընդլայնում  
~ de prisonniers de guerre պատերազմի գերիների փոխանակում  
~ de ratification վավերագրերի փոխանակում  
~s commerciaux առևտուր  
~s culturels մշակութային կապեր  
~s de marchandises ապրանքափոխանակություն  
~ de vues (sur une question) կարծիքների փոխանակում (որևէ հարցի շուրջ)
- échanger** *vt* փոխանակել, փոխանակություն կատարել  
~ des allocutions ողջույնի կարճ ելույթներ փոխանակել  
~ contre qch փոխանակել ինչ-որ բանի հետ  
~ des discours փոխադարձաբար ելույթ ունենալ  
~ l'expérience փորձի փոխանակում կատարել  
~ des lettres մամակագրություն ունենալ  
~ une poignée de main միմյանց ձեռք սեղմել  
~ des vues (des opinions) տեսակետներ (կարծիքներ) փոխանակել
- échappatoire** *f* խուսափանք, խորամանկություն, հնարք, պատրվակ; ձևական պատասխան
- échapper** *vi* խույս տալ, փախչել,

ճողոպրել, փրկվել, ազատվել, գլուխն ազատել, խուսափել  $\diamond$  *s'*~ փախչել, թաքնվել  
 ~ au danger վտանգից ազատվել  
 ~ à la défaite պարտությունից խույս տալ  
 ~ à la poursuite հետապնդումից փրկվել

**échars**, -e *adj* *hégd.* ցածրահարգ, թերաթեք (դրամի մասին)

**échéance** *f* 1. վճարման ժամկետ 2. գործողության ժամկետ, ժամկետի լրանալը, որևէ պարտավորության կատարման ժամկետը 3. սպասվող որևէ իրադարձության գալը  $\diamond$  à brève (կամ courte) ~ կարճաժամկետ; à l' ~ de... ժամանակին, ժամկետը լրանալուն պես; à ~s indéterminées անորոշ ժամկետում; à longue ~ երկարաժամկետ; une politique de longue ~ հեռավոր նշանառության քաղաքականություն  
 ~ d'un contrat պայմանագրի գործունեության ժամկետի լրանալը  
 ~ électorale ընտրությունների գալը

**échéant**, -e *adj* ժամկետը լրացած  $\diamond$  le cas ~ *loc. adv.* եթե առիթը ներկայանա, առիթի դեպքում, առիթը ներկայանալիս; հարկ եղած դեպքում

**écheç** *m* անհաջողություն, պարտություն; կործանում, տապալում, ձախողում; դժվարին դրություն  $\diamond$  être condamné à l'~ դատապարտված լինել ձախողման; éprouver (կամ subir) un ~ total կատարյալ ձախողում կրել; faire ~ à... խսնգարել, դժվարին կա-

ցության մեջ դնել; mettre en ~ ձախողել, վիժեցնել, տապալել; tenir en ~ պարտության մատնել; vouer à l'~ կործանման դատապարտել

**échelle** *f* 1. սանդուղք 2. մասշտաբ 3. սանդղակ  $\diamond$  à l'~ nationale, à l'~ du pays երկրի մասշտաբով; à l'~ mondiale համաշխարհային մասշտաբով; à l'~ nationale պետական մասշտաբով; d' ~ մասշտաբային, խոշոր; faire la courte ~ à զո օգնել մեկին հաջողության հասնելու, կարիերա անելու համար; sur une grande (կամ vaste) ~ մեծամասշտաբ; sur une large ~ լայնամասշտաբ  
 ~ mobile փոփոխական, անկայուն սանդղակ (զների, աշխատավարձի)  
 ~ sociale սոցիալական, հասարակական աստիճան  
 ~ des traitements դրույքների սանդղակ

**échelon** *f* 1. օղակ, աստիճան 2. *փիլս.* զարգացման մակարդակ, հաջորդական փուլ, ինստանցիա 3 *ուսմ.* ավտոշարան, փոխադրագնացք  $\diamond$  à l'~ աստիճանով, մակարդակով; à tous les ~s բոլոր օղակներում, բոլոր ինստանցիաներում, բոլոր մակարդակներում; s'élever par ~s աստիճանաբար բարձրանալ (ժառանգական սանդղակով); avancer d'un ~ ծառայության մեջ առաջ գնալ, բարձրանալ մեկ աստիճան վեր; le dernier ~ ամենաբարձր աստիճանը, ամենաբարձր մակարդակը

**échelonnement** *m* 1. ավտոշարան

- կազմելը 2. տարածամկետում, մաս-մաս վճարում  
~ des paiements տարածամկետով վճարում
- écheveau** *m* կծիկ, թնջուկ ◊ démêler 1~ d'une intrigue քանդել խարդավանքի կծիկը
- échiquier** *m* 1. շախմատի տախտակ 2. *փխբ.* արենա; շահերի բախման վայր 3. ֆինանսիստ; *սյտմ.* ֆեոդալական դատարան (Նորմանդիայում) ◊ Chancelier de 1~ ֆինանսների նախարար (Անգլիայում); sur 1~ mondial միջազգային արենայում
- écho** *m* արձագանք, անդրադարձում, պատասխան ◊ se faire 1~ de... կուրորեն կրկնել, տարածել; susciter (կամ provoquer) des ~s արձագանքներ առաջացնել, հարուցել; trouver un large ~ լայն արձագանք գտնել  
~s d'un journal լրագրային խորհիկա  
~, vifs ջերմ, բուռն արձագանքներ
- échoir** *vi* 1. բաժին ընկնել, բաժին հասնել 2. լրանալ, ավարտվել (ժամկետի մասին)
- échouement** *m* անհաջողություն, ձախողում, կործանում, տապալում
- échouer** *vi* *փխբ.* տապալվել, կործանվել, քանդվել, ձախողվել, անհաջողություն կրել, փլվել ◊ faire ~ les plans պլանները տապալել
- éclabousser** *vt* *փխբ.* սևացնել, ցեխոտել, ցեխ շարտել
- éclair** *adj* *invar.* կայծակնային, շանթալաց ◊ la guerre ~ կայծակնային պատերազմ
- éclair** *m* 1. կայծակ, շանթ, փայլակ 2. փայլատակում, բռնկում
- éclairage** *m* 1. լուսավորում, լուսավորություն 2. *փխբ.* տեսակետ 3. *ռազմ.* հետախուզում, հետախուզություն ◊ sous cet ~ այդ տեսանկյունից
- éclaircie** *f* 1. լուսաշերտ, լույսի շող (երկնքում), եղանակի պարզվելը 2. *փխբ.* փայլ, փայլատակում, բարենպաստ փոփոխություն ◊ sans ~s անլույս, անթափանց, խավար
- éclaircir** *vt* 1. պայծառացնել, լուսավորել 2. պարզաբանել, լուսաբանել, բացատրել  
~ les doutes կասկածները ցրել  
~ une question հարցը պարզաբանել
- éclaircissement** *m* 1. լուսավորում, պայծառացում 2. լուսաբանում, պարզաբանում, բացատրում ◊ apporter des ~s sur qch բացատրություններ տալ ինչ-որ բանի մասին; travail d'~ բացատրական աշխատանք
- éclairé**, -e *adj* 1. լուսավորված, լույսով ողողված 2. կրթված, ուսումնական, լուսավորյալ, գիտակ, հեղինակավոր
- éclairer** *vt* 1. լուսավորել, լույսով ողողել 2. լուսաբանել, իրազեկել; պարզաբանել, բացատրել 3. *ռազմ.* հետախուզում անցկացնել
- éclairéur** *m* 1. *ռազմ.* հետախույզ; հետախուզական նավ, դիտանավ; հետախուզական ինքնաթիռ 2. սկաուտ (Ֆրանսիայում)

- éclat** *m* 1. պայթյուն, ճայթյուն, որոտ, դրդոյուն, շառաչյուն 2. բեկոր, կտոր 3. փայլ, շող, լույս 4. փառք, հռչակ 5. հրապարակում, հռչակում  $\diamond$  action d'~ սխրանք, հրաշալի արարք; avec ~ ամբողջ ձայնով; փայլուն կերպով, հրաշալի կերպով; une besogne sans ~ համեստ աշխատանք; pour éviter l'~ խուսափելու համար հրապարակումից՝ հայտնի դառնալուց
- éclatant**, -e *adj* 1. բարձր, որոտալից, որոտընդոտ, խլացուցիչ 2. փայլատակող, փայլփլուն, պայծառ, շողշողուն 3. *փ/սք.* բացահայտ, ակնհայտ, անհերքելի, անժխտելի  $\diamond$  un exemple ~ վառ, ապշեցուցիչ օրինակ; une supériorité ~e ակնհայտ առավելություն; un témoignage ~ անհերքելի ապացույց; une victoire ~e փայլուն հաղթանակ
- éclatement** *m* 1. *քղք.* անկում, պառակտում, կազմալուծում 2. պայթյուն 3. *փ/սք.* պոռթկում, բռնկում ~ de la guerre պատերազմի բռնկում, ծագում  
~ d'un obus արկի պայթյուն  
~ d'un parti կուսակցության պառակտում
- éclater** *vi* 1. հանկարծակի սկսվել, բռնկվել, պայթել 2. պոռթկալ, բարձր հնչել 3. երևան գալ, հանդես գալ  $\diamond$  la guerre a éclaté պատերազմը սկսվեց  
~ de rire քրքջալ  
~ en applaudissements ծափահարություններից թնդալ  
**libéralisme** *m* լիբերալիզմ, ազատականություն, ազատամտություն

**libéralité** *f* 1. առատաձեռնություն 2. հանդուրժողություն, հայացքների լայնություն 3. *pl* շռայլ պարզկներ

**libérateur, -rice** *adj* ազատագրական ◊ *guerre ~rice* ազատագրական պատերազմ; *lutte ~rice* ազատագրական պայքար

**libération** *f* 1. ազատում, ազատագրում, ազատ արձակում 2. գորացրում, զինվորական ծառայությունից ազատում 3. ծառայությունից, պաշտոնից արձակելը, հրաժարեցնելը ◊ *mouvement de ~ nationale* ազգային-ազատագրական շարժում

**libérer** *vt* 1. ազատել, ազատ արձակել, ազատագրել 2. գորացրել 3. պաշտոնից ազատել 4. սահմանափակումները վերացնել

**liberté** *f* 1. ազատություն, կամք; անկախություն 2. համարձակություն ◊ *avoir toute ~* լիակատար ազատություն ունենալ; *donner à qn toute ~* d'action մեկին գործելու լիակատար ազատություն տալ; *en toute ~* ազատորեն, կատարելապես ազատ; *épris de ~* ազատատենչ, ազատասեր; *mettre en ~ sur parole* ազատել ազնիվ

խոսքի հիման վրա; *prendre la ~ de...* համարձակվել, հանդգնել, սիրտ անել, վճռել; *soif de ~* ազատատենչություն  
 ~ d'action, ~ de manœuvre գործողության ազատություն  
 ~ de conscience խղճի ազատություն, դավանանքի ազատություն  
 ~ de culte հավատքի ազատություն  
 ~ d'esprit (կամ de pensée) մտքի ազատություն  
 ~ individuelle, ~ physique անհատի ազատություն  
 ~ de manifestation ցույցի ազատություն  
 ~ d'opinion համոզմունքների ազատություն  
 ~ de parole (կամ d'expression) խոսքի ազատություն  
 ~ de la presse մամուլի ազատություն  
 ~ provisoire պայմանական կամ նախնական ազատություն  
 ~ de réunion ժողովների ազատություն  
 ~ s civiles քաղաքացիական ազատություններ  
 ~s démocratiques դեմոկրատական ազատություններ  
 ~s politiques քաղաքական ազատություններ

**libre** *adj* ազատ, անկախ ◊ *avoir le champ ~* գործողությունների լիակատար ազատություն ունենալ; *auditeur* (կամ *étudiant*) ~ ազատ ունկնդիր; *change* (կամ *cours*) ~ ազատ փոխարժեք; *commerce* (կամ *échange*) ~ ազատ առևտուր; *élections* ~s ազատ ընտ-

րություններ; *marché* ~ ազատ շուկա; *presse* ~ անկախ մամուլ; *rendre* ~ ազատ արձակել; *se sentir* ~ իրեն ազատ զգալ; *traduction* ~ ազատ թարգմանություն ~ *-accès* մուտքն ազատ է ~ *concurrence* ազատ մրցակցություն ~ *de préjugés* նախապաշարուններից զերծ

**licence** *f* 1. հատուկ թույլտվություն, արտոնագիր, լիցենզիա, օգտագործման բացառիկ իրավունք 2. ազատություն, անկաշկանդություն  $\diamond$  *accorder une ~* արտոնագիր տալ; *donner une ~* արտոնագրել; *obtenir une ~* թույլտվություն՝ արտոնագիր ստանալ ~ *d'exploitation*, ~ *d'un brevet* շահագործման արտոնագիր ~ *d'exportation* արտահանելու արտոնագիր ~ *d'importation* ներմուծելու արտոնագիր ~ *de résidence* բնակության թույլտվություն

**licencié**, *-e adj* 1. արտոնագրված; վկայագրված 2. աշխատանքից ազատված  $\diamond$  *journaliste* ~ արտոնագրված լրագրող

**licenciement** *m* 1. ազատում, հեռացնելը 2. կազմալուծում (գործերի) 3. դասերից ազատելը (դպրոցականներին), արձակել (արձակուրդներին)

**licencier** *vt* 1. պաշտոնից արձակել, հեռացնել, ազատել 2. կազմալուծել (գործերը) 3. ազատ արձակել, բաց թողնել (դպրոցականներին)

**licite** *adj* օրինական, օրենքով թույլատրված

**lien** *m* 1. կապ 2. *pl* կապեր, կապանքներ  $\diamond$  *briser* (կամ *rompre*) *les ~ s* կապերը խզել; *resserer les ~ s* ամրապնդել, հաստատուն դարձնել կապերը; *rétablir les ~* վերականգնել, վերահաստատել կապերը; *trancher tous ses ~ s* իր բոլոր կապերը կտրել ~ *conjugal* ամուսնական կապ ~ *de parenté* ազգակցական կապ ~ *s d'amitié* ընկերական կապեր ~ *s du sang* արյան կապ, ազգակցական կապեր

**lieu** *m* 1. տեղ, վայր, տեղանք 2. *փ/սք.* առիթ, հիմք  $\diamond$  *avoir ~* տեղի ունենալ, կայանալ; *avoir ~ à suivre* քրեական հետապնդում հարուցել; *avoir ~ de...* հիմք (բոլոր հիմքերը) ունենալ (մտածելու, խոսելու և այլն); *donner ~ à...* առիթ տալ; *en premier ~* նախ և առաջ, առաջին հերթին; *en dernier ~* վերջիվերջո, վերջապես; *en temps et ~* իր ժամանակին և պատշաճ տեղում; *en haut ~* բարձրագույն շրջանակներում, ոլորտներում; *il y a ~ de...* հիմք կա, տեղին է, հարկ է; *il n'y a pas ~ à suivre* գործը ենթակա է կարճման; *tenir ~ de...* փոխարինել, տեղը բռնել ~ *du crime* դեպքի վայր ~ *de destination* նշանակետ ~ *de détention* ազատազրկման վայր ~ *public* հասարակական վայր

**ligne** *f* 1. գիծ, շարք 2. սահման, սահմանագիծ, բնագիծ 3. ազգակցության գիծ  $\diamond$  *en grandes ~ s*,

dans ses grandes ~s ընդհանուր գծերով, ընդհանուր առմամբ; en première ~ առաջնահերթ; faire entrer en ~ (de compte), mettre en ~ (de compte) հաշվի առնել, նկատի ունենալ; hors ~ բացառիկ, արտակարգ, սովորականից դուրս ~ administrative վարչական սահման

~ d'arrivée վերջնագիծ

~ de conduite վարքագիծ

~ de continuité հաջորդականություն

~ de défense ճակատային պաշտպանական բնագիծ

~ de démarcation սահմանագիծ, սահմանազատման գիծ

~ de douane մաքսային սահմանագիծ

~ de pauvreté աղքատության սահման

~ politique քաղաքական գիծ

~ de résistance դիմադրության սահմանագիծ

**limitation** *f* սահմանափակում, կրճատում

~ des armements սպառազինումների կրճատում

~ des importations ներմուծումների սահմանափակում

**limite** *f* 1. սահման, ծայր, վերջին կետ, սահմանագիծ 2 սահմանափակում, լիմիտ  $\diamond$  à la ~ ծայրահեղ դեպքում; atteindre ses ~s հասնել սեփական հմարավորությունների վերջին սահմանին; connaître ses ~s իմանալ՝ ճիշտ գնահատել սեփական հմարավորությունները; dépasser la ~ սահմանն անցնել; déroger aux ~s սահմանները խախտել; étendre

la ~ սահմանն ընդլայնել; fixer les ~s entre deux Etats հաստատել երկու պետությունների միջև ընկած սահմանները; franchir les ~s de son pouvoir իր իշխանության սահմաններն անցնել; sans ~s անսահման; tracer certaines ~s տեղակայել որոշ սահմաններ

~ d'âge տարիքային սահմանափակում, տարիքային ցեղ

~ de crédit վարկային սահման, վարկային սահմանափակում

~ de durée գործունեության ժամկետի վերջին գիծը

~s naturelles բնական սահմաններ

~s du possible հնարավորության սահմաններ

**limité** *adj* սահմանափակ; սահմանային, վերջնակետային  $\diamond$  pouvoir ~ սահմանափակ իշխանություն; responsabilité ~e սահմանափակ պատասխանատվություն; société à responsabilité ~e (S.A.R.L.) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

**limiter** *vt* 1. սահմաններ դնել, սահմաններ հաստատել 2. սահմանափակել, կրճատել

~ le marché սահմանափակել շուկան

~ le temps de la parole խոսնակին հատկացված ժամանակը սահմանափակել

**limitrophe** *adj* սահմանամերձ, սահմանակից, հարևան  $\diamond$  Etats ~s սահմանակից պետություններ

**limogeage** *m* *խսկց.* պաշտոնանկություն, թռչակի ուղարկում (ծառայողների, սպաների)



- limoger** *vt* *խսկց.* պաշտոնանկ անել, թոշակի ուղարկել (սպաներին, ծառայողներին)
- liquidier** *vt* 1. լուծարել, լուծարքի ենթարկել 2. վերացնել, ոչնչացնել ~ la colonialisme վերջ տալ գաղութատիրությանը ~ le contrat լուծարել պայմանագիրը ~ une enytreprise լուծարել որևէ ձեռնարկություն ~ ses dettes պարտքերը վճարել
- liquidation** *f* 1. լուծարում 2. վերացում, ոչնչացում ~ des sociétés ընկերությունների լուծարում ~ volontaire ինքնակամ լուծարում
- liste** *f* ցանկ, ցուցակ, ամփոփագիր ◊ dresser (կամ établir) des ~ s ցուցակներ կազմել; faire circuler une ~ de présence ներկաների ստորագրությունների ցուցակ; révision des ~s électorales ընտրացուցակների ստուգում; radiation des ~s électorales ընտրացուցակներից հանում; souscrire une ~ տեղեկագիր գրել ~ alphabétique այբբենական կարգ ~ bloquée փակ ցուցակ ~ de candidats թեկնածուների ցուցակ (ընտրություններում) ~ civile գահաթերթ ~ commune միասնական ցուցակ ~ électorale, des électeurs ընտրողների ցուցակ ~ noire սև ցուցակ ~ rouge հեռախոսային բաժանորդների փակ ցուցակ
- ~ de souscripteurs բաժանորդների ցուցակ ~s apparentées միացյալ ցուցակներ
- litige** *m* *հրավ.* դատական վեճ, հայց ◊ le problème en ~ վիճելի խնդիր; régler un ~ վեճը կարգավորել
- litigieux**, -se *adj* վիճելի, վիճարկելի ◊ esprit ~ հակառակության ոգի
- littéral**, -e *adj* 1. բառացի 2. գրավոր 3. *փ/սք.* հավաստի, ճշգրիտ ◊ arabe ~ դասական արաբերեն; preuve ~ e *հրվք.* գրավոր ապացույց; traduction ~e բառացի թարգմանություն
- littéralement** *adv* բառացիորեն, բառացի, տառացիորեն
- littoral**, -e *adj* ծովափնյա, առափնյա, ափամերձ
- littoral** *m* ծովափ, ափամերձ գոտի
- lituanien**, -ne *adj* լիտվական
- livraison** *f* առաքում, մատակարարում, հանձնում, տեղ հասցնելը, բերել հասցնելը ◊ centre de ~ ; demander ~ մատակարարման դիմում տալ; faire ~ մատակարարում իրականացնել; manquer à la ~ մատակարարում չիրականացնել; prendre (կամ recevoir) ~ ստանալ (սայրանքը) ~ à domicile առաքում՝ տուն ~s de guerre ռազմական մատակարարումներ
- livrer** *vt* 1. մատակարարել, առաքել, տեղ հասցնել, բերել հասցնել, հայթայթել 2. տալ, հանձնել 3. արձակել, բաց թողնել, թույլ տալ զնալու ◊ se ~ անձնատուր լինել; գրադվել; se ~ à une campagne de calomnie գրպարտչական արշավ իրականացնել; se ~ à ses

occupations habituelles զբաղվել  
իր սովորական գործերով  
~ un combat ճակատամարտ տալ  
~ les coupables à la justice  
մեղավորներին հանձնել  
արդարադատությանը  
~ à l'exploitation շահագործման  
դնել  
~ aux flammes կրակի տալ  
~ une marchandise ապրանքը  
տեղ հասցնել  
~ à la publicité հրապարակել, ի  
լուր աշխարհի հայտնել  
~ une ville au pillage քաղաքը  
կողոպտուի տալ, կողոպտման  
հանձնել

**lobbying** *m* լոբբիզմ, քվեարկության  
արդյունքների վրա ազդելու  
նպատակով օրենսդիր մարմնի  
անդամների վրա ազդելը

**lobbiste** *m* 1. լոբբիստ, կուլուարների  
մշտական այցելու, որն ազդե-  
ցություն է ունենում կոնգրեսի  
անդամների վրա 2. լրագրող,  
որը տեղեկություն է ձեռք բերում  
անդրկուլիսներից

**lobby** *m* լոբբի, շահախումբ

**local**, -e *adj* տեղի, տեղական ◊ ad-  
ministration ~e, autorités ~es տե-  
ղական իշխանություններ; coutu-  
mes ~es տեղական սովորույթ-  
ներ; élections ~es ընտրություն-  
ներ տեղական իշխանության  
մարմիններում; gouvernement ~  
տեղական կառավարություն;  
industrie ~e տեղական արդյու-  
նաբերություն; intérêts ~s ներքին  
շահեր; loi ~e տեղական (առան-  
ձին վայրի վերաբերող) օրենք;  
marché ~ տեղական ներքին  
շուկա

**localisation** *f* տեղայնացում

~ des capitaux կապիտալի տե-  
ղայնացում (կապիտալի հանձ-  
նումը տեղական ներդրողներին)  
~ du conflit հակամարտության  
տեղայնացում

**localiser** *vt* 1. տեղայնացնել; որոշել  
ինչ-որ բանի տեղը և վայրը 2.  
մեկուսացնել

**localité** *f* տեղանք, տեղ, տարածու-  
թյուն, վայր, բնակավայր

**location** *f* վարձակալություն, վար-  
ձով տալը ◊ prendre en ~ վարձա-  
կալել; mettre (կամ donner) en ~  
վարձով տալ

**loi** *f* 1. օրենք, օրենսդրություն 2.  
օրինաչափություն ◊ abroger une  
~ օրենքը փոխել; adopter une ~  
օրենք ընդունել; appliquer (կամ  
exécuter) une ~ օրենք կիրառել՝  
իրականացնել; au nom de la ~  
հանուն օրենքի; avoir force de ~  
օրենքի ուժ ունենալ; conforme à  
la ~ օրենքին համապատաս-  
խան; contraire à la ~ օրենքին  
հակասող, ապօրինի; décret-loi  
օրենք-հռչակագիր; dépôt d'un  
projet de ~ օրինագծի ներկայա-  
ցում; déroger à la ~ օրենքը  
խախտել; élaborer une ~ օրենք  
մշակել; éluder une ~ օրենքը  
շրջանցել; enfreindre (կամ trans-  
gresser, violer) la ~ օրենքը խախ-  
տել; faire ~ օրենքի ուժ ունենալ;  
homme de ~ իրավաբան, օրենքի  
մարդ; hors la ~ օրենքից դուրս;  
ignorer la ~ օրենքը չկատարել,  
չպահպանել; loi-cadre օրենս-  
դրության հիմունքներ; projet de ~  
օրինագիծ (ներկայացնում է կա-  
ռավարությունը); promulguer une

~ օրենք հրապարակել; proroger une ~ օրենքի գործողությունը երկարացնել; proposition de ~ օրենսդրական առաջարկություն (պատգամավորների կողմից); rejeter (կամ repousser) un projet de ~ օրինագիծը մերժել, չընդունել; respecter (կամ observer, suivre) la ~ օրենքը պահպանել; retirer un projet de ~ օրինագիծը հետ բերել; tourner la ~ օրենքը շրջանցել; voter une ~ օրենք ընդունել

~ fondamentale հիմնական օրենք, Սահմանադրություն  
~ naturelle բնության օրենքը  
~ en vigueur, ~ en application գործող օրենք

**loi-cadres** *f pl* դիրեկտիվ, ղեկավար օրենքներ, որոշակի հարաբերությունների կանոնակարգման հիմնական սկզբունքները սահմանող օրենք

**long**, -ue *adj* 1. երկար 2. երկարատև, տևական  $\diamond$  à ~ terme երկարաժամկետ; amitié de ~ue date երկարամյա բարեկամություն՝ ընկերություն; contrat à ~ terme երկարաժամկետ պայմանագիր; de ~ue date երկարամյա; de ~ue durée երկարատև, երկարաձիգ

**longanimité** *f* համբերատարություն, հեզություն, մեղմաբարոյություն

**longévité** *f* երկարակեցություն

**lot** *m* 1. շահում (վիճակախաղում) 2. *փ/իւք*. ճակատագիր, բախտ 3. մաս, բաժին  $\diamond$  gagner (կամ tirer, décrocher) le gros ~ խոշոր շահումը վերցնել, շահել; gros ~ խոշոր շահում

**louvoyer** *vi* խուսանավել

**loyal**, -e *adj* 1. ուղղամիտ, շիտակ, օրինապահ 2. հավատարիմ, անձնվեր

~ compagnon հավատարիմ ընկեր

**loyaliste** *adj et s* միապետին հավատարիմ; գոյություն ունեցող վարչակարգին հավատարիմ հպատակ անձ

**loyauté** *f* հավատարմություն, անձնվիրություն, օրինապահություն

**lucide** *adj* պարզ, լուսավոր, հասկանալի  $\diamond$  esprit ~ առողջ, պայծառ միտք; idée ~ լուսավոր գաղափար; juger d'un œil ~ դատել անաչառորեն, անկողմնապահ; vision ~ սթափ հայացք

**lumières** *f pl* գիտելիքներ, իմացություն  $\diamond$  avoir de grandes ~ խոր գիտելիքներ ունենալ

**lutte** *f* պայքար, կռիվ, մարտ  $\diamond$  engager une ~ պայքար սկսել; entrer en ~ պայքարի մեջ մտնել; poursuivre (կամ mener) une ~ պայքար մղել

~ acharnée, ~ énergique համառ, կատաղի, վճռական պայքար  
~ antipollution պայքար շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ

~ armée զինված պայքար

~ implacable անողորմ պայքար

~ larvée գաղտնի պատերազմ

~ à mort մահացու կռիվ

~ à outrance կենաց-մահու կռիվ

~ pour la paix գոյության պայքար

**lutter** *vi* պայքարել, կռվել, մարտընչել

## M

- Maastricht** : traité de ~ մասստրիխի պայմանագիր (պայմանագիր եվրամիության ստեղծման մասին, 1992 թ.)
- machiavélique** *adj* Մաքիավելլին կամ մաքիավելլիզմին վերաբերող, միջոցների մեջ խտրություն չղնող, անագնիվ, անպատկառ, նենգ, ուխտադրուժ, երդմնագանց
- machiavélisme** *m* 1. մաքիավելլիզմ (կոպիտ ուժի, բարոյական նորմերի քամահրանքի վրա հիմնված քաղաքականություն՝ իտալացի գործիչ և մտածող Նիկոլո Մաքիավելլի անվամբ (1469-1527), որն ընդունելի էր համարում ցանկացած միջոց պետության ամրապնդման համար) 2. ուխտադրություն, երդմնագանցություն, դավաճանություն
- machination** *f* մեքենայություն, նենգություն, դավ  $\diamond$  déjouer une ~ մերկացնել մեքենայությունը
- machine** *f* 1. մեքենա, սարքավորում 2. հիմնարկների կամ պաշտոնյաների կազմ, համակարգ, ապարատ  
~ administrative վարչական ապարատ  
~ de l'Etat պետական ապարատ  
~ du gouvernement կառավարման ապարատ
- machiner** *vt* դավել, նենգություն անել, դավեր նյութել
- magistrat** *m* 1. քաղաքական՝ դատական՝ վարչական իշխանության ներկայացուցիչ; պաշտոնատար անձ 2. դատավոր, դատական գերատեսչության աշխատակից 3. *պսմ.* խորհրդարանի անդամ  
~ assis, ~ du siége դատավոր, դատարանի անդամ  
~ communal քաղաքապետ (Հաիթիում)  
~ debout, ~ du parquet դատախազ  
~ instructeur քննիչ, քննիչ-դատավոր (նախաքննություն կատարող դատավոր)  
~ militaire զինվորական դատարանի անդամ
- magistrature** *f* 1. մագիստրատուրա; պետական աստիճանավորների կազմը; դատական գերատեսչություն 2. դատական կոչում, դատարանի պաշտոնյաներ
- magnanime** *adj* վեհանձն, մեծահոգի  $\diamond$  intention ~ վեհանձն վարմունք; se montrer ~ մեծահոգություն ցուցաբերել
- magnanimité** *f* մեծահոգություն, վեհանձնություն
- magnat** *m* մագնատ, բարձրաստիճան պաշտոնյա, երևելի անձ, մեծամեծ անձ; ազդեցիկ գործարար, պարագլուխ  
~ pétrolier նավթային մագնատ  
~s de la finance ֆինանսական

պարագրուխներ  
**magnétique** *adj* 1. մագնիսական 2. *փխք.* հիպնոսական, ձգողական, գայթակղիչ, հրապուրիչ  
**magyar**, -e *adj* մաչարական, հունգարական  
**maigre** *adj* 1. նիհար, վտիտ, նվազ 2. խղճուկ, աղքատիկ, աննշան, սակավ, չնչին  
 ~ revenu աննշան եկամուտ  
 ~ salaire ցածր աշխատավարձ  
 ~s économies խղճուկ խնայողություններ  
 ~s raisons անհամոզիչ փաստարկներ  
**main** *f* ձեռք ◊ à ~ armée ռազմական ուժով; à la ~ ձեռքով; avoir (կամ tenir) en ~ ձեռքում պահել, իշխել, կառավարել; avoir la ~ forcée գործել հարկադրաբար; avoir la haute ~ sur... իշխանություն ունենալ; avoir les ~s liées ձեռքերը կապված լինել; avoir la situation en ~ դրության տերը լինել; bagages à ~ ուղեբեռ; coup de ~ հանկարծակի գրոհ; օգնություն; de bonne ~ հավաստի աղբյուրից; de longue ~ վաղուցվանից, վաղ ժամանակներից; de ~ en ~ ձեռքից-ձեռք; donner un coup de ~ օգնել; échapper des ~s ձեռքից սահել, դուրս ընկնել; les ~s vides ձեռնունայն; lever la ~ sur զո մեկի վրա ձեռք բարձրացնել; la ~ dans la ~ ձեռք-ձեռքի տված, միասին; poignée de ~ ձեռքսեղմում; prendre en ~ իր վրա վերցնել, իր ձեռքը վերցնել, պաշտպանել (մեկի շահերը և այլն); prêter la ~ օգնության ձեռք

մեկնել; reprendre en ~ կրկին ձեռքը վերցնել; se donner la ~ ձեռք-ձեռքի տակ, իրար ձեռք բռնել; s'en laver les ~s ձեռքերը լվանալ, չխառնվել; serrer la ~ ձեռքով բարեել; sous la ~ ձեռքի տակ, մոտիկ  
**main-d'oeuvre** *f* 1. աշխատուժ, բանվորական ուժ 2. աշխատանք, բանվորական աշխատանք  
 ~ agricole գյուղատնտեսական բանվորներ  
 ~ disponible ազատ բանվորական ուժ  
 ~ immigrée ներգաղթյալ բանվորներ  
 ~ non-spécialisée ոչ բարձրորակ բանվորական ուժ  
 ~ qualifiée, ~ spécialisée բարձրորակ բանվորական ուժ  
**main-forte** *f* օգնություն, սատարում (պետական իշխանությունների) ◊ donner (կամ prêter) ~ օգնության հասնել, (ռազմական) աջակցություն ցույց տալ  
**mainlevée** *f* *հրավ.* վերացում, չեղյալ հայտարարելը  
 ~ de la saisie ունեցվածքի վրա արգելանքի վերացում  
**mainmise** *f* 1. բռնագրավում, զավթում, գրավում, ստրկացում, գերիշխում, տնօրինում 2. *հրավ.* գույքի վրա կալանք դնելը 3. *պտմ.* ազատագրում (ճորտի)  
**maint**, -e *adj* բազմիցս կրկնվող, հաճախակի ◊ à ~es reprises ոչ մեկ անգամ, բազմիցս, հաճախակի; en ~e occasion մի շարք դեպքերում ~e et ~e fois, ~es fois շատ անգամ, բազմիցս

**maintenir** *vt* 1. պահել, պահպանել, պաշտպանել 2. հաստատել, պնդել ◊ *il maintient que...* նա հաստատում է, որ...  
 ~ de bons rapports բարիդրացիական հարաբերություններ պահպանել  
 ~ l'ordre կարգ պահպանել  
 ~ la paix խաղաղությունը պահպանել  
 ~ le point de vue պաշտպանել տեսակետը  
 ~ les relations diplomatiques պահպանել դիվանագիտական հարաբերությունները  
**maintien** *m* ուժի մեջ թողնելը, պահպանելը  
 ~ de l'ordre կարգի պահպանում  
 ~ de la paix խաղաղության պահպանում  
 ~ de la sécurité անվտանգության պահպանում  
 ~ du status quo territorial տարածքային առկա վիճակի պահպանում  
**maire** *m* քաղաքագլուխ, քաղաքապետ  
**mairie** *f* քաղաքապետարան  
**maison** *f* 1. տուն, շենք 2. հիմնարկ, հաստատություն, կազմակերպություն, գրասենյակ 3. առևտրի տուն, ֆիրմա, ձեռնարկություն  
 ~ d'aliénés հոգեբուժական հիվանդանոց  
 ~ d'arrêt քննչական մեկուսարան, նախնական կալանքի սենյակ  
 ~ cellulaire բանտ  
 ~ centrale կենտրոնական բանտ

~ close, ~ de tolérance հասարակաց տուն  
 ~ de commerce առևտրային ձեռնարկություն, առևտրային ֆիրմա  
 ~ communautaire հանրակացարան  
 ~ de correction ուղղիչ տուն  
 ~ de Dieu աստծո տուն, եկեղեցի  
 ~ d'éducation մասնավոր ուսումնական հաստատություն  
 ~ de la jeunesse, ~ des jeunes երիտասարդության տուն  
 ~ d'habitation բնակելի շենք  
 ~ de plaisance, ~ de campagne ամառանոց  
 ~ de production կինոստուդիա  
 ~ de repos հանգստյան տուն  
 ~ de santé վճարովի կլինիկա, հիվանդանոց (մասնավորապես՝ հոգեկան հիվանդների համար)  
 ~ succursale մասնաճյուղ  
 ~ de ville ռատուշա, քաղաքապետարան (եվրոպական մի շարք երկրներում)  
**maîtriser** *vt* 1. սանձել, հնազանդեցնել, զսպել, սանձահարել 2. կառավարել, վարել 3. յուրացնել, տիրապետել  
 ~ la langue լեզվին լավ տիրապետել  
 ~ le progrès technique տեխնիկական առաջընթացը ղեկավարել  
**majesté** *f* 1. մեծություն, վեհություն, գերազանցություն, վսեմություն 2. մեծություն (տիտղոս) ◊ *Sa Majesté Նորին Մեծություն*  
**majeur**, -e *adj* 1. ավելի մեծ, բարձրագույն, ամենաբարձր 2. գլխավոր, հիմնական, կարևոր,

- լորջ 3. չափահաս  $\diamond$  danger ~ լորջ վտանգ; en ~e partie մեծ մասամբ, առավելապես; force ~e անհաղթահարելի ուժ; բացառիկ կարևոր հանգամանք
- majoration** *f* 1. բարձրացում, ավելացում, հավելում (զների, հարկերի, աշխատավարձի), 2. իրական արժեքից ավելի բարձր գնահատում  
 ~ des impôts հարկերի մեծացում  
 ~ des prix գների բարձրացում  
 ~ du salaire աշխատավարձի բարձրացում
- majorer** *vt* 1. բարձրացնել, ավելացնել (զինը, հարկերը, աշխատավարձը) 2. իրական արժեքից բարձր գնահատել
- majoritaire** *adj* մեծամասնական  $\diamond$  système électoral ~ մեծամասնական ընտրական համակարգ
- majorité** *f* մեծամասնություն  $\diamond$  conquérir une solide ~ հաստատուն մեծամասնություն նվաճել; dans son immense ~, en grande ~ ճնշող մեծամասնությամբ; obtenir la ~ մեծամասնություն ստանալ; s'en rapporter à la décision de la ~ ենթարկվել մեծամասնության որոշմանը  
 ~ absolue բացարձակ մեծամասնություն  
 ~ des deux tiers des voix ձայների երկու երրորդի մեծամասնություն  
 ~ écrasante, ~ imposante ճնշող, գերակշիռ մեծամասնություն  
 ~ faible աննշան մեծամասնություն  
 ~ qualifiée իրավասու մեծամասնություն
- ~ relative հարաբերական մեծամասնություն  
 ~ requise անհրաժեշտ մեծամասնություն  
 ~ simple պարզ մեծամասնություն  
 ~ des voix ձայների մեծամասնություն
- mal** *m* 1. վատություն, չարիք, վնաս 2. ցավ, տառապանք, վիշտ 3. դժբախտություն 4. հիվանդություն  $\diamond$  causer des maux superflus ավելորդ տառապանքներ պատճառել; faire du ~ à... վնասել, նեղացնել; les maux de la guerre պատերազմի հասցրած չարիքները; remédier à ce ~ կանխել այդ չարիքը; tourner une chose en ~ վատ իմաստով մեկնաբանել
- malaise** *m* 1. տկարություն, վատառողջություն 2. դժվարություն, կարիք 3. տագնապ, անհանգըստություն  $\diamond$  exploiter le ~ դժվարությունից օգուտ քաղել  
 ~ du pays հայրենիքի կարոտ
- malaisément** *adv* դժվարությամբ
- malentendu** *m* թյուրիմացություն, սխալ
- malfaçon** *f* 1. արատ, պակասություն, թերություն, խոտան 2. կաշառք
- malfaçons** *f pl* անփութություն, զանցառություն, բացթողում, թերացում
- malfaisant**, -e *adj* վնասակար, չարաղետ
- malfamé**, -e *adj* վատահամբավ
- mal fondé** *m* հիմք չունենալը, անհիմնավորություն
- malgache** *adj* Մադագասկարի, մալգաշական

**mal-jugé** *m* անարդար դատական որոշում

**mal-logés,** *-es m, f pl* ծանր բնակարանային պայմաններում ապրողներ

**malnutrition** *f* թերասնում, հյուծվածություն

**maltais,** *-e adj* մալթական, մալթայի

**malthusianisme** *m* մալթուսականություն

**malôte** *f պտմ.* անօրինական հարկ

**malveillance** *f* անբարյացակամություն, չարակամություն

**malveillant,** *-e adj* անբարյացակամ, չարակամ ◊ être ~ envers... անբարյացակամորեն վերաբերվել

**malvenu,** *-e adj* անիրավագոր, անիրավասու ◊ requête ~e անհիմն գանգատ

**malversation** *f* մսխում, ծախսում; կաշառակերություն

**manchette** *f* խոշոր տպատառերով վերնագիր (թերթում) ◊ en ~ խոշոր տպատառերով վերնագրի տակ; publier sous de grosses ~s տպագրել մեծատառ վերնագրով

**mandant** *m* լիազորող; վստահորդ, ընտրող ◊ rendre compte à ses ~s հաշվետու լինել իր ընտրողների առջև

**mandat** *m* 1. *դվնգ.* մանդատ, լիազորություն 2. հրաման, հրամանագիր, կարգադրություն 3. դրամական փոխանցում ◊ commission des ~s մանդատային հանձնաժողով; donner ~ (de) լիազորել; durée du ~ լիազորությունների ժամկետը; pays sous ~ ենթամանդատային երկրներ; prolonger le ~ մանդատը երկարացնել; rece-

voir ~ (de) լիազորված լինել  
~ d'arrêt ձերբակալման հրամանագիր  
~ de député պատգամավորի մանդատ  
~ impératif ընտրողների հրահանգը իրենց պատգամավորին  
~ parlementaire (կամ législatif) խորհրդարանի, օրենսդիր ժողովի պատգամավորի մանդատ  
~ de perquisition խուզարկության կարգադրագիր  
~ poste, ~ postal փոստային փոխանցում  
~ représentatif ներկայացուցչական մանդատ  
~ de virement դրամական փոխանցում

**mandataire** *m, f* լիազոր, լիազոր ներկայացուցիչ, հավատարմատար ◊ constituer un ~ լիազոր՝ հավատարմատար նշանակել; pays ~ լիազորված երկիր

**mandaté,** *-e adj* լիազորված

**mandater** *vt* լիազորել

**mander** *vt* 1. տեղեկացնել, հայտնել, իրագրել դարձնել (գրավոր) 2. իր մոտ կանչել 3. *հնգծ.* պահանջել, հրամայել

**maniable** *adj* 1. *փխբ.* հարմարվող, հեշտությամբ համոզվող, զիջող, լսող 2. նպաստավոր, բարենպաստ ◊ temps ~ բարենպաստ եղանակ

**manier** *vt* 1. տիրապետել, հմտորեն օգտվել մի բանից 2. ղեկավարել, տնօրինել, ձեռքում պահել  
~ les affaires գործերը տնօրինել  
~ de l'argent փողեր պտտեցնել  
~ un avion ինքնաթիռ վարել



~ bien la parole ճարտասանությամբ տիրապետել, պերճախոսությամբ տիրապետել  
 ~ les esprits մտքերը կառավարել

**manière** *f* վարվելաձև, գործելակերպ, գործելու եղանակ, շարժում, ոճ ◊ à la ~ de... նմանությամբ, նման; à sa ~ իր ձևով; de cette ~ այս ձևով, այսպես; de ~ que... այնպես որ; de toute ~ ինչ էլ որ լինի, ամեն դեպքում; d'une ~ exhaustive սպառիչ կերպով; d'une ~ générale որպես ընդհանուր կանոն; en aucune ~ ոչ մի ձևով; en quelque ~ ինչ-որ ձևով; être partisan de la ~ forte կողմնակից լինել վճռական միջոցների; par ~ d'acquiescement միայն ձևի համար, առերևույթ; selon sa ~ de voir ըստ նրա տեսակետի  
 ~ de parler արտահայտման եղանակ, խոսելաճ  
 ~ de penser մտածելակերպ  
 ~ de vivre կենսակերպ  
 ~ de voir տեսակետ, կարծիք, հայացք

**manifestation** *f* 1. դրսևորում, արտահայտում (զգացմունքի և այլն) 2. ցույց 3. միջոցառում; ժողով, հավաք  
 ~ de masse զանգվածային ցույց  
 ~ de ses opinions իր կարծիքների արտահայտում  
 ~ sportive սպորտային տոն; մրցույթ  
 ~ de volonté *իրվք*. կամքի դրսևորում

**manifeste** *adj* ակնհայտ, ակներև, բացահայտ ◊ injustice ~ բացահայտ անարդարություն; mensonge ~ բացահայտ սուտ

**manifeste** *m* մանիֆեստ, հրովարտակ ◊ publier un ~ հրովարտակ հրատարակել

**manifestement** *adv* ակնհայտորեն, բացահայտորեն, ակներևաբար

**manifeste** 1. *vt* դրսևորել, արտահայտել, հանդես բերել, ցուցաբերել; բացահայտել; վկայել 2. *vi* ցույցի մասնակցել ◊ se ~ դրսևորվել, բացահայտվել, ի հայտ գալ

**manigance** *f* մեքենայություն, բանասարկություն, խորամանկություն, հնարամտություն, հնարք

**manipuler** *vt* 1. *փխք*. մշակել (մեկին), ներգործել (մեկի վրա) 2. կեղծել, աղավաղել, նենգափոխել ◊ se laisser ~ մեկի ազդեցությանը ենթարկվել  
 ~ l'opinion publique ներգործել հասարակական կարծիքի վրա

**manitou** *m* ֆետիշ, պաշտամունքի առարկա, կուռք ◊ grand ~, gros ~ *փխք*. պարագլուխ, ջոջ, երևելի մարդ, մեծ կշիռ ունեցող գործարար մարդ

**manoeuvre** *f* 1. *նազմ*. գորաշարժ, զինավարժություն, գորախաղ, *pl* տակտիկական զինավարժություններ 2. գործողություն, աշխատանք (մեքենայի) 3. խորամանկ քայլ 4. կառավարում, ղեկավարում

**manoeuvre** *m* սևագործ բանվոր, օգնական բանվոր ◊ travail de ~ սև աշխատանք; ձանձրալի, միօրինակ աշխատանք  
 ~ spécialisé որոշ աշխատանքների գծով վերապատրաստված բանվոր

**manoeuvres** *m pl* հնարքներ, խորամանկություններ; մեքենայություններ, նենգություններ  
~ de bourse բորսային մեքենայություններ

~ frauduleuses նենգ խորամանկություններ, կեղծ գործողություններ

**manoeuvrer** 1. *vi* ա) խուսավարել, խորամանկություն բանեցնել բ) գործել, աշխատել գ) *nauq.* զինավարժություններ կատարել, գորաշարժ կատարել 2. *vt* ա) աշխատեցնել, գործի դնել բ) կառավարել, ղեկավարել ◊ *se laisser* ~ նախաձեռնությունը ձեռքից բաց թողնել, թույլ տալ, որ իրեն կառավարեն

**manoeuvrier**, -ère *adj* դյուրավար, վարելու համար հեշտ; մանևրող, շարժունակ

**manquant**, -e *adj* պակասող, պակաս

**manque** *m* 1. պակաս, պակասություն, կարիք, բացակայություն 2. թերություն

~ d'argent դրամի պակասություն  
~ de chance անհաջողություն

~ de compétence լիազորությունների բացակայություն

~ de foi անհավատություն, հավատքի բացակայություն

~ de fonds դրամական միջոցների պակասություն

~ de goût անճաշակություն

~ d'impartialité կողմնապահություն

~ de moyens financiers ֆինանսական միջոցների պակասություն

~ de parole խոստումը դրժելը

~ de preuve ապացույցների բացակայություն

ցակայություն

~ de respect, ~ d'égards հարգանքի բացակայություն

~ de suivi անհետևողականություն

**manquement** *m* 1. պակասություն, բացակայություն, պակասող 2. բացթողում, վրիպում, թերություն, խախտում

~ au contrat պայմանագրի խախտում

~ à la discipline կարգապահության խախտում

~ aux obligations պարտականությունների մեջ թերացում

~ de respect հարգանքի բացակայություն

**manquer** 1. *vi* ա) պակասել, չբավականացնել, չլինել, բացակայել բ) սխալ թույլ տալ, վրիպել գ) մի բանի կարիք զգալ 2. ա) վրիպել, չդիպչել բ) ուշանալ գ) բաց թողնել (ձեռքից) ◊ *ne pas ~ de...* առիթը բաց չթողնել, չհասպաղել

~ d'argent դրամի կարիք ունենալ  
~ un atterrissage անհաջող վայրէջք կատարել

~ le but նշանակետին չդիպչել, վրիպել

~ son but իր նպատակին չհասնել

~ la classe դասից բացակայել

~ son coup անհաջողություն կրել

~ à ses devoirs պարտականությունների մեջ թերանալ

~ de fondement հիմնավորված չլինել

~ une occasion առիթը բաց թողնել

~ à ses principes իր սկզբունքներից նահանջել

~ le train գնացքից ուշանալ  
**manuscrit**, -e *adj* ձեռագրական, ձեռագիր, գրչագիր  
**manuscrit** *m* ձեռագիր, մատյան, ձեռքով գրված բնագիր  
**mappemonde** *f* աշխարհի քարտեզ  
**maquignon** *m* 1. մակլեր, առևտրական և բորսայական գործարքների միջնորդ 2. *փխբ.* խարդախ միջնորդ  
**maquignonnage** *m* *փխբ.* չարչիություն; խարդախություն  
**maquis** *m* 1. թավուտ, մացառուտ, անտառաթավուտ 2. պարտիզանական շարժում, ընդհատակյա շարժում (Ֆրանսիայում՝ 1940 – 1944 թթ. ֆաշիստական օկուպացիայի ժամանակ)  $\diamond$  prendre le ~ ընդհատակ անցնել  
**marasme** *m* լիակատար քայքայվածություն, անկում, լճացում, զարգացման բացակայություն  
~ des affaires գործերի լճացում  
~ économique տնտեսական անկում  
~ total լիակատար լճացում  
**marauder** *vi* դիակապտություն անել, մեռել կողոպտել, մանր գողություններ անել  
**marche** *f* 1. քայլ, քայլվածք 2. շարժում, ընթացք, գործողություն *փխբ.* առաջընթաց, զարգացում, շարժում, երթ  $\diamond$  la Longue ~ *սլոմ.* Մեծ արշավանք (չինացի հեղափոխականների); mettre en ~ ընթացք տալ, շարժման մեջ դնել; se mettre en ~ շարժվել, ճանապարհ ընկնել  
~ en avant քայլ առաջ  
~ continue անընդհատ շարժում

~ des événements իրադարձությունների ընթացքը  
~ par inertie ընթացք իներցիայի ուժով  
~ en pleine charge ընթացք լրիվ բեռնվածությամբ  
~ de protestation բողոքի երթ  
~ en sens inverse հետադարձ ընթացք  
~ victorieuse հաղթական երթ  
**marché** *m* 1. շուկա 2. առևտրային գործարք 3. առուժախի պայմանագիր 4. գին  $\diamond$  Marché commun Ընդհանուր շուկա (Եվրոպական տնտեսական համագործակցության շուկա); abandonner le ~ հրաժարվել գործարքից; շուկան փակել; (à) bon ~, (à) meilleur ~ ավելի էժան գնով, ցածր գնով; annuler un ~ գործարքը չեղյալ հայտարարել; conquérir le ~ շուկան գրավել; économie de ~ շուկայական տնտեսություն; faire (կամ conclure) un ~ գործարք կնքել; inonder le ~ շուկան ողողել; par-dessus le ~ բացի դրանից, դրանից գատ  
~ des actions բաժնետիրքերի շուկա  
~ bancaire mondial բանկային միջազգային շուկա  
~ calme, ~ résistant, ~ soutenu կայուն շուկա  
~ des devises արտարժույթների շուկա  
~ extérieur արտաքին շուկա  
~ hésitant, ~ indécis անկայուն շուկա  
~ intérieur ներքին շուկա  
~ international des capitaux փո-

խառու կապիտալների միջազգային շուկա  
 ~ mondial համաշխարհային շուկա  
 ~ national ազգային շուկա  
 ~ noir, ~ clandestin «սև» շուկա  
 ~ de l'or ոսկու շուկա  
 ~ unique միասնական շուկա  
 ~ des valeurs արժեթղթերի շուկա, ֆոնդային բորսա

**maréchal** *m* մարշալ ◊ bâton de ~ մարշալական մական

**marge** *f* 1. եզր, ծայր, լուսանցք (տետրի, գրքի) 2. *փխբ.* հնարավորություններ; որոշակի սահմաններ; պահուստ, ռեզերվ 3. *տնտ.* եկամուտ, շահույթ, ավելցուկ, հավելյալ քանակություն 4. տարբերություն, մնացորդ ◊ avoir de la ~ հնարավորություն, բավարար ժամանակ ունենալ ինչ-որ բան անելու համար; en ~ de... ինչ-որ բանից դուրս; սահմաններից դուրս; réduire les ~s bénéficiaires եկամուտները կրճատել; se donner une ~ de réflexions մտածելու ժամանակ վերցնել; placer en ~ de la majorité gouvernementale դուրս գալ կառավարական մեծամասնության շրջանակներից; vivre en ~ de la société ապրել հասարակությունից դուրս ~ bénéficiaire մարտի շահույթ, մարտի եկամուտ; շահութաբերության գործակից ~ brute համախառն եկամուտ; առուծախի գների տարբերություն ~ brute d'autofinancement օրական հատույթ, դրամամուտք

~ commerciale առևտրային հավելագին, գնի բարձրացված գումարը

~ d'erreur թույլատրելի սխալ  
 ~ liberté ինքնուրույն գործողությունների սահմանները՝ հնարավորությունները

~ de sécurité *նազվ.* անվտանգության գոտի; ամբողջական պաշար  
 ~ de temps ժամանակի ռեզերվ

**marginal**, -e *adj* 1. էջի լուսացքներում գրված 2. սահմանակից, եզրային, սահմանային 3. կողմնակի, երկրորդական, ոչ հիմնական 4. *տնտ.* աննշան, փոքր, չնչին, նվազագույն ◊ entreprise ~e քիչ շահութաբեր ձեռնարկություն; groupes marginaux մարգինալ հասարակական խմբեր; notes ~es գրառումներ լուսանցքներում; prix ~ անեկամտաբեր գին

**marine** *f* 1. ծովային նավատորմ 2. ծովային ծառայություն ◊ entrer dans la ~ ծառայության ընդունվել նավատորմ; la Marine *խսկց.* ռազմածովային նախարարություն, ծովային գերատեսչություն; Ministère de la ~ Ռազմածովային նախարարություն; peintre de ~ ծովանկարիչ; troupe de ~ ծովային հետևազոր ~ de commerce, ~ marchande առևտրային նավատորմ ~ de guerre, ~ militaire ռազմածովային նավատորմ ~ nationale Ֆրանսիայի ռազմածովային նավատորմը

**maritime** *adj* 1. ծովային, ծովափնյա 2. նավատորմային, ծովագնացության ◊ puissance ~ ծովա-

- յին գերտերություն; ville ~ ծովափնյա քաղաք
- marketing** *m* 1. իրացում, վաճառահանում 2. շուկայավարություն, շուկայավարում
- marocain**, -e *adj* մարոկկոյան, մարոկկոյական
- maroquin** *m* 1. սեկ (այծի կաշի) 2. *խսկց.* նախարարական պորտֆել, պաշտոն
- marquant**, -e *adj* նշանավոր, ակննավոր, երևելի; պայծառ, վառ, փայլուն  $\diamond$  événement ~ նշանավոր իրադարձություն
- marque** *f* 1. նշան, հատկանիշ 2. դրոշմ, կնիք, ապրանքապիտակ, մակնիշ 3. դրսևորում, վկայություն  $\diamond$  hôte de ~ պատվավոր հյուր; vin de ~ բարձրակ զինի ~ distinctive տարբերիչ նշան ~ de fabrique (de commerce, de service) գործարանային նշան, ապրանքային նշան ~, grande առավելագույն որակ, ամենաբարձր մակնիշի ~ d'honneur հարգանքի նշան ~ nationale de qualité որակի պետական նշան ~ de qualité որակի նշան ~s de distinction հարգանքի, ուշադրության նշաններ ~s d'identification տարբերիչ նշաններ
- Marseillaise** (la) Մարսելյեզ (Ֆրանսիայի հիմնը)
- martial**, -e *adj* 1. մարտական, ռազմաշունչ, ռազմատենչ 2. ռազմական, պատերազմական (օրենք, դատարան)  $\diamond$  air ~ մարտական տեսք; cour ~e ռազմական դատարան; loi ~e պատերազմական ժամանակի օրենք; ռազմական դրություն
- martyr** *m* նահատակ, տառապյալ, մարտիրոս; զոհ ~s de la liberté ազատության համար նահատակվածներ
- martyriser** *vt* տանջել, չարչարել
- massacrant**, -e *adj* մահացու, սպանիչ, ոչնչացնող, անտանելի, սարսափելի, կործանարար
- massacre** *m* կոտորած, ջարդ, եղեռն, սպանդ, ոչնչացում
- massacrer** *vt* կոտորել, բնաջնջել
- masse** *f* 1. զանգված 2. բազմություն, մեծ քանակություն 3. *pl* ժողովրդական զանգվածներ  $\diamond$  communication de ~ զանգվածային հաղորդակցության միջոցներ; de ~ զանգվածային; les grandes ~es populaires ժողովրդական լայն զանգվածներ; levée en ~ ժողովրդական աշխարհագոր ~s laborieuses, ~s travailleuses աշխատավորական զանգվածներ
- masser** *vt* 1. կիտել, կուտակել, մի տեղ հավաքել, դիզել 2. կենտրոնացնել, միախմբել, հավաքել, համախմբել (գորքերը)  $\diamond$  se ~ կուտակվել, հավաքվել, դիզվել, կենտրոնանալ, միախմբվել, հավաքվել, համախմբվել
- massif**, -ve *adj* զանգվածային, մասսայական  $\diamond$  bombardement ~ զանգվածային ռմբակոծություն; engin de destruction ~ve զանգվածային ոչնչացման զենք
- mass(-)media** *m pl* զանգվածային լրատվության միջոցներ (ռադիո, հեռուստատեսություն, մամուլ)

**mater** *vt* հնազանդեցնել, զսպել, սանձել, սանձահարել

**matériel**, - *le adj* նյութական, առարկայական, իրական, փաստական  $\diamond$  aide ~le նյութական օգնություն; avantages ~s նյութական շահեր; biens ~s նյութական բարիքներ; erreur ~le փաստացի սխալ; preuve ~le իրեղեն ապացույց; temps ~ փաստացի ժամանակ

**matériel** *m* 1. նյութ, հումք 2. գույք, սարքավորում, տեխնիկա  
~ agricole գյուղատնտեսական գույք  
~ de guerre մարտական տեխնիկա  
~ humain մարդիկ  
~ informatique հաշվողական տեխնիկա  
~ scolaire դպրոցական պիտույքներ  
~ technique տեխնիկական գույք

**matière** *f* 1. *ֆիզ., փիլ.* նյութ, մատերիա 2. նյութ, նյութեղեն, հումք 3. ուսումնասիրության նյութ, թեմա (ելույթի) 4. ուսումնական առարկա (դպրոցում) 5. *իրվք.* գործ, բնույթ, բովանդակություն  $\diamond$  annexe de ~s premières հումքի հավելուկ; approfondir une ~ ուսումնասիրել առարկան, ուսումնասիրության նյութը; dans la ~ տվյալ գործում, տվյալ հարցում, տվյալ դեպքում; donner ~ à discuter քննարկման համար նյութ տալ; en la ~ այս հարցում, այս գործում; en ~ civile քաղաքացիական գործերով; en ~ criminelle քրեական գործերով;

en ~ de ինչ վերաբերում է,... վերաբերյալ; en ~ de finance ֆինանսական հարցերում; entrer en ~ ~ անցնել թեմային; spécialisé dans la ~ տվյալ գործի մասնագետ

~ à option ընտրովի ուսումնական առարկա

~s d'examen քննական առարկաներ

~s fissiles քայքայվող, մասնատվող նյութեր

~s premières, ~ brute հումք

~s sommaires պարզեցված կարգով լուծվող մանր քաղաքացիական գործեր

**matraque** *f* ոստիկանական մահակ

**matraquer** *vt* ոստիկանական մահակներով ծեծել

**matricule** *f* մատրիկուլ, ստուգման գրքույկ; գրառումների գիրք զինվորական մասերում, հիվանդանոցներում և այլն

**matriculer** *vt* մտցնել ցուցակի մեջ, գրքամատյանի մեջ

**maturité** *f* 1. արքունք, հասունություն (սեռական) 2. աճ, զարգացում (մարմնի, մտքի)  $\diamond$  avec ~ հասունորեն, կշռադասվածորեն, մտածված կերպով; être en ~ հասուն տարիքի լինել; en pleine ~ ուժերի ծաղկման շրջանում; manquer de ~ անխելություն, անմտություն հանդես բերել; venir (կամ parvenir) à ~ հասունանալ

~ de l'esprit (d'esprit) խելքի հասունություն

~ du jugement դատողության հասունություն

- mea-culpa** *m* -լատ) սեփական մեղքի ճանաչում, զղջում, ապաշխարանք
- médias** *m pl* տեղեկատվության միջոցներ  
 ~ de groupe տեղեկատվության խմբակային միջոցներ (որոնք սպասարկում են որոշակի մարդկային շրջանակների)
- médiathèque** *f* հաղորդակցությանը վերաբերող նյութերի, զանգվածային լրատվամիջոցների պահոց
- médiateur**, -rice *adj* միջնորդական, միջնորդող ◊ une commission ~rice միջնորդող հանձնաժողով
- médiateur** *m* միջնորդ, հաշտարար
- médiation** *f* միջնորդություն, միջամտություն՝ հաշտեցման նպատակով
- médiatiser** *vt* միջնորդել, կապ հանդիսանալ (կողմերի միջև)
- méditerrané**, -e *adj* միջերկրական
- méditerranéen**, -ne *adj* միջերկրածովյան
- médium** *m* 1. համաձայնության, հաշտության միջոց 2. մեդիում, ոգեմիջնորդ, ոգեհարց 3. միջավայր, շրջապատ 4. միջակա, միջին աստիճան  
 ~ social հասարակական միջավայր
- meeting** *m* ցույց, հանրահավաք, ժողով ◊ tenir un ~ հանրահավաք անցկացնել  
 ~ électoral նախընտրական հանրահավաք
- membre** *m* անդամ (ընտանիքի, կազմակերպության, հասարակության) ◊ carte de ~ անդամատոմս; devenir ~ անդամակցել; Etat ~ անդամ-պետություն (որևէ կազմակերպության); expulsion du ~ անդամի հեռացում՝ վտարում  
 ~ actif, ~ titulaire իսկական անդամ  
 ~ associé ոչ լիիրավ անդամ (որևէ կազմակերպության)  
 ~ du conseil d'administration վարչական խորհրդի անդամ  
 ~ coopté, ~ attribué կոուպտացիոն անդամ  
 ~ correspondant թղթակից անդամ  
 ~ fondateur հիմնադիր անդամ  
 ~ honoraire պատվավոր անդամ  
 ~ non-permanent ոչ մշտական անդամ  
 ~ du parti կուսակցության անդամ  
 ~ permanent, ~ perpétuel մշտական անդամ  
 ~ à pleins droits լիիրավ, իրավահավասար անդամ  
 ~ retraité պաշտոնաթող անդամ  
 ~ sortant լիազորությունների ժամկետը լրանալուց հետո կազմից դուրս եկող անդամ  
 ~ suppléant անդամության թեկնածու  
 ~ du syndicat արհմիության անդամ  
 ~ à vie ցմահ անդամ  
 ~ avec voix consultative խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող անդամ  
 ~ avec voix délibérative վճռական ձայնի իրավունք ունեցող անդամ  
 ~s d'Europarténaires Եվրոպա-

- կան համագործակցության անդամներ
- même** *adj* նույն, միևնույն, նույնպիսի, նույնանման, միանման, միատեսակ  $\diamond$  au ~ degré հավասար չափով; en ~ temps միևնույն ժամանակ
- même** *adv* 1. անգամ, նույնիսկ 2. հատկապես, հենց  $\diamond$  à ~ de... ի վիճակի; aujourd'hui ~ այսօր ևեթ; de ~ նմանապես, նույնպես; être à ~ de faire զգի ի վիճակի լինել ինչ-որ բան անելու; mettre à ~ de... թույլ տալ, հնարավորություն տալ; tout de ~ այնուամենայնիվ, այնուհանդերձ
- memento** *m* 1. հիշեցում 2. հուշատետր 3. տեղեկագիրք; համառոտ ուղեցույց
- mémoire** *f* 1. հիշողություն 2. հուշ, վերհուշ, հիշատակ  $\diamond$  de ~ d'homme անհիշելի ժամանակներից
- mémoire** *m* 1. հուշագիր, զեկուցագիր; *իր/ը*. բողոք, հայց 2. ցուցակ, ցանկ, հաշիվ 3. *pl* հուշագրություններ, հուշեր (գիտական ընկերությունների) 4. ատենախոսություն, զեկույց, գիտական հետազոտություն  
~ ampliatif գրավոր մանրամասն բացատրություն  
~ de défense գրավոր առարկություն հայցի դեմ  
~ de diplôme, ~ de licence
- mémorable** *adj* անմոռանալի, հիշարժան  $\diamond$  événement ~ հիշարժան իրադարձություն
- mémorandum** *m* հուշագիր, դիվանագիտական նոտա՝ հայտագիր  $\diamond$  dresser (կամ préparer) un ~ հուշագիր կազմել՝ պատրաստել
- menaçant**, -e *adj* սպառնալի(ց), սհարկու, վտանգավոր  $\diamond$  crise ~e վերահաս ճգնաժամ
- menace** *f* սպառնալիք, վտանգ  $\diamond$  proférer une ~ սպառնալ ~ de guerre պատերազմի վտանգ ~ d'inflation արժեզրկման վտանգ ~ à la paix սպառնալիք խաղաղությունը  
~s en l'air դատարկ սպառնալիքներ
- menacer** *vt* սպառնալ, վախեցնել
- ménager** *vt* 1. բարեխղճորեն վերաբերվել, խնայել, տնտեսել, խնայողաբար ծախսել 2. նախապատրաստել, կազմակերպել  $\diamond$  ne pas ~ ses forces ուժերը չխնայել; ne pas ~ les éloges գովասանքներ շռայլել  
~ l'avenir մտածել սպագայի մասին  
~ un dénouement հանգուցալուծում նախապատրաստել  
~ une entrevue հանդիպում կազմակերպել  
~ ses expressions իր արտահայտությունները կշռադատել  
~ ses forces ուժերը խնայել  
~ une occasion առիթ տալ  
~ une rencontre հանդիպում կազմակերպել  
~ une surprise անակնկալ պատրաստել  
~ le temps ժամանակը խնայել
- menées** *f pl* մեքենայություններ, բանասարկություններ, դիտավորություններ  $\diamond$  déjouer les ~ de զոմեկի դիտավորությունները խափանել
- menottes** *f pl* ձեռնաշղթաներ, ձեռ-



- նակապանքներ  $\diamond$  mettre les ~ à զո... մեկին զրկել գործելու ազատությունից, ձեռքերն ու ոտքերը կապել; passer les ~ ձեռնաշղթաներ հագցնել
- mensonge** *m* սուտ, ստախոսություն, հերյուրանք, խաբեություն, կեղծիք; մտացածին բան, հնարովի բան, երևակայության արգասիք  $\diamond$  commetre un ~ սուտ ասել  
~ innocent անմեղ սուտ
- mensonger**, -ère *adj* սուտ, կեղծ, հնարովի, շինծու, խաբուսիկ
- mensuel**, -le *adj* ամսական, ամենամսյա
- mentalement** *adv* 1. մտովի, մտքով, մտքում 2. հոգեպես, հոգեբանորեն
- mentalité** *f* 1. մտայնություն 2. խելք, մտավոր կարողություն; մտավոր զարգացում; հոգեբանություն; մտածելակերպ  
~ primitive պարզունակ մտածողություն
- mention** *f* 1. հիշատակում, հիշատակություն 2. դրական գնահատական  $\diamond$  avec ~ գերազանցությամբ; digne de ~ հիշատակության արժանի; être reçu avec ~ քննությունը հանձնել բարձր գնահատականով; faire ~ de... հիշատակել; porter une ~ մակագրություն ունենալ  
~ assez bien, bien, très bien «բավականին լավ, լավ, շատ լավ» (քննություններ հանձնելու ժամանակ)  
~ honorable 1. գովասանագիր 2. երախտագիտության խոսք հրամանում
- ~très honorable «գովեստի արժանի, գերարժանի»՝ գովեստի գնահատական, կարծիք (դիսերտացիայի պաշտպանության ժամանակ)  
~ nominative անվանական հիշատակում՝ թվարկում
- mentionné**, -e *adj* բարձր գնահատական ստացած (քննությունների ժամանակ)
- mentionner** *vt* հիշատակել, շոշափել, նշել
- mépris** *m* 1. արհամարհանք, քամահրանք 2. *hâgծ.* անտարբերություն  $\diamond$  avoir en ~, tenir en ~ արհամարհել; au ~ de... չնայած, ի հեճուկս; հաշվի չառնելով, անտեսելով, արհամարհելով
- mer** *f* ծով  
~ fermée *դվնգ.* փակ ծով (որը բոլոր կողմերից շրջափակված է մեկ կամ մի քանի պետությունների ցամաքային տարածքով)  
~ interne ներքին ծով (որի ափերը պատկանում են մեկ պետությանը)  
~ nationale *հրվք.* ներքին ծով  
~ ouverte *դվնգ.* բաց ծով (որը գտնվում է պետությունների տարածքային ջրերից դուրս)  
~ territoriale, ~ juridictionnelle, ~ littorale տարածքային ջրեր
- mercantile** *adj* 1. առևտրային 2. չարչիական, մանրախնդրորեն հաշվենկատ, շահադիտական  $\diamond$  esprit ~ շահադիտական ոգի
- mercantilisme** *m* մերկանտիլիզմ, կուտակելու կիրք

**mercenaire** *adj* 1. վարձու, վարձով կատարվող 2. ծախու, կաշառված

**mercenaire** *m* 1. վարձու բանվոր, մշակ 2. վարձկան զինվոր, վարձկան  $\diamond$  recruter des ~s վարձկաններ հավաքագրել ~s étrangers օտարերկրյա վարձկաններ

**mérite** *m* 1. արժանիք, վաստակ, ծառայություն, երախտիք 2. *pl* արժանավորություն, դրական հատկանիշներ 3. « Mérite » շքանշան՝ «Արժանիքների համար»  $\diamond$  avoir du ~ հարգանքի արժանի լինել; un homme de ~ արժանավոր մարդ; s'attribuer le ~ իրեն արժանիքներ վերագրել ~s insignes բացառիկ արժանիքներ

**mériter** 1. *vt* արժանի լինել, արժանանալ 2. *vi* վաստակ ունենալ  $\diamond$  bien ~ de... կարևոր ծառայություններ մատուցել; bien ~ de la patrie արժանանալ հայրենիքի երախտագիտությանը ; il a grandement ~é des lettres մեծ է նրա վաստակը գրականության հանդեպ ~ confirmation վավերացում, հաստատում պահանջել

**mésestimer** *vt* 1. չհարգել 2. թերագնահատել

**message** *m* 1. ուղերձ, դիմում 2. (պաշտոնական) հաղորդագրություն, ծանուցում, լուր 3. հանձնարարություն, առաջադրանք, միսիա, առաքելություն  $\diamond$  donner connaissance d'un ~ ուղերձը հրապարակել; lire un ~

ուղերձը ընթերցել; s'acquitter d'un ~ հաղորդագրություն ուղարկել; հանձնարարություն կատարել  
 ~ d'affection ջերմագին ողջույն  
 ~ de félicitation շնորհավորանք  
 ~ présidentiel նախագահի ուղերձը (խորհրդարանին)  
 ~ publicitaire գովազդային լուր; կարճատև գովազդային հաղորդում  
 ~ radio ռադիոգիր  
 ~ télécopié հեռաֆաքս  
 ~ télégraphique հեռագիր  
 ~ téléphonique հեռախոսագիր

**messager**, -ère *m, f* 1. սուրհանդակ, թղթատար 2. համբավաբեր, լրաբեր, բանբեր

**messieurs** *m pl* պարոնայք  $\diamond$  Messers պարոնայք (նամակագրության մեջ ընդունված հասցավում)

**mesure** *f* 1. միջոցառում, միջոց 2. չափի զգացում, չափավորություն, տակտ, զսպվածություն  $\diamond$  combler la ~ ծայրահեղության հասցնել; comporter des ~s միջոցառումներ հարկադրել; dépasser (excéder) la ~ չափը անցնել, չափը չիմանալ; ուռճացնել; discuter (կամ examiner) des ~s à prendre քննարկել, քննության ենթարկել, միջոցառումներ ուսումնասիրել; être en ~ de... ի վիճակի լինել, կարողանալ; manquer de ~ անտակտություն ցուցաբերել; à ~ que... քանի, որքան որ, գուզնիք; à ~, au fur et à ~ հետզհետե, աստիճանաբար; համապատասխանաբար, համեմատ, համաչափորեն; avec ~ չափավոր,

զուսպ; dans la ~ չափերով; par ~ administrative վարչական կարգով; ne garder aucune ~ ոչ մի չափ չպահպանել; outre ~ չափից ավելի; passer la ~ չափն անցնել; prendre des contre~s հակամիջոցներ ձեռնարկել; prendre des ~s nécessaires (կամ appropriées, adéquates) ձեռք առնել անհրաժեշտ (համապատասխան) միջոցներ; en quelque ~ ինչ-որ չափով; réaliser (կամ effectuer) les ~s միջոցառումներ անցկացնել (իրականացնել)  
 ~ capitale պատժի առավելագույն չափ  
 ~ d'instruction *իրվք*. քննչական գործողություն  
 ~s de coercion հարկադրական միջոցներ  
 ~s conservatoires *իրվք*. պաշտպանական միջոցառումներ  
 ~s de contrainte հարկադրանքի միջոցներ  
 ~s de désarmement զինաթափման միջոցառումներ  
 ~s efficaces գործուն միջոցներ, միջոցառումներ  
 ~s législatives օրենսդրական միջոցառումներ  
 ~s pénales պատժական միջոցներ  
 ~s préventives նախազգուշական միջոցներ  
 ~s restrictives սահմանափակող միջոցներ  
 ~s de rétorsion պատասխան միջոցներ  
 ~s de stabilisation կայունության ամրապնդման միջոցառումներ

~s d'urgence արտակարգ միջոցներ  
**mesuré**, -e *adj* 1. չափված 2. համաչափ 3. մտածված, կշռադատված, զգույշ, չափած-ձևած  $\diamond$  déclaration ~e կշռադատված հայտարարություն; à pas ~s համաչափ քայլերով  
**métallo** *m* *խսկց*. մետաղագործ, մետալուրգ  
**méthode** *f* 1. մեթոդ, եղանակ, ձև 2. կարգ, համակարգ  $\diamond$  appliquer une ~ մեթոդ կիրառել ~ déductive դեդուկտիվ եղանակ ~ inductive ինդուկտիվ եղանակ ~ infallible ստուգված՝ հուսալի մեթոդ  
 ~s légales իրավական մեթոդներ  
**méthodique** *adj* 1. մեթոդական, մեթոդիկ 2. սիստեմատիկ, պարբերական  
**méticuleux**, -se *adj* 1. բծախնդիր, մանրակրկիտ 2. քրտնաջան, տքնաջան  
**métropole** *f* 1. մայրաքաղաք 2. մայր երկիր, մետրոպոլիս 3. *փխք*. կենտրոն (որևէ ասպարեզում)  
 ~ d'équilibre խոշոր նահանգային կենտրոն  
**métropolitain** *m* 1. մայրաքաղաքի բնակիչ 2. արքեպիսկոպոս, մետրոպոլիտ  
**mettre** *vt* 1. դնել, տեղադրել 2. գցել, հասցնել, ենթարկել, դարձնել  $\diamond$  mis à part չհաշված; se ~: se ~ en devoir de... իր պարտքը համարել; se ~ au fait de... ծանոթանալ ~ d'accord համաձայնության հասցնել

~ au ban de la civilisation քաղաքակիրթ ժողովուրդների ցանկից դուրս գրել  
 ~ au ban de l'opinion publique հանրային կարծիք հրահրել  
 ~ au ban de la société հասարակությունից դուրս դնել  
 ~ à bas վայր նետել, գահավիժել  
 ~ à bout ծայրահեղության հասցրել  
 ~ en cause ա) մեղադրանք ներկայացնել բ) գործի մեջ ներքաշել գ) քննության ենթարկել դ) *փ/սք.* կասկածի տակ առնել  
 ~ en commun միավորել, համախմբել, միացնել  
 ~ en compétition վեճի առարկա դարձնել  
 ~ en danger վտանգի ենթարկել  
 ~ en dérouté փախուստի մատնել; շփոթեցնել, շփոթմունքի մեջ գցել  
 ~ en doute կասկածի տակ առնել  
 ~ en échec աննպաստ դրության մեջ դնել, կանխապես անհաջողության դատապարտել  
 ~ à l'étude ուսումնասիրության առարկա դարձնել  
 ~ à exécution կյանքի կոչել, իրականացնել; ի կատար ածել  
 ~ au fait տեղյակ պահել, տեղեկացնել  
 ~ à feu et à sang հրի ու սրի մատնել  
 ~ fin à վերջ դնել  
 ~ au grand jour լույս աշխարհ բերել; հրապարակել, ի լուր աշխարհի հայտնել  
 ~ hors d'état de nuire վնասագրել

~ hors d'usage շարքից, գործածությունից հանել  
 ~ dans l'impossibilité անելանելի դրության մեջ դնել  
 ~ en mauvaise posture անհարմար դրության մեջ դնել, վարկաբեկել  
 ~ à mort մահապատժի ենթարկել  
 ~ à nu բացահայտել, պարզել  
 ~ en oeuvre իրականացնել  
 ~ de la partie մասնակցություն բերել  
 ~ au pied du mur փակուղի մտցնել, պատին սեղմել  
 ~ au point պարզել, ճշտել, ճշգրտել; մշակել, կատարելվերջացնել; նախապատրաստել, կարգավորել  
 ~ à portée հասանելի դարձնել  
 ~ en possession ժառանգությունը հանձնել ժառանգին  
 ~ à profit օգտագործել  
 ~ en relief ընդգծել, հաստատել  
 ~ en service գործողության մեջ դնել  
 ~ tout en oeuvre գործի դնել բոլոր միջոցները  
 ~ aux voix քվեարկության դնել  
**meurt** – de – faim *m* սովյալ, սովահար, քաղցող; աղքատ, թշվառական  
**meurtre** *m* սպանություն, ոճրագործություն ◇ commettre un ~ սպանություն կատարել  
**meurtrier**, -ère *adj* մահաբեր, մահացու; վտանգավոր, կործանարար  
**mexicain**, -e *adj* մեքսիկական  
**micmac** *m* 1. *խսկյ.* խարդավանք, ինտրիգ, մեքենայություն, մութ գործ 2. քառու, անկարգություն

**mioux-être** *m* կենսամակարդակի բարձրացում, բարեկեցության բարելավում

**migrant**, -e *m, f* տարաբնակ, վտարանդի, տարագիր, միգրանտ

**migration** *f* տարաբնակեցում, տեղահանություն, գաղթ, միգրացիա  
 ~ externe արտագաղթ  
 ~ interne ներգաղթ, ներքին տեղաշարժ

**migratoire** *adj* տարաբնակեցման, գաղթեցման, տեղահանման

**milice** *f* 1. աշխարհագոր 2. զորք 3. ոստիկանություն

**milicien**, -ne *m, f* 1. աշխարհագորային, զինյալ 2. ոստիկան

**milieu** *m* 1. միջավայր, շրջապատ 2. *խսկգ.* հանցաշխարհ  $\diamond$  changer de ~ social դուրս գալ իր սոցիալական միջավայրից  
 ~ de culture *կենսաբ.* սնուցիչ միջավայր

**milieux** *m pl* շրջանակներ  $\diamond$  dans les ~ populaires ժողովրդի միջավայրում  
 ~ autorisés հեղինակավոր շրջանակներ  
 ~ commerciaux գործարար շրջանակներ  
 ~ financiers ֆինանսական շրջանակներ  
 ~ industriels արդյունաբերական շրջանակներ  
 ~ officiels պաշտոնական շրջանակներ  
 ~ sociaux հասարակական շրջանակներ

**militaire** *adj* ռազմական, զինվորական  $\diamond$  âge ~ զորակոչի տարիք;

- note** *f* 1. դիտողություն, ծանոթություն 2. գրառում, նշում, ծանոթագրություն, տողատակի ծանոթագրություն, հղում 3. գրություն, տեղեկություն, տեղեկանք 4. գնահատական, թվանշան, միշ, միավոր 5. *դվնգ.* նոտա, հայտագիր ◊ carnet de ~ նոթատետր; échange des ~s ; prendre des ~s նշումներ կատարել, գրառումներ անել; prendre ~ de... ի գիտություն ընդունել; նկատի առնել ~ au bas de la page տողատակի ծանոթագրություն  
~ circulaire շրջաբերական նոտա  
~ collective կոլեկտիվ նոտա  
~ de commande պատվեր  
~ de couverture ապահովագրության ժամանակավոր վկայական  
~ diplomatique դիվանագիտական նոտա  
~ marginale ծանոթագրություն՝ նշում լուսանցքներում

- ~ de protestation բողոքի նոտա  
 ~ de renseignements հետախուզական տեղեկանք (բյուլետեն)  
 ~ de service պաշտոնական գրություն  
 ~ verbale բանավոր հայտագիր
- noter** *vt* 1. նշել, հիշատակել 2. նկատի ունենալ; ի գիտություն ընդունել 3. որակավորել, գնահատել, ատեստավորել, վկայագրել
- notice** *f* 1. նշում, գրառում, նոթագրություն, տեղեկանք 2. համառոտ ներածություն 3. հաղորդում, տեղեկություն, ծանուցատետր
- notification** *f* 1. *ղվնգ*. նոտիֆիկացիա, հայտագրում 2. ծանուցում, տեղեկացում; նախագուշացում, տեղյակ պահելը
- notifier** *vt* պաշտոնապես հայտնել, տեղեկացնել, ծանուցել, տեղյակ պահել
- notion** *f* 1. հասկացություն, գաղափար 2. ծանոթություն, տարրական գիտելիքներ  $\diamond$  première ~ նախնական պատկերացում, գաղափար  
 ~s élémentaires տարրական գիտելիքներ
- notoire** *adj* բացահայտ, հանրահայտ, ակնհայտ, հանրաժանոթ  $\diamond$  criminel ~ հայտնի հանցագործ; fait ~ հանրահայտ փաստ; le fait est ~ հանրահայտ է; il est ~ que... բոլորին հայտնի է, որ...
- notoirement** *adv* ակնհայտորեն, ակներևաբար, կանխահայտորեն, բացահայտորեն
- notoriété** *f* 1. ակնհայտություն, ակներևություն, հանրահայտություն 2. հռչակ, փառք, համբավ, լայն ժողովրդականություն, հայտնիություն  $\diamond$  acte de ~ *իրվք*. նոտարական արձանագրություն (փաստաթուղթ), որը պաշտոնապես վավերացնում է հանրահայտ իրադարձությունը; cela est de ~ publique սա հանրահայտ է
- nôtre** *pron.autonome* ( le ~, la ~, les ~s) մերը
- nôtre** *m*: (le ~) մեզ պատկանող՝ մեր սեփականությունը
- nôtres** *m pl*: մեր մերձավորները, մեր հարազատները  $\diamond$  êtes-vous des ~? դուք մեզ հե՞տ եք, մեր կողմի՞ց եք
- notule** *f* համառոտ ծանոթագրություն; կարճ տեղեկություն (գիտական)
- nouer** *vt* 1. կապել, հանգույց անել, կապ գցել, փաթաթել 2. *փխք*. կազմակերպել, ծրագրել, սկսել, լարել  
 ~ une correspondance նամակագրություն սկսել  
 ~ une intrigue մեքենայություն սարքել, ինտրիգներ լարել
- nourri**, -e *adj* կերած, սնված, հագեցած  $\diamond$  conversation bien ~e բովանդակալից խոսակցություն; feu ~, tir ~ անդադար կրակ, անդադար հրաձգություն; fusillade bien ~e աշխույժ փոխհրաձգություն  
 ~ de pensées բովանդակալից
- nourrir** *vt* 1. սնել, կերակրել 2. *փխք*. սնել, հագեցնել, լրիվ բավարարություն տալ

- ~ un désir անհագ ցանկություն  
 qqալ  
 ~ l'espoir հույսեր փայփայել  
 ~ une haine ատելություն զգալ  
 ~ un projet ծրագիր մտածել
- nouveau**, -elle *adj* 1. նոր 2. երիտասարդ, անփորձ ◊ être ~ dans son métier իր գործի մեջ սկսնակ է, նոր մարդ է; interprétation ~elle de la loi օրենքի նոր մեկնաբանություն; législation ~elle նոր օրենսդրություն; Nouveau Testament *կրոն*. Նոր Կտակարան  
 ~ riche նոր հարուստ, դուրս-պրծուկ մարդ
- nouvelle** *f* 1. նորություն, լուր, տեղեկություն 2. նորավեպ, նովել, պատմվածք ◊ demander des ~ տեղեկանալ, հարցուփորձ անել ~, dernières վերջին նորություններ  
 ~ - titre պատմվածք, որով վերնագրվում է ամբողջ ձեռնարկը
- nouvelliste** *m* 1. քրոնիկյոր (լրատվական բաժնի աշխատակից) 2. նովելիստ
- novation** *f* *իրվք*. պարտավորությունների վերականգնում; մեկ պարտավորության փոխարինում մեկ ուրիշով
- novations** *f pl* նորություններ, նորամտություններ
- nover** *vt* *իրվք*. պարտավորությունը վերականգնել; մեկ պարտավորություն փոխարինել մյուսով
- noyau** *m* միջուկ  
 ~ atomique ատոմային միջուկ
- noyauter** *vt* 1. բջիջներ ստեղծել 2. պայթեցնել, քայքայել, կազմալուծել կազմակերպությունը (ներսից)
- nu**, -e *adj* 1. մերկ, մերկացած, տկլոր 2. *փխք*. պարզ, անպաճույճ, անզարդ, համեստ ◊ à l'œil ~ անզեն աչքով; style ~ պարզ ոճ; vérité toute ~e մերկ ճշմարտություն
- nu** *m* մերկություն ◊ à ~ բաց; mettre à ~ les insuffisances թերությունները բացահայտել
- nuage** *m* ամպ ◊ se perdre dans les ~s ա) ամպերում սավառնել բ) արտահայտվել անորոշ (մշուշապատ) և վերամբարձ  
 ~ artificiel ծխածածկույթ  
 ~ de grêle կարկտաբեր ամպ  
 ~ radioactive ռադիոակտիվ ամպ
- nuance** *f* 1. երանգ, նրբերանգ 2. նուրբ տարբերություն ◊ être sans ~s ճկուն չլինել, շիտակ լինել
- nucléaire** *adj* միջուկային, ատոմային ◊ arme ~, engins ~s միջուկային զենք; balance ~, միջուկային հավասարակշռություն; énergie ~ միջուկային էներգիա; forces ~s միջուկային ուժեր; parité ~ միջուկային զուգակշիռ; physique ~ միջուկային ֆիզիկա; puissances ~s միջուկային տերություններ; réacteur ~ միջուկային ռեակտոր; retombées ~s ռադիոակտիվ տեղումներ
- nucléaire** *m* 1. միջուկային, ատոմային էներգիա 2. ատոմային էլեկտրակայան 3. ատոմային արդյունաբերություն
- nue** *f* ամպ, թուխպ ◊ porter (կամ mettre) aux ~s, élever jusqu'aux ~s երկինք բարձրացնել, փառաբանել; aller aux ~s հաջողություն

- ունենալ; tomber des ~s երկնքից վայր ընկնել
- nuire** *vi* վնասել, վնաս պատճառել; խանգարել  $\diamond$  hors d'état de ~ վնասագործված; il ne nuit pas de... չի խանգարի...
- nul**, -le *adj* 1. ոչ մի, ոչ մեկը 2. անվավեր, ուժը կորցրած 3. չնչին, աննշան  $\diamond$  agir sans ~le crainte գործել առանց վախի; n'avoir ~le idée de... ոչ մի գաղափար չունենալ; considérer une proposition comme ~le et non avenue առաջարկությունը համարել անվավեր; élections ~les անարդյունք ընտրություններ; un homme ~ ողորմելի մարդ, ոչնչություն; rendre ~ չեղյալ հայտարարել, ոչնչացնել; résultat ~ անհաջողություն, ձախողություն; sans ~le exception առանց որևէ բացառության ~ et non avenue, ~ de plein droit անվավեր; օրինական ուժից զուրկ
- nul** *pron.*: ոչ ոք, ոչ մեկը  $\diamond$  ~ n'est prophète dans son pays *առգլ.* ոչ ոք մարգարե չէ իր երկրում
- nul** *m* 1. տեղեկատվության բացակայություն 2. անորոշ իմաստ
- nullification** *f* նուլիֆիկացիա, անվավեր ճանաչելը
- nullifier** *vt* ոչնչացնել, չեղյալ հայտարարել, անվավեր համարել
- nullité** *f* 1. *հրվք.* անվավերություն, անիրականություն 2. ոչնչություն, անպետքություն  $\diamond$  action (կամ demande) en ~ անվավեր ճանաչելու հայց; constater la ~ անվավեր ճանաչել; frappé (կամ entaché) de ~ անվավեր ճանաչված; invoquer la ~ պահանջել անվավերության ճանաչում ~ d'un travail աշխատանքի ցածր որակ
- numéraire** *m* 1. օրինական շրջանառություն ունեցող՝ շրջանառության մեջ եղած դրամը, կանխիկ դրամ 2. մետաղադրամ  $\diamond$  en ~ et au comptant կանխիկ վճարման միջոցով; payer en ~ կանխիկ վճարել
- numérique** *adj* թվային, քանակային  $\diamond$  supériorité ~ թվային գերազանցություն
- numériquement** *adv* հաշվով; թվով
- numéro** *m* համար, թիվ, համարանիշ  $\diamond$  former le ~, faire le ~ հավաքել հեռախոսի համարը ~ de compte հաշվեհամար ~ d'ordre հերթական համար ~ un համար առաջին, ղեկավար, գլխավոր



## O

- obédience** *f* հնազանդություն, հպատակություն, կախվածություն; հավատարմություն (գաղափարական կամ քաղաքական ուղղությանը) ◇ sous l'~ de... իշխանության տակ, ազդեցության տակ, հսկողության տակ
- obéir** *vi* ենթարկվել, հնազանդվել, կախման մեջ լինել ◇ se faire ~ հնազանդեցնել, ստիպել լսելու ~ à sa conscience վարվել իր խղճի համաձայն ~ au doigt et à l'œil ենթարկվել անառարկելիորեն ~ առանց հակաճառության ~ à la force ուժի առաջ տեղի տալ՝ ընկրկել; ուժին հնազանդվել ~ à la loi ենթարկվել օրենքին ~ à un ordre ենթարկվել հրամանին
- obéissance** *f* հնազանդություն, խոնարհություն, հպատակություն ◇ devoir ~ ենթարկվել, հնազանդվել; forcer l'~ ուժով ստիպել հնազանդվելու; prêter (կամ jurer) ~ հպատակություն ընդունել, իրեն հպատակ ճանաչել; refus d'~ անհնազանդություն հրամանին ~ passive կույր հնազանդություն ~ aux règles կարգուկանոնի պահպանում
- objecter** *vt* առարկել, հակաճառել, ընդդիմախոսել, հակառակվել, դեմ լինել; որպես առարկություն մեջ բերել, որպես փաստարկ մեջ բերել ~ de bonnes raisons à... համոզիչ փաստարկներ բերել
- objecteur** *m* *hնգծ*. առարկող ~ de conscience մարդ, որը հրաժարվում է գինվորական ծառայությունից կրոնական (կամ բարոյական) նկատառումներից ելնելով
- objectif**, -ve *adj* 1. օբյեկտիվ, իրական 2. ճիշտ, անկողմնակալ, անաչառ 3. առարկայական ◇ discussion ~ve անկողմնակալ քննարկում; point ~ *nազմ*. վերջնական նպատակ; réalité ~ve օբյեկտիվ իրականություն
- objectif** *m* վերջնանպատակ, հիմնական նպատակ, խնդիր ◇ atteindre son ~ հասնել իր նպատակին; avoir pour ~, se poser comme ~ նպատակ ունենալ, իր առջև նպատակ դնել ~ long terme երկարաժամկետ նպատակ
- objection** *f* առարկություն, առարկում, հակաճառություն ◇ élever des ~s առարկություններ անել, հակառակվել; faire (կամ formuler) des ~s առարկել, ընդդիմախոսել; lever les ~ s առարկությունները հանել՝ վերացնել; soulever des ~s առարկություններ առաջ քաշել

~ de conscience հրաժարում զին-  
ծառայությունից կրոնական  
(կամ բարոյական) նկատառում-  
ներից ելնելով

**objectivité** *f* օբյեկտիվություն, ան-  
կողմնակալություն, անկողմնա-  
պահություն, անաչառություն ◊  
manque d'~ կողմնապահություն,  
ոչ օբյեկտիվություն; en toute ~  
ամենայն անաչառությամբ

**objet** *m* 1. առարկա, իր, օբյեկտ 2.  
նպատակ 3. նյութ, թեմա ◊ avoir  
pour ~ նպատակ ունենալ; la de-  
mande a fait l'~ d'une décision né-  
gative դիմումը չբավարարվեց;  
être l'~ de... առարկա լինել; faire  
l'~ du litige *իր/ը*. վեճի առար-  
կան կազմել; faire l'~ d'une dis-  
cussion քննարկման առարկա  
դարձնել; remplir son ~ հասնել  
իր առջև դրված նպատակին;  
sans ~ անառարկայական, ան-  
հիմն

~ d'une agression ագրեսիայի  
օբյեկտ

~ d'un contrat պայմանագրի  
նպատակը

~ d'un discours ելույթի թեմա

~ fabriqué արտադրանք, սպ-  
րանք

~ d'une résolution բանաձևի՝  
որոշման նպատակը

~ spatial տիեզերական օբյեկտ

~ volant non identifié (OVNI) չճա-  
նաչված թռչող օբյեկտ (ՉԹՕ)

~s de consommation սպառման  
առարկաներ, սպառողական  
սպրանքներ

~s de valeur արժեքներ, թանկար-  
ժեք առարկաներ

**objurgation** *f* կշտամբում, պարսա-  
վում, նախատում, հանդիմա-  
նում; կշտամբանք, պարսա-  
վանք, նախատինք, պախարա-  
կություն, հանդիմանություն

**obligation** *f* 1. պարտավորություն,  
հանձնառություն; պարտակա-  
նություն, պարտք 2. անհրաժեշ-  
տություն; հարկադրական՝ ստի-  
պողական ուժ, պարտադիր լինե-  
լը 3. պարտատոմս, փոխառու-  
թյուն ◊ accomplir l'~ պարտակա-  
նությունը կատարել; acquitter  
une ~ հանձնառություն կատա-  
րել; assumer les ~s պարտավո-  
րություններն իր վրա վերցնել;  
avoir de grandes ~s envers զո  
պարտավորային հարաբերու-  
թյուններով մեկի հետ կապված  
լինել; cautionner une ~ հանձնա-  
ռությունն ապահովել; contracter  
une ~ պայմանագրով պարտա-  
վորվել; déroguer à une ~ պար-  
տավորությունները խախտել;  
être dans l'~ de... ստիպված լի-  
նել...; faire honneur à ses ~s բոլոր  
պարտքերը մարել; imposer l'~  
de... հանձնառություն դնել; libé-  
rer d'une ~ հանձնառությունից  
ազատել; l'~ cesse ses effets  
պարտավորությունը կորցնում է  
ուժը՝ գործողությունը; mettre  
dans l'~ de faire qch ստիպել մե-  
կին ինչ-որ բան անել; relever  
d'une ~ պարտավորությունից  
ազատել; rembourser une ~ պար-  
տատոմս մարել; remplir ses ~s իր  
պարտականությունները կատա-  
րել; respecter les ~s հանձնառու-  
թյունները կատարել; satisfaire à

ses ~s կատարել իր պարտականությունները; se soustraire à ses ~s չկատարել իր պարտականությունները, խուսափել իր պարտականությունները կատարելուց; violer une ~ պարտավորությունը խախտել  
 ~ alternative այլընտրանքային պարտավորություն  
 ~ civique քաղաքացիական պարտականություն  
 ~ contingente պատահական պարտավորություն  
 ~ divisible բաժանելի պարտավորություն  
 ~ par écrit գրավոր պարտավորություն  
 ~ étrangère օտարերկրյա պարտատու  
 ~ d'honneur խոստում, երդում; պատվի գործ  
 ~ internationale միջազգային պարտավորություն  
 ~ jointe միացյալ պարտավորություն  
 ~ juridique իրավաբանական հանձնառություն  
 ~ légale իրավական հանձնառություն  
 ~ nominative անվանական պարտատու  
 ~ remboursée մարած պարտատու  
 ~s contractuelles պայմանագրային հանձնառություններ  
 ~s d'Etat պետական փոխառության պարտատուներ  
 ~s professionnelles ծառայական պարտականություններ; մասնագիտական պարտականություն

**obligatoire** *adj* պարտադիր, պարտավորեցնող, հարկադրական, օրենքով պահանջվող, ստիպողական ◊ le travail ~ աշխատանքային պարհակ, աշխատապարտիք

**obliger** *vt* 1. պարտադրել, պարտավորեցնել, ստիպել, հարկադրել 2. շնորհ անել, լավություն անել ◊ s'~(à qch) պարտավորվել, իր վրա պարտավորություն հանձն առնել

**oblique** *adj* զարտուղի, ծուռ, շրջանցիկ; ոչ անկեղծ, կեղծ, քողարկված, խուսափողական

**obliquer** *vi* խույս տալ, մի կողմ թեքվել

**obliquité** *f* *փխբ.* կեղծություն, խաբեություն, կեղծավորություն

**obnubiler** *vt* : ~ la conscience գիտակցությունը մթազնել

**obole** *f* մանրադրամ Հունաստանում; լումա, ավանդ ◊ cela ne vaut pas une ~ սա գրոշ անգամ չարժե; donner son ~ իր լուման մտցնել

**obscurantisme** *m* օբսկուրանտիզմ, խավարամտություն, խավարամտություն

**obscurantiste** *m* խավարամիտ, խավարամոլ, խավարապաշտ

**obséqueux**, -se *adj* հաճոյակատար, շողոքոք, քծնող, կեղծավոր

**obséquiosité** *f* շողոքոքություն, կեղծավորություն, ստորաբարձություն, քծնանք

**observable** *adj* նշմարելի, նկատելի, ակներև, ակնբախ, ակնառու; դիտարկելի, զննելի, հետազոտման ենթակա

**observance** *f* 1. պահում, պահպանում, պաշտպանում, ճշգրիտ հետևելը 2. կանոն, կանոնադրություն, կանոնակարգ, ծիսակարգ  
 ◇ *de stricte* ~ ուղղափառ, խիստ հետևողական

**observateur**, *-rice m, f* 1. դիտորդ 2. պահպանող (սովորությունները, կարգը, կանոնները); պահապան  
 ◇ *mission d'~* դիտորդական առաքելություն; *membre ~* դիտորդի կարգավիճակ ունեցող անդամ; *statut d'~* դիտորդի կարգավիճակ; *en tant qu'~* դիտորդի կարգավիճակով  
 ~s *inofficiels* ոչ պաշտոնական դիտորդներ  
 ~s *officiels* պաշտոնական դիտորդներ

**observation** *f* 1. պահպանում, պահում, հսկում, հսկողություն 2. զննում, դիտարկում, հետազոտում, քննարկում 3. նկատողություն, դիտողություն 4. նկատառում, դատողություն  
 ◇ *don d'~* դիտողական ձիրք՝ ընդունակություն; *esprit d'~* դիտողականություն; *être (կամ se tenir) en ~* ա) հսկել բ) հսկողության տակ լինել (հիվանդի մասին); *faire une ~* դիտողություն անել; *manquer de sens d'~* դիտողականությունից զուրկ լինել; *présenter une ~* դիտողություն անել, նկատել տալ; *tenir en ~* դիտարկել, քննել  
 ~ *internationale* միջազգային հսկողություն  
 ~ *de la loi* օրենքի պահպանում  
 ~ *du règlement* կանոնադրության պահպանում

~s *particulières* առանձնահատուկ դիտողություններ

**observer** *vt* 1. պահպանել, պահել, հետևել 2. զննել, դիտարկել, հետազոտել, քննարկել 3. նկատել, նշմարել, ուշադրություն դարձնել  
 ~ *les distances* հեռավորություն պահպանել, իրեն պահել պաշտած հեռավորության վրա  
 ~ *les mouvements de l'ennemi* հետևել թշնամու գործողություններին  
 ~ *les obligations* պարտավորությունները պահպանել  
 ~ *les règles* կանոնները պահպանել

**obsolète** *adj* 1. անգործածական, հնացած, չգործող  
 ◇ *loi ~* չգործող օրենք; *règlement ~* հնացած կանոնադրություն

**obstacle** *m* խոչընդոտ, արգելք, դժվարություն, դիմադրություն, ընդդիմություն, հակազդեցություն  
 ◇ *constituer un ~* խոչընդոտ լինել, արգելք հանդիսանալ; *écarter des ~s* վերացնել խոչընդոտները; *faire ~ à...* խոչընդոտներ հարուցել; խոչընդոտ հանդիսանալ; *mettre des ~s* խոչընդոտներ ստեղծել; *surmonter les ~s* խոչընդոտները հաղթահարել, դժվար կացությունից դուրս գալ  
 ~ *insurmontable* անհաղթահարելի խոչընդոտ  
 ~ *de la langue* լեզվական խոչընդոտ  
 ~ *tarifaire* մաքսային արգելք, արգելափակոց

**obstination** *f* համառություն, կամա-

կորոթյուն  $\diamond$  vaincre 1~ կամակորոթյունը հաղթահարել  
**obstinément** *adv* համառորեն, հաստատակամորեն  
**obstiner** (s') համառել, համառորեն հետամուտ լինել, ձգտել հասնելու  
**obstruction** *f* 1. փակում, խափանում, արգելակում 2. օբստրուկցիա, ընդդիմագործություն  
**obstruer** *vt* 1. փակել, խափանել, արգելել 2. ընդդիմագործություն սարքել  
 ~ le projet de loi օրինագիծը տապալել  
 ~ la procédure գործընթացը խափանել  
**obtenir** *vt* ձեռք բերել, ստանալ, հասնել  
 ~ un accord համաձայնություն ձեռք բերել  
 ~ une audience ունկնդրություն ստանալ  
 ~ un résultat արդյունքի հասնել  
 ~ un succès հաջողության հասնել  
 ~ un visa վիզա (այցագիր) ստանալ  
**obvier** *vi* կանխել, առաջն առնել, նախագուշացնել; խոչընդոտել, խափանել  
 ~ à une difficulté դժվարությունը հաղթահարել  
 ~ à un inconvénient խոչընդոտը հեռացնել  
**occasion** *f* 1. դեպք, պատահար, իրադարձություն, դիպված 2. առիթ, պատճառ, հարմար պահ 3. հանգամանք, պարագա, կացություն  $\diamond$  à l'~ de առիթով, կապակցությամբ; à cette ~ այդ

առիթով; d'~ ա) պատահական p) մաշված, հնացած; par ~ պատահաբար; saisir une ~ (favorable) (հարմար) առիթից օգտվել; selon l'~, suivant les ~s նայած հանգամանքներին  
 ~ favorable բարեհաջող առիթ  
**occident** *m* 1. արևմուտք 2. (Occident) Արևմտյան երկրներ  $\diamond$  Eglise d'Occident կաթոլիկ եկեղեցի  
**occidental**, -e *adj* արևմտյան  
**Occidentaux** *m pl* 1. Արևմուտքի երկրներ, ժողովուրդներ (Արևմտյան Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի) 2. *բղթ.* ՆԱՏՕ-ի անդամներ  
**occidentaliser** *vt* արևմտանվրուպական ապրելակերպ պատվաստել  $\diamond$  s'~ արևմտանվրուպական ապրելակերպը յուրացնել  
**occupant**, -e *adj* 1. զբաղեցնող (տեղը); տիրող, գրավող 2. *նազմ.* զավթողական, զավթիչ  $\diamond$  autorités ~es զավթողական իշխանություններ; forces ~es զավթիչ զորքեր; régime ~ զավթողական՝ օկուպացիոն վարչակարգ  
**occupant** *m* զավթիչ  
**occupation** *f* 1. աշխատանք, զբաղմունք, գործունեություն, արհեստ 2. օկուպացիա, օտար երկրի գրավում, տիրում, բռնազավթում  $\diamond$  sous l'~ օկուպացիայի ժամանակ; troupes d'~ զավթիչ զորքեր  
 ~ militaire ռազմական օկուպացիա  
 ~ territoriale տարածքային բռնագրավում  
**occuper** *vt* 1. զբաղեցնել, բռնել, գրավել (տեղ, պաշտոն), կլանել,

խլել (ժամանակ) 2. *naqd.* գրավել, նվաճել, տիրել, գավթել, բռնագավթել  
 ~ un pays երկիր գավթել  
 ~ une place տող զբաղեցնել  
 ~ de plein droit իրավամբ գրավել, զբաղեցնել  
 ~ un territoire տարածք բռնագավթել՝ օկուպացնել  
**occurrence** *f* դեպք, պատահար, իրադարձություն, դիպված, պատահականություն; հանգամանք, պարագա ◊ dans l'~ առիթի դեպքում; en l'~, en cette ~ տվյալ դեպքում, այս դեպքում  
 ~s mutuelles exclusives փոխբացառող իրադարձություններ  
**océan** *m* օվկիանոս; անսահման տարածություն  
**octroi** *m* շնորհում, պարգևում, տրամադրում, հանձնում  
 ~ d'une aide immédiate շտապ օգնություն ցույց տալը  
 ~ de l'asile ապաստանի տրամադրում  
 ~ d'avances, de crédits վարկավորում  
 ~ d'un brevet արտոնագրի տրամադրում  
 ~ d'un délai ժամկետի հետաձգում  
 ~ de la garantie երաշխիքների տրամադրում  
 ~ de l'indépendance անկախություն տալը  
 ~ de la liberté d'action գործողությունների ազատություն տալը  
 ~ de licence արտոնագրի տրամադրում՝ հատկացում  
 ~ d'une prime պարգևատրում

~ d'un visa վիզայի (այցագրի) տրամադրում  
**octroyer** *vt* 1. տրամադրել, տալ, հանձնել, հատկացնել 2. շնորհել, պարգևել  
 ~ une constitution սահմանադրություն տալ  
 ~ un délai տարկետում տալ  
 ~ une récompense պարգև շնորհել  
**oculaire** *adj*: témoin ~ ականատես  
**œcuménique** *adj*: concile ~ տիեզերաժողով  
**œuvre** *f* 1. գործ, աշխատանք 2. ստեղծագործություն, աշխատություն 3. հաստատություն ◊ mettre à l'~ գործի անցնել; mettre en ~ ընթացք տալ, գործողության մեջ դնել; ներդնել, իրականացնել, կենսագործել; mise en ~ գործածություն, կիրառություն; իրականացում;  
 ~ d'art գեղարվեստական ստեղծագործություն  
 ~s de bienfaisance բարեգործական հաստատություն  
 ~s choisies ընտիր երկեր, քրեստոմատիա  
 ~s complètes երկերի լիակատար ժողովածու  
 ~s d'entraide փոխօգնության կազմակերպություն  
 ~s inédites անտիպ ստեղծագործություններ  
 ~s posthumes հետմահու ստեղծագործություն  
**offense** *f* 1. վիրավորանք, անպատվություն, անարգանք 2. *իրվք.* վիրավորանք ուղղված պետության դեկավարի դեմ ◊ tenir à ~ վիրավորանք համարել

**offenser** *vt* 1. վիրավորել, անպատվել, անարգել, նեղացնել 2. խոցել, հարվածել; վիրավորել

**offenseur** *m* վիրավորող, վիրավորանք հասցնող, անարգիչ

**offensif** *adj* ագրեսիվ, հարձակողական, նվաճողական, թշնամական:

**offensive** *f* հարձակում, գրոհ; հարձակողական գործողություններ  
 ◇ briser l'~ հարձակումը հետ մղել; passer à l'~ , prendre l'~ ~ հարձակման անցնել; reprendre l'~ հարձակումը վերսկսել  
 ~ diplomatique դիվանագիտական հարձակում  
 ~ d'ensemble համընդհանուր հարձակում  
 ~ locale, ~ partielle մասնակի հարձակում

**office** *m* 1. ծառայություն, պաշտոն 2. պարտականություն, պարտք 3. բաժանմունք, գրասենյակ, գործակալություն, վարչություն, գերատեսչություն 4. *եկղոց*. ժամերգություն, ժամասացություն ◇ assistance aux ~s du culte եկեղեցական ժամերգությանը ներկա գտնվելը; avoir lieu d'~ պաշտոնապես տեղի ունենալ; bons ~s *դվնգ*. բարի ծառայություններ (պետությունների միջև ծագած վեճերի խաղաղ կարգավորման եղանակներից մեկը); faire (կամ remplir) son ~ իր դերը խաղալ; իր գործը անել; faire ~ de ծառայել, պարտականությունը կատարել; d'~ գործի, ծառայության բերումով; ըստ նշանակության; պաշտոնապես; remplir un ~ պաշտո-

նավարել; résigner un ~ պաշտոնաթող լինել; à titre d'~ ի պաշտոնե, աշխատանքի բերումով  
 ~ de change փոխանակման գրասենյակ  
 ~ européen des Nations Unies à Genève ՄԱԿ-ի Եվրոպական գրասենյակ Ժնևում  
 ~ ministériel արդարադատության բնագավառի պաշտոնատար անձ  
 ~ de publicité գովազդային գործակալություն  
 ~ supérieur de... գլխավոր գրասենյակ

**officialisation** *f* պաշտոնապես ճանաչում

**officialiser** *vt* պաշտոնապես ճանաչել, պաշտոնականացնել  
 ~ une nomination նշանակումը պաշտոնականացնել

**officiel**, -le *adj* պաշտոնական, ծառայական, կառավարական ◇ acte ~ պետական փաստաթուղթ; communiqué ~ պաշտոնական հաղորդագրություն; déclaration ~le պաշտոնական հայտարարություն; invité ~ պաշտոնական հյուր; la langue ~le պաշտոնական, պետական լեզու; personnel ~le պաշտոնատար անձ; réception ~le պաշտոնական ընդունելություն; reconnaissance ~le պաշտոնական ճանաչում; rencontre non ~le ոչ պաշտոնական հանդիպում; source ~le պաշտոնական աղբյուր; voiture ~le կառավարական մեքենա; voyage ~ պաշտոնական գործուղում

**officiel** *m* պաշտոնատար անձ;

կառավարության անդամ  
**officier** *m* 1. պաշտոնյա, պաշտոնատար անձ 2. սպա ◊ *corps des* ~s սպայակազմ; *grade d'*~ սպայական աստիճան  
 ~ *breveté* բարձրագույն կրթությամբ սպա  
 ~ *de carrière* կարիային սպա  
 ~ *général* գեներալ; ադմիրալ  
 ~ *de la Légion d'honneur* Պատվո լեգեոնի պատվավոր ասպետ  
 ~ *de marine* ծովային սպա  
 ~ *municipal* քաղաքապետարանի պաշտոնատար անձ  
 ~ *public* պաշտոնատար անձ, որն իրավասու է վավերացնել իրավաբանական փաստաթղթերը (նոտար, դատարանի քարտուղար)  
 ~ *de réserve* պահեստային սպա  
 ~ *ministériel* դատարանի պաշտոնատար անձ  
 ~ *subalterne* կրտսեր սպա  
 ~ *supérieur* ավագ սպա  
**officieux**, *-se adj* կիսապաշտոնական, ոչ պաշտոնական ◊ *organe* ~, *feuille officieuse* կիսապաշտոնական օրգան  
**offre** *f* 1. առաջարկում, առաջարկ, առաջարկություն 2. ընձա, նվեր, զոհ ◊ *accepter une* ~ առաջարկը ընդունել; *décliner une* ~ առաջարկը չընդունել; *faire une* ~ առաջարկ անել; *l'offre dépasse la demande* առաջարկը գերազանցում է պահանջարկը; *profiter d'*~ *une* ~ առաջարկից օգտվել; *recevoir une* ~ առաջարկ ստանալ; *refuser (կամ retirer) une* ~ առաջարկը մերժել

~ *acceptable* ընդունելի առաջարկ  
 ~ *et demande* առաջարկ և պահանջարկ  
 ~ *d'emploi* աշխատանքի առաջարկ  
 ~ *spéciale* հատուկ առաջարկ  
**offrir** *vt* 1. առաջարկել 2. տրամադրել, տալ  
 ~ *son aide*, իր օգնությունն առաջարկել  
 ~ *des avantages* առավելություններ տալ  
 ~ *le choix* ընտրության հնարավորություն տալ  
 ~ *un déjeuner (un dîner)* կազմակերպել, տալ ճաշկերույթ (ընթրիք)  
 ~ *prise à...* հիմք տալ  
 ~ *ses services* իր ծառայությունն առաջարկել  
**oiseux**, *-se adj* զուր, իզուր, ապարդյուն, անմիտ, անիմաստ, անօգուտ ◊ *paroles oiseuses* դատարկ խոսքեր  
**oligarchie** *f* օլիգարխիա, խմբիշխանություն  
**oligarchique** *adj* օլիգարխիական, խմբիշխանական  
**olympique** *adj* օլիմպիական ◊ *Jeux Olympiques* օլիմպիական խաղեր  
**ombudsman** *m* օմբուդսմեն, մարդու իրավունքների պաշտպան  
**oméga** *m* օմեգա (հունական այբուբենի վերջին տառը) ◊ *l'alpha et l'*~ ալֆա և օմեգա, սկիզբը և վերջը  
**omettre** *vt* 1. բաց թողնել, չնկատել, վրիպել, ձեռքից փախցնել 2.



չկատարել, մոռանալ (անել ինչ-որ բան)  
 ~ une formalité ձևականությունը բաց թողնել, չօգտագործել

**omission** *f* 1. բացթողում, վրիպում, թերություն 2. լռության տալը, լռության մատնելը ◊ délit par ~ հանցավոր վրիպում; mensonge par ~ խաբեություն լռելու միջոցով; միտումնավոր լռություն

**omnipotence** *f* ամենակարողություն, ամենագորություն, մեծագորություն

**opéreaux**, -se *adj* 1. բանկ նստող, բանկարժեք, ծանր բեռ հանդիսացող, ծանրացուցիչ, ծանր 2. *հնգծ.* ճնշող, դժվարին, ստրկական

**opérant**, -e *adj* գործող, գործուն ◊ droit ~ գործող իրավունք

**opération** *f* 1. գործողություն, գործառնություն; գործառույթ, ձեռնարկում 2. *նազմ. pl* մարտական գործողություններ 3. ընթացակարգ, արարողություն ◊ effectuer des ~s գործարքներ կատարել՝ իրականացնել; traiter les ~s գործառույթներ կատարել ~ défensive պաշտպանողական գործողություն  
 ~ offensive հարձակողական գործողություն  
 ~s commerciales առևտրային գործառույթներ  
 ~s fermes կայուն գործարքներ  
 ~s de financements internationaux միջազգային ֆինանսավորման գործառույթներ  
 ~s militaires ռազմական գործողություններ

**opérationnel**, -le *adj* 1. օպերատիվ, շուտափույթ, գործնական 2. գործող, գործուն, ուժի մեջ 3. գործարքային, գործառույթային, գործառնական

**opérer** *vi* 1. գործողություն իրականացնել, գործել 2. գործարք կատարել, գործառնություններ կատարել ◊ s'~ տեղի ունենալ, կատարվել  
 ~ un raid հարձակում գործել  
 ~ de vive force բացարձակ ուժով գործել

**opinion** *f* 1. կարծիք 2. : ~ publique հասարակայնություն, հասարակական կարծիք 3. *pl* հայեցակետ, մտածելակերպ, հայեցողություն, հայացք 3. *քղք.* տրամադրություններ ◊ avoir bonne [mauvaise] ~ de... լավ [վատ] կարծիք ունենալ; braver l'~ արհամարհել հասարակական կարծիքը; émettre une ~ կարծիք հայտնել; énoncer une ~ կարծիք արտահայտել; être de l'~ de... համակարծիք լինել, ինչ որ բանի; influencer sur la formation de l'~ publique ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա; d' ~s politiques diverses տարբեր հասարակական հայացքների տեր; partage d' ~s *իրվք.* ձայների հավասար բաժանում; se ranger à une ~ միանալ կարծիքին; sondage d' ~ հասարակական կարծիքի ստուգում, հարցում  
 ~ accréditée ընդունված կարծիք  
 ~ assurée վստահություն  
 ~ dominante գերակշռող կարծիք  
 ~ officielle պաշտոնական կարծիք

~ ouvrière աշխատավորների տրամադրությունները՝ հայացքները  
 ~ publique mondiale համաշխարհային հասարակական կարծիք  
 ~ toute faite կանխակալ կարծիք  
 ~s avancées առաջադեմ հայացքներ

**opportun**, -e *adj* ժամանակին, տեղին, հարմար; պատշաճ, պատեհ, հարկավոր, հարկ եղած; բարեպատեհ, բարեհաջող ◊ juger ~ համարել տեղին; au moment ~, en temps ~ հարկավոր պահի, հարմար ժամանակ

**opportunément** *adv* ժամանակին, տեղին, իսկը ժամանակին, պահանջված ժամանակին

**opportunisme** *m* օպորտունիզմ; հարմարվողականություն, հաշտվողականություն, անսկզբունքայնություն, պատեհապաշտություն

**opportuniste** *m, f* օպորտունիստ; հարմարվող, պատեհապաշտ, համաձայնողական՝ հաշտվողական՝ անսկզբունքային անձ

**opportunité** *f* 1. ժամանակին լինելը, տեղին լինելը, նպատակահարմարություն, պատեհություն 2. հարմար առիթ  
 ~s d'investissement ներդրումային հնարավորություններ

**opposant**, -e *adj* 1. հակադրվող, հակադիր 2. *քղք.* ընդդիմացող, ընդդիմադիր ◊ faction ~e թշնամական խմբավորում; intérêts ~s հակադիր շահեր; partie ~e ընդդիմադիր կողմ

**opposant**, -e *m, f* ընդդիմախոս, ընդդիմադիր անձ; հակառակորդ, թշնամի

~s du régime վարչակարգի հակառակորդներ  
 ~s de la résolution բանաձևի ընդդիմախոս

**opposé**, -e *adj* հակառակ, հակադիր, ներհակ, հանդիպակաց, դիմացի

**opposer** *vt* հակադրել ◊ s'~ ա) հակադրել, ընդդիմանալ, հակառակվել, դիմադրել բ) խանգարել, խոչընդոտել, դեմ հանդես գալ  
 ~ des arguments փաստարկներ առաջ քաշել  
 ~ un refus պատասխանել մերժումով  
 ~ une résistance դիմադրություն ցույց տալ  
 ~ la riposte nécessaire հակահարված տալ  
 ~ son veto à... վետո դնել

**opposite** *m* *հնգծ.* հակադիրը, հակառակը, հակադրություն, հակապատկեր ◊ à l'~ դեմուդեմ, դեմառդեմ, դեմհանդիման, դիմացը, հակառակ, ընդհակառակն

**opposition** *f* 1. հակադրություն, հակապատկեր 2. հակադրում, համեմատում 3. ընդդիմություն, հակադրեցություն, դիմադրություն; անհամաձայնություն; խոչընդոտ 4. *իրվք.* դատական վճռի իրականացման դեմ առարկություն, բողոք ◊ adresser une ~ բողոք հայտնել; en ~ դեմառդեմ; entrer en ~ հակադրության մեջ մտնել; être en ~ avec qch հակաճառել, ընդդիմախոսել; être dans l'~ ընդդիմություն ներկայացնել, ընդդիմության մեջ լինել; faire (կամ mettre) ~ à qch հակառակվել ինչ-որ բանի; *իրվք.* առար-

- կություն ներկայացնել, բողոքարկել
- oppresser** *vt* 1. կեղեքել, հարստահարել, շահագործել 2. ճնշել, հալածել, չարչարել, նեղել  $\diamond$  classes ~ées ճնշված՝ հարստահարված դասակարգեր
- oppresseur** *m* հարստահարիչ, կեղեքիչ
- oppression** *f* կեղեքում, հարստահարում, ճնշում, հալածանք  
~ des minorités nationales ազգային փոքրամասնությունների ճնշում
- oppressivement** *adv* բռնի կերպով
- opprimé**, -e *adj* ճնշված, հալածված, ստրկացված, ընկճված
- opprimer** *vt* կեղեքել, հարստահարել, ճնշել, նեղել, նեղություն տալ, շահագործել
- opter** *vi* 1. արտահայտվել (հոգուտ), առաջարկություն անել 2. ընտրել
- optimal**, -e *adj* լավագույն, ամենաբարենպաստ, ամենահամապատասխան
- optimum** *adj* *inbu*՝ optimal
- option** *f* 1. ընտրություն 2. *իրվք*. օպտացիա, քաղաքացիության ընտրություն, ընտրության իրավունք  $\diamond$  à ~, en ~ ընտրությամբ; կամավոր կերպով ընտրված, ֆակուլտատիվ; avoir l'~ ընտրելու իրավունք ունենալ; matière à ~ ուսումնական առարկա ընտրությամբ; prendre une ~ ստանալ նախընտրելի իրավունք... համար
- optionnel**, -le *adj* կամավոր կերպով ընտրված, ոչ պարտադիր  $\diamond$  contribution ~le կամավոր նվիրատվություն՝ ներդրում; enseignements ~s կամավոր ընտրված դասընթացներ; règle ~le ոչ պարտադիր կանոն
- oral**, -e *adj* բանավոր  $\diamond$  accord ~ բանավոր համաձայնություն
- orateur**, -rice *m, f* հռետոր, ճառասուս, ելույթ ունեցող  $\diamond$  exprimer son accord avec l'~ précédent արտահայտել իր համաձայնությունը նախորդ հռետորի հետ
- orbite** *f* ուղեծիր  $\diamond$  mettre en ~, placer sur l'~ ~ ուղեծիր դուրս բերել; mise en ~ ուղեծիր դուրս բերելը
- orchestrer** *vt* ուղղորդել, ուղղություն տալ, դեկավարել, կազմակերպել ~ une campagne de presse մամուլում քարոզարշավ կազմակերպել
- ordinaire** *adj* 1. սովորական, ամենօրյա 2. հասարակ  $\diamond$  à l'~, à son ~ սովորության համաձայն, ինչպես միշտ; d'~, pour l'~ մեծ մասամբ, սովորաբար; en séance ~ հերթական նիստի ժամանակ
- ordonnance** *f* 1. դրվածք, կարգուկանոն 2. հրաման, կարգադրություն, ցուցում, որոշում, վճիռ, հրամանագիր  $\diamond$  rendre une ~ որոշում՝ վճիռ կայացնել
- ordonner** *vt* 1. կարգավորել, կարգի բերել, դասավորել 2. կարգադրել, հրամայել
- ordre** *m* 1. կանոն, կարգուկանոն 2. կարգ, հերթականություն, հաջորդականություն 3. կարգադրություն, հրաման, հրահանգ 3. շքանշան 4. կարգ, աստիճան, դաս  $\diamond$  adopter l'~ du jour հաստատել օրակարգը; en bon rang

par ~ de priorité ավելի բարձր գերակայությունից օգտվող; établir un ~ de priorité սահմանել հարցերի հերթականությունը; être aux ~s de զո ենթարկվել մեկին; figurer (կամ être) à l'~ du jour օրակարգում լինել; քննարկման առարկա լինել; inscrire (կամ porter) une question à l'~ du jour հարցը մտցնել օրակարգ; intervertir l'~ des questions հարցերի հաջորդականությունը փոխել; mettre en ~ կարգի բերել; mieux placé par ~ de priorité մեծ գերակայությունից օգտվող; moins bien placé par ~ de priorité չնչին գերակայությունից օգտվող; mot d'~ ա) նշանաբան բ) անցախոսք; l'~ du jour comporte (կամ comprend) les points (կամ les questions) suivant(e)s օրակարգը բաղկացած է հետևյալ կետերից (հարցերից); par ~ հերթականությամբ; passer à l'~ du jour անցնել հերթական գործերին; de premier ~ առաջնակարգ, գերազանց; առաջին աստիճանի; problème à l'~ du jour արդիական խնդիր; rappeler à l'~ կարգի հրավիրել; rayer (կամ retirer) de l'~ du jour օրակարգից հանել; de second ~ երկրորդ կարգի, երկրորդական; sous les ~s ղեկավարությամբ; հրամանատարությամբ; en tête par ~ de priorité (կամ d'urgence) առաջնահերթ; օրակարգում դրված հարց; troubler l'~ public խախտել հասարակական կարգը ~ d'idées գաղափարների՝ հաս-

կացությունների շրջանակը ~ international միջազգային իրավակարգ ~ du jour օրակարգ ~ du jour définitif վերջնական օրակարգ ~ du jour provisoire նախնական օրակարգ ~ juridique իրավակարգ, իրավունքի ճյուղ ~ de la Légion d'honneur Պատվո լեգեոնի շքանշան ~ monétaire international արժույթի միջազգային կանոնակարգ ~ public հասարակական կարգ ~ social սոցիալական աստիճան, կարգ

**ores:** d'~ et déjà *loc.adv.* արդեն հիմա, այժմ ևեթ

**organe** *m* 1. մարմին, օրգան, միջոց, գործիք 2. միջնորդ, ներկայացուցիչ 3. պաշտոնաթերթ

~ d'action ղեկավար մարմին ~ administratif վարչական մարմին ~ central կենտրոնական մարմին ~ collectif կոլեկտիվ մարմին ~ compétent իրավասու մարմին ~ délibératif խորհրդակցական մարմին ~ de direction ղեկավարման մարմին ~ d'enquête քննչական մարմին ~ exécutif գործադիր մարմին ~ de la justice արդարադատության մարմին ~ législatif օրենսդիր մարմին ~ principal գլխավոր օրգան ~ subordonné ստորադաս օրգան ~ subsidiaire օժանդակ օրգան ~ supérieur վերադաս մարմին

~ suprême de décision որոշում ընդունելու բարձրագույն մարմին  
**organisation** *f* 1. կազմակերպություն, կազմավորում, կառույց 2. կազմակերպում, ձևավորում ◊ manque d'~ անկազմակերպվածություն; Organisation de Coopération et de Développement Economique Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն; Organisation Européenne de Coopération Economique Եվրոպայի տնտեսական համագործակցության կազմակերպություն; Organisation des Nations Unis (ONU) Միացյալ ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)  
 ~ administrative վարչական կազմակերպություն  
 ~ apparentée կից կազմակերպություններ  
 ~ de base ստորին՝ սկզբնական կազմակերպություն  
 ~ centrale կենտրոնական կազմակերպություն  
 ~ charitable բարեգործական կազմակերպություն  
 ~ intergouvernementale միջկառավարական կազմակերպություն  
 ~ de masse հասարակական կազմակերպություն  
 ~ mondiale համաշխարհային կազմակերպություն  
 ~ multilatérale բազմակողմանի կազմակերպություն  
 ~ multinationale բազմազգ կազմակերպություն  
 ~ non-gouvernementale (O.N.G.) ոչ կառավարական կազմակերպություն

~ régionale տարածաշրջանային կազմակերպություն  
 ~ syndicale արհմիութենական կազմակերպություն  
**organisme** *m* 1. կառուցվածք, օրգանիզմ 2. կազմակերպություն, հաստատություն; մարմին  
 ~ d'Etat պետական մարմին  
 ~ international միջազգային կազմակերպություն  
 ~ interrégionale միջհանրապետական մարմին  
 ~ de recherche հետազոտական կազմակերպություն  
 ~ de sécurité sociale սոցիալական ապահովության մարմին  
 ~s de contrôle վերահսկիչ մարմիններ  
 ~s gouvernementaux կառավարական մարմիններ  
 ~s multilatéraux, ~s multinationaux միջազգային կազմակերպություններ  
 ~s officiels պաշտոնական կազմակերպություններ  
 ~s parapublics կիսապետական հաստատություններ  
 ~s publics de crédit պետական վարկատու կազմակերպություններ  
**orient** *m* 1. արևելք 2. (Orient) Արևելք, արևելյան երկրներ; l'Église d'Orient Արևելյան (ուղղափառ) եկեղեցի; l'Empire d'Orient *պտմ.* Արևելյան (Բյուզանդական) տիրապետություն; l'Extrême-Orient Հեռավոր Արևելք; le Moyen-Orient Միջին Արևելք; l'Orient ancien Հին Արևելք; le Proche-Orient Մերձավոր Արևելք

**oriental**, -e *adj* արևելյան ◊ institut des études ~es արևելագիտության ինստիտուտ; langues ~es արևելյան լեզուներ

**Orientaux** *m pl* Արևելյան ժողովուրդներ, Ասիայի ժողովուրդներ

**orientation** *f* 1. կողմնորոշում, կողմնորոշվելը 2. *փիլ.* ուղղություն, ուղղվածություն, դիրքորոշում ◊ discours d'~ հիմնական զեկույց (համաժողովում)  
~ de la politique քաղաքական ուղղվածություն՝ կուրս  
~ professionnelle մասնագիտական կողմնորոշում

**orienter** *vt* ուղղություն տալ, ուղղորդել, կողմնորոշել ◊ s'~ կողմնորոշվել; s'~ vers... ուղղվել դեպի...  
~ les délibérations մտքերի փոխանակությունը ուղղորդել, բանավեճին ուղղություն տալ

**originaire** *adj* 1. ծնունդով, ծագումով, սերված, բնիկ 2. առաջացած, սկիզբ առած 3. սկզբնական, նախնական, բնածին

**original**, -e *adj* 1. բնածին, ի ծնե 2. նախնական, սկզբնական, իսկական, բնագրային 3. յուրօրինակ, ինքնատիպ ◊ acte judiciaire ~ դատական փաստաթուղթ; copie ~ պատճենում բնագրից; édition ~e առաջին տպագրություն; source ~e սկզբնաղբյուր; texte ~ բնագրային տեքստ

**original** *m* բնագիր, բնօրինակ, սկզբնագիր ◊ dans l'~ բնագրով, բնագիր օրինակով; en quadruple ~ չորս օրինակով

**originalité** *f* 1. յուրօրինակություն, ինքնատիպություն, յուրատեսա-

կություն, յուրահատկություն, առանձնահատկություն 2. արտասովորություն, տարօրինակություն

**origine** *f* սկիզբ, սկզբնաղբյուր, առաջացում, ծագում, գոյանալը, առաջ գալը, երևան գալը; *pl* ակունքներ ◊ être à l'~ հիմքում լինել, հիմքը կազմել; d'~ ծնունդով; d'~ ancienne հին; dès l'~ ամենասկզբից; dans l'~, à l'~ սկզբում, սկզբնավորվելիս; le lieu d'~ առաջացման վայրը; nationalité d'~ ազգությունը՝ ստացած ի ծնե; pays d'~ ծննդավայրը, հայրենիքը

**orthodoxe** *adj* 1. ուղղափառ 2. խիստ հետևողական, ուղղահավատ, ընդունված ◊ interprétation ~ բոլորի կողմից ընդունված մեկնաբանություն; opinions ~s ընդհանուրի կողմից ընդունված տեսակետներ՝ հայացքներ

**ostensible** *adj* բացահայտ, բաց, ակնհայտ, ակներև, առանց թաքցնելու, ցուցադրական ◊ convention ~ բաց կոնվենցիա, համաձայնություն, միջազգային պայմանագիր

**OTAN** (Organisation du Traité de l'Atlantique Nord) ՆԱՏՕ, Հյուսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպություն

**ottoman**, -e *adj* օսմանյան ◊ Empire Ottoman Օսմանյան (Թուրքական) կայսրություն

**Ottomans** *m pl uyut.* օսմանցիներ, թուրքեր

**oubli** *m* 1. մոռացություն, մոռացում 2. մոռացկոտություն, անփութություն ◊ tomber dans l'~ մոռաց-

- վել, մոռացության մատնվել
- oui-ouistes** *m pl* հավանություն տվողներ, «այո» ասողներ
- ouillage** *m* սարքավորում, սարք, հանդերձանք, պիտույքներ ~ *moderne* նոր՝ ժամանակակից սարքավորում
- outrage** *m* ծանր վիրավորանք, անարգանք, անպատվություն; հարված, ցնցում 2. վնաս, կոպիտ խախտում (սկզբունքի և այլն) ◇ *accabler d' ~s* ծանր վիրավորանքներ հասցնել; *faire ~ à* զո ծանր վիրավորանք հասցնել մեկին; *laver un ~* վրեժխնդիր լինել ~ *au bon sens* բռնություն առողջ դատողության նկատմամբ ~ *aux bonnes mœurs* *հրվք.* ծանր վիրավորանք բարոյականությանը
- outrager** *vt* 1. ծանր վիրավորել 2. վնասել, վնաս հասցնել 3. զանցառել, խախտել (օրենքը)
- outrance** *f* ծայրահեղություն, չափազանցություն, ծայրահեղ խտրում ◇ *guerre à ~* պատերազմ մինչև հաղթական ավարտ; *lutte à ~* կենաց-մահու պայքար; *à ~* ծայրաստիճան, վերին աստիճանի, չափազանց; անողորմ; *poursuivre à ~* դաժանորեն հետապնդել
- outrancier**, *-ère m, f* ծայրահեղ միջոցների կողմնակից
- outré** *prép* բացի, մի կողմ թողած ~ *cela* բացի այդ, դրանից բացի ~ *mesure* չափազանց, չափից դուրս
- ouvert** *adv* հեռու, ավելի հեռու ◇ *en ~* բացի դրանից, դրանից դուրս; *passer ~ à qch* *փհսք.* չպահպանել, չպահել, չհետևել; արհամարհել, բանի տեղ չդնել, նկատի չառնել, քամահրել
- outré**, *-e adj* 1. չափազանցված, չափազանցրած, ծայրահեղ, ուռճացրած 2. վրդովված, վիրավորված
- outré-Atlantique** *adj* անդրատլանտյան, Ատլանտյան օվկիանոսի այն կողմի
- outré-océanique** *adj* անդրօվկիանոսյան, օվկիանոսի այն կողմի
- outré-mer** *loc.adv.* անդրծովյան, ծովից այն կողմ
- outré-monts** *loc.adv.* լեռներից այն կողմ
- outré-océanique** *adj* անդրօվկիանոսյան, օվկիանոսի այն կողմի
- outrépasser** *vt* սահմանն անցնել, չափն անցնել ~ *ses pouvoirs* իր լիազորությունները գերազանցել
- outré-Rhin** *adv* Հռենոսից այն կողմ
- ouvert**, *-e adj* 1. բաց, բացահայտ, ուղղակի 2. անկեղծ, շիտակ, սրտաբաց 3. չամրացված, բաց, անպաշտպան ◇ *acte de trahison ~e* բացահայտ պետական դավաճանություն; *à bureau ~* փաստաթղթերի ներկայացմամբ; *guerre ~* բաց՝ բացահայտ պատերազմ; *intimidation ~e* բացահայտ ահաբեկչություն; *ville ~e* բաց՝ չամրացված քաղաք
- ouvertement** *adv* 1. բացեիբաց, բացահայտորեն, բացահայտ

ձևով 2. հրապարակավ  
**overture** *f* 1. բացում, սկիզբ 2. *pl*  
 առաջարկություններ, նախա-  
 ձեռնություն, առաջին քայլեր 3.  
*բղբ.* շրջադարձ քաղաքականու-  
 թյան մեջ (կողմը..., դեմքով դե-  
 պի...); հրաժարում թշնամական,  
 անհաշտվողական քաղաքակա-  
 նությունից; շփումների ընդլայն-  
 ման քաղաքականություն  $\diamond$  dis-  
 cours *d'*~ (համաժողովի, նիստի  
 և այլնի) բացման խոսք; faire des  
 ~s de paix խաղաղության (հաշ-  
 տության) առաջարկություններ  
 անել; séance solennelle *d'*~ հան-  
 դիսավոր նիստ (ժողովի, նստա-  
 շրջանի և այլնի) բացման կա-  
 պակցությամբ, բացման հանդի-  
 սություն; trouver une ~ pour...  
 առիթ գտնել, որպեսզի...  
 ~ *d'*un congrès համագումարի  
 բացում  
 ~ sur l'extérieur ելք դեպի արտա-  
 քին շուկա  
 ~ des frontières սահմանների բա-  
 ցում  
 ~ *d'*un grand débat de politique  
 étrangère արտաքին քաղաքա-  
 կանության վերաբերյալ ընդ-  
 լայնված բանավեճի բացում  
 ~ du marché շուկայի ստեղծում  
 ~ de négociations բանակցու-  
 թյունների սկիզբ  
 ~ de nouvelles succursales նոր  
 մասնաճյուղերի բացում  
 ~ des relations հարաբերություն-  
 ների հաստատում  
 ~s sur la question առաջարկու-  
 թյուններ հարցի վերաբերյալ  
**ouvrager** *vt* հանգամանորեն մշա-

կել, վերանորոգել, պատրաստել,  
 զարդարել  
**ouvrier**, -ère *adj* բանվորական  $\diamond$  cité  
 ~ère բանվորական ավան; classe  
 ~ère բանվոր դասակարգ; mouve-  
 ment ~ բանվորական շարժում  
**ouvrier**, -ère *m, f* բանվոր, աշխա-  
 տավոր  
 ~ agricole գյուղատնտեսական  
 բանվոր  
 ~ du bâtiment շինարարական  
 բանվոր  
 ~ industriel արդյունաբերական  
 բանվոր  
 ~ de la mécanique մեքենաշինա-  
 կան արդյունաբերության բանվոր  
 ~ du pétrole նավթագործ բանվոր  
 ~ salarié վարձու բանվոր  
**ouvrir** *vt* բացել, բաց անել, սկսել  
 ~ un commerce առևտրային ձեռ-  
 նարկություն բացել  
 ~ un compte մեկի անունով  
 հաշիվ բացել  
 ~ le dialogue սկսել զրույցը՝  
 բանակցությունները  
 ~ un emprunt փոխառություն թո-  
 դարկել  
 ~ une enquête հետաքննություն  
 սկսել  
 ~ les pourparlers բանակցություն-  
 ները սկսել  
 ~ une séance նիստը բացել  
**ouzbek**, -e *adj* ուզբեկական  
**ovation** *f* ծափողջույն, բուռն ծա-  
 փահարություններ  $\diamond$  faire une ~  
 բուռն ծափահարել  
**ovationner** *vt* ծափողջույններով դի-  
 մավորել, բուռն ծափահարել  
**oyant** *m* : ~ compte *իրվբ.* հաշվետ-  
 վություն լսող



## P

- pacificateur**, -rice *m, f* խաղաղարար անձ
- pacification** *f* 1. խաղաղարարություն, խաղաղեցում, հանդարտեցում, հաշտեցում 2. հանգըստացնելը, հանդարտեցնելը, հնազանդեցնելը
- pacifier** *vt* 1. խաղաղեցնել, հանդարտություն՝ խաղաղություն վերականգնել, հաշտեցնել 2. հանգստացնել, հնազանդեցնել ~ les pays belligérants հաշտեցնել պատերազմող երկրներին
- pacifique** *adj* 1. հաշտ, խաղաղասիրական, խաղաղասեր, խաղաղ ժամանակի 2. խաղաղ, հանդարտ, հանգիստ ◊ coexistence ~ խաղաղ գոյակցություն; océan Pacifique, le Pacifique Խաղաղ օվկիանոս; politique ~ խաղաղասիրական քաղաքականություն; résoudre le problème par voie ~ հարցերը լուծել խաղաղ ճանապարհով; utilisation ~ de l'énergie atomique (nucléaire) ատոմային (միջուկային) էներգիայի օգտագործում խաղաղ նպատակներով
- pacifiquement** *adv* 1. խաղաղ, խաղաղ ճանապարհով, հաշտ, հաշտ ու խաղաղ 2. հանգիստ կերպով
- pacifisme** *m* պացիֆիզմ, խաղաղասիրություն
- pacifiste** *adj* պացիֆիստ, խաղաղության պաշտպան՝ ջատագով
- pacta sunt servanda** (*լատ.*) *ղվնգ.* «համաձայնությունները պետք է կատարվեն» (միջազգային իրավական սկզբունք, որը պարտավորեցնում է պետությանը կամավոր կատարել միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները)
- pacte** *m* *ղվնգ.* պակտ, միջազգային պայմանագիր, համաձայնագիր, դաշնագիր, դաշինք, համաձայնություն ◊ conclure un ~, faire un ~ պայմանագիր կնքել; rompre le ~ պայմանագիրը խախտել ~ d'assistance mutuelle փոխօգնության պայմանագիր ~ de défense mutuelle փոխպաշտպանության պայմանագիր ~ de garantie երաշխիքային պայմանագիր ~ militaire-politique ռազմաքաղաքական դաշինք ~ de non-agression չհարձակման դաշնագիր ~ de Paix Խաղաղության դաշնագիր ~ régional տարածաշրջանային համաձայնագիր ~ secret գաղտնի պայմանագիր
- pactiser** *vi* 1. դաշնակցել, միանալ պայմանագրին, համաձայնության գալ, բանակցություններ վարել 2. գործարքի մեջ մտնել
- paie** *f* 1. վարձ, վճար, վճարում 2. աշխատավարձ ◊ faire la ~

աշխատավարձը վճարել; fiche de ~ վճարատոմս; le jour de ~ աշխատավարձի օր; toucher sa ~ աշխատավարձ ստանալ

**paiement** *m* 1. վճարում, վճար 2. վարձ, վարձատրություն, վճարած գումար  $\diamond$  ajourner le ~ վճարը հետաձգել; capacité de ~ վճարունակություն; cesser les ~s վճարումները դադարեցնել; effectuer (կամ faire) un ~ վճարում կատարել, վճարել; facilités de ~ ապառիկ; garantir le ~ վճարը երաշխավորել; moyen de ~ վճարամիջոց; obtenir un ~ վճար ստանալ; de ~ վճարային; refuser le ~ վճարումից հրաժարվել; rendre les ~s վճարումները վերսկսել; solliciter un sursis de ~ վճարման հետաձգում խնդրել; suspendre le ~ վճարումը դադարեցնել

~ d'une amende տուգանքի վճարում

~ d'un avance, ~ d'un compte կանխավճարում, կանխավճար տալ

~ au comptant վճարում կանխիկով

~ en devises տարադրամով վճարում

~ électronique փոխանցում բանկային հաշվից՝ համակարգչի օգնությամբ

~ mensuel ամսավճար

~ d'un service ծառայության վճար

~s courants ընթացիկ վճարումներ

~s internationaux միջազգային

վճարումներ

~s intercommunautaires վճարումներ ԵՏՀ-ի անդամ երկրների միջև

~s par ordinateur վճարումներ համակարգչով

~s et transferts վճարումներ և փոխանցումներ

**pair** *m* 1. գույզը, նմանը, հավասարը 2. համարժեքություն, հարաբերակցություն 3. անվանական արժեք, անվանական գին  $\diamond$  aller de ~ avec... համապատասխանել, համաքայլ, համընթաց գնալ; hors de ~ հավասարը չունեցող, ոչնչի՝ ոչ մեկի հետ անհամեմատելի; au ~ ըստ անվանական գնի

~ de change, ~ d'une monnaie, ~ intrinsèque արժույթի փոխարժեք

~ des effets publics պետական արժեթղթերի հարաբերակցություն (արժույթների հարաբերակցություն ուկու գնանշով)

**paisible** *adj* հանգիստ, խաղաղ, հաշտ, անվրդով, անխռով, անդորր

**paix** *f* 1. խաղաղություն 2. հաշտություն 3. խաղաղության պայմանագիր 3. հանգիստ, դադար, անդորր 4. կարգուկանոն, հասարակական անդորր  $\diamond$  attaché à la ~, épris de ~ խաղաղասեր, խաղաղատենչ; conclure (կամ faire) la ~ հաշտություն կնքել; Conseil Mondial de la Paix Խաղաղության համաշխարհային խորհուրդ; consolidation de la ~ après les conflits հետկոնֆլիկտային խաղաղության ամրապնդում; défendre

(կամ *sauegarder*) *la* ~ պաշտպանել խաղաղությունը; *établir la* ~ խաղաղություն հաստատել; *être* (կամ *s'affirmer*) *pour la* ~ հանդես գալ խաղաղության օգտին; *faire régner la* ~ կարգուկանոն հաստատել; *forces de maintien de la* ~ խաղաղարար ուժեր; *laisser en* ~ հանգիստ թողնել; *lutte pour* (կամ *en faveur de*) *la* ~ պայքար խաղաղության համար (կամ հոգուտ) խաղաղության; *le maintien de la* ~ խաղաղության պահպանում; *maintenir la* ~ պահպանել, ամրապնդել խաղաղությունը; *menacer la* ~ սպառնալ խաղաղությունը; *négociier la* ~, *mener les pourparlers de* ~ խաղաղ բանակցություններ վարել; *partisans* (կամ *combattants, militants*) *de la* ~ խաղաղության կողմնակիցներ (խաղաղության մարտիկներ); *politique de* ~ խաղաղության քաղաքականություն; *ratifier la* ~ վավերացնել խաղաղության պայմանագիրը; *rétablir la* ~ վերականգնել խաղաղությունը; *le rétablissement de la* ~ խաղաղարարություն, խաղաղության վերականգնում; *rompre* (կամ *violier*) *la* ~ խախտել խաղաղությունը; *en temps de* ~ խաղաղ ժամանակ  
 ~ *armée* զինված խաղաղություն; խաղաղություն պատերազմի եզրին  
 ~ *des braves* պատվավոր հաշտություն (քաջաբար կռվողների համար)  
 ~ *durable* կայուն խաղաղություն

~ *équitable* արդարացի հաշտություն  
 ~ *fragile* փխրուն՝ ոչ հարատև խաղաղություն  
 ~ *honteuse* ամոթալի խաղաղություն  
 ~ *séparée* սեպարատ հաշտություն  
 ~ *universelle, solide et durable* համընդհանուր, կայուն և տևական խաղաղություն  
**pakistanais**, *-e adj* պակիստանյան, Պակիստանի  
**palabre** *f* երկարաբանություն, շատախոսություն, շաղակրատություն, լեզվակռիվ  
**palabrer** *vi* երկար բացատրվել, շաղակրատել, լեզվակռիվ տալ  
**paladin** *m* 1. *պոմ.* պալադին, թափառական ասպետ 2. արկածներ որոնող  
**palais** *m* 1. պալատ, ապարանք 2. (Palais) : ~ *de justice* արդարադատության պալատ, դատարան  
 ◇ *gens de* ~ արդարադատության աշխատակիցներ; *jours de* ~ դատական նիստերի օրեր  
**palinodie** *f pl* սեփական խոսքերից՝ հայացքներից հրաժարում; կարծիքների հանկարծակի փոփոխություն  
**palliatif** *m* 1. պալիատիվ, կիսամիջոց 2. մեղմացուցիչ հանգամանք  
**palmarès** *m* մրցանակի արժանացածների ցանկը  
**panachage** *m* քաղաքական խմբավորումների, կուսակցությունների միավորում ընտրությունների ժամանակ; ընտրողների միասնական ցուցակների կազմում

- panaméricanisme** *m* պանամերիկանիզմ, համամերիկանիզմ
- panarménien**, *-ne adj* համահայկական ◊ Jeux Olympiques Panarméniens համահայկական օլիմպիական խաղեր
- panodore** *m* *հսկգ. հնգծ.* ոստիկան, ժանդարմ
- panel** *m* 1. փորձնական ընտրություն (սոցիոլոգիական հարցման ժամանակ); կրկնակի հարցման ենթարկված մարդկանց խումբ 2. մասնագետների խումբ (լսարանի առջև որևէ հարց քննարկելու համար)
- pangermanisme** *m* պանգերմանիզմ, համագերմանիզմ
- panier** *m* կողով, զամբյուղ  
~ de la ménagère *տնտ.* սպառողական զամբյուղ  
~ à salade *փխբ.* ոստիկանական ծածկակառք
- panindien**, *-ne adj* համահնդկական
- panique** *f* խուճապ ◊ être gagné (կամ pris) par la ~ խուճապի մատնվել; jeter (կամ semer) la ~ խուճապ առաջացնել
- panne** *f* անսարքիություն, վնասված, փչացած լինելը, վնասվածք; վթար ◊ avoir une ~, être (rester) en ~ վթարի ենթարկվել; (*փխբ.*) ճեղքվածք ունենալ, դժվարին կացության մեջ լինել; laisser en ~ դժվարին կացության մեջ թողնել, լքել; mettre en ~ շարքից հանել, փչացնել; sans ~ անխափան; tomber en ~ շարքից դուրս գալ, փչանալ
- panneau** *m* 1. ցուցատախտակ 2. վահանակ 3. պաստառ 4. որո-
- գայթ, թակարդ, ծուղակ, ցանց ◊ donner (կամ tomber) dans le ~ ծուղակն ընկնել, խաբվել  
~ indicateur ճանապարհային ցուցավահանակ  
~ d'identification տարբերիչ ցուցատախտակ  
~ d'interdiction արգելիչ նշան  
~ de jalonnement ազդանշանային պաստառ  
~ publicitaire գովազդային ցուցավահանակ  
~x électoraux նախընտրական պաստառներ՝ վահանակներ
- panser** *vt* 1. վիրակապել 2. *փխբ.* հանգստացնել, հանդարտեցնել; թեթևացնել, դարմանել (տառապանքը, վիշտը)
- panthéon** *m* պանթեոն
- pantin** *m* 1. խամաճիկ, տիկնիկ 2. *փխբ.* փոփոխամիտ՝ կամազուրկ մարդ 3. *փխբ.* անազատ մարդ, մարիոնետ (ուրիշի ձեռքին խաղալիք դարձած անձ կամ պետություն)
- papal**, *-e adj* պապական
- papauté** *f* պապություն, պապական իշխանություն
- papelard**, *-e adj* երկերեսանի, կեղծավոր, երեսպաշտ, կեղծ բարեպաշտական
- papelardise** *f* *հնգծ.* երկերեսանություն, կեղծավորություն, երեսպաշտություն, կեղծ բարեպաշտություն
- paperasse** *f* թղթի կտորտանքներ, խզբզոցներ, գրոտումներ, գրություններ, անպետք թղթեր
- paperasser** *vi* 1. թղթերը քրքրել 2. զբաղվել թուղթ մրոտելով

- paperasserie** *f* 1. թղթերի կույտ 2. թղթարարություն, թղթային քաշ-քշուկ
- paperassier**, -ère *m, f* 1. թղթարար, թուղթ մրուտող 2. քաշքշող՝ ձգձգող մարդ, բյուրոկրատ
- papier** *m* 1. թուղթ 2. կարճաժամկետ պարտամուրհակ 3. *խսկց.* թղթադրամ  $\diamond$  de faux ~s կեղծ թղթադրամներ  
~ de banque բանկային պարտամուրհակ  
~ d'identité անձնական վկայական, ինքնության հավաստագիր  
~ négociable շրջանառու պարտամուրհակ  
~ (à) en tête բլանկ
- papier-monnaie** *m* թղթադրամ
- papiers** *m pl* փաստաթղթեր  $\diamond$  vos~! ձեր փաստաթղթերը  
~ de bord նավի փաստաթղթեր  
~ commerciaux առևտրային թղթեր  
~ d'identité անձը հաստատող փաստաթղթեր  
~ de légitimation հավաստագիր  
~ personnels անձնական փաստաթղթեր  
~-valeurs արժեթղթեր
- Pâques** *m կրոն.* Չատիկ
- paquet** *m* փաթեթ (փաստաթղթերի)  
~ d'actions բաժնեթղթերի փաթեթ  
~ d'accords համաձայնագրերի փաթեթ  
~ de contrôle d'actions բաժնեթղթերի վերահսկիչ փաթեթ  
~ d'investissement ներդրումային փաթեթ  
~ de mesures միջոցառումների փաթեթ
- ~ des réformes բարեփոխումների փաթեթ
- parabolicité** *f* ալյաբանականություն
- parabolique** *adj* ալյաբանական
- parachutage** *m* անկարգելով ցած նետվելը; օդային դեսանտ
- parachute** *m* անկարգել  $\diamond$  saut en ~ ցատկ անկարգելով
- parachutiste** *m* անկարգելորդ, դեսանտային զինվոր
- parade** *f* զորահանդես, զորատես, շքահանդես, շքերթ  
~ sportive, ~ des sports մարզական շքերթ
- paradis** *m* 1. դրախտ 2. պատշգամբ (թատրոնում)  
~ bancaire «բանկային դրախտ» (բանկային արտոնությունների գոտի)  
~ fiscal «հարկային դրախտ» (ցածր հարկերով երկիր)
- paradoxal**, -e *adj* պարադոքսային, արտասովոր, տարօրինակ, տարիմաստ
- paradoxe** *m* պարադոքս, տարիմաստություն  $\diamond$  avancer (կամ soutenir) սո ~ պարադոքսային դատողություն արտահայտել
- paraétatique** *adj* կիսապետական
- parage** *m* ծագում  $\diamond$  de haut ~ բարձր ծագումով; *հեզն.* բարձր դիրք գրավող
- parages** *m pl* վայրեր, շրջաններ, երկրներ  $\diamond$  que venez-vous faire dans nos ~ ի՞նչ եք անում մեր կողմերում
- paragraphe** *m* 1. կետ, ենթաբաժին 2. պարբերություն, հատված
- paralogisme** *m* պարալոգիզմ, կեղծ հետևություն՝ եզրակացություն

**paralyser** *vt* կաթվածահար անել, անդամալույծ անել; ջլատել, կաշկանդել

**paralytic** *f* 1. կաթված, կաթվածահարություն, անդամալուծություն 2. *փիւք.* անգործունեություն, անգործություն, կաթվածահարություն; լճացում

**paraphe** *m* 1. *դվնգ.* նախաստորագրում 2. ստորագրություն՝ սկզբնատառերով (անվան ազգանվան) 3. գրիֆ, կնիք-ստորագրություն

**parapher** *vt* 1. *դվնգ.* նախնական ստորագրություն դնել 2. ստորագրել սկզբնատառերով 3. կնիք-մակագիր դնել  
~ un traité պաշտոնագիրը նախաստորագրել

**parchemin** *m* մագաղաթ; մագաղաթյա թուղթ

**parcours** *m* երթուղի, վագր; անցած ճանապարհ ◊ accident (կամ incident) de ~ անսպասելի խոչընդոտ (ծրագրի իրականացման ընթացքում և այլն); sur notre ~ մեր ճանապարհին; tenir le ~ *խսկց.* դժվարությունները հաղթահարել; դիմանալ; train de grand ~ հեռընթաց գնացք  
~ du combattant ա) *muզմ.* արգելքների գոտի, մարզանքի գրոհային գոտի բ) *փիւք.* դժվարությունների շարք

**pareillement** *adv* հավասարապես, միատեսակ կերպով, միանման՝ միևնույն ձևով

**parenté** *f* 1 ազգակցություն, ազգականություն, բարեկամություն, խնամիրություն, հարազատու-

թյուն, մերձավորություն 2. բարեկամներ, ազգուտակ 3. *փիւք.* նմանություն, մոտիկություն ◊ degré de ~ ազգակցության աստիճանը; les liens de ~ ազգակցական կապեր  
~ de deux opinions կարծիքների նմանություն  
~ spirituelle հոգեկան հարազատություն, հոգեհարազատություն

**parer** 1. *vt* հետ մղել, վանել, դիմագրավել, հակահարված տալ 2. խափանել, կասեցնել  
~ à un inconvéniént արգելքները՝ խոչընդոտները վերացնել  
~ au plus pressé զբաղվել անհետաձգելի գործերով  
~ à toute éventualité համենայնդեպս միջոցներ ձեռնարկել

**parfaire** *vt* 1. վերջացնել, ավարտել; լրացնել, ավելացնել 2. կատարելագործել  
~ son culture բարձրացնել իր կրթական մակարդակը  
~ son instruction կրթությունը ավարտել; որակավորումը բարձրացնել  
~ une somme լրացնել գումարը

**pariah state** (*անգլ.*) միջազգային հանրության կողմից մերժված, մեկուսացված պետություն

**paritaire** *adj* պարիտետային, հարաբերակցային, հավասարության, հավասարաքանակ ◊ commission ~ պարիտետային հանձնաժողով (որը կազմված է աշխատավորության և ղեկավարության ներկայացուցիչներից); des pourparlers ~s բանակցություններ հավասարության հիմունքներով

**parité** *f* 1. պարիտետ, լիակատար հավասարություն, զուգակշիռ՝ հավասար հարաբերություններ 2. համարժեքություն, պարիտետ (տարբեր երկրների արժույթների հարաբերակցություն ուկու գնահաշվով)  $\diamond$  abaisser la ~ de la monnaie իջեցնել արժույթի հարաբերակցությունը; établir une ~ համարժեքություն սահմանել; maintenir une ~ պարիտետ պահպանել; obtenir une ~ militaire ռազմական զուգակշռի հասնել

**parlement** *m* խորհրդարան, պառլամենտ  $\diamond$  dissolution du ~ խորհրդարանի լուծարում; membre du P~ խորհրդարանի անդամ

**parlementaire** *adj* 1. *դվնգ.* բանագնացի, պառլամենտյորական 2. խորհրդարանական, պառլամենտական  $\diamond$  Assemblée ~ du Conseil de l'Europe (APCE) Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ); élections ~s խորհրդարանական ընտրություններ; gouvernement ~ կառավարման պառլամենտական ձև, խորհրդարանական կառավարում; groupe ~ խորհրդարանական խումբ՝ խմբակցություն; immunité ~ պատգամավորական անձեռնմխելիություն; privilège ~ պատգամավորական արտոնություն; régime ~ կառավարման խորհրդարանական համակարգ

**parlementaire** *m* 1. *դվնգ.* բանագնաց, պառլամենտյոր (հակամարտության կողմի հրամանատարության պաշտոնական ներկայացուցիչ) 2. խորհրդարանի

անդամ, պատգամավոր, խորհրդարանական

**parlementarisme** *m* *քղք.* պառլամենտարիզմ, խորհրդարանական համակարգ

**parlementer** *vi* բանակցություններ վարել, բանակցել, պայմանավորվել, համաձայնության գալ

**parler** *vi* խոսել  $\diamond$  faculté de ~ խոսելու ունակություն, խոսողություն; les faits parlent d'eux-mêmes փաստերը ինքնին վկայում են; sans ~ de... չխոսելով... մասին; բացի, մի կողմ թողած...

~ affaires գործերի մասին խոսել  
~ en faveur de զո մեկի օգտին խոսել

~ en maître խոսել տիրական՝ հրամայական տոնով

~ au micro խոսել միկրոֆոնի առջև՝ միկրոֆոնով

~ politique քաղաքականության մասին խոսել

**parler** *m* 1. խոսելաձև, լեզու 2. բարբառ, խոսվածք  $\diamond$  avoir son franc ~ բացեիբաց խոսել ճշմարտության մասին  
~ local տեղական խոսվածք

**parloir** *m* ընդունարան

**parole** *f* 1. բառ, խոսք; ելույթ, ձայն 2. խոստում  $\diamond$  adresser la ~ à զո դիմել մեկին; avoir la ~ ձայն ստանալ, ձայն ունենալ; couper la ~ à զո ընդհատել մեկին; déga-ger զո de sa ~ ազատել մեկին իր խոստումից; demander la ~ ձայն խնդրել; donner sa ~ խոստանալ; droit de ~ ելույթ ունենալու իրավունք; homme de ~ խոսքի տեր մարդ; liberté de ~ խոսքի

- ազատություն; manquer à sa ~ խոստումը չկատարել, խոսքը չպահել; multiplier les ~s aimables հաճոյախոսություններ շռայլել; passer la ~ à զո ձայն տալ, խոսք տալ (ելույթ ունեցողին); passer des ~s aux actes խոսքից գործի անցնել; prendre la ~ ձայն խնդրել, ելույթ ունենալ; sur ~ ազնիվ խոսքի վրա; tenir (sa) ~ խոսքի տերը լինել  
 ~ d'honneur ազնիվ խոսք  
 ~s creuses դատարկ խոսքեր  
 ~s de paix խաղաղության առաջարկ, խաղաղասիրական հայտարարություններ
- parquet** *m* դատախազություն, դատախազական հսկողություն  
 ~ militaire ռազմական դատախազություն
- parrain** *m* 1. կնքահայր, քավոր 2. շեֆ, պաշտոնական հովանավոր, պետ, ղեկավար
- parrainage** *m* շեֆություն, հովանավորություն, հովանավորում ◊ comité de ~ օգնության կոմիտե; prendre en ~ հովանավորության տակ առնել
- part** *f* մաս, բաժին; մասնակցություն, մասնակցության բաժին, սեփականության բաժին, փայ ◊ avoir en ~ հասարակին ստանալ; avoir ~ à զո մասնակցել; աջակցություն ցույց տալ; être de ~ avec զո մեկի հետ բաժնետեր լինել; faire ~ de... հայտնել, ծանուցել, տեղեկացնել; lettre de faire ~ ծանուցողական նամակ, ծանուցագիր; à ~ cela բացի այդ; de la ~ de ... անունից, կողմից, հանձնարարությամբ; pour ma ~ իմ կողմից, ինչ վերաբերում է ինձ; prendre ~ à մասնակցություն ունենալ, մասնակցել; prendre ~ aux scrutins (aux votes) մասնակցել քվեարկությանը  
 ~ de bénéfice փայաբաժին  
 ~ du capital դրամազվիսի բաժին  
 ~ de fondateur սահմանադիր բաժնեթուղթ  
 ~ (sociale) դրամազվիսի փայ բաժնետիրական ընկերությունում
- partage** *m* բաժանում, բաժանելը; բաշխում, տրոհում ◊ ligne de ~ des eaux ջրբաժան; sans ~ անբաժանելիորեն, լիակատար կերպով;  
 ~ égal des voix ձայների հավասար բաժանում, ձայների հավասարություն  
 ~ des gains շահույթի բաշխում  
 ~ du monde աշխարհի բաժանում  
 ~, nouveau (repartage) աշխարհի վերաբաժանում  
 ~ de responsabilité պատասխանատվության բաժանում  
 ~ des risques հնարավոր վտանգների բաժանում  
 ~ de voix ձայների բաժանում
- partager** *vt* 1. բաժանել, կիսել 2. մեկի կարծիքը, զգացմունքները կիսել  
 ~ l'opinion de զո մեկի կարծիքը կիսել
- partenaire** *m, f* գործընկեր  
 ~ commercial առևտրական գործընկեր  
 ~s économiques et financiers տնտեսական և ֆինանսական գործընկերներ



~s sociaux unցիալական գործընկերներ (բանակցություններին մասնակցող ձեռնարկատերերի և աշխատավորների ներկայացուցիչները)

~s de toute première importance առաջնակարգ գործընկերներ

**partenarial**, -e *adj* գործընկերային ◊ négociations ~es գործընկերային բանակցություններ (բանակցություններ ձեռնարկատերերի, ձեռնարկության ղեկավարների և աշխատավորության ներկայացուցիչների միջև)

**partenariat** *m* համագործակցություն, գործընկերություն; մասնակցություն բանակցություններին

~ stratégique ռազմավարական գործընկերություն

**parti** *m* 1. *քղք.* կուսակցություն 2. որոշում, վճիռ 3. *հնգծ.* օգուտ, շահ ◊ admettre au ~ ընդունել կուսակցության մեջ; appartenance au ~ կուսակցական պատկանելություն; carte du ~ կուսակցական տոմս; créer (կամ fonder, constituer) un ~ ստեղծել՝ հիմնել՝ կազմակերպել կուսակցություն; esprit de ~ կուսակցականություն (գիտության, գրականության, արվեստի մեջ); homme de ~ քաղաքական գործիչ, քաղաքագետ; interdire (կամ dissoudre) un ~ արգելել (կամ լուծարել) կուսակցությունը; membre du ~ կուսակցության անդամ; militant du ~ կուսակցական աշխատող, ակտիվիստ; de ~ pris դիտավորյալ կերպով, դիտմամբ, կանխա-

մտածված կերպով; prendre un ~ որոշում ընդունել; se ranger (կամ se mettre) du ~ de զո կանգնել՝ անցնել մեկի կողմը; sans ~ pris անաչառորեն, անկողմնակալ կերպով; système des ~s կուսակցական քաղաքական համակարգ; système du ~ unique միակուսակցական քաղաքական համակարգ, միակուսակցականություն; tirer ~ de զգ հնչ-որ բանից օգուտ քաղել

~ conservatif պահպանողական կուսակցություն

~ politique քաղաքական կուսակցություն

~ au pouvoir կառավարող, իշխող կուսակցություն

~ pris կանխակալ կարծիք; համառություն

~s frères եղբայրական կուսակցություններ

**partial**, -e *adj* աչառու, կողմնակալ, կողմնապահ; կանխակալ ◊ décision ~e կողմնակալ՝ անարդար որոշում; déclaration ~e աչառու՝ ոչ օբյեկտիվ հայտարարություն

**partialement** *adv* աչառու կերպով, կողմնապահորեն, կողմնապահությամբ

**partialité** *f* աչառություն, կողմնապահություն, կողմնակալություն, կանխակալություն

~ de la cour դատարանի կողմնակալություն

**participation** *f* 1. մասնակցություն, մասնակից լինելը 2. *քղք.* մասնակցություն կառավարմանը; հսկողության իրավունք ղեկավար մարմնի և նրա ընդունած

- որոշումների նկատմամբ 3. *տնտ.*  
մասնաբաժին, փայ  
~ aux acquêts *հրվք.* մասնակցու-  
թյուն շահույթի մեջ (իրենց հա-  
մատեղ կյանքի ընթացքում ա-  
մուսիններից մեկի իրավունքը  
մյուսի եկամտի կեսի նկատ-  
մամբ)  
~ aux bénéfices մասնակցություն  
շահույթում  
~ consciente գիտակցված, գի-  
տակից մասնակցություն
- participer** *vi* մասնակցել, մասնակ-  
ցություն ունենալ
- participant**, -e *m, f* 1. մասնակից 2.  
*p/* անդամ երկրներ  
~ direct des entretiens բանակցու-  
թյունների անմիջական մասնա-  
կից  
~ spécial բանակցությունների  
մասնակից՝ առանց վճռական  
ձայնի իրավունքի՝ հատուկ կար-  
գավիճակով  
~s au SME (Système Monétaire  
Européen) ԵԱՀ (Արժույթի եվրո-  
պական համակարգ)-ի անդամ  
երկրներ
- particulier**, -ère *adj* 1. մասնավոր,  
անձնական, ոչ հասարակական  
2. հատուկ, առանձնակի 3. ա-  
ռանձնահատուկ, յուրահատուկ,  
բացառիկ ◊ cas ~ մասնավոր  
դեպք; conversation ~ère մասնա-  
վոր զրույց; intérêt ~ անձնական  
շահագրգռվածություն; qualités  
~ères առանձնահատուկ հատ-  
կանիչներ; secrétaire ~ անձնա-  
կան քարտուղար
- particulier** *m* 1. մասնավոր անձ;  
քաղաքացի 2. մանրամասնու-  
թյուններ, մանրամասներ ◊ en ~  
առանձնապես, հատկապես;  
մասնավորապես
- particulièrement** *adv* 1. հատկապես,  
առանձնապես 2. մասնավորա-  
պես
- partie** *f* 1. մաս 2. բանակցային  
կողմ, մասնակից (համաձայնու-  
թյան, գործընթացի) ◊ avoir af-  
faire à forte ~ գործ ունենալ ուժեղ  
հակառակորդի հետ; c'est ~  
remise այս գործը հետաձգվել է  
հաջորդ անգամվան; être ~ à...  
մասնակցել ինչ-որ բանի; faire ~  
de... մաս կազմել; մասնակցել;  
faire ~ du territoire étatique պե-  
տության կազմի մեջ մտնել; for-  
mer ~ intégrante անկապտելի՝  
անբաժանելի մաս կազմել; en  
grande ~ մեծ մասամբ; en ~ մա-  
սամբ, մասնակիորեն; prendre  
qn à ~ մեղադրել մեկին; հարձակվել  
մեկի վրա; se porter ~ civile հան-  
դես գալ, որպես քաղաքացիա-  
կան հայցվոր; sans ~ անբաժա-  
նելիորեն, լիակատար կերպով  
~ adverse հակառակ կողմ  
~ en cause այն կողմը, որին դա  
վերաբերում է  
~ civile *հրվք.* քաղաքացիական  
հայցատեր, հայցվոր  
~ à un différend վիճաբանող կողմ  
~ intégrante բաղկացուցիչ մաս;  
անկապտելի մաս  
~ plaignante հայցվոր  
~ publique պետական մեղադրող  
~s belligérantes պատերազմող  
կողմեր  
~s contractantes պայմանավոր-  
վող կողմեր

- ~s à la Déclaration des Quatre Nations Չորս Տերությունների հռչակագրի մասնակիցներ  
 ~s intéressées շահագրգիռ կողմեր
- partiel**, -le *adj* մասնակի; առանձին, եզակի ◊ chômeage ~ մասնակի գործազրկություն
- partiellement** *adv* մասնակիորեն
- partir** *vi* 1. մեկնել, ուղևորվել, ճանապարհ ընկնել 2. դուրս թռչել (արկի, գնդակի մասին), հնչել (կրակոցի մասին) 3. սկիզբ առնել, բխել, ծագել 4. ելնել, ելակետ ընդունել, հիմք ընդունել ◊ faire ~ պայթեցնել (ական և այլն); à ~ de... սկսած; à ~ d'aujourd'hui այսօրվանից սկսած ~ en découverte հետախուզման գնալ ~ d'un principe որևէ սկզբունքից ելնել
- partisan**, -e *adj* կանխակալ ◊ esprit ~ անարդարություն, կանխակալություն; la lutte ~e խմբավորումների պայքար; passions ~es քաղաքական կրքեր
- partisan**, -e *m, f* 1. կողմնակից, կուսակից, համախոհ, հետևորդ 2. պարտիզան, հայդուկ ◊ guerre de ~s պարտիզանական պատերազմ ~ de la paix խաղաղության կողմնակից
- parvenir** *vi* 1. հասնել, ձեռք բերել, ստանալ 2. բարձր դիրքի հասնել, արժանանալ (պատվի, փառքի) ◊ faire ~ ուղարկել, առաքել; տեղ հասցնել; faire ~ des nouvelles նորություններ հայտնել; il nous est parvenu que... մեզ հայտնի դարձավ, որ... ~ à un accord համաձայնության գալ ~ au but նպատակին հասնել ~ au pouvoir իշխանության հասնել
- pas** *m* քայլ ◊ avoir le ~ sur զո մեկի նկատմամբ առավելություն ունենալ, մեկի նկատմամբ գերզանցություն ունենալ; faire un faux ~ սխալ քայլ անել, վրիպել, սխալվել; mauvais ~ դժվարանցանելի տեղ; դժվարին կացություն; mettre au ~ *փ/սք.* խելքի բերել, խելք սովորեցնել
- passage** *m* 1. անցում, անցնելը 2. անցատեղ, անցուղի ◊ donner (կամ livrer) ~ à զո ճանապարհ տալ, ճանապարհ բացել ~ interdit անցումն արգելված է, անցում չկա ~ piéton անցում հետիոտների համար ~ souterrain ստորգետնյա անցում, գետնուղի
- passager**, -ère *adj* անցողիկ, ժամանակավոր, կարճատև, վաղանցիկ
- passation** *f* 1. պայմանագրի կնքում, համաձայնություն 2. փոխանցում ~ d'un contrat պայմանագրի կնքում ~ des pouvoirs լիազորությունների փոխանցում
- passavant** *m* մաքսային անցագրային վկայական
- passe** *f* անցաթուղթ ◊ mot de ~ նշանաբառ, անցախոսք

- ~ officielle պաշտոնական ան-  
ցաթուղթ
- passé** *m* անցյալը, անցած-գնացածը, եղելություն  $\diamond$  comme par le ~ ինչպես նախկինում; dans le ~ անցյալում  
~ révolu անցած-գնացած անց-  
յալ
- passé-droit** *m* արտոնություն՝ օրեն-  
քի զանցառումով
- passoport** *m* անձնագիր  $\diamond$  demander  
ses ~s պաշտոնապես պահանջել  
անձնագրեր (դիվանագետի մա-  
սին)  
~ diplomatique դիվանագիտա-  
կան անձնագիր  
~ à l'étranger, ~ international  
արտասահմանյան անձնագիր  
~s Nansen Նանսենի անձնագրեր  
(սահմանվել է 1922 թ. Ազգերի  
Լիգայի կողմից)
- passer** *vt, vi* 1. անցնել, գնալ, հե-  
տևում թողնել 2. գնալ, ընթանալ  
3. անցնել, անցյալ դառնալ 4.  
անցնել, դադարել, մոռացվել,  
վերանալ 5. անցնել, ընդունվել 6.  
կտրել անցնել, տարածություն  
անցնել 7. կնքել, ձևակերպել  
(պայմանագիր, գործարք)  $\diamond$   
laisser ~ թույլ տալ անցնելու; se ~  
տեղի ունենալ, կատարվել; se ~  
de tout secours գլուխը պահել,  
ապրել, բավարարվել առանց  
որևէ օգնության  
~ des accords à long terme  
երկարաժամկետ համաձայնա-  
գիր կնքել  
~ du blanc au noir մի ծայրահե-  
ղությունից մյուսին անցնել  
~ pour certain հասնարվել անվի-  
ճելի, անկասկածելի, անտարա-  
կույս  
~ une chose sous silence լռության  
մատնել  
~ le contrat պայմանագիր կնքել  
~ du côté de զո մեկի կողմն  
անցնել, մեկի կարծիքը կիսել  
~ dans les mœurs սովորույթների  
մեջ մտնել  
~ à l'offensive հարձակման  
անցնել  
~ outre à... հաշվի չառնել; ուշադ-  
րություն չդարձնել, կողքով  
անցնել  
~ outre aux questions importantes  
չրջանցել կարևոր հարցերը  
~ une revue շքերթն ընդունել  
~ en revue les actions de զո քննել  
մեկի գործողությունները  
~ sur qch ինչ-որ բանի կողքով  
անցնել, ինչ-որ բան հաշվի չառ-  
նել  
~ par la tête մտքով անցնել  
~ par toutes les épreuves բոլոր  
փորձությունների միջով անցնել  
~ les troupes en revue զորատես  
անցկացնել
- passible** *adj* ենթակա (վճարման,  
հարկադրման)  
~ d'une amende տուգանքի ենթա-  
կա  
~ d'arrestation ձերբակալման են-  
թակա
- passif**, -ve *adj* անգործունյա, ան-  
տարբեր, չեզոք  $\diamond$  attitude ~ ve  
անտարբեր վերաբերմունք;  
citoyen ~ *սլամ*. ծայնի իրավուն-  
քից զուրկ քաղաքացի; obéis-  
sance ~ve կույր հնազանդություն;  
zone ~ve չպաշտպանվող գոտի

- patent**, -e *adj* ակնհայտ, ակներև, բացահայտ ◊ il est ~ ակնհայտ է; lettres ~s *սյուն*. շնորհագիր, պատենտ
- patente** *f* 1. արտոնագիր, վկայագիր 2. առևտրասարդյունաբերական հարկ ◊ accorder une ~ արտոնագիր տալ; travailler une ~ արտոնագիր պատրաստել
- paternité** *f* 1. հայրություն 2. *փիլ*. հեղինակություն, հեղինակ լինելը ◊ recherche en ~ հայրության հաստատում
- patienter** *vi* համբերել, համբերությամբ զինվել
- pâtir** *vi* 1. *հնգծ*. տառապել 2. ողորմելի գոյությունը քարշ տալ, խղճուկ ապրել ◊ les affaires pâtissent գործերը վատ են; գործերը լճացած վիճակում են
- patriarche** *m* 1. *եկղ*. պատրիարք, հայրապետ, հովվապետ 2. նահապետ, գերդաստանի ավագ, տոհմապետ  
~ œcuménique տիեզերական պատրիարք
- patrie** *f* հայրենիք, ծննդավայր ◊ abandon de la ~ հայրենաթողություն, հայրենալքություն; amour de la ~ սեր դեպի հայրենիքը; connaissance de la ~ հայրենագիտություն; défense de la ~ հայրենապաշտություն; dévoué(e) à la ~ հայրենամովեր; favorable à sa ~ հայրենամաաստ; mère Patrie մայր հայրենիք; quitter sa ~ հայրենիքը լքել, հայրենիքից հեռանալ; se dévouer à sa ~ նվիրվել հայրենիքին; servir sa ~ ծառայել հայրենիքին; traître à sa ~ հայրենադավ
- patrimoine** *m* 1. ժառանգություն 2. *իրվք*. սեփականություն, գույք, ունեցվածք 3. տոհմական կալվածք  
~ collectif ընդհանուր սեփականություն  
~ héréditaire ժառանգած գույք  
~ immobilier անշարժ գույք  
~ national ազգային սեփականություն  
~ nationalisé պետական սեփականություն  
~ personnel անձնական սեփականություն  
~ public պետական գույք  
~ social իրավաբանական անձի գույք
- patriote** *m, f* հայրենասեր  
~ ardent, ~ fervent կրակոտ հայրենասեր
- patriotique** *adj* հայրենասիրական ◊ guerre ~ հայրենասիրական պատերազմ
- patriotisme** *m* հայրենասիրություն ◊ faire preuve de ~ հայրենասիրություն դրսևորել
- patron** *m* 1. հովանավոր, խնամակալ, պաշտպան 2. ձեռնարկատեր, ղեկավար ◊ petit ~ փոքր ձեռնարկատեր
- patronage** *m* 1. հովանավորություն, հովանավորում, պաշտպանություն, խնամակալություն 2. երեխաների, երիտասարդության հանգստի հարցերով զբաղվող կազմակերպություն ◊ comité de ~ խմբագրական խորհուրդ (գիտական ամսագրի); moniteur de ~ (երիտասարդության) հանգրս-

տի կազմակերպիչ, դաստիարակ  
**patronal**, -e *adj* ձեռնարկատիրական ◊ syndicat ~ ձեռնարկատերերի միություն  
**patronat** *m* ձեռնարկատերերի միավորում; հովանավորություն ◊ le grand ~ խոշոր ձեռնարկատերեր  
**patrouille** *f* 1. դետր, պարեկ, պահակախումբ 2. հսկողական շրջագայություն, պարեկություն ◊ aller en ~, être de ~ պարեկության գնալ, պարեկություն անել ~ de chasseurs կործանիչների ջոկատ (խումբ)  
 ~ de combat մարտական դետր  
 ~ de contact կապի (հաղորդակցության) պահակախումբ  
 ~ de reconnaissance հետախուզական դետր  
**patrouiller** *vi* պարեկություն անել  
**patrouilleur** *m* 1. դիտակալ, դիտապահակ 2. դիտանավ, պահականավ  
**patte** *f*: bat les ~s! ձեռքերդ հեռու; coup de ~ խայթող քննադատություն  
**paupérisation** *f* պաուպերիզացիա, ընչազրկում, աղքատացում  
**paupérisme** *m* պաուպերիզմ, ընչազրկում, աղքատացում  
**pauvreté** *f* 1. ծայրահեղ աղքատություն, ընչազրկություն, չքավորություն, թշվառություն 2. խղճություն, աղքատիկություն, սուղություն, նվազություն  
 ~ d'esprit մտքի (խելքի) աղքատիկություն  
**pavé** *m* սալարկուղի, սալահատակ փողոց; փողոց ◊ descendre sur le

~ դուրս գալ փողոց (ցույցի, գործադուլի և այլն); être sur le ~ մնալ անօթևան, առանց աշխատանքի; mettre sur le ~ փողոց շարտել, սնանկացնել; tenir le haut du ~ առաջինը լինել, գլխավորել, առաջնություն ունենալ  
**pavillon** *m* 1. տաղավար; փոքր առանձնատուն 2. դրոշ ◊ abaisser le ~ դրոշն իջեցնել; bateau battant le ~ marchand առևտրական դրոշի ներքո ընթացող նավ; hisser le ~ դրոշը բարձրացնել; mettre le ~ bas դրոշն իջեցնել; mettre le ~ en berne դրոշակը խոնարհել; sous ~ de guerre պատերազմական դրոշի ներքո; sous ~ parlementaire խորհրդարանական դրոշի ներքո  
**pavoisement** *m* զարդարում, դրոշակներով զարդարելը  
**pavoiser** *vt* դրոշներով զարդարել  
**payable** *adj* վճարելի, վճարման ենթակա  
 ~ à temperament տարածամկետով, մաս-մաս վճարելի  
**paye** *f* տես` paie  
**payement** *m* տես` paiement  
**payer** *vt* վճարել, վարձատրել, մարել ◊ avoir à ~ ենթակա է վճարման  
 ~ d'audace շահել, հաջողության հասնել` հանդգնությամբ  
 ~ d'avance կանխապես վճարել  
 ~ ses dettes պարտքերը մարել  
 ~ un supplément լրացուցիչ վճարել  
**pays** *m* 1. երկիր 2. տարածք, երկրամաս, մարզ 3. հայրենիք ◊ gagner du ~ առաջ ընթանալ; haut ~ լեռնաշխարհ, բարձրավան-

դակ; mal du ~ հայրենիքի կարոտ, հայրենաբաղձություն; plat ~ հարթավայր, դաշտավայր; du ~ տեղացի, տեղի; retourner au ~ հայրենիք վերադառնալ; voir du ~ ճանապարհորդել  
 ~ d'accueil ընդունող երկիր  
 ~ bénéficiaire (de) օգնություն ստացող, շահառու երկիր  
 ~ consommateur, ~ de consommation սպառող երկիր  
 ~ en développement զարգացող երկիր  
 ~ donateur դոնոր երկիր  
 ~ évolué տնտեսապես զարգացած երկիր  
 ~ exportateur արտահանող երկիր  
 ~ importateur ներմուծող երկիր  
 ~ industriel զարգացած արդյունաբերական երկիր  
 ~ natal հայրենիք, հայրենի եզերք  
 ~ d'origine ծագման երկիր  
 ~ producteur արտադրող երկիր  
 ~ de séjour մնալու, ապրելու երկիր  
 ~ signataire անդամ երկիր (որևէ կազմակերպության)  
 ~ arriérés հետամնաց երկրներ  
 ~ asservis ստրկացված երկրներ  
 ~ assujettis նվաճված երկրներ  
 ~ coloniaux գաղութային երկրներ  
 ~ de la communauté ԵՏՀ-ի անդամ երկրներ  
 ~ dépendants կախյալ երկրներ  
 ~ développés զարգացած երկրներ  
 ~ économiquement faibles, ~ sous-développés թույլ զարգացած երկրներ

~ frères եղբայրական երկրներ  
 ~ les moins avancés (PMA) պակաս զարգացած երկրներ  
 ~ partenaires անդամ երկրներ (որևէ կազմակերպության)  
 ~ sous mandate ենթամանդատային երկրներ  
 ~ sous tutelle խնամակալության տակ գտնվող երկրներ  
 ~ du tiers monde երրորդ աշխարհի երկրներ  
 ~ en voie de développement (P.V.D.) զարգացող երկրներ  
**paysage** *m* 1. բնապատկեր, լանդշաֆտ 2. *փ/իւք.* իրադրություն; համայնապատկեր  
 ~ politique քաղաքական իրադրություն, քաղաքական կյանք  
**paysan**, -ne *m, f* գյուղացի, գեղջուկ  
**péage** *m* 1. մայրուղու կամ կամրջի մաքսատուրք 2. տարանցիկ վճարում  
**pêche** *f* 1. ձկնորսություն 2. ձկնորսության իրավունք  
 ~ côtière ափամերձ ձկնորսություն  
**pêché** *m* մեղք; հանցանք  
 ~ mortel մահացու մեղք  
 ~ mignon փոքրիկ մեղք, զանցանք  
**pêcher** *vi* մեղք գործել  
**pêcher** *vt* ձուկ որսալ  
**pécule** *m* 1. փոքրիկ խնայողություն 2. դրամական նպաստ  
**pécuniaire** *adj* դրամական ◊ secours ~s դրամական օգնություններ; amende ~ դրամական տուգանք  
**peine** *f* 1. պատիժ 2. աշխատանք, գործ 3. դժվարություն, խոչընդոտ, նեղություն 4. տառապանք,

տանջանք ◊ abaisser (կամ adoucir, atténuer, mitiger, réduire) la ~ պատիժը մեղմացնել; accomplir une ~ պատիժ կրել; appliquer (կամ infliger) une ~ պատիժ կիրառել; commuer la ~ պատիժը փոփոխել, մեղմացնել; dispenser (կամ exempter) de ~ պատժից ազատել; donnez-vous la ~ de... բարի եղեք, հաճեցեք; encourir une ~ պատժի ենթարկվել; être bien en ~ դժվարություններ կրել; exécuter une ~ պատիժը կրել; fixer une ~ պատիժ սահմանել, նշանակել; à grand- ~ մեծ դժվարությամբ; homme de ~ սևագործ բանվոր; à ~ հազիվ, հազիվհազ; prononcer la ~ պատիժ սահմանել; purger la ~ պատիժ կրել; requérir la ~ պահանջել պատժի կիրառում; sans ~ առանց դժվարության; se donner beaucoup de ~ շատ աշխատել, տրնել; sous ~ de châtiment պատժվելու սպառնալիքի տակ; subir la ~ պատիժ կրել  
 ~ accessoire զուգընթաց պատիժ  
 ~ afflictive տանջալից պատիժ  
 ~ capitale, ~ de mort, suprême մահապատիժ  
 ~ complémentaire լրացուցիչ պատիժ  
 ~ corporelle մարմնական պատիժ  
 ~ correctionnelle ուղղիչ պատիժ  
 ~ criminelle պատիժ քրեական հանցագործության համար  
 ~ pécuniaire դրամական տույժ  
 ~ perdue անօգուտ աշխատանք  
 ~ de police ոստիկանական պատիժ (տույժ, կարճատև կալանք)

~ de substitution պատժի փոխարինում հանրօգուտ աշխատանքով, արտաքսմամբ)  
 ~ s disciplinaires կարգապահական տույժեր

**péjoratif**, -ve *adj* նվաստացուցիչ, ստորացուցիչ, արհամարհական, քամահրական

**pékinois**, -e *adj* Պեկինի, պեկինյան

**pellicule** *f* 1. մաշկ, բարակ թաղանթ, նրբամաշկ; բարակ շերտ 2. լուսանկարչական ժապավեն; կինոժապավեն

~ impressionnée նկարահանված ժապավեն

~ vierge մաքուր ժապավեն

**peloton** *m* 1. *ռազմ.* դասակ 2. խումբ (մրցույթի մասնակիցների) ◊ recoller au ~ հասնել մյուսներին; s'échapper du ~ հեռ մնալ խմբից  
 ~ d'exécution գնդակահարության համար նշանակված դասակ  
 ~ (d'instruction) ուսումնական ստորաբաժանում

~ de punition, ~ de discipline կարգապահական դասակ, պատժադասակ

~ de queue հետմնացողները

~ de tête գլխավորող խումբ

**pénal**, -e *adj* քրեական ◊ clause ~e տուժավճարի պայմանը; code ~ քրեական օրենսգիրք; code de procédure ~e քրեական դատավարության օրենսգիրք; droit ~ քրեական իրավունք

**pénalement** *adv* քրեորեն

~ responsable քրեորեն պատժելի; քրեական

պատասխանատվություն կրող

**pénalité** *f* պատժամիջոց, պատիժ;



տուգանք, տուժավճար  
 ~ de retard տուժավճար (տուգանք ուշացման համար)  
 ~s financières ֆինանսական պատժամիջոցներ

**pendaison** *f* կախաղան

**pendant**, -e *adj* 1. կախված, կախ ընկած, կախովի 2. որոշման սպասող, անավարտ  $\diamond$  sa cause est encore ~e նրա գործը դեռ հետաքննված չէ (դատարանի կողմից); négociations ~es ընթացող բանակցություններ; question ~e լուծում պահանջող հարց

**pendant** *m* համապատասխանություն, միևնույն իրերից երկու հատ, զույգ, զույգ առարկա  $\diamond$  faire ~ համապատասխան լինել; հարմար գալ

**pénétrant**, -e *adj* 1. խորաթափանց, խորատես 2. հուզիչ, սրտառույզ  $\diamond$  esprit ~ խորաթափանց միտք; discours ~ համոզիչ ելույթ՝ խոսք

**pénétration** *f* 1. թափանցում, ներթափանցում, ներդրում, ներխուժում 2. խորամուխ լինելը; խորաթափանցություն  
 ~ des concurrents մրցակիցների ներխուժում  
 ~ culturelle մշակութային ներթափանցում

**pénétrer** *vi, vt* 1. թափանցել, մտնել, ներս մտնել, սողոսկել, մուտք գործել, ներխուժել 2. խորապես հուզել 3. հասու լինել, ըմբռնել, հասկանալ  $\diamond$  se ~ համակվել, տոգորվել, համոզվել; se ~ d'une vérité ճշմարտության մեջ համոզվել  
 ~ les desseins de զո մեկի

մտադրությունների մեջ մտնել  
 ~ un mystère գաղտնիքի մեջ թափանցել, գաղտնիքը կռահել

**péninsule** *f* թերակղզի

**pénitencier** *m* ուղղիչ գաղութ; ռազմական տաժանավայր, տաժանակրություն

**pensée** *f* 1. միտք, մտածողություն 2. խոհ, մտորում 3. կարծիք, դատողություն 4. ծրագիր, միտք, դիտավորություն, մտադրություն, ենթադրություն  $\diamond$  avoir la ~ de partir մեկնելու մտադրություն ունենալ; deviner la ~ de զո մեկի միտքը գուշակել; dire sa ~ կարծիք հայտնել; dans la ~ de ... մտադրությամբ; libre ~ ազատամտություն, ազատախոսություն; manière de ~ մտածելակերպ; perdu dans ses ~s ինքն իր մեջ խորասուզված  
 ~ compulsive պարտադրված մտածողություն  
 ~ politique actuelle ժամանակակից քաղաքական մտածողություն  
 ~s détachées մտքերի կտորտանքներ, կցկտուր մտքեր

**penser** 1. *vi* մտածել, խորհել, դատել, խորհրդածել 2. *vt* մտադրվել; կարծել, ենթադրել, համարել; հուսալ  $\diamond$  cela donne à ~ սս մտածելու, խորհրդածությունների տեղիք է տալիս; sans ~ à mal առանց չար դիտավորության  
 ~ tout bas լուռ մտածել  
 ~ tout haut մտածել բարձրաձայն

**pension** *f* 1. կենսաթոշակ, թոշակ 2. վճար՝ շենքի և սննդի համար 3. գիշերօթիկ  $\diamond$  bénéficiaire d'une

(կամ *toucher une*) ~ կենսաթոշակ ստանալ; *fixer une* ~ կենսաթոշակավորել; *mettre en* ~ գիշերօթիկում տեղավորել; *prendre une chambre sans* ~ սենյակ վարձել առանց սննդի; *verser une* ~ կենսաթոշակ տալ  
 ~ *alimentaire* ալիմենտ, ապրուստադրամ  
 ~ *de famille* ընտանեկան թոշակ  
 ~ *de guerre* պատերազմի հաշմանդամի թոշակ, զոհվածի կնոջ թոշակ  
 ~ *d'invalidité* հաշմանդամության՝ անաշխատունակության թոշակ  
 ~ *de retraite*, ~ *de vieillesse* ծերության կենսաթոշակ  
 ~ *viagère* ցմահ կենսաթոշակ

**Pentagone** (le) Պենտագոն, ԱՄՆ-ի պաշտպանության նախարարություն

**pénurie** *f* 1. պակասություն, թերություն, դեֆիցիտ 2. աղքատություն, ծայրահեղ կարիք  
 ~ *d'argent* դրամի պակասություն, դրամի արժեզրկում  
 ~ *de main d'oeuvre* աշխատուժի պակասություն  
 ~ *de ressources* պաշարների պակասություն

**perçant**, -e *adj* 1. թափանցող, ծակող, ճեղքող անցնող 2. կտրուկ, սուր 3. խորաթափանց *◇ esprit* ~ խորաթափանց միտք

**percée** *f* *փխբ.* թռիչք, առաջընթաց, զարգացում, հաջողություն, դժվարությունների հաղթահարում  
 ~ *politique* քաղաքական մեծ հաջողություն  
 ~ *technologique* տեխնոլոգիա-

կան առաջընթաց

**perception** *f* 1. ընկալում, ընկալունակություն 2. հարկում, գանձում ~ *des annuités* պարբերական վճարումների գանձում  
 ~ *de commission* միջնորդավճարի գանձում  
 ~ *des impôts* հարկերի գանձում  
 ~ *nette de l'autodétermination* ինքնորոշման հստակ ընկալում

**perdre** *vt* 1. կորցնել, զրկվել ինչ-որ բանից; ձեռքից բաց թողնել, փախցնել 2. կործանել, վնասել 3. տանուլ տալ, պարտվել *◇ se* ~ կորչել, անհետանալ; իրեն կորցնել; կործանվել, մեռնել, խորտակվել; *se* ~ *en conjectures* ենթադրություններից զուխը կորցնել; *se* ~ *dans les réflexions* մտածումների մեջ խորատուգվել

~ *connaissance* գիտակցությունը կորցնել  
 ~ *contenance* շփոթվել, զուխը կորցնել, իրեն կորցնել, շվարել  
 ~ *le monopole* կորցնել մենաշնորհային դիրքը  
 ~ *l'occasion* առիթը բաց թողնել  
 ~ *dans l'opinion publique* կորցնել հասարակական կարծիքը  
 ~ *un process* գործը տանուլ տալ, անհաջողություն կրել  
 ~ *perdre qn de réputation* վնաս տալ մեկի հեղինակությանը  
 ~ *du terrain* նահանջել; առավելությունը կորցնել

**perdu**, -e *adj* մեռած, սպանված, կորստի մատնված; կորած, անհետացած; հեռավոր; *fonds* ~ *s* չվերադարձված գումարներ; *à*

fonds ~s անվերադարձ  
**péremption** *f* գործի կարճում վաղեմության պատճառով ◊ tomber en ~ ուժը կորցնել  
**péremptoire** *adj* որոշիչ, անառարկելի; անբողոքարկելի, վերջնական, բացարձակ ◊ argument ~ անառարկելի փաստարկ; déclaration ~ կտրուկ հայտարարություն; exception ~ *հրվք.* բացարկ՝ ժամկետը լրանալու կապակցությամբ (հայց տալու)  
**péréquation** *f* համամասնական հարկադրում  
**perfectionnement** *m* կատարելագործում, կատարելագործելը, կատարելագործվելը; լավացում, բարելավում, բարելավելը, լավացնելը ◊ cours de ~ կատարելագործման դասընթացներ ~ professionnel բարձարգույն որակավորում  
**perfidie** *adj* ուխտադրուժ, նենգ, դավադիր, երդմնազանց, վտանգավոր, անհուսալի ◊ de ~s promesses կեղծ խոստումներ  
**perfidie** *f* ուխտադրություն, նենգություն, դավաճանություն, երդմնազանցություն  
**peril** *m* վտանգ, վտանգավորություն ◊ arrêté de ~ որոշում վթարային շենքի էվակուացիայի մասին; mettre en ~ վտանգի ենթարկել; au ~ de ... վտանգավոր... համար; il y a ~ en la demeure գործը չի կարելի հետաձգել; à ses risques et ~s իր պատասխանատվությամբ  
**périmé**, -e *adj* 1. ժամկետանց, հնացած 2. *հրվք.* անվավեր, ուժը

կորցրած ◊ des notions ~es հնացած հասկացություններ  
**périmé** (se) *v.pr.* *հրվք.* ժամկետանց լինել; ուժը կորցնել, անվավեր դառնալ ◊ laisser ~ ժամկետն անցկացնել, ուշացնել  
**périr** *vi* ոչնչանալ, մեռնել, կործանվել, խորտակվել, կորչել, կորստի մատնվել, փչանալ ◊ faire ~ ոչնչացնել, կործանել  
**période** *f* շրջան, ժամանակաշրջան, ժամանակամիջոց; փուլ; աստիճան  
 ~ de base նախնական ժամանակաշրջան  
 ~, courte կարճ ժամանակամիջոց  
 ~ de crise ճգնաժամային ժամանակաշրջան  
 ~ d'épreuve փորձնական շրջան  
 ~, longue երկար ժամանակամիջոց  
 ~ quinquennale հնգամյակ  
 ~ septennale յոթամյակ  
 ~ transitoire, ~ de transition անցումային շրջան, անցման ժամանակաշրջան  
**périodique** *m* պարբերական մամուլ  
**permanence** *f* 1. մշտականություն, անփոփոխություն, մնայունություն, մշտատևություն, հարատևություն, անընդհատություն 2. մշտական հերթապահություն 3. հերթապահ շենք ◊ l'assemblée s'est déclarée en ~ միստում հայտարարվեց, որ այն կշարունակի իր աշխատանքը մինչև վերջնական որոշման ընդունումը; assurer une ~, être de ~ հերթապահել; le Conseil se trouve en ~

Խորհուրդը անընդհատ նիստ է գումարում; *commission de* ~ նիստերի գումարման մշտական հանձնաժողով; *en* ~ մշտապես, անընդմեջ; *être de* ~ հերթապահել; *représentant* ~ մշտական ներկայացուցիչ; *se trouver* (կամ *siéger*) *en* ~ նիստ անել առանց ընդմիջման; *tenir sa* ~ հերթապահություն անցկացնել  
 ~ *aérienne* մշտական օդային դետոք  
 ~ *électorale* ընտրական տեղամաս

**permanent**, -e *adj* մշտական, անընդհատ, անփոփոխ, մնայուն, միշտ գործող, երկարաժամկետ ◊ *Cour Permanente de Justice Internationale* (CPIJ) Միջազգային մշտական դատարան; *non* ~ ոչ մշտական; *mission* ~e մշտական առաքելություն՝ ներկայացուցչություն; *membre* ~ մշտական անդամ; *représentant* ~ à l'O.N.U. ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ; *secrétaire* ~ մշտական քարտուղար; *traité* ~ անժամկետ պայմանագիր

**permis** *m* գրավոր թույլտվություն, անցաթուղթ, անցագիր; վկայական (օտարերկրացիների համար) ◊ *apurement d'un* ~ անցաթղթի, վկայականի ստուգում  
 ~ *de circuler* երթևեկության իրավունքի վկայական  
 ~ *de circulation* (*gratuite*) (անվճար) երթևեկության իրավունք; անվճար երթևեկության տոմս  
 ~ *de conduire* վարորդական վկայական

~ *d'entrée* մուտքի թույլտվություն  
 ~ *d'exportation* արտահանման թույլտվություն  
 ~ *d'importation* ներմուծման թույլտվություն  
 ~ *officiel* պաշտոնական թույլտվություն  
 ~ *de séjour* անձնագիր  
 ~ *de sortie* ելքի թույլտվություն

**permissif**, -ive թույլատրելի, թույլատրող, հանդուրժելի, տանելի ◊ *attitude* ~ve հանդուրժողականություն; *société* ~ve հանդուրժող հասարակություն

**permission** *f* 1. թույլտվություն, թույլատրություն 2. *ռազմ.* զինծառայողի կարճաժամկետ արձակուրդ ◊ *en* ~ արձակուրդում; *sur* ~ *spéciale* հատուկ թույլտվությամբ; *titre de* ~ *ռազմ.* արձակման վկայական, թուղթ; *venir en* ~ արձակուրդ գալ  
 ~ *de détente* կարճաժամկետ արձակուրդ

**permutation** *f* տեղափոխություն ծառայության գծով  
 ~ *pour convenances personnelles* տեղափոխություն սեփական ցանկությամբ  
 ~ *de gré à gré* տեղափոխում փոխադարձ համաձայնությամբ

**péroration** *f* ելույթի եզրափակիչ մասը

**pérorer** *vi* շատախոսել, շաղակրատել, ճամարտակել

**perpétration** *f* կատարում (հանցագործության)  
 ~ *du crime* հանցագործության կատարում

- ~ de l'infraction իրավախախտման կատարում
- perpétrer** *vt* կատարել (հանցագործություն)
- ~ une agression նվաճողական նպատակներով հարձակում կատարել
- ~ un génocide ցեղասպանություն իրագործել
- perpétuation** *f* հավերժացում, մշտնջենացում, հավիտենականացում; պահպանում
- perpétuel**, -le *adj* 1. հավերժական, մշտնջենական, մշտական, հավիտենական 2. ցմահ  $\diamond$  bannissement ~ ցմահ արտաքսում; mouvement ~ հավիտենական շարժում, մշտառև շարժիչ; secrétaire ~ անփոփոխ քարտուղար
- perpétuer** *vt* հավերժացնել, անմահացնել, հավիտյան պահպանել; ամրապնդել, հաստատուն դարձնել, ամրացնել
- ~ la guerre պատերազմը երկարատև դարձնել
- perpétuité** *f* հավերժություն, երկարատևություն, հավիտենություն; անընդհատություն  $\diamond$  à ~ ընդմիշտ, ցմահ, հավիտյան; անժամկետ; réclusion à ~ ցմահ բանտարկություն
- perplexe** *adj* շփոթված, շվարած, տարակուսանքի մեջ ընկած, տարակուսած, տարակուսանքով լի; անելանելի դրության մեջ, փակուղու մեջ հայտնված
- perplexité** *f* շփոթվածություն, տարակուսում, շվարածություն, տարակուսանք, զարմանք
- perquisition** *f* 1. խուզարկություն 2. *փ/իք*. որոնում, որոնելը, փնտրելը, փնտրույք  $\diamond$  faire (կամ procéder à) une ~ խուզարկություն կատարել
- ~ à domicile տան խուզարկություն
- perquisitionner** *vi* խուզարկել
- persan**, -e *adj* պարսկական
- per se** (*լատ.*) որպես այդպիսին
- perse** *adj* հին պարսկական
- persécuter** *vt* 1. հետապնդել, հալածել, հետամտել, հալածանքների ենթարկել 2. տանջել, խոշտանգել
- persévé rer** *vi* համառ լինել, հաստատական լինել; համառել; համառորեն կառչել ինչ-որ բանից
- ~ dans son silence համառորեն լռել
- persistence** *f* հաստատականություն, կայունություն, անհողողություն, անսասանություն ~ de la propriété privée մասնավոր սեփականության վարչակարգի պահպանում
- persistant**, -e *adj* 1. համառ, հաստատական, հաստատամիտ, նպատակամետ 2. կայուն, դիմացկուն; տևական, շարունակական, երկարատև  $\diamond$  d'une manière ~e հետևողականորեն, համառորեն
- persiste r** *vi* 1. իրենը պնդել, համառել, պնդելով հասնել 2. շարունակվել, տևել, երկարել
- ~ à nier համառորեն ժխտել
- persona grata** *դվնգ*. ցանկալի անձ, ընդունելի անձ, պերսոնա գրատա
- persona non grata** *դվնգ*. ոչ ցան-

- կալի անձ, ոչ ընդունելի անձ, պերսոնա նոնգրատա
- personnage** *m* 1. կարևոր անձնավորություն, կարևոր դեմք 2. անձ, անձնավորություն, անհատ, դեմք 3. գործող անձ (պիեսում) ◇ faire le premier ~ առաջին դերը խաղալ  
~ haut placé բարձրաստիճան անձ  
~ historique պատմական դեմք
- personnaliser** *vt* 1. մարմնավորել, անձնավորել 2. իրավաբանական անձի իրավունք պարգևել
- personnalisme** *m* *փ/իլ.* էսասիրություն, անձնասիրություն, անձնապաշտություն, էսամոլություն, էսակենտրոնություն, էգոցենտրիզմ (էսամոլության ծայրահեղ դրսևորում)
- personnalité** *f* 1. անհատականություն, անձնավորություն, անհատ 2. պաշտոնական անձ, ազդեցիկ անձնավորություն; գործիչ ◇ acquérir la ~ morale իրավաբանական անձի իրավունք ստանալ; culte de la ~ անհատի պաշտամունք  
~ civile քաղաքացիական իրավասուբյեկտություն (իրավաենթարկություն)  
~ éminente, ~ de marque անվանի, նշանավոր անձ; ակնավոր գործիչ  
~ juridique իրավաենթարկություն  
~ morale իրավաբանական անձի իրավաենթարկություն
- personne** *f* մարդ, անձ, անհատ ◇ exposer sa ~ վտանգել իրեն, իր կյանքը; payer de sa ~ իրեն չխնայել, իրեն վտանգի ենթարկել, խիզախել; en ~ անձնապես, անձամբ  
~ à charge de գո խնամարկյալ, խնամքի տակ գտնվող, խնամառ  
~ de qualité, ~ de condition անվանի, նշանավոր անձ  
~ en place պաշտոնատար անձ  
~ morale, ~ civile իրավաբանական անձ  
~ physique ֆիզիկական անձ, քաղաքացի  
~ privée մասնավոր անձ  
~s déplacées բնակավիղի անձինք, գաղթականներ, տարագրվածներ
- personnel**, -le *adj* անձնական; սեփական, մասնավոր, անհատական ◇ contacts ~s անձնական կապեր; ordinateur ~ անձնական համակարգիչ; responsabilité ~le անձնական պատասխանատվություն; à titre ~ անձամբ, անհատապես, անձնապես
- personnel** *m* անձնակազմ ◇ compression du ~ անձնակազմի կրճատում; sélection du ~ անձնակազմի ընտրություն; service du ~ կադրերի բաժին; chef du ~ կադրերի բաժնի վարիչ  
~ administratif վարչական անձնակազմ  
~ de bureau գրասենյակային անձնակազմ  
~ de commandement հրամանատարական անձնակազմ  
~ d'exploitation տեխնիկական անձնակազմ

- ~ pléthorique ուռճացված անձնակազմ  
 ~ sous-traitant օժանդակ անձնակազմ
- personnification** *f* անձնավորում, մարմնավորում
- personnifier** *vt* անձնավորել, մարմնավորել
- perspective** *f* 1. հեռանկար 2. տեսանկյուն  $\diamond$  en ~ ապագայում, հեռանկարում; une politique de longue ~ հեռահար նշանառության քաղաքականություն; sous la même ~ միանման, միատեսակ ~s d'avenir ապագայի հեռանկարներ  
 ~s économiques տնտեսական հեռանկարներ  
 ~s favorables բարենպաստ հեռանկարներ  
 ~s du succès politique քաղաքական հաջողության հեռանկարներ
- persuader** *vt* համոզել, հավատացնել, ներշնչել  $\diamond$  se ~ 1. համոզվել 2. ներշնչվել 3. միմյանց համոզել ~ une vérité à qn մեկին համոզել ճշմարտացիության մեջ
- persuasif**, -ve *adj* համոզիչ  $\diamond$  arguments ~s համոզիչ փաստարկներ; ton ~ համոզիչ տոն
- persuasion** *f* 1. համոզելը 2. համոզմունք, համոզվածություն
- perte** *f* 1. կորուստ, կորցնելը, կորչելը 2. *pl muqđ.* կորուստներ (պատերազմում) 3. վնաս 4. մահ, վախճան 5. պարտություն  $\diamond$  bonifier (կամ compenser) une ~ վնասը փոխհատուցել; en cas de ~ կորստի դեպքում; causer (կամ faire subir) une ~ վնաս պատճառել, վնաս հասցնել; couvrir une ~ վնասը փակել; courir à sa ~ մահվան գնալ; encaisser (կամ encourir) une ~ վնաս կրել; être condamné à la ~ կորստյան մատնվել; être sujet à ~ վնաս կրել; infliger des ~s կորուստներ պատճառել; à ~ վնասով; à ~ de vue որքան աչքը կտրի, անվերջորեն, անսահմանորեն; en pure ~ իզուր, ապարդյուն, անօգուտ; subir des ~s կորուստներ կրել  
 ~ d'argent, ~ pécunière դրամական վնաս  
 ~ d'une bataille ճակատամարտը տանուլ տալ, պարտություն ճակատամարտում  
 ~ de confiance վստահության կորուստ  
 ~ de la mémoire հիշողության կորուստ  
 ~ d'un procès դատական գործը տանուլ տալը  
 ~ sèche մաքուր՝ զուտ վնաս  
 ~ de temps ժամանակի կորուստ  
 ~ de valeur արժեքի կորուստ  
 ~s (des) ձայների կորուստ
- pertinemment** *adj* պատշաճ ձևով; համոզիչ կերպով, գործի իմացությամբ
- pertinence** *f* *հրվք.* ճշտություն, հարմար լինելը, տեղին լինելը, գործին վերաբերելը, համապատասխանություն
- pertinent**, -e *adj* *հրվք.* գործին վերաբերող, էական, պատշաճ, տեղին, հարմար  $\diamond$  fait ~ էական հանգամանք, գործին վերաբերող հանգամանք; information ~e

- էական տեղեկություն; raison ~e էական փաստարկ; suggestion ~e պատեհաժամ առաջարկ՝ խորհուրդ
- perturbateur** *m* կարգազանց, խռովարար, խառնակիչ
- perturbation** *f* 1. խառնակություն, անկարգություն, հուզում 2. *pl* ռադիո խանգարումներ ~s déstabilisatrices ապակայունացնող խախտումներ ~s sociales սոցիալական ցնցումներ
- perturber** *vt* խախտել, խանգարել (կարգը, լուծությունը); հուզել, անհանգստացնել ~ l'ordre public խախտել հասարակական կարգը
- péruvien**, -ne *adj* պերուական
- perversion** *f* այլասերում, աղավաղում, խեղաթյուրում, աղճատում ~ de la justice արդարության խախտում; անարդար որոշման կայացում
- pervertir** *vt* 1. փչացնել, այլանդակել, այլասերել 2. աղավաղել, խեղաթյուրել, աղճատել ~ le sens իմաստն աղավաղել
- peser** *vt* 1. կշռել 2. կշռադատել, ծանրութեթև անել ◊ tout bien pesé լավ կշռադատելուց հետո, երկար-բարակ մտածելուց հետո ~ sur un mot բառը շեշտել, ընդգծել ~ ses paroles իր խոսքերը կշռադատել ~ le pour et le contre ծանրութեթև անել բոլոր թեր ու դեմ կողմերը
- peseta** *f* պեսետա (իսպանական դրամ)
- pessimisme** *m* հոռետեսություն, սպազան վատ՝ մռայլ տեսնելու հակվածություն
- pessimiste** *m, f* հոռետես (մարդ), վատատես
- pétition** *f* միջնորդագիր, հանրագիր, խնդրագիր, դիմում, հայտ ◊ liste de ~s պահանջների ցանկ; présenter une ~ հանրագիրներկայացնել
- pétitionnement** *m* դիմում, խնդրագիր նեկայացնելը
- pétrole** *m* 1. նավթ 2. կերոսին
- pétrolier**, -ère *adj* նավթային ◊ consortium ~ international միջազգային նավթային կոնսորցիում (խոշոր բանկերի միավորում); industrie ~e նավթարդյունաբերություն; pays ~s նավթ ունեցող երկրներ; politique ~e նավթային քաղաքականություն; produits ~s նավթամթերքներ; ressources ~es նավթային պաշարներ
- peuple** *m* 1. ժողովուրդ 2. *խսկց.* մարդիկ, ամբոխ ◊ homme du ~ ժողովրդի ծոցից դուրս եկած մարդ, հասարակ մարդ; souveraineté du ~ ժողովրդավարություն ~ avancé գերզարգացած ժողովուրդ ~ d'avant-garde առաջադեմ երկրի ժողովուրդ ~ épris de liberté ազատասեր ժողովուրդ ~ épris de paix խաղաղասեր ժողովուրդ ~ chrétien քրիստոնյաներ ~ subjugué ստրակացված, ճնշված ժողովուրդ



- ~s frères եղբայրական ժողովուրդներ
- pharisien** *m* փարիսեցի, կեղծավոր, երկերեսանի, երեսպաշտ անձ, կեղծ բարեպաշտ
- phase** *f* փուլ, շրջան  
 ~ cruciale վճռական փուլ  
 ~ finale ավարտական փուլ  
 ~ initiale նախնական փուլ
- phénoménal**, -e *adj* 1. *փիլ.* երևութական, ֆենոմենալ 2. *խսկց.* չտեսնելի, արտակարգ, բացառիկ
- phénomène** *m* 1. *փիլ.* երևույթ, ֆենոմեն 2. *խսկց.* արտակարգ՝ բացառիկ երևույթ, իրադարձություն
- phrase** *f* 1. նախադասություն 2. խոսք, արտահայտություն, դարձվածք 3. դատարկ խոսք  $\diamond$  faire des ~s ճամարտակել, մեծախոսել, շաղակրատել; sans ~s առանց խոսակցությունների, ուղղակի  
 ~, petite *քղք.* ասույթ; հիշվող փայլուն արտահայտություն (որևէ քաղաքական գործչի ելույթից)  
 ~s d'usage քաղաքավարական առօրյա արտահայտություններ
- physique** *adj* 1. ֆիզիկական, նյութական 2. մարմնական  $\diamond$  contrainte ~ ֆիզիկական հարկադրանք; éducation ~ ֆիզիկական դաստիարակություն; état ~ առողջական վիճակ, ֆիզիկական դրություն; liberté ~ ֆիզիկական ազատություն; sécurité ~ ֆիզիկական անվտանգություն; souffrance ~ ֆիզիկական տառապանք; violence ~ ֆիզիկական բռնություն
- pièce** *f* 1. փաստաթուղթ, գործնական թուղթ 2. հրանոթ, թնդանոթ 3. մետաղադրամ, դրամ  $\diamond$  produire une ~ փաստաթուղթ ներկայացնել; tailler en ~s ոչնչացնել, ջախջախել, ջարդել  
 ~ d'accusation մեղադրական ակտ, ամբաստանագիր  
 ~ antichar(s) հակատանկային հրանոթ  
 ~ anti-avion զենիթային հրանոթ  
 ~ d'artillerie հրանոթ  
 ~ de conviction իրեղեն սպացույց  
 ~ fausse կեղծ փաստաթուղթ  
 ~ à grande portée հեռահար հրանոթ  
 ~ justificative, ~ à l'appui արդարացուցիչ փաստաթուղթ  
 ~ de monnaie մետաղադրամ  
 ~s diplomatiques դիվանագիտական փաստաթղթեր
- piéd** *m* ստորոտ, հիմք, հենամաս  $\diamond$  au ~ de la lettre բառացիորեն; sur un ~ d'égalité հավասարը հավասարի հետ, հավասար պայմաններում; placer sur le ~ commercial փոխադրել տնտեսաշվարկի; se mettre à ~ d'œuvre սկսել, ձեռք զարնել, ձեռնարկել, գործի անցնել
- piere** *f* քար  $\diamond$  apporter sa ~ իր լուծանք բերել; marquer d'une ~ blanche նշել; poser la première ~ առաջին քարը դնել; *փխք.* հիմնադրել, սկիզբ դնել  
 ~ d'achoppement գայթակհություն քար  
 ~ de touche փորձաքար
- pieusement** *adj* հարգանքով, պատ-

- կառանքով, մեծարանքով, ակնածանքով ◇ *garder* ~ սրբորեն պահել
- pillage** *m* բալան, կողոպուտ, հափրչտակում, ավարառություն, ավագակություն ◇ *mettre au* ~ ալանբալանի մատնել, կողոպտել ~ *des deniers publics* պետական դրամական միջոցների հափրչտակում
- pillard**, *-e adj* 1. ավագակային, կողոպուչական, բալանչիական 2. բանագողական, գրագողական
- pillar** *vt* կողոպտել, բալանել, գռփել, հափչտակել
- pilonner** *vt* գնդակոծել, ուքակոծել
- pilori** *m* *պլորի*. անարգանքի սյուն ◇ *mettre* (կամ *clouer*) *au* ~ անարգանքի սյունին գամել; ծաղրուծանակի ենթարկել
- pilote** *m* օդաչու  
~ *de chasse* կործանիչ օդաչու  
~ *d'essai* փորձարկող օդաչու  
~ *de ligne* քաղաքացիական ավիացիայի օդաչու
- piste** *f* 1. հետք 2. մրցուղի 3. *ավ*. թռիչքուղի 4. ուղի, ուղեգիծ, ճանապարհ ◇ *demander la* ~ վայրէջքի թույլտվություն խնդրել; *être à la* ~ *de* զո մեկին դրոնել, դրոնումներ կատարել; *être sur une fausse* ~ սխալ հետքերով գնալ; *être sur la* ~ *de* զո մեկի հետքը գտնել, տեղն իմանալ; *partir sur la* ~ *de* զո մեկի հետքերով գնալ; *suivre la* ~ հետքերով գնալ  
~ *de décollage et d'atterrissage* թռիչքի և վայրէջքի ուղի  
~ *d'envoi*, ~ *d'envol*, ~ *de départ*, ~ *décollage* թռիչքուղի
- pivot** *m* *փիւթ*. հիմք, հենարան; առանցք; գլխավոր շարժիչ; առաջ մղիչ ուժ
- placard** *m* հայտարարություն, ազդագիր, պլակատ  
~ *à luminosité intermittente* լուսային թրթռացող գովազդ  
~ *publicitaire* մեծ հայտարարություն (լրագրում)
- place** *f* 1. տեղ, վայր; բնակավայր 2. պաշտոն, դիրք 3. բերդ, կայագոր 4. շուկա, բորսա, սակարան ◇ *à la* ~ *de...* փոխարեն; *être bien en* ~ լավ դիրք գրավել; *être hors de* ~ անտեղի լինել, անպատեհ լինել; *être sans* ~ գործագուրկ լինել, աշխատանք չունենալ; *être sur la* ~ հանդես գալ շուկայում; *faire* ~ *à* զո մի կողմ քաշվել, տեղը զիջել ուրիշին; *en son lieu et* ~ *իր* ամունից; *mettre en* ~ *un dispositif de défense* կառուցել պաշտպանության գիծ (կամ արգելապատնեշ); *mettre en* ~ *un gouvernement* կառավարությանը իշխանության գլուխը կանգնեցնել; *perdre sa* ~ աշխատանքը, պաշտոնը կորցնել; *tenir* ~ *de...* փոխարինել; դեր խաղալ  
~ *de commerce* ապրանքային շուկա  
~ *financière* ֆինանսական շուկա; ֆինանսական կենտրոն  
~ *frontière* սահմանային կայագոր  
~ *de Paris* Փարիզի ֆինանսական կենտրոն
- placer** *vt* 1. դնել, տեղադրել, զետեղել 2. տեղավորել աշխատանքի 3. ներդնել

- ~ à l'abri de ... պաշտպանել, զերծ պահել  
 ~ des capitaux կապիտալ ներդնել  
 ~ sous les ordres de... ենթարկել ինչ-որ մեկին; մեկի հրամանատարության տակ դնել  
 ~ en tutelle խնամակալության տակ դնել
- plaidier** 1. *vi* դատավիճել, դատի մեջ մտնել; դատարան դիմել, դատի տալ 2. *vt* պաշտպանել (դատարանում), վկայակոչել  $\diamond$  se ~ լավել (դատարանում)  
 ~ une cause դատը պաշտպանել  
 ~ les circonstances atténuantes վկայակոչել մեղմացուցիչ հանգամանքները  
 ~ contre զո մեկի դեմ գործ հարուցել  
 ~ coupable [non coupable] մեղավոր [անմեղ] ճանաչել
- plaidieur**, -euse *m* դատավիճող կողմ, հայցատեր, դատաքննության մասնակից
- plaidoirie** *f* *իրվք*. գործի վարույթ; պաշտպանող կողմի ելույթը դատարանում
- plaidoyer** *m* դատական ճառ; պաշտպանական ելույթ
- plainte** *f* 1. բողոք, զանգատ, դիմում 2. դժգոհություն, տրտունջ  $\diamond$  déposer une ~ բողոք ներկայացնել; porter ~ contre... բողոք ներկայացնել դատարան, դատի տալ
- plan** *m* 1. պլան, նախագիծ, հատակագիծ, գծագիր 2. ծրագիր, մտադրություն; մտահղացում  $\diamond$  arrêter (կամ établir) un ~ պլանավորել, պլան կազմել; dresser un ~ պլանն ուրվագծել; sur le ~
- քնագավառում, ասպարեզում; au premier ~ առաջին պլանում; de premier ~ առաջնակարգ, առաջին աստիճանի, գլխավոր, հիմնական; réaliser le ~ պլանը կատարել; reléguer au second ~ հետին պլան մղել  
 ~ bloc, ~ global համալիր պլան  
 ~ comptable հաշվարկային պլան  
 ~ d'épargne խնայողության ծրագիր  
 ~ d'investissement ներդրումային նախագիծ  
 ~ de production արտադրական պլան  
 ~ quinquennal հնգամյա պլան  
 ~ septennial յոթամյա պլան
- planification** *f* պլանավորում, ծրագրավորում  
 ~ centralisée կենտրոնացված պլանավորում  
 ~ à courte échéance, ~ à court terme կարճաժամկետ պլանավորում  
 ~ à longue échéance, ~ à long terme երկարաժամկետ պլանավորում  
 ~ de la politique քաղաքականության պլանավորում  
 ~ stratégique ռազմավարական պլանավորում
- planifier** *vt* պլանավորել, ծրագրել, նախագծել  $\diamond$  économie ~ée պլանային տնտեսություն
- plaque** *f* 1. քիթեղ, տախտակ, սալիկ 2. տարբերանշան (ծառայողի, ոստիկանի)  
 ~ commémorative հուշատախտակ  
 ~ indicatrice ճանապարհային ցուցանշան

- ~ tournante *փխք*. կենտրոնակետ (որևէ գործի), խաչմերուկ
- plate-forme** *f* 1. *քղք*. քաղաքական ծրագիր՝ դիրքորոշում՝ հայացքներ 2. հարթակ, ամբիոն
- ~ politique քաղաքական ծրագիր
- plausible** *adj* թույլատրելի, ճշմարտանման, արժանահավատ, ճշմարտացի ◊ *prétexte* ~ հարմար պատրվակ
- plébiscite** *m* ռեֆերենդում, համագային հանրաքվե
- plébisciter** *vt* ընտրել հանրաքվեի միջոցով
- plein**, *-e adj* 1. լի, լիքը, լեփ-լեցուն 2. ամբողջական; բացարձակ, լիակատար, լրիվ 3. համակված, տոգորված, ներծծված ◊ *donner ~s pouvoirs* լիազորություններով օժտել; *échanger les ~s pouvoirs* լիազորությունների փոխանակություն կատարել; *être en ~ développement* զարգացման մեջ լինել; *de ~ droit* լիակատար իրավունքով; *en ~e activité* աշխատանքի թեժ պահին
- ~ *d’avenir* խոստումնալից
- ~ *de droit* լիակատար իրավունքով
- ~ *emploi* լրիվ զբաղվածություն (աշխատուժի)
- ~ *de scrupules* կասկածներով լի
- ~ *s pouvoirs* լիազորություններ
- plein** *m*: *battre son ~* ամբողջ թափով ընթանալ (աշխատանքի մասին); իր տարերքի մեջ լինել; *faire le ~ des voix* ստանալ ձայների մեծամասնությունը
- pleinement** *adv* միանգամայն, բոլորովին, ըստ ամենայնի, լիովին;
- ամբողջությամբ, ամբողջովին, ամբողջապես
- plénier**, *-ère adj* պլենար, լիագումար, լիակազմ ◊ *séance ~* լիագումար նիստ՝ ժողով
- plénipotentiaire** *adj* լիազոր ◊ *Ambassadeur Extraordinaire et Plénipotentiaire* Արտակարգ և լիազոր դեսպան; *Envoyé Extraordinaire et Ministre Plénipotentiaire* Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար; *représentant ~* լիազոր ներկայացուցիչ
- plénipotentiaire** *m* լիազոր ներկայացուցիչ
- plénitude** *f* լեփ-լեցունություն, լիքը լինելը; առատություն, լիություն ◊ *conserver la ~ de ses facultés* լինել սթափ գիտակցությամբ և հստակ հիշողությամբ; *dans la ~ du coeur* ամբողջ սրտով, լի սրտով
- ~ *de la juridiction* դատարանի իրավասությունների լիակատարություն
- pli** *m* ծրար (փոստային); նամակ; ծանրոց ◊ *prendre le ~ de...* սովորություն ձեռք բերել; *sous-fermé* կնիքված, փակ ծրարով; *sous ~ recommandé* պատվիրված նամակով
- ~ *cacheté* կնքված փաթեթ
- ~ *chargé* պատվիրված նամակ
- ~ *neutre* հասարակ նամակ
- plier** 1. *vt* ծալել, ծռել, կորացնել, թեքել, ճկել 2. *vi* չդիմանալ, տեղի տալ, ենթարկվել, զիջել, հնազանդվել ◊ *se ~ 1.* ծալվել, ծռվել, կորանալ, թեքվել, ճկվել, կռանալ 2. ենթարկվել, հնազանդվել, հպատակվել; *se ~ aux usages*

սովորություններին հարմարվել  
~ son caractère à... հարմարվել,  
ընտելանալ  
 ~ tenu par le Ministère des Affaires étrangères Արտաքին գործերի նախարարության կողմից կազմված ցանկ
- règle** *f* 1. կանոն, նորմ; սահմանված կարգ, կանոնակարգ 2. օրինակ, նմուշ ◊ en bonne ~ սովորույթի համաձայն, վարվեցողության կանոնների համաձայն; contrevenir aux ~s կանոնները խախտել

տել; être de ~ պարտադիր լինել (կատարման), օրենքով պարտադրված; être (կամ se mettre) en ~ կատարել (օրենքի, վարվեցողության, սովորույթի և այլն) բոլոր պահանջները; il est de ~ que... ընդունված է, որ...; observer les ~s կանոնները պահպանել; procéder selon les ~s գործել կարգովանոնով; dans les ~s, selon les ~s կանոններով, ինչպես ընդունված է; en ~ générale ընդհանուր առմամբ, առհասարակ; se conformer aux ~s կանոններին համապատասխանել; servir de ~ օրինակ ծառայել; servir de ~ générale ծառայել որպես ընդհանուր ուղեցույց; suivant la ~ կանոնակարգի համաձայն  
 ~ d'or ոսկե կանոն  
 ~ proportionnelle համամասնական համակարգ (ապահովագրության ժամանակ)  
 ~ statuaire կանոնադրական կարգ  
 ~s de la concurrence մրցունակության կանոններ  
 ~s posées dans cet acte international կանոններ, որոնք սահմանված են այդ միջազգային փաստաթղթով

**règlement** *m* 1. կանոնակարգում, կարգավորում, կանոնավորում 2. կանոնակարգ, վարման կարգ, ժողովակարգ 3. կարգադրում, տնօրինում, գրավոր հրաման, կարգադրություն, որոշում 4. կանոնադրություն, դրույթ 5. վճարում, վարձատրում, մարում, ծածկում ◊ appliquer le ~ կիրառել ընթացակարգի կանոնները; les

articles I et II du ~ adopté ընդունված որոշման 1-ին և 2-րդ հոդվածները; les bases d'un ~ pacifique խաղաղ կարգավորման հիմքերը; commettre une infraction au ~ խախտել ընթացակարգի կանոնները; commission du ~ ներքին կարգապահության կանոնների գծով կոմիտե; par dérogation à l'article... du ~ ընթացակարգի... կանոնից շեղմամբ; se conformer au ~ պահպանել ընթացակարգի կանոնները  
 ~ à l'amiable հոժարակամ կարգավորում  
 ~ des comptes հաշիվների վճարում, հաշիվների մարում  
 ~ par compensation քլիրինգային վճարումներ  
 ~ électoral դրույթ ընտրությունների մասին  
 ~ en espèces վճարում կանխիկ դրամով  
 ~ financier ֆինանսական կանոնադրություն  
 ~ général administratif ընդհանուր վարչական կանոններ  
 ~ de gré à gré հոժարակամ կանոնավորում  
 ~ intégral վերջնական վճարում  
 ~ interne ներքին հրահանգ՝ կանոնադրություն  
 ~ judiciaire ա) (վեճի) դատական կարգավորում բ) անվճարունակ պարտապանների վճարումը վարկատուներին դատարանի հսկողության տակ  
 ~ en nature բնամթերքով վճարում  
 ~ d'ordre կատարման պատվեր  
 ~ pacifique des différends interna-

- tionaux միջազգային վեճերի խաղաղ կարգավորում  
 ~ pacifique, négocié des problèmes en litige վիճելի հարցերի խաղաղ կարգավորում  
 ~ en sterling վճարում ստեղծագույն  
 ~s avancés նախաժամկետ վճարումներ  
 ~s extérieurs արտաքին վճարումներ  
 ~s internationaux միջազգային դրամական վճարումներ
- réglementation** *f* 1. կարգավորում, կարգորոշում, կանոնակարգի սահմանում, ռեգլամենտի ենթարկելը 2. գրավոր հրամանների, կարգադրությունների ամբողջություն; օրենսդրություն, նորմատիվ փաստաթղթեր  
 ~ juridique իրավական կարգավորում  
 ~ des prix գների կարգավորում  
 ~ des salaires աշխատավարձի կարգավորում  
 ~ en vigueur գործող օրենսդրություն
- réglementer** *vt* 1. կարգավորել, կանոնավորել, ստույգ որոշել, կանոնակարգել 2. հրամաններ՝ կարգադրություններ՝ կանոններ հրատարակել
- régler** *vt* 1. կարգավորել, լուծել, հարթել, վճել 2. սահմանել, որոշել, հաստատել 3. վճարել, վճարը տալ, հատուցել  $\diamond$  se ~ant d'après les indications ղեկավարվելով հրահանգներով  
 ~ ses affaires գործերը կարգի բերել
- ~ à l'amiable կարգավորել փոխադարձ համաձայնությամբ (վեճը)  
 ~ un compte, ~ la note հաշվով վճարում կատարել  
 ~ un différend վեճը լուծել  
 ~ le prix գին սահմանել  
 ~ la question (par voie pacifique) հարցը կարգավորել (խաղաղ ճանապարհով)
- régnant**, -e *adj* 1. իշխող, թագավորող, տիրող, կառավարող 2. *փիլիսոփ.* տիրող, տիրապետող, գեր-իշխող
- règne** *m* թագավորում, թագավորություն, կառավարում, գահակալում; գերիշխանություն  
 ~ animal կենդանական աշխարհ  
 ~ végétal բուսական աշխարհ
- régnier** *vi* 1. թագավորել, իշխել, տիրել, գահակալել, կառավարել 2. գերիշխել, տիրապետել  $\diamond$  diviser pour ~ բաժանիր, որ տիրես  $\diamond$  faire ~ կարգ ու կանոն հաստատել
- régressif** *adj* հետադիմական, հետընթաց, հետընթացական
- régression** *f* 1. հետադիմություն, հետընթացք, հետընթացություն, հետզարգացում, զարգացման անկում 2. իջեցում, նվազում, պակասում, անկում  $\diamond$  être en ~ պակասել, նվազել, իջնել; en ~ հետադիմելով, հետ գնալով  
 ~ des salaires աշխատավարձերի իջեցում
- regret** *m* 1. ավիսանք, ավիսասալ 2. ցավ, տխրություն, վիշտ, զղջում  $\diamond$  avoir le ~ de... զղջալ; à notre vif ~ մեծ ցավով; à ~ դժկամությամբ,

- դժկամորեն, ակամա, չկամենալով
- regrettable** *adj* ափսոսանքի արժանի; ցավալի  $\diamond$  il est ~ que... ցավալի է, որ
- regretter** *vt* 1. ափսոսալ, ցավել, խղճալ, խղճահարվել 2. զղջալ  $\diamond$  il est à ~ que... ցավալի է, որ...
- régularisation** *f* կարգավորում, կանոնավորում, օրինականացում, օրենքի պահանջներին համապատասխանեցում
- régulariser** *vt* կարգավորել, կանոնավորել; օրինականացնել, օրինական բնույթ տալ, օրինական դարձնել, օրենքին համապատասխանեցնել
- régularité** *f* 1. կանոնավորություն, հստակություն 2. օրինաչափություն, օրինականություն, պատշաճ ձևակերպում (փաստաթղթի) 3. ճշտություն, ճշգրտություն, ստույգություն; կանոնների խիստ պահպանում
- régulier**, -ère *adj* 1. կանոնավոր; համաչափ, անխափան, նորմալ, պահանջված կարգի, սովորական 2. ճիշտ, ստույգ, անվրեպ, անսխալ, ճշգրիտ  $\diamond$  armée ~ère կանոնավոր բանակ; troupes ~ères կանոնավոր զորքեր
- régulièrement** *adv* 1. կանոնավոր ձևով, պարբերաբար 2. ճշգրտորեն, ճշտությամբ
- réhabilitation** *f* 1. արդարացում, վերականգնում (իրավունքների և այլն) 2. վերակառուցում, վերականգնում, վերանորոգում  
~ d'après-guerre հետպատերազմյան վերականգնում
- ~ d'un failli սնանկ հայտարարված առևտրականի իրավունքների վերականգնում  
~ sociale սոցիալական վերականգնում (հանրային կյանքին անձի վերահարմարվելը)
- réhabilité**, -e *adj* վերականգնված, արդարացված
- réhabiliter** *vt* 1. ռեաբիլիտացիայի ենթարկել, վերականգնել (անունը, պատիվը, իրավունքները, պաշտոնը և այլն) 2. վերականգնել, վերանորոգել, վերակառուցել
- rehaussement** *m* 1. բարձրացում, ավելացում, ավելացվելը, ավելանալը 2. առաջքաշում (պաշտոնում)  
~ des monnaies դրամի կուրսի բարձրացում
- Reich** *m* ռեյխ, գերմանական պետություն  $\diamond$  Troisième ~ «Երրորդ կայսրություն», հիտլերյան ռեյխ
- reichstag** *m* ռայխստագ
- reichswehr** *m* ռայխսվեյր
- réincarner** *vt* վերամարմնավորել  $\diamond$  se ~ վերամարմնավորվել
- réintégré** *adj* վերականգնման ենթակա (պաշտոնում, սեփականության իրավունքներում)
- réintégration** *f* վերականգնում, վերահաստատում, վերահաստատվելը (պաշտոնում, իրավունքներում)
- réintégrer** *vt* վերականգնել, վերահաստատել (պաշտոնը, իրավունքները)  
~ au poste de... վերականգնել... պաշտոնում
- réitéré**, -e *adj* կրկնվող, կրկնական,

կրկին, երկրորդվող  $\diamond$  une sommation ~e կրկնական պահանջ

**réitérer** *vt, vi* 1. կրկնել (հրամանները և այլն.) 2. նորից նույն բանն անել

**rejet** *m* 1. չընդունելը, չճանաչելը 2. բացարկում, բացարկ, ժխտում; մերժում  
~ d'une demande դիմումի մերժում  
~ des principes démocratiques ժողովրդավարական սկզբունքների մերժում

**rejeter** *vt* 1. չընդունել, չճանաչել 2. մերժել, առանց բավարարման թողնել (դիմումը); չհամաձայնել 3. բարդել (մեղքը, սխալը)  
~ le fardeau sur...ծանրությունը դնել ...վրա  
~ la médiation միջնորդությունը մերժել  
~ en principe սկզբունքորեն մերժել  
~ un projet de loi օրինագիծը չընդունել  
~ la proposition առաջարկությունը մերժել  
~ le recours en grâce հրաժարվել ներում շնորհելուց, ներում չշնորհել  
~ la responsabilité sur... պատասխանատվությունը դնել... վրա

**rejoindre** *vt* 1. նորից միացնել, կապել; միանալ, հարել 2. հետևից հասնել, վրա հասնել 3. վերադառնալ, հետ դառնալ  $\diamond$  aller ~ զո հանդիպել մեկի հետ; հասնել մեկին  
~ son régiment վերադառնալ իր գունդը

**relâche** *m* կարճատև դադար; ընդմիջում, դադար, կանգառ, հանգիստ  $\diamond$  sans ~ անընդհատ, անընդմեջ, անդադար; առանց հանգատանալու; se donner ~ հանգատանալ

**relâchement** *m* 1. *հնցծ.* կարճատև դադար, թեթև հանգիստ 2. թուլացում, լարվածության թուլացում 3. ազատում, ազատագրում, ազատ արձակում (բանտարկյալի)  
~ militaire ռազմական դադար  
~ de la tension internationale միջազգային լարվածության թուլացում

**relâcher** *vt* 1. *փխբ.* թուլացնել, մեղմացնել (լարվածությունը), ազատ թողնել, թուլացնել (կարգապահությունը) 2. ազատել, ազատ արձակել  $\diamond$  se ~ ա) թուլանալ, նվազել, ընկնել բ) զիջել; se ~ de ses prétentions զիջումների գնալ  
~ les efforts ջանքերը թուլացնել  
~ les règles կանոնները մեղմացնել  
~ la tension լարվածությունը նվազեցնել  
~ avant terme վաղաժամկետ՝ ժամկետից շուտ ազատել  
~ la vigilance զգոնությունը թուլացնել

**relance** *f*: la ~ de l'économie տնտեսության աճ՝ վերելք

**relatif**, -ve *adj* 1. վերաբերող, առընչվող, կապված 2. հարաբերական  $\diamond$  majorité ~ve հարաբերական մեծամասնություն; stabilité ~ve հարաբերական կայունություն

**relation** *f* 1. հարաբերություն, կապ, առնչություն 2. հարաբերակցություն, փոխադարձ կապ 3. *p/* փոխհարաբերություններ, կապեր, ծանոթություն  $\diamond$  améliorer les ~s բարելավել հարաբերությունները; approfondir les ~s de bon voisinage խորացնել բարիդրացիական հարաբերությունները; avoir beaucoup de ~s շատ ծանոթներ ունենալ; confirmer les ~s ամրապնդել կապերը; construire des ~s հարաբերություններ ձևավորել; cultiver (կամ entretenir) des ~s հարաբերություններ պահպանել; détérioration des ~s diplomatiques դիվանագիտական հարաբերությունների վատթարացում; être en ~s avec... հարաբերությունների մեջ լինել ... հետ; établir des ~ s diplomatiques հաստատել դիվանագիտական հարաբերություններ; mettre en danger les ~s վտանգել հարաբերությունները; les ~s se sont envenimées հարաբերությունները վատթարացան; rompre les ~s diplomatiques խզել դիվանագիտական հարաբերությունները; renouer (կամ rétablir) les ~s diplomatiques վերականգնել դիվանագիտական հարաբերությունները ~s d'affaires գործարար կապեր ~s bilatérales երկկողմ հարաբերություններ ~s de bon voisinage բարիդրացիական հարաբերություններ ~s commerciales առևտրային հարաբերություններ՝ կապեր ~s consulaires հյուպատոսային

հարաբերություններ  
 ~s contractuelles պայմանագրային հարաբերություններ  
 ~s culturelles մշակութային կապեր  
 ~s externes արտաքին կապեր  
 ~s extérieures արտաքին հարաբերություններ  
 ~s de fait փաստացի հարաբերություններ  
 ~s hostiles թշնամական հարաբերություններ  
 ~s inégalitaires անհրավահավասար հարաբերություններ  
 ~s interétatiques (entre Etats) միջպետական հարաբերություններ  
 ~s internationales միջազգային հարաբերություններ  
 ~s mutuellement avantageuses փոխշահավետ հարաբերություններ  
 ~s publiques հասարակության հետ կապերի բաժին; տեղեկատվության և քարոզչության ծառայություն  
 ~s tendues լարված հարաբերություններ

**relativement** *adv* հարաբերականորեն

~ à... վերաբերյալ, մասին

**relativité** *f* հարաբերականություն; պայմանականություն  $\diamond$  théorie de la ~ հարաբերականության տեսություն

~ généralisée հարաբերականության ընդհանուր տեսություն

~ restreinte հարաբերականության հատուկ տեսություն

**relax(e)** *m* հանգիստ, թուլացում

**relaxation** *f* 1. թուլացում, նվազեցում 2. մեղմացում



- ~ des restrictions սահմանափակումների նվազեցում  
 ~ de la tension internationale միջազգային լարվածության թուլացում
- relaxe** *f հրվք.* արդարացում, արդարացման դատավճիռ
- relégation** *f* 1. արտաքսում, վտարում, տարագրում 2. ցմահ բանտարկություն (զաղութում)
- reléguer** *vt* 1. վտարել, արտաքսել 2. *փ/սք.* հեռացնել, հետ մղել  
 ~ au dernier plan հետին պլան մղել  
 ~ dans le passé անցյալում թողնել; մոռացության տալ
- relève** *f* փոխարինում, հերթափոխում, հերթափոխություն, հերթափոխ
- ~ de la garde պահակի հերթափոխում  
 ~ des sentinelles ժամապահների փոփոխություն
- relevé** *m* քաղվածք, տեղեկագիր, ամփոփագիր, ցուցակ  
 ~ de conversations բանակցությունների գրառում, գրանցում  
 ~ d'identité bancaire (RIB) քաղվածք բանկային հաշվից  
 ~ de salaires աշխատավարձի ցուցակ, վճարացուցակ
- relèvement** *m* 1. բարձրացում, ավելացում 2. *փ/սք.* վերականգնում, վերածնունդ 3. քաղվածք, ցուցակ  
 ~ du commerce առևտրի ավելացում  
 ~ général du niveau culturel կրթական մակարդակի համընդհանուր բարձրացում
- ~ des prix գների բարձրացում  
 ~ de la productivité աշխատանքի արտադրողականության բարձրացում  
 ~ de la qualification որակավորման բարձրացում  
 ~ du rendement des terres բերքատվության բարձրացում  
 ~ de salaires աշխատավարձերի բարձրացում
- relever** 1. *vt ա)* վերականգնել, վերաշինել; մակարդակը բարձրացնել, նպաստել զարգացմանը բ) բարձրացնել, ավելացնել գ) ընդգծել, նշել, մատնանշել, գրի առնել, նշագրել դ) փոխել, փոփոխել, փոխարինել, ազատել 2. *vi* կախում ունենալ; պատկանել, ենթարկվել; մաս կազմել  
 ~ d'accusation մեղադրանքը հանել մեկի վրայից  
 ~ de la compétence իրավասության մեջ լինել  
 ~ le fait que... ընդգծել այն փաստը, որ...  
 ~ de ses fonctions զբաղեցրած պաշտոնից ազատել  
 ~ une industrie վերականգնել արդյունաբերության որևէ ոլորտ  
 ~ la productivité բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը  
 ~ les salaires բարձրացնել աշխատավարձը  
 ~ une sentinelle ժամապահին փոխարինել  
 ~ les troupes զորքերը փոխել
- relief** *m* 1. բարձրաքանդակ 2. *երկրք.* տեղանք, մակերևույթի պատկեր ◊ mettre en ~ ընդգծել

- religion** *f* կրոն, հավատք, դավանանք
- reliquat** *m* պարտքի մնացորդ; ապառք  $\diamond$  régler le ~ վճարել մնացորդը; verser le ~ փոխանցել մնացորդը  
 ~ d'un compte հաշվեմնացորդ  
 ~ des paiements au titre de réparations ռեպարացիոն վճարումների մնացորդներ
- remaniement** *m* 1. վերափոխում, ձևափոխում, վերամշակում 2. վերակառուցում, վերակազմավորում, վերանայում, վերաքննում (ծրագրի)  
 ~ du cabinet (կառավարության) աշխատակազմի վերակազմավորում
- remarque** *f* 1. դիտողություն, նկատողություն 2. ծանոթագրություն 3. նշում, նոթագրում, գրառում  $\diamond$  faire une ~ դիտողություն անել; se faire la ~ նկատել, ուշադրություն դարձնել ~ pertinente ճիշտ՝ տեղին դիտողություն  
 ~s générales ընդհանուր դիտողություններ
- remboursable** *adj* վճարման ենթակա, փոխհատուցելի  $\diamond$  prêt ~ en deux ans դրամական վարկ երկու տարի մարման ժամկետով
- remboursement** *m* 1. վճարում, վճար 2. փոխհատուցում 3. մարում  $\diamond$  réclamer le ~ փոխհատուցում պահանջել  
 ~ d'une dette պարտքի մարում  
 ~ des frais ծախսերի փոխհատուցում  
 ~ à longue échéance երկարաժամկետ մարման վարկ
- ~ d'un prêt փոխատվության մարում  
 ~ d'une somme գումարի վճարում
- rembourser** *vt* 1. վճարել 2. փոխհատուցել 3. պարտքը վերադարձնել, մարել  $\diamond$  se faire ~ փողը հետ ստանալ, վճարել տալ  
 ~ de ses dépenses ծախսերը փոխհատուցել  
 ~ un emprunt փոխառությունը մարել
- remédier** *vt* 1. օգնել, ազատել (ինչ-որ բանից), դարմանել 2. վերացնել, շտկել, կանխել, առաջն առնել  
 ~ au danger վտանգը կանխել  
 ~ aux erreurs սխալներն ուղղել
- remembrement** *m* 1. հողային տնտեսությունների խոշորացում 2. միավորում
- remémoratif**, -ve *adj* որևէ բան հիշեցնող; անմոռանալի, հիշարժան; հիշողության մեջ վերականգնվող
- remémorer** *vt* հիշել, վերականգնել հիշողության մեջ
- remettre** *vt* 1. հանձնել, տալ, փոխանցել, հասցնել, բերել 2. վերականգնել 3. հրաժարվել 4. հետաձգել, երկարաձգել 5. վերադարձնել, բարձրացնել  $\diamond$  se ~: s'en ~ à զո ապավինել մեկին; s'en ~ au président որոշումը հանձնել նախագահին  
 ~ une cause (կամ un jugement) դատաքննությունը հետաձգել  
 ~ une charge պաշտոնից հրաժարվել  
 ~ les choses au point պարզություն մտցնել գործի մեջ  
 ~ le contact կապը վերականգնել

~ la démission հրաժարականի դիմում տալ  
 ~ en état կարգի բերել  
 ~ une note նոտա հանձնել, նոտա տալ  
 ~ de l'ordre կարգուկանոնը վերականգնել  
 ~ la question sur le tapis հարցը նորից բարձրացնել  
 ~ en selle օգնել (մեկին) գործերը կարգավորելու

**remilitarisation** *f* *դվնգ.* ռեմիլիտարիզացիա (դեմիլիտարիզացված, զինաթափված տարածքում ռազմական ուժերի տեղակայում)

**remise** *f* 1. հանձնում, փոխանցում 2. հետաձգում, երկարաձգում 3. ազատում (պարտքից, վճարումից) 4. զեղչ, զեղչում  $\diamond$  accorder une ~ զեղչ տրամադրել; faire une ~ զեղչ անել; contre ~ des documents փաստաթղթեր հանձնելու դիմաց; lors de la ~ des lettres de créance հավատարմագրերի հանձնման ժամանակ; retourner une ~ փոխանցում կատարել  
 ~ de l'affaire դատաքննության հետաձգում  
 ~ d'argent, ~ en espèces դրամական փոխանցում  
 ~ du criminel հանցագործի հանձնում  
 ~ d'une dette ազատում պարտքի վճարումից  
 ~ des droits de douane ազատում մաքսային տուրքերի վճարումից  
 ~ des lettres de créance հավատարմագրերի հանձնում  
 ~ de la peine պատժից ազատում

**rémission** *f* 1. ներում, պատժի փո-

խարհնում 2. *փխբ.* թուլացում, նվազում, անկում  $\diamond$  sans ~ անպայման, անպատճառ; անողորքաբար; անդադար, անդուլ  
 ~ des péchés մեղքերի թողություն

**remorque** *f* բուքսիր, քարշակ  $\diamond$  à la ~ բուքսիրով; être (se trainer) à la ~ պոչից (վերջում) գնալ, հետ մնալ, վերջին տեղում լինել; prendre en ~ բուքսիր վերցնել; se mettre à la ~ de զո կուրորեն հետևել մեկին

**remporter** *vt* *փխբ.* շահել, հաղթել, նվաճել  $\diamond$  pour ~ la victoire հաղթանակի հասնելու համար  
 ~ la coupe գավաթը նվաճել  
 ~ un grand succès մեծ հաջողություն ունենալ  
 ~ le prix մրցանակ շահել  
 ~ les suffrages բոլոր ձայները հավաքել  
 ~ la victoire հաղթանակ տանել

**rémunération** *f* 1. պարգևատրում, վարձատրություն, հատուցում 2. վարձ, վճար, աշխատավարձ 3. եկամուտ, շահույթ 4. տոկոս  $\diamond$  prélever une ~ տոկոս գանձել; verser une ~ պարգևատրում վճարել  
 ~ de l'invention պարգևատրում հայտնագործության համար

**rémunérer** *vt* 1. պարգևատրել, վարձատրել, վճարել 2. եկամուտ ստանալ

**renchérir** *vt* թանկացնել, գները բարձրացնել

**renchérissement** *m* թանկացում, թանկանալը, գների բարձրացում  
 ~ des actions բաժնետիրքերի թանկացում

~ de la monnaie արժույթի թանկացում  
 ~ des taux sur l'euro եվրոյի տոկոսադրույթի բարձրացում  
**rencontre** *f* հանդիպում, հավաք, համաժողով, խորհրդակցություն  
 ◇ aller (կամ venir) à la ~ de զո մեկին ընդառաջ գնալ, դիմավորել; arranger une ~ entre... հանդիպում կազմակերպել; Rencontre économique internationale Միջազգային տնտեսական համաժողով  
**rendement** *m* 1. եկամտաբերություն, շահութաբերություն, հասութաբերություն 2. արտադրողականություն, հատույց 3. եկամուտ, շահույթ ◇ à grand ~ բարձր արտադրողականության; norme de ~ արտադրման չափաքանակ; à plein ~ ողջ հզորությամբ՝ կարողությամբ՝ թափով  
 ~ brut համախառն եկամուտ  
 ~ du travail աշխատանքի արտադրողականություն  
**rendre** *vt* 1. վերադարձնել 2. տալ, հանձնել, փոխանցել 3. մատուցել (ծառայություն և այլն) 4. եկամուտ (շահույթ) բերել 5. հատուցել, փոխհատուցել 6. որոշել, վճռել ◇ se ~ 1. մեկնել, գնալ 2. հանձնվել, ենթարկվել; զիջել; se ~ compte de զժ հնքն իրեն հաշիվ տալ; se ~ à discrétion հանձնվել հաղթողի ողորմածությանը; se ~ à l'évidence ընդունել ակնհայտը; se ~ à l'heure indiquée նշանակված ժամին ներկայանալ; se ~ à une invitation հրավերով գնալ; se ~ aux raisons համաձայնել փաստարկների հետ;

se ~ par la voie des airs թռչել, գնալ, հեռանալ, ճամփա ընկնել (թռչելով)  
 ~ les armes զենքը վայր դնել, հանձնվել, կապիտուլյացիայի ենթարկվել  
 ~ un arrêt որոշում՝ վճիռ կայացնել  
 ~ bien son idée միտքը ճիշտ վերարտադրել  
 ~ les derniers honneurs վերջին պարտքը կատարել, վերջին հարգանքը մատուցել  
 ~ une forteresse ամրոցը հանձնել  
 ~ grâce à զո մեկին շնորհակալություն հայտնել, երախտապարտ լինել մեկին  
 ~ hommage à... հարգանք մատուցել  
 ~ les honneurs պատիվներ տալ, մեծարել  
 ~ justice à... ըստ արժանվույն գնահատել  
 ~ mot à mot փոխանցել բառ առ բառ  
 ~ raison de... բացատրել դրդապատճառը  
 ~ la sentence դատավճիռ կայացնել  
 ~ service ծառայություն մատուցել  
 ~ témoignage վկայություն տալ, վկայել  
 ~ visite à... այցելել  
**renflouage** *m* տնտեսական նեցուկ  
**renflouer** *vt* ֆինանսական աջակցություն ցուցաբերել  
 ~ une entreprise ձեռնարկությանը օգնություն ցուցաբերել  
 ~ l'industrie վերականգնել արդ-

յունաբերության որևէ ճյուղ  
**renforcement** *m* ամրապնդում, ուժեղացում, զորեղացում, հզորացում, բարձրացում  
 ~ de la coopération համագործակցության խորացում  
**renforcer** *vt* ուժեղացնել, զորեղացնել, բարձրացնել, հզորացնել; մեծացնել, ավելացնել; ամրապնդել, ամրացնել, պնդացնել, հաստատուն դարձնել  
 ~ la vigilance զգոնությունը ուժեղացնել  
**renier** *vt* 1. ժխտել, հերքել, մերժել, չընդունել, չճանաչել 2. հրաժարվել, ուրանալ  
 ~ ses propres propositions հրաժարվել սեփական առաջարկություններից  
**renom** *m* համբավ, հռչակ, վարկ, անուն  $\diamond$  le bon ~ բարի անուն; de (կամ en) ~ նշանավոր, հռչակավոր, անվանի, հայտնի  
**renommé**, -e *adj* նշանավոր, հռչակավոր, անվանի, հայտնի  
**renommée** *f* համբավ, հռչակ, փառք, հայտնի լինելը  $\diamond$  bonne [mauvaise] ~ բարի [վատ] համբավ; commune ~ *հրվք.* հանրահայտ փաստեր  
**renoncement** *m* հրաժարվելը, մերժում, ժխտում, հերքում  
 ~ à soi-même ինքնահրաժարում, ինքնուրացում; անձնագոհություն, անձնավիրություն, անձնուրացություն  
**renoncer** *vt* հրաժարվել, չհամաձայնել, մերժել, ուրանալ, չճանաչել, չընդունել  
 ~ à la citoyenneté քաղաքացիու-

թյունից հրաժարվել  
 ~ à la lutte, ~ au combat  
 ~ à son opinion սեփական կարծիքից հրաժարվել  
 ~ à ses projets անձնական ծրագրերից հրաժարվել  
**renonciation** *f* 1. հրաժարում, մերժում 2. անձնուրացություն, անձնագոհություն  
 ~ à un droit իրավունքից հրաժարվելը  
 ~ à sa foi հավատքը ուրանալը  
 ~ à un projet ծրագրից հրաժարվելը  
 ~ à une succession հրաժարում իրավահաջորդումից  
 ~ au trône հրաժարում գահից  
**renouement** *m* վերականգնում, վերականգնելը (հարաբերությունների), վերսկսում  
**renouer** *vt* վերականգնել (հարաբերությունները), վերսկսել (գործը, խոսակցությունը)  
 ~ les relations avec զո մեկի հետ հարաբերությունները վերականգնել  
**renouveler** *vt* 1. նորոգել, վերականգնել, վերաշինել 2. լավացնել, նորացնել, թարմացնել, բարելավել 3. վերսկսել, կրկնել  
 ~ un accord նոր համաձայնագիր կնքել (բևօրինակի նման)  
 ~ un exploit սխրանքը կրկնել  
 ~ une tentative փորձը կրկնել  
**renouvellement** *m* 1. վերականգնում, նորացում, կրկնում, թարմացում, վերսկսում 2. վերանորոգում, վերաշինում 3. երկարացում, երկարաձգում  
 ~ des escarmouches ռազմական

ընդհարումների վերսկսում  
~ d'un mandat լիազորությունների ժամկետի երկարաձգում  
~ du pays երկրի վերականգնում  
~ périodique (de la loi) պարբերական երկարացում (օրենքի գործողության ժամկետի)

**renovation** *f* 1. բարեփոխում 2. վերականգնում, վերափոխում, վերանորոգում

**renover** *vt* 1. բարեփոխել 2. վերականգնել, վերափոխել, վերանորոգել

**renseignement** *m* 1. տեղեկություն, պարզաբանում, տեղեկանք; տեղեկացում, իրազեկում, հարցուփորձ անելը, հարցնելը 2. *ռազմ.* հետախուզական տվյալներ  $\diamond$  agent de ~ հետախուզության գործակալ; bureau de ~s տեղեկատու բյուրո; fournir des ~s տեղեկություններ տալ; prendre des ~s տեղեկություններ հավաքել, հարցուփորձ անել; service de ~s հետախուզական ծառայություն ~s généraux ընդհանուր տեղեկատվության ծառայություն (նստիկանությունում)

**renseigner** *vt* տեղեկություններ տալ, տեղեկացնել, իրազեկել, բացատրել  $\diamond$  être ~é տեղյակ ՝ իրազեկ լինել; se ~ տեղեկանալ, հարցնել, հարցուփորձ անել; se ~ auprès des autorités compétentes տեղեկանալ իրավասու մարմիններից

**rentabilité** *f* եկամտաբերություն, շահութաբերություն, շահավետություն, օգտավետություն

**rentrée** *f* 1. վերադարձ, հետ գալը, հետ դառնալը, դարձ 2. աշխատանքի՝ դասերի վերսկսվելը (արձակուրդներից հետո) 3. *տնտ.* (դրամական) մուտք, ստացում, ավանդ  $\diamond$  avoir de bonnes ~s լավ հասույթ ունենալ  
~ d'argent դրամամուտք  
~ parlementaire խորհրդարանական աշխատանքի վերսկսում  
~ politique վերադարձ՝ քաղաքական ասպարեզ  
~ sociale արհմիութենական և քաղաքական գործունեության վերսկսում արձակուրդներից հետո

**rentrer** *vt* 1. վերադառնալ, դառնալ, հետ գալ 2. նորից մտնել, նորից ընդունվել, վերադառնալ որևէ գործունեության 3. վերականգնել գործունեությունը 4. *տնտ.* մուտք անել, մուծել (գումարներ, եկամուտ)  $\diamond$  cela rentre dans les attributions սա մտնում է իրավունքների և պարտականությունների մեջ  
~ dans son devoir նորից անցնել իր պարտականությունների կատարմանը  
~ dans ses droits նորից իր իրավունքների մեջ մտնել  
~ dans l'ordre կարգուկանոնի վերադառնալ; հանգստանալ

**renversement** *m* 1. տապալում, կործանում, անկում 2. շուռ տալը, շրջելը 3. փոփոխություն, կտրուկ փոփոխություն  
~ des alliances դաշնակցային հարաբերությունների փոփոխություն  
~ de la situation իրադրության կտրուկ փոփոխություն  
~ des valeurs արժեքների վե-

րագնահատում

**renverser** *vt* 1. տապալել, կործանել; քանդել, ավերել, խորտակել, ոչնչացնել 2. շրջել, շուռ տալ, տակնուվրա անել 3. *փ/իւք*. հեղաշրջում կատարել, պաշտոնանկ անել

~ la situation կտրուկ փոխել իրավիճակը՝ ուժերի հարաբերակցությունը

**renvoi** *m* 1. ուղարկում, հետ ուղարկելը 2. աշխատանքից ազատելը, դպրոցից հեռացնելը, պաշտոնանկ անելը, պաշտոնազրկելը 3. հղում, մեջբերում, տողատակի ծանոթագրություն (գրքում) 4. *իք/վք*. հետաձգում, տարկետում 5. (հարցի) փոխանցում հանձնաժողովի քննարկմանը և այլն; փոխանցում մեկ այլ ինստանցիա  $\diamond$  demander (կամ proposer) le ~ de la session sine die խնդրել (կամ առաջարկել) նիստը հետաձգել անորոշ ժամանակով

~ d'une cause գործի դատավարության հետաձգում

**renvoyer** *vt* 1. հետ ուղարկել, վերադարձնել 2. պաշտոնանկ անել, պաշտոնազրկել; ազատել, արձակել, հեռացնել (աշխատանքից, դպրոցից) 3. հետաձգել 4. *իք/վք*. (հարցը) փոխանցել այլ ինստանցիա 5. մեղադրանքը հասնել

~ d'accusation մեղադրանքը հասնել

~ un accusé մեղադրյալին ազատել

~ aux calendes grecques ձգձգել, գործը հետաձգել՝ քննցնել

~ à la commission compétente փոխանցել համապատասխան հանձնաժողովին

**répandre** *vt* 1. տարածել (լուրեր և այլն) 2. առատ պարզել, շռայլել 3. թափել, հեղել ~ l'alarme տագնապ առաջացնել

~ un bruit լուրեր, ասեկոսե տարածել

~ une nouvelle լուր տարածել

~ le sang արյուն թափել

~ la terre սարսափ տարածել

**répandu**, -e *adj* լայնորեն տարածված, հանրահայտ, հանրածանոթ

**réparation** *f* 1. վերանորոգում, նորոգում 2. *pl* ռեպարացիաներ, պատերազմական տուգանքներ 3. *դվ/նգ*. ռեպարացիա (պատերազմ սկսող պետության կողմից հարձակման ենթարկված պետության նյութական վնասի փոխհատուցում), հատուցում, տրիտուր  $\diamond$  demander ~ հատուցում պահանջել; obtenir ~ հատուցում ստանալ; au titre de ~ ի հաշիվ ռեպարացիաների

~s civiles վնասների հատուցում

~s d'entretien ընթացիկ վերանորոգում

**répartir** *vt* 1. բաշխել, բաժանել 2. տեղաբաշխել, զետեղել, տեղավորել (գործերը)

**répartition** *f* 1. բաշխում, բաժանում 2. տեղաբաշխում, դասավորում, զետեղում

~ convenue entre les deux gouvernements երկու կառավարությունների միջև համաձայնեցված տեղաբաշխում

~ territoriale շրջանների բաժանում  
 ~ en vigueur առկա՝ գոյություն ունեցող բաժանում

**répercussion** *f* 1. հետահարում (զենքի), անդրադարձում 2. *փ/իսք*. անդրադարձ, պատասխան; հետևանք, ազդեցություն ◊ avoir de graves ~s ծանր հետևանքներ ունենալ  
 ~s inflationnistes արժեզրկման հետևանքներ

**répit** *m* 1. հետաձգում, ժամկետի երկարաձգում 2. կարճատև դադար, թեթև հանգիստ ◊ accorder un ~ տարկետում տալ; sans ~ առանց հանգիստ առնելու, անդադար, անընդհատ, առանց շունչ քաշելու

**replacer** *vt* 1. դնել նախկին տեղը 2. նորից պաշտոն տալ  
 ~ au pouvoir նորից իշխանության բերել, վերականգնել իշխանությունը

**repli** *m* 1. աղեղ, դրոսան, պտույտ, ծովածք, կորագիծ 2. *նսզմ*. նահանջ, հետ քաշվելը, էվակուացիա, տարհանում, դատարկում, հեռացում (վտանգավոր վայրերից) 3. *փ/իսք*. անկում, իջեցում, նվազում

**réplique** *f* 1. պատասխան, առարկություն 2. պատճեն, կրկնօրինակ ◊ obéir sans ~ անվերապահորեն ենթարկվել; prouver sans ~ անառարկելիորեն ապացուցել; d'un ton sans ~ առարկություն չընդունող տոնով

**répondre** 1. *vt* պատասխանել, առարկել 2. *vi* ա) արձագանքել,

պատասխան տալ բ) համապատասխանել գ) պատասխանատու լինել, երաշխավորել  
 ~ de ses actes պատասխանատու լինել իր գործողությունների համար  
 ~ par écrit պատասխանել գրավոր  
 ~ par la négative ժխտական պատասխան տալ  
 ~ à vive voix պատասխան տալ բանավոր կերպով

**réponse** *f* 1. պատասխան 2. առարկություն 3. *փ/իսք*. որոշում, հարցի պատասխան ◊ droit de ~ պատասխանի իրավունք; laisser sans ~ անպատասխան թողնել; en ~ à... ի պատասխան...; pour toute ~ պատասխանի փոխարեն; en ~ à l'interpellation du député ի պատասխան պատգամավորի հարցման; rester sans ~ պատասխան չստանալ; sans ~ անլուծելի; անպատասխան  
 ~ affirmative բացասական պատասխան  
 ~ définitive վերջնական պատասխան  
 ~ négative ժխտական պատասխան  
 ~ de Normand խուսափողական պատասխան  
 ~ tardive ուշացած պատասխան

**repos** *m* 1. հանգիստ 2. հանգստություն, անդորր, խաղաղություն, անշարժություն ◊ une affaire de tout ~ վստահելի գործ; être de ~ հանգստանալ, չաշխատել; des gens de tout ~ լիովին վստահելի մարդիկ; laisser qn en ~ հանգիստ



թողնել մեկին; perdre le ~ հանգիստը կորցնել; se donner (կամ prendre) du ~ հանգստանալ  
 ~ annuel արձակուրդ

**reposer** *vi* 1. հանգստանալ, քնել, պառկել 2. *փ/սք.* հիմնվել, հենվել  
 ◇ se ~ ա) հանգստանալ բ) կանգ առնել գ) *փ/սք.* հույս դնել մեկի՝ ինչ-որ բանի վրա, վստահել, ապավինել մեկին՝ ինչ-որ բանի; se ~ sur ses lauriers դափնիների վրա հանգչել

**repointer** *vt* 1. (տեղա)շարժել 2. հրել, հետ մղել 3. *փ/սք.* վանել 4. մերժել, չընդունել  
 ~ une attaque հարձակումը հետ մղել  
 ~ les conseils խորհուրդները չընդունել  
 ~ une demande խնդրանքը մերժել  
 ~ une proposition առաջարկությունը մերժել

**répréhensible** *adj* դատապարտելի, պարսավանքի արժանի; պատժելի

**reprendre** *vt* 1. հետ վերցնել, խլել 2. նորից բռնել, ձերբակալել 3. վերականգնել, շարունակել 4. քննադատել, դիտողություն անել  
 ~ un criminel հանցագործին բռնել՝ կալանավորել  
 ~ ses fonctions վերադառնալ իր պարտականություններին  
 ~ sa liberté վերստին ազատություն ձեռք բերել  
 ~ la lutte վերսկսել՝ շարունակել պայքարը  
 ~ l'opinion des milieux autorisés արտահայտել հեղինակավոր շրջանակների կարծիքը

~ sa parole խոսքը հետ վերցնել  
 ~ une politique անդրադառնալ քաղաքականությանը՝ նրանում փոփոխություններ կատարելով  
 ~ le travail աշխատանքը վերսկսել

**représailles** *f pl* ճնշում, պատիժ, ճնշամիջոց, ռեպրեսիա; փոխճնշումներ, պատժիչ միջոցներ; *իր/վք.* պատասխան գործողություններ ◇ prohibition des ~ փոխճնշումների արգելում

**représentant** *m* ներկայացուցիչ, լիազորված անձ, լիազոր ◇ Chambre des ~s ներկայացուցիչների պալատ; échanger les ~s diplomatiques փոխանակել դիվանագիտական ներկայացուցիչներին  
 ~ légal օրինական՝ իրավական ներկայացուցիչ  
 ~ permanent մշտական ներկայացուցիչ  
 ~ du peuple ժողովրդի ներկայացուցիչ, պատգամավոր  
 ~ plénipotentiaire լիազոր ներկայացուցիչ  
 ~ régional տարածաշրջանային ներկայացուցիչ  
 ~ spécial հատուկ ներկայացուցիչ

**représentatif**, -ve *adj* 1. *քղք.* ներկայացուցչական 2. բնորոշ, հատկանշական ◇ assemblée ~ve ներկայացուցչական ժողով; conseil ~ ներկայացուցչական խորհուրդ; gouvernement ~ կառավարման ներկայացուցչական եղանակ, ներկայացուցչական բնույթի կառավարություն

**représentation** *f* 1. ներկայացուցչություն 2. ներկայացնելը, ծանոթացնելը, ներկայանալը 3. գաղափար, պատկերացում, հասկացություն 4. վերարտադրություն, վերարտադրում, վերաստեղծում ◊ frais de ~ ներկայացուցչական ծախսեր  
 ~ commerciale առևտրական ներկայացուցչություն  
 ~ consulaire հյուպատոսական ներկայացուցչություն  
 ~ diplomatique դիվանագիտական ներկայացուցչություն  
 ~ nationale ազգային ներկայացուցչություն  
 ~ permanente մշտական ներկայացուցչություն  
 ~ tripartite եռակողմ ներկայացուցչություն

**représenter** *vt* 1. մեկի ներկայացուցիչը լինել, ներկայացնել, առաջադրել, ցույց տալ 2. պատկերել, նկարագրել ◊ se faire ~ à... ուղարկել իր ներկայացուցչին  
 ~ sa candidature իր թեկնածությունն առաջադրել  
 ~ le gouvernement ներկայացնել կառավարություն  
 ~ la majorité ներկայացնել մեծամասնություն  
 ~ la minorité ներկայացնել փոքրամասնություն

**répressif**, -ve *adj* ճնշիչ, պատժիչ, ռեպրեսիվ ◊ action ~ve պատժիչ գործողություն; lois ~ves պատժիչ օրենքներ

**répression** *f* 1. ճնշում, պատժամիջոց, ռեպրեսիա 2. պայքար (հանցագործության դեմ)

~ de la contrebande պայքար մաքսանենգության դեմ  
 ~ policière սուսիկանական դատաստան, բռնություն  
 ~ sauvage դաժան՝ վայրենի դատաստան

**réprimande** *f* նկատողություն, հանդիմանություն, դիտողություն ◊ faire une ~ նկատողություն անել; mériter une ~ նկատողության արժանանալ

**réprimer** *vt* 1. ճնշել, ջախջախել, պատժել 2. զսպել, սանձել, կանխել  
 ~ le crime հանցագործությունը կանխել  
 ~ la révolte, ~ l'insurrection խռովությունը՝ զինված ապստամբությունը ճնշել

**repris** *m*: ~ de justice *իրվք*. կրկնահանցագործ, ռեցիդիվիստ

**reprise** *f* 1. հետ վերցնելը, հետ գրավում, բռնագրավում, հետ նվաճում 2. աշխուժացում, վերելք, աճ, վերականգնում 3. վերսկսում ◊ à plusieurs ~s բազմիցս, հաճախակի  
 ~ des affaires գործերի աշխուժացում  
 ~ économique տնտեսական վերելք  
 ~ des pourparlers, ~ des négociations բանակցությունների վերականգնում

**reprochable** *adj* 1. պարսավելի, պախարակելի; նախատինքի՝ կշտամբանքի՝ հանդիմանանքի արժանի 2. *իրվք*. բացարկման ենթակա (վկայի մասին)

**reproche** *m* 1. կշտամբանք, հանդի-

- մանություն, նախատինք; պարսավանք, պախարակություն 2. *հրվք.* մերժում, բացարկ (վկայի); *pl* բացարկման հիմքեր  $\diamond$  faire ~ à զո հանդիմանել՝ նախատել մեկին; sans ~ անթերի, անբասիր, անպախարակելի, անպարսավելի
- républicain**, -e *adj* հանրապետական  $\diamond$  décret ~ հանրապետական դեկրետ; gouvernement ~ հանրապետական կառավարություն; régime ~ հանրապետական վարչակարգ
- républicain**, -e *m, f* հանրապետական
- république** *f* հանրապետություն  $\diamond$  proclamer ~ հանրապետություն հռչակել; République d'Arménie Հայաստանի հանրապետություն; République Française Ֆրանսիական հանրապետություն  
~ démocratique դեմոկրատական հանրապետություն  
~ démocratique populaire ժողովրդադեմոկրատական հանրապետություն  
~ fédéré ֆեդերալ՝ դաշնային հանրապետություն  
~ sœur եղբայրական հանրապետություն
- répudiation** *f* 1. մերժում, հրաժարում, ժխտում 2. *հրվք.* հրաժարագիր, հրաժարման փաստաթուղթ 3. չեղյալ հայտարարում  
~ d'un traité (միջազգային) պայմանագրի խզում
- répudier** *vt* 1. չեղյալ հայտարարել, հրաժարվել, ուրանալ 2. մերժել, ժխտել, չընդունել
- ~ le contrat պայմանագիրը չեղյալ համարել  
~ la politique քաղաքականությունը մերժել  
~ la responsabilité պատասխանատվությունից հրաժարվել
- réputation** *f* վարկ, անուն, համբավ, հեղինակություն, հռչակ  $\diamond$  avoir une bonne [mauvaise] ~ բարի [վատ] համբավ ունենալ  
~ mondiale համաշխարհային համբավ՝ հեղինակություն
- réputé**, -e *adj* հայտնի, հռչակավոր, անվանի, հեղինակավոր  $\diamond$  pays ~ pour son hospitalité իր հյուրասիրությամբ հայտնի երկիր
- requérir** *vt* 1. խնդրել, դիմել, պահանջել 2. բարեխոսել, միջնորդել (դատարանում) 3. մեղադրական ճառ արտասանել 4. բռնագրավել
- requête** *f* 1. խնդրանք, դիմում, միջնորդություն, բարեխոսություն 2. *հրվք.* գրավոր դիմում դատարանին, գրավոր խնդիրք դատավորի անվամբ  $\diamond$  maître des ~s գեկուցող պետական բարձրագույն մարմնում; présenter une ~ դիմում ներկայացնել դատարան; à (կամ sur) la ~ de... միջնորդությամբ, պահանջով  
~ en cassation վճռաբեկման գանգատ  
~ civile միջնորդություն դատարանի կողմից կայացված որոշման վերանայման մասին  
~ individuelle անհատական բողոք  
~ recevable ընդունելի բողոք
- requis**, -e *adj* պահանջվող, պատ-

շան, հարկավոր, հարկ եղած  
**réquisition** *f* 1. բռնագրավում 2. պահանջ 3. *հրվք.* փաստաթուղթ կամ անձ ներկայացնելու մասին միջնորդություն, խնդրագիր 4. *հրվք.* հարկադիր կարգով ենթարկելը  
 ~ de la force armée զինված ուժերի կիրառում կարգուկանոնի պահպանության համար  
 ~ en nature բռնագրավում բնամթերքով  
 ~ des travailleurs աշխատուժի մոբիլիզացում; հրաման գործադրվավորներին աշխատանքը վերականգնելու մասին  
**réquisitoire** *m* 1. մեղադրական ճառ դատական նիստում; մեղադրանք 2. դատախազի գրավոր պահանջ, դատախազի եզրակացություն  
 ~ introductif մեղադրական եզրակացություն  
**rescapé**, -e *m, f* (մահացու) վտանգից՝ (սպանվելու) վտանգից ազատված՝ փրկված՝ ողջ մնացած անձ  
**rescindant**, e *adj* *հրվք.* որոշումը չեղյալ հայտարարելու ենթակա՝ առիթ տվող  
**rescindant** *m* *հրվք.* դիմում-խնդրանք դատական որոշումը չեղյալ հայտարարելու մասին  
**rescinder** *vt* *հրվք.* չեղյալ հայտարարել, ոչնչացնել, վերացնել, անվավեր համարել; լուծել, քանդել (պայմանագիրը, համաձայնագիրը)  
 ~ le contrat պայմանագիրը լուծել  
 ~ la décision որոշումը չեղյալ

հայտարարել  
**rescision** *f* *հրվք.* չեղյալ հայտարարում, չեղյալ հայտարարելը, վերացում, ոչնչացում, անվավեր համարելը; լուծարում, քանդում (պայմանագրի, համաձայնագրի)  
**réseau** *m* ցանց  
 ~ ferré, ~ de chemins de fer երկաթուղային ցանց  
 ~ des échanges ճանապարհացանց, որով իրականացվում է առևտուր  
 ~ express régional (R.E.R.) Փարիզի երկաթուղային ցանցը  
 ~ d'intrigues խարդավանքների ցանց  
 ~ de télévision հեռուստատեսային ցանց  
**réservation** *f* 1. *հրվք.* վերապահում, վերապահություն 2. պատվեր, նախօրոք պատվիրված տեղ ◊ faire certaines ~s որոշակի վերապահումներ անել  
 ~ d'un droit իրավունքի վերապահում  
 ~s de caractère général ընդհանուր բնույթի վերապահումներ  
**réserve** *f* 1. պաշար, պահուստ 2. *նազմ.* պահեստային ուժեր, պահեստազոր 3. պայման, վերապահություն 4. գաղվածություն, զգուշություն ◊ accumuler des ~s պահեստային միջոցներ կուտակել; affecter à la ~ առանձնացնել պահուստի համար; banque centrale de ~ օտար երկրներում դրամ թողարկող բանկերին տրվող նոր ամուն; capitulation sans ~s անվերապահ կապիտուլյացիա; constituer (créer, former) des ~s պա-

հուստային միջոցներ ստեղծել; faire des ~s վերապահումներ անել; mettre à contribution la ~ պաշարն օգտագործել; parler avec ~ խոսել զգուշավոր; puiser sur ses ~s սեփական պաշարներին դիմել; reconstituer les ~s պահուստային միջոցները վերականգնել; Réserve fédérale ԱՄՆ-ի կենտրոնական բանկ; à la ~ de... բացի, բացառությամբ; de ~ պահեստային, պահեստի; se tenir sur la ~ զգուշանալ; sans ~ անվերապահորեն, առանց սահմանափակման, առանց բացառության; sous ~ de ... վերապահությամբ, պայմանով; sous la ~ que... պայմանով, որ...; sous toute ~ առանց երաշխավորելու ստույգությունը՝ վավերականությունը ~ de capital կապիտալի պահեստային միջոցներ ~ de devise արժույթային հիմնադրամ ~ légal օրենքով սահմանված դրամագլխային պաշար (ձեռնարկության) ~ d'or ոսկու պաշար, ոսկու ֆոնդ (պահեստապաշարներ) ~s contractuelles պայմանագրային պահուստային միջոցներ ~s mondiales համաշխարհային պաշարներ ~s latentes, ~ occultes գաղտնի պահուստային միջոցներ ~s ouvertes, ~ apparentes հրապարակված պահուստային միջոցներ

**réserver** *vt* 1. պահեստավորել, պահել, պաշար հավաքել 2. իրավունք վերապահել 3. նախապես պատվիրել, ամրագրել ◊ se ~ իր համար պահել; se ~ sur... իրեն վերապահել; se ~ de ... ձեռնպահ մնալ; se ~ l'exclusive de... իրեն վերապահել բացառիկ իրավունք...

**résidence** *f* 1. մշտական բնակության վայր, ապրելավայր, կացարան, գտնվելու տեղ 2. նստավայր 3. լիազոր ներկայացուցչի պաշտոնը ◊ certificat de ~ տեղեկանք բնակության վերաբերյալ; conditions de ~ նստակեցություն; droit de ~ բնակության իրավունք; établir (կամ fixer) sa ~ բնակություն հաստատել; mettre en ~ surveillée զրկել երկրից դուրս գալու իրավունքից ~ écologique բնակվելու վայրը ~ forcée բնակության վայրը փոխելու արգելք ~ principale բնակության հիմնական վայր ~ secondaire ամառանոց

**résident**, -e *m, f* 1. *դվնգ.* ռեզիդենտ (դիվանագիտական համակարգում ներկայացուցիչ, որի դիվանագիտական աստիճանը հաջորդում է դեսպանորդի աստիճանին) 2. օտարերկրացի (որը ժամանակավորապես բնակվում է ուրիշ երկրում) 3. իրավաբանական անձ, որն ունի գործունեության հիմնական վայր՝ տվյալ պետության տարածքում ◊ ministre ~ դիվանագիտական ներկայացուցիչ, ռեզիդենտ նախարար

**résider** *vi* 1. բնակվել, գտնվել, որոշ

- ժամանակ հյուրընկալել, մնալ, կենալ 2. կայանալ, հանդիսանալ
- résignant** *m* ուրիշին իր պաշտոնը զիջող, պաշտոնից հրաժարվող
- résignataire** *m* *հրվբ.* հաջորդող, փոխարինող
- résignation** *f* 1. իր պաշտոնից հրաժարում, լիազորությունները վայր դնելը, պաշտոնաթողություն, հրաժարական 2. հեզություն, հնազանդություն, ճակատագրին ենթարկվելը, զիջելը (հոգուտ մեկի)
- résigné**, *-e adj* հնազանդ, զիջող, հաշտվող, հեզ, հլու, ենթարկվող, հպատակվող
- résiliation** *f* գործողության դադարում, լուծարում, լուծում, խզում, չեղյալ հայտարարելը (ակտի, պայմանագրի)  
~ de l'accord համաձայնագրի լուծում  
~ du contrat պայմանագրի գործողությունը դադարեցնել
- résilier** *vt* լուծել, խզել, չեղյալ հայտարարել (ակտը, պայմանագիրը)  $\diamond$  se réserver le droit de ~ le contrat պայմանագիրը լուծելու իրավունք վերապահել
- résistance** *f* 1. դիմադրություն, հակազդեցություն; հակահարված, հարձակման հետ մղում, դիմագրավում 2. դիմացկունություն  $\diamond$  faire ~ հակահարված տալ, դիմադրել; noyau de ~ դիմադրության օջախ; opposer une ~ opinion à ~ համառ դիմադրություն ցույց տալ; la Résistance, Mouvement de Résistance Գիմադրության շարժում (Ֆրանսիայում՝ 1940-1944 թթ. ֆաշիստական օկուպացիայի ժամանակ); Գիմադրության շարժման մասնակիցներ  
~ passive թույլ դիմադրություն  
~ tenace et durable համառ և երկարատև դիմադրություն
- résistant**, *-e adj* 1. դիմադրող, դիմագրավող, ընդդիմացող 2. դիմացկուն, պինդ
- résistant**, *-e m, f* 1. Գիմադրության շարժման մասնակից 2. պարտիզան
- résister** *vt* 1. դիմադրել, դիմադրություն ցույց տալ, դիմագրավել, պաշտպանվել 2. հակառակվել, ընդդիմանալ, պայքարել, չենթարկվել, հակադրվել  $\diamond$  cela ne résisite pas à la critique դա ոչ մի քննադատության չի դիմանում, թույլ է  
~ à l'ennemi թշնամուն դիմադրել
- résolu**, *-e adj* վճռական, հաստատական, անկոտրում  $\diamond$  être pleinement ~ լինել վճռականությամբ լի; se déclarer fermement ~ à... հայտարարել իր անհողողող կամքի մասին
- résoluble** *adj* 1. լուծելի, վճռելի; 2. քանդելի, խզելի, լուծարելի
- résolument** *adv* 1. վճռաբար, վճռականորեն, վճռականապես, վճռականությամբ 2. համարձակ, խիզախ, համարձակորեն, խիզախորեն
- résolution** *f* 1. լուծելը, վճռելը, լուծում (խնդրի) 2. *դվնգ.* ռեզոլյուցիա, բանաձև, միջազգային իրավունքում՝ գրավոր որոշում (որն ընդունվել է կոլեգիալ քննարկումների արդյունքում) 3. վճռականություն, հաստատա-

կամություն, համարձակություն  
 4. *հրվք.* պայմանագրի լուծում  $\diamond$   
 adopter une ~ բանաձև ընդունել;  
 désapprouver la ~ բանաձևին հա-  
 վանություն չտալ; manquer de ~  
 անվճռական լինել; mettre au  
 point (կամ élaborer) une ~ բա-  
 նաձև մշակել; préambule de la ~  
 բանաձևի ներածություն` պրե-  
 ամբուլա; prendre (կամ former)  
 une ~ որոշում կայացնել; propo-  
 ser une ~ բանաձև առաջարկել  
 ~ de l'assemblée ժողովի որոշումը  
 ~ cruciale վճռական որոշում  
 ~ d'un problème խնդրի լուծում  
 ~ de remplacement փոխարինող  
 բանաձև

**résorber** *vt* 1. կլանել, յուրացնել,  
 ներծծել 2. *փհք.* հեռացնել, վե-  
 րացնել, ոչնչացնել  
 ~ le chômeur վերացնել գործա-  
 րկությունը  
 ~ un déficit դեֆիցիտը վերացնել

**résoudre** *vt* 1. լուծել, վճռել, որոշել;  
 լուծում տալ 2. *հրվք.* լուծել, խզել,  
 չեղյալ հայտարարել 3. համոզել,  
 տրամադրել, թեքել, դրդել, խթա-  
 նել, գրգռել, հարկադրել, ստիպել  
 ~ un problème հարցը լուծել

**respect** *m* 1. հարգանք, պատիվ, մե-  
 ծարանք, ակնածանք, պատկա-  
 նանք 2. պահպանում  $\diamond$  avoir  
 (կամ témoigner) du ~ à (կամ en-  
 vers, pour, à l'égard de) զո հար-  
 գանք տածել մեկի նկատմամբ;  
 manquer de ~ envers զո անհար-  
 գալից վերաբերվել մեկին; par ~  
 հարգանքից դրդված, հարգան-  
 քով  
 ~ des engagements internationaux

միջազգային պարտավորու-  
 թյունների պահպանում  
 ~ de l'indépendance անկախու-  
 թյան պահպանում  
 ~ des lois օրենքների պահպա-  
 նում, հարգանք օրենքի նկատ-  
 մամբ  
 ~ mutuel փոխադարձ հարգանք

**respecter** *vt* 1. հարգել, պատվել, մե-  
 ծարել 2. պահպանել, պահել,  
 ճշտությամբ կատարել; խնայել,  
 զգույշ վերաբերվել, չխախտել  $\diamond$   
 faire ~ ստիպել հարգելու, հարգել  
 տալ  
 ~ les lois օրենքները պահպանել  
 ~ l'opinion de զո հարգել մեկի  
 կարծիքը  
 ~ les traditions ավանդույթները  
 պահպանել

**respectif**, *-ve adj* 1. փոխադարձ,  
 երկկողմանի 2. համապատաս-  
 խան; հատուկ  $\diamond$  au nom de leur  
 gouvernements ~s համապատաս-  
 խան կառավարությունների ա-  
 նունից

**respectivement** *adv* փոխադարձա-  
 բար; համապատասխանաբար

**responsabilité** *f* պատասխանատ-  
 վություն, պարտավորություն,  
 պարտականություն, հանձնա-  
 ռություն  $\diamond$  assumer la ~ պատաս-  
 խանատվություն ստանձնել;  
 atténuer la ~ պատասխանատ-  
 վությունը մեղմացնել; avoir la ~  
 պատասխանատվություն կրել;  
 décliner toute ~ ողջ պատասխա-  
 նատվությունը վրայից հանել;  
 décharger la ~, exonérer d'une ~  
 պատասխանատվությունից ա-  
 զատել; échapper à la ~ պատաս-

խանաստվությունից խուսափել; encourir (կամ engager) la ~ պատասխանաստվություն կրել; fuir ses ~s պատասխանաստվությունից փախչել; imposer la ~ պատասխանաստվություն դնել; prendre la ~ պատասխանաստվությունն իր վրա վերցնել; rejeter (կամ faire retomber) la ~ sur զո պատասխանաստվությունը դնել ուրիշի վրա; la ~ incombe à ... պատասխանաստվությունը ընկնում է...; se soustraire à la ~ պատասխանաստվությունից խույս տալ; Société à ~ limitée (S.A. R. L.) *տնտ.* սահմանափակ պատասխանաստվությամբ ընկերություն

~ administrative վարչական պատասխանաստվություն  
 ~ collective ընդհանուր ` կոլեկտիվ պատասխանաստվություն  
 ~ contractuelle պայմանագրային պատասխանաստվություն  
 ~ financière ֆինանսական պատասխանաստվություն  
 ~ gouvernementale կառավարության պատասխանաստվությունը  
 ~ internationale միջազգային պատասխանաստվություն  
 ~ limitée, ~ restreinte սահմանափակ պատասխանաստվություն  
 ~ pénale քրեական պատասխանաստվություն  
 ~ politique քաղաքական պատասխանաստվություն  
 ~ publique հասարակական պարտականություն

**responsable** *adj* 1. պատասխանատու, լիազորված 2. մեղավոր;

հանցավոր ◊ être ~ de պատասխանատու լինել, պատասխանաստվություն կրել; rendre ~ մեկին պատասխանատու համարել; մեկի վրա դնել պատասխանաստվությունը; se tenir pour ~ իրեն պատասխանատու համարել

**responsable** *m, f* 1. պատասխանատու աշխատակից, լիազոր; պատասխանաստվություն կրող, ղեկավար 2. մեղավոր, հանցավոր; պատճառ հանդիսացող  
 ~ du parti կուսակցական աշխատող  
 ~s d'une guerre պատերազմի մեղսարարներ, պատերազմի հանցավորներ

**resserrement** *m* 1. ամրացում, ամրապնդում 2. *փխբ.* բոլոր կողմերից սեղմում, նեղում  
 ~ d'une alliance միության ամրապնդում  
 ~ des liens կապերի ամրապնդում  
 ~ des rangs շարքերի խտացում

**resserrer** *vt* 1. ամրացնել, ամրապնդել 2. *փխբ.* ամուր սեղմել, նեղել 3. պակասեցնել, կրճատել, սահմանափակել  
 ~ l'amitié բարեկամությունն ամրապնդել  
 ~ ses besoins պահանջումները սահմանափակել  
 ~ les liens de l'amitié բարկամական կապերը ամրապնդել  
 ~ un ouvrage աշխատանքը կրճատել  
 ~ les rangs շարքերը խտացնել

**ressort** I *m* 1. գապանակ, առաձգակալ 2. եռանդ, կորով, ուժ, վճռա-



կանություն; դրդապատճառ, շարժառիթ; շարժիչ ուժ 3. միջոց; գեներ (նպատակին հասնելու)  $\diamond$  avoir du ~ եռանդուն՝ գործունյա լինել; casser le ~ կամքը կոտրել, ոգին ընկճել; faire jouer tous les ~s բոլոր զսպանակները սեղմել, բոլոր միջոցները գործի դնել; manquer de ~ անտարբեր, անգործունյա լինել; sans aucun ~ իներտ, անտարբեր, անաշխույժ

**ressort** II *m* 1. դատական ատյան 2. գերատեսչություն 3. իրավասություն, լիազորություններ, լիիրավություն  $\diamond$  avoir dans son ~ իր տնօրինության տակ (իր վարույթում) ունենալ; en dernier ~ վերջին հաշվով, վերջին հերթին; être du ~ de... լինել մեկի տնօրինության տակ; jugement en premier [dernier] ~ առաջին [երկրորդ] ատյանի դատարանի դատավճիռ; juger en dernier ~ կայացնել վերջնական դատավճիռ

**ressortir** *vi* I 1. նորից դուրս գալ՝ դուրս բերել 2. *փ/սք.* առանձնանալ, աչքի ընկնել 3. բխել, հետևել  $\diamond$  faire ~ առանձնացնել, ընդգծել; il en ressort ... սրանից հետևում է ...

**ressortir** *vi* II 1. իրավասության՝ տնօրինության տակ լինել; պարտականությունների մեջ մտնել 2. վերաբերել, պատկանել ~ à la littérature վերաբերել գրականությանը

**ressortissant**, -e *adj* ենթակա, ստորադաս; մեկի իրավասության տակ գտնվող

**ressortissant**, -e *m, f* հպատակ; քա-

ղաքացի; ծագումով ... (որևէ երկրից)

**ressource** *f* 1. միջոց, հնարավորություն 2. հնարավորություններ, կարողություններ 3. *pl* ռեսուրսներ, պաշարներ, միջոցներ, միջոցների աղբյուր; դրամական միջոցներ  $\diamond$  affecter (կամ assigner, octroyer) les ~s միջոցներ հատկացնել; allocation des ~s ռեսուրսների բաշխում՝ հատկացում; avoir la ~ de ... հնարավորություն ունենալ; c'est notre dernière ~ սա մեր վերջին հույսն է; homme de ~ հնարամիտ մարդ; sans ~s առանց միջոցների; se procurer des ~ իրեն ասպահովել դրամական միջոցներով ~s affectées նպատակային բյուջետային միջոցներ ~s brutes, ~s naturelles բնական պաշարներ՝ հարստություններ ~s budgétaires բյուջետային միջոցներ ~s et emplois հասույթ և ծախս (հաշվեկշռում) ~s fiscales հարկային մուտքեր ~s en hommes, ~s humaines մարդկային ռեսուրսներ; աշխատուժ ~s locales տեղական միջոցներ ~s minières, ~s du sous-sol օգտակար հանածոներ ~s du Trésor գանձապետարանի ֆինանսական պաշարներ

**ressusciter** *vt* վերակենդանացնել, հարություն տալ, վերականգնել ուժերը

**restauration** *f* 1. վերականգնում, վերանորոգում, վերակառուցում 2.

- la Restauration *uyunf.* Ռեսավրացիա (1813-30 թթ.)
- restaurer** *vt* 1. վերականգնել, ռեստավրացիայի ենթարկել, վերանորոգել, վերակառուցել 2. վերածնել, վերստեղծել 3. գահի վրա դնել, վերականգնել գահակալությունը
- reste** *m* 1. մնացածը, մնացած մասը 2. մնացորդ, ավելցուկ, մանր (դրամի)
- rester** *vi* 1. մնալ, չհեռանալ 2. գտնվել, լինել, մնալ (որևէ վիճակում)  $\diamond$  avoir du temps de ~ ազատ ժամանակ ունենալ (իր տրամադրության տակ) ; il reste que... այնուամենայնիվ, ինչպես էլ լինի; en ~ là կանգ առնել ինչ-որ բանի վրա, սահմանափակվել, բավարարվել ինչ-որ բանով ~ en arrière հետ մնալ, հետ ընկնել ~ sur le champ de bataille ընկնել մարտի դաշտում, զոհվել, սպանվել ~ dans la gorge կոկորդում մնալ ~ indenne ազատվել, փրկվել, ողջ մնալ ~ longtemps à faire qch երկար - բարակ զբաղվել (մի բանով), խաղ անել ~ maître de... տեր լինել, տիրապետել ~ muet sur... պահպանել լռություն ինչ-որ բանի մասին ~ tel quel մնալ անփոփոխ, մնալ նույնը
- restituable** *adj* 1. վերադարձման ենթակա, փոխհատուցելի 2. վերականգնելի
- restituer** *vt* 1. վերադարձնել, հետ տալ; փոխհատուցել 2. վերականգնել, վերաստեղծել 3. վերականգնել (իրավունքները, անունը, պատիվը), ռեսթիլիտացիայի ենթարկել ~ un texte վերականգնել տեքստը
- restitution** *f* 1. վերադարձնելը, հետ տալը, փոխհատուցում 2. վերականգնում, վերաստեղծում 3. *իրավք.* իրավունքների վերականգնում 4. *իրավք.* ռեստիտուցիա (պատերազմող պետության կողմից հակառակորդի տարածքից ապօրինի զավթված և երկրից դուրս բերված գույքի վերադարձ)
- restreindre** *vt* պակասեցնել, նվազեցնել, կրճատել; սահմանափակել
- restreint**, *-e adj* 1. սահմանափակված; կրճատված 2. սահմանափակ կազմով  $\diamond$  conversations ~es բանակցություններ սահմանափակ կազմով; dans un sens plus ~ ավելի նեղ իմաստով
- restrictif**, *-ve adj* 1. սահմանափակող, սահմանափակիչ 2. զսպող, արգելակող  $\diamond$  interprétation ~ve սահմանափակող մեկնաբանություն; mesures ~ves սահմանափակող՝ արգելակող միջոցներ
- restriction** *f* 1. սահմանափակում 2. վերապահություն 3. *pl* սահմանափակումներ (պարենի և այլ հարցերում)  $\diamond$  affranchir (կամ démanteler) les ~s սահմանափակումները վերացնել; être soumis à des ~s սահմանափակումների

- ենթարկվել; imposer (introduire) des ~s սահմանափակումներ մտցնել; lever les ~s սահմանափակումները հանել; sans (aucune) ~ առանց (որևէ) վերապահության; sans ~ առանց սահմանափակման  
 ~ de la liberté ազատության սահմանափակում  
 ~s budgétaires բյուջետային հատկացումների կրճատումներ  
 ~s à l' (d') exportation, ~ aux exportations արտահանման սահմանափակումներ  
 ~s à l' (d') importation, ~s aux importations ներմուծման սահմանափակումներ  
 ~s quantitatives քանակական սահմանափակումներ
- restructuration** *f* կառուցվածքային վերափոխություն, վերակառուցում, վերակազմություն
- restructurer** *vt* վերակառուցել, վերակազմել, վերադասավորել
- résultant**, -e *adj* բխող, առաջ եկող, ծագող, հետևանք ունեցող ◊ les obligations ~es de traités publiés պարտավորություններ, որոնք բխում են հրապարակված պայմանագրերից
- résultat** *m* 1. արդյունք, հետևանք, ցուցանիշ 2. հանրագումար, ամփոփում 3. *տևտ*. ֆինանսական արդյունք; շահույթ; կորուստ ◊ aboutir à un ~ արդյունքի հասնել; donner un ~ avantageux դրական արդյունք տալ; sans ~ անարդյունավետ  
 ~ appréciable նշանակալից արդյունք
- ~ brut, ~ total համախառն շահույթ, համախառն կորուստ  
 ~ négligeable չնչին արդյունք  
 ~ tangible շոշափելի արդյունք  
 ~ de vote քվեարկության արդյունք  
 ~s définitifs վերջնական արդյունքներ  
 ~s partiels մասնակի արդյունքներ  
 ~s provisoires նախնական արդյունքներ (ընտրությունների)
- résulter** *vi* բխել, հետևել; առաջ գալ, ծագել, սկիզբ առնել ◊ il en résulte que... արանից հետևում է, որ...
- résumé** *m* ամփոփում, համառոտ շարադրանք; թեզիսներ ◊ en ~ ա) համառոտ բ) ընդհանուր առմամբ, արդյունքում
- résumer** *vt* ամփոփել, կրճատ շարադրել; եզրափակել; հանրագումարի բերել ◊ se ~ 1. շարադրվել համառոտ՝ ընդհանուր գծերով 2. se ~ à... հանգեցնել ինչ-որ բանի
- rétablir** *vt* վերականգնել, նորից հիմնել, վերաստեղծել  
 ~ l'équilibre վերականգնել հավասարակշռությունը  
 ~ l'ordre վերականգնել կարգուկանոնը  
 ~ les relations diplomatiques վերականգնել դիվանագիտական հարաբերությունները
- rétablissement** *m* վերականգնում  
 ~ de l'équilibre հավասարակշռության վերականգնում  
 ~ de la paix խաղաղության վերականգնում

- retard** *m* 1. ուշացում, հապաղում, դանդաղում, հետ մնալը, հետ ընկնելը 2. հետաձգում  $\diamond$  avoir du ~ ուշանալ; être (կամ arriver, se mettre) en ~ ուշանալ, ուշացումով գալ; être en ~ sur la vie կյանքից հետ մնալ; sans ~ անհապաղ, անմիջապես  
~ de croissance դանդաղ աճ  
~ de payement վճարման հետաձգում
- retardataire** *adj* 1. ուշացած, ուշացող, հետ մնացած 2. հետամնաց; հետ մնացող, առաջադիմություն չցուցաբերող
- retardement** *m* 1. դանդաղում, ուշացում 2. հապաղում, ձգձգում
- retarder** 1. *vt* հետաձգել, ուշացնել; ձգձգել, դանդաղեցնել 2. *vi* ուշանալ, ուշ գալ; հետ ընկնել, հետ մնալ  
~ la mache d'une affaire դանդաղեցնել գործի ընթացքը  
~ sur son temps ժամանակից հետ մնալ
- retentissant**, -e *adj* 1. հնչուն, հնչեղ, զիլ, զրնգուն; բարձր; դղրդալի 2. *փխք.* շշմեցուցիչ  $\diamond$  essayer un échec ~ լիակատար պարտություն կրել; mots ~s մեծադղորդ՝ ճոռոմ՝ փքուն խոսքեր; succès ~ աղմկալի հաջողություն
- retentissement** *m* 1. արձագանք, հնչեղություն 2. ազդեցություն, հետևանք  $\diamond$  avoir son ~ dans ... անդրադառնալ ... վրա; cet événement a eu un grand ~ այդ իրադարձությունը մեծ արձագանք ունեցավ
- réticence** *f* դիտավորյալ լռության մատնելը, լռություն պահպանելը, թերասություն, խոսքը կիսատ թողնելը, մտքերը թաքցնելը
- retirer** *vt* հետ վերցնել (խոսքը), հանել (առաջարկությունը և այլն)  $\diamond$  je ~e ce que j'ai dit իմ հայտարարությունը հետ եմ վերցնում; se ~: se ~ de qch ինչ-որ բանից մի կողմ քաշվել, հեռանալ; se ~ du jeu խաղից դուրս գալ; se ~ du service աշխատանքից հեռանալ  
~ sa candidature իր թեկնածությունը հանել  
~ les fonctions à qn պարտականությունների կատարումից ազատել մեկին  
~ la parole à qn խոսքից զրկել մեկին  
~ sa parole խոսքը հետ վերցնել  
~ une proposition առաջարկությունը հանել
- retombées** *f pl* : ~ atomiques ռադիոակտիվ տեղումներ
- retomber** *vi* ընկնել մեկի վրա, ծանրանալ  $\diamond$  faire ~ la responsabilité sur qn պատասխանատվությունը զգել մեկի վրա
- retordre** *vt*: avoir du fil à ~ դժվարին կացության մեջ լինել; donner du fil à ~ à qn մեկին գլխացավանք պատճառել
- rétorquer** *vt* 1. հակառակորդին նրա սեփական զենքով ջախջախել, նույնով պատասխանել 2. առարկել, հակաճառել, ընդդիմախոսել, պատասխան տալ
- rétorsion** *f* 1. *դվնգ.* ռետորսիա, ազդամիջոց, ներագրման միջոց, հակազդամիջոց 2. հակառակորդի փաստարկների օգտագոր-

ծում ի վնաս նրա՝ նրա դեմ  
**retouche** *f* վերափոխում, ձևափոխում, ուղղում, շտկում, վերանորոգում, սրբագրում  
**retour** *m* 1. վերադարձ, հետ գալը, հետ դառնալը, դարձ 2. վերադարձում, վերադարձնելը  $\diamond$  être de ~ վերադառնալ; faire un ~ sur soi-même խելքը գլուխը հավաքել, ուշքի գալ, մտադրությունը փոխել; en ~ փոխարենը; par ~ du courrier հետադարձը՝ փոստով; sans ~ անվերադարձ  
 ~ de l'opinion հասարակական կարծիքի մեջ շրջադարձ՝ բեկում  
**retourner** *vt* 1. շրջել, շուռ տալ 2. *խսկց.* տարհամոզել, վերահամոզել, համոզումնքը փոխել տալ 3. վերադարձնել, ուղարկել  $\diamond$  tourner et ~ բոլոր կողմերից ուսումնասիրել  
 ~ la question հարցին հարցով պատասխանել  
**rétracter** *vt* հրաժարվել, ուրանալ; ժխտել, ասածից հրաժարվել  
 ~ une proposition առաջարկությունը հետ վերցնել  
**retrait** *m* 1. վերացում, դադարեցում, արգելում, ոչնչացում, չեղյալ հայտարարելը, հրաժարում, գրկում 2. հետ տանելը, հետ քաշելը, դուրս բերելը, հետ կանչելը 3. հանում (հաշվից), հետ վերցնելը (ավանդի, օրինագծի) 4. ելնելը, դուրս գալը (կազմակերպությունից)  
 ~ de l'ambassadeur դեսպանին հետ կանչելը  
 ~ d'une candidature թեկնածությունը հասնելը

~ de capitaux կապիտալների հանում (կազմակերպությունից); կապիտալների հետկանչում (երկրից)  
 ~ d'un décret օրենքը չեղյալ հայտարարելը  
 ~ d'un dépôt ավանդի հանում (բանկից)  
 ~ des droits électoraux ընտրական իրավունքներից գրկելը  
 ~ d'emploi աշխատանքից ազատում, պաշտոնից հանելը  
 ~ des sanctions պատժամիջոցների վերացում  
 ~ des troupes d'occupation օկուպացիոն զորքերի դուրսբերում  
**retraite** *f* 1. *ազգ.* նահանջ 2. աշխատանքից ազատվելը, թոշակի անցնելը 3. երթ  $\diamond$  battre en ~, faire ~ նահանջել; couper la ~ կտրել նահանջի ճանապարհը; pension de ~ ծերության թոշակ; prendre sa ~ թոշակի անցնել; à la ~ պաշտոնաթող; en ~ թոշակառու; toucher sa ~ թոշակ ստանալ  
 ~ aux flambeaux ջահերով երթ  
**retranchement** *m* 1. կտրելը, հատելը, կրճատելը, փոքրացնելը, ոչնչացնելը 2. խրամատ, ամրություն 3. *փխք.* պաշտպանական միջոց  $\diamond$  attaquer (կամ forcer, pourchasser, poursuivre, pousser) qn dans ses (derniers) ~s մեկին պատին սեղմել, հերքել բոլոր փաստարկները  
**retrancher** *vt* 1. կտրել, հատել 2. կրճատել, նվազեցնել 3. ամրացնել (խրամատներով)  $\diamond$  se ~ *ազգ.* խրամատավորվել; se ~ derrière un prétexte գլուխն ազա-

տել փաստարկներ բերելով  
**rétroblution** *f* 1. ռոճիկ, աշխատավարձ 2. պարզևատրություն, հոնորար  
**rétroactif**, -ve *adj* հետադարձ գործողություն, հետադարձ ուժ ունեցող (օրենքի մասին)  $\diamond$  l'effet ~ հետադարձ ներգործություն  
**rétroaction** *f* հետադարձ գործողություն, հետադարձ ուժ (օրենքի); հետադարձ կասյ  
**rétrocession** *f*: ~ du territoire հանձնված տարածքների վերադարձ  
**rétrogradation** *f* հետադիմություն, հետընթացություն, զարգացման անկում, հետզարգացում, աստիճանական վատթարացում, հետամնացություն  
**rétrograde** *adj* հետամնաց, հետադիմական  
**rétrograder** *vi* հետադիմել, շարժվել դեպի հետ, անկում ապրել, աստիճանաբար վատթարանալ  
**rétrogression** *f* հետադիմություն, հետադարձ շարժում, հետընթացություն; անկում  
**rétrospectif**, -ve *adj* հետադարձ  $\diamond$  jeter un coup d'oeil ~ հետադարձ հայացք նետել  
**retrouver** *vt* 1. վերագտնել; փնտրելով գտնել, կորցրածը գտնել 2. վերականգնել  $\diamond$  l'industrie a ~é les deux tiers de son activité արդյունաբերական արտադրությունը վերականգնվել է երկու երրորդով  
~ la parole, ~ sa langue վերստին կարողանալ խոսել, լեզուն բացվել  
**rets** *m* *փխբ.* ծուղակ, թակարդ, որո-

զայթ, ցանց  $\diamond$  prendre (կամ tendre) qn dans ses ~ մոլորեցնել, խաբել; tomber dans les ~ ծուղակն ընկնել  
**réunification** *f* վերամիացում, վերամիավորում, վերամիավորվելը ~ nationale ազգային վերամիավորում  
**réunifié**, -e *adj* վերամիավորված  
**réunion** *f* 1. ժողով, նիստ, հավաք 2. միացում, միավորում, միաձուլում  $\diamond$  chevauchement avec d'autres ~s կրկնորդում ուրիշ նիստերի հետ; liberté de ~ հավաքների, ժողովների ազատություն ~ électorale նախընտրական ժողով  
~ du parti կուսակցական ժողով  
~ plénière լիակազմ նիստ  
~ privée մասնավոր ժողով  
~ restreinte փակ նիստ  
~ de table ronde նիստ՝ կլոր սեղանի շուրջը  
~ urgente շտապ նիստ  
**réunir** *vt* 1. միացնել, կցել, միավորել 2. հավաքել, գումարել (ժողով)  
~ les conditions բավարարել պայմաններին; համապատասխանել պահանջներին  
~ des preuves ապացույցներ հավաքել  
**réussi**, -e *adj* հաջող, հաջողակ, բարեհաջող; փայլուն, հաջողված  $\diamond$  mal ~ անհաջող  
**réussir** *vi* 1. հաջողվել, հաջողություն ունենալ, հաջողությամբ ընթանալ, բարեհաջող լինել 2. բարգավաճել, ծաղկել, առաջադիմել, հաջողակ լինել  $\diamond$  faire ~ իրականացնել

- ~ une affaire գործը վարել հաջողությամբ
- réussite** *f* 1. *հնգծ.* արդյունք, հետևանք, ելք 2. հաջողություն, նվաճում, առաջընթաց
- revalidation** *f* փաստաթղթի՝ վավերագրի՝ ակտի իրավական ուժի վերականգնում
- revalider** *vt* վերականգնել որոշման՝ ակտի իրավական ուժը
- revalorisation** *f* 1. վերարժևորում 2. արժույթի փոխարժեքի ամրացում, կայունացում 3. արժեքի վերագնահատում; գների վերանայում
- ~ des traitements, ~ des salaires աշխատավարձերի դրույթի բարձրացում
- revaloriser** *vt* 1. վերարժևորել 2. բարձրացնել արժույթի փոխարժեքը, կայունացնել 3. գները վերանայել
- revanchard**, -e *m, f* ռևանշիստ, վրիժառու
- revanche** *f* 1. ռևանշ, փոխվրեժ 2. հատուցում, փոխհատուցում,  $\diamond$  à charge de ~ նույն կերպ փոխհատուցելու պայմանով; esprit de ~ ռևանշիզմ, ռևանշային ոգի; prendre sa ~ ռևանշ վերցնել; en ~ փոխարենը
- revancher** (se) ռևանշ վերցնել; նույնով հատուցել
- réveiller** *vt* արթնացնել, զարթեցնել, ոտքի հանել
- révélation** *f* մերկացում, դիմակազերծում, բացահայտում
- révéler** *vt* մերկացնել, խաբեությունը բաց անել, դիմակազերծ անել, բացահայտել
- ~ les lacunes բացահայտել թերությունները՝ բացերը
- revendicatif**, -ve *adj* պահանջատիրական  $\diamond$  action (կամ lutte) ~ve (աշխատավորների) պայքարը իրենց իրավունքների համար, պայքար՝ իրենց պահանջների պաշտպանության համար; mouvement ~ պահանջատիրական շարժում; programme ~ պահանջատիրական ծրագիր
- revendication** *f* պահանջ, իրավական հավակնություն, պահանջախնդրություն, նկրտում; բողոք  $\diamond$  poser la ~ պահանջ դնել
- revendiquer** *vt* 1. պահանջել, իր իրավունքները պաշտպանել; պահանջներ ներկայացնել 2. իր վրա վերցնել
- ~ un attentat մահափորձի պատասխանատվությունը վերցնել իր վրա
- ~ la responsabilité իրեն պատասխանատու համարել
- revenir** *vi* 1. վերադառնալ, հետ դառնալ, դառնալ, նորից գալ 2. նորից հայտնվել, երևան գալ; առաջ գալ, առաջանալ 3. հանգել 4. հրաժարվել 5. ձերբազատվել, հայացքները փոխել  $\diamond$  cela revient au même դա հանգում է նույն բանին; cela revient à dire... դա նույնն է, թե ասես...; tout revient à ceci ամեն ինչ հանգեցնում է դրան; vous en reviendrez դուք դեռ կփոխեք ձեր կարծիքը
- ~ à la charge փորձերը վերականգնել
- ~ sur le compte de զո փոխել կարծիքը մեկի մասին

- ~ sur sa décision որոշումը փոխել  
 ~ de droit իրավամբ պատկանել  
 ~ de ses erreurs սխալներից ձեր-  
 քազատվել  
 ~ à sa première idée սկզբնական  
 մտքին վերադառնալ  
 ~ sur ce qu'on a dit ասվածից  
 հրաժարվել  
 ~ de son trouble շփոթությունից  
 ուշքի գալ
- revenu** *m* եկամուտ, դրամական  
 ստացում, դրամամուտք  $\diamond$  impôt  
 sur le ~ եկամտահարկ; politique  
 des ~s հարկային քաղաքական-  
 ություն  
 ~ national ազգային եկամուտ  
 ~ réel իրական եկամուտ՝ եկա-  
 մուտ չփոփոխվող գներով  
 ~s publics, ~ de l'Etat պետական  
 եկամուտներ
- révérence** *f* խորին հարգանք, պա-  
 տիվ, մեծարանք  $\diamond$  sauf ~ *խսկց.*  
 ներողություն արտահայտու-  
 թյանս; թող թույլ տրվի ասել
- Révérence** *f* Չերդ բարեկրոնություն,  
 տեր հայր, սրբազան
- revers** *m* 1. հակառակ երեսը (կող-  
 մը) 2. անհաջողություն, փոր-  
 ձանք 3. *mauv.* թիկունք 4. դրա-  
 մի՝ արժեքը նշանակված երեսը,  
 ռեվերս  $\diamond$  éprouver des ~ de for-  
 tune զգալ՝ կրել ճակատագրի ա-  
 նակնկալները; essayer un ~ ան-  
 հաջողություն կրել; prendre à  
 (կամ de) ~ թիկունքից հարձակվել  
 ~ de fortune ճակատագրի քնա-  
 հաճույքներ  
 ~ de la médaille (*նաև փխք.*) մե-  
 դալի հակառակ երեսը; գործի  
 մյուս կողմը
- réversion** *f* 1. *իրվք.* գույքադարձում  
 նախկին տիրոջը 2. նախկին վի-  
 ճակին վերադառնալը
- revêtir** *vt* 1. նորից հագցնել՝ զգես-  
 տավորել 2. *փխք.* օժտել, տալ  
 (իշխանություն), վրան դնել,  
 հանձնարարել 3. *իրվք.* կցել,  
 ավելացնել; ձևակերպել (փաս-  
 տաթուղթ)  
 ~ un acte de la signature ստորա-  
 գրել արձանագրությունը  
 ~ un caractère nouveau նոր հատ-  
 կանիշներ ձեռք բերել  
 ~ d'une charge պարտականու-  
 թյուն դնել  
 ~ un dossier des signatures requi-  
 ses գործին ավելացնել անհրա-  
 ժեշտ ստորագրություններ  
 ~ une grande importance մեծ նշա-  
 նակություն ձեռք բերել  
 ~ d'un pouvoir իշխանություն  
 տալ
- revirement** *m* *փխք.* հեղաշրջում,  
 րեկում; վերակառուցում  
 ~ de fortune ճակատագրի մեջ  
 վճռական շրջադարձ, րեկում  
 ~ de l'opinion publique րեկում  
 հասարակական կարծիքի մեջ
- revirer** *vt* *փխք.* փոխել որոշումը,  
 մտադրությունը
- réviser** *vt* 1. վերանայել, փոփոխու-  
 թյուններ մտցնել, սրբագրել 2.  
 ստուգել, վերստուգել, վերա-  
 քննել, վերաքննության ենթար-  
 կել, վերստուգման ենթարկել
- révision** *f* վերստուգում, ստուգում,  
 վերանայում, փոփոխություն,  
 քննություն, ռևիզիա  $\diamond$  conseil de  
 ~ գորակոչային հանձնաժողով;  
 ռազմական վճռաբեկ դատարան



- ~ de la loi օրենքի վերանայում  
 ~ du traité պայմանագրի վերափոխում
- révisionniste** *m, f* (սահմանադրության, օրենքի, պատմության) վերանայման կողմնակից, ռևիզիոնիստ
- revivre** *vi* վերակենդանանալ, հարություն առնել, վերածնվել ◊ faire ~ un système համակարգը վերակենդանացնել
- révocabilité** *f* 1. (պայմանագիրը) չեղյալ հայտարարելու՝ խզելու հնարավորություն 2. հետկանչման՝ ազատման հնարավորություն, փոխելիություն
- révocable** *adj* 1. չեղյալ հայտարարելու՝ խզելու՝ լուծելու՝ վերացման ենթակա 2. ետկանչման ենթակա, փոխելի
- révocation** *f* 1. *իրվք*. վերացում, արգելում, չեղյալ հայտարարելը 2. *ըվնգ*. հետկանչագիր 3 հետկանչ, լիազորություններից զրկում ~ d'un élu պատգամավորի հետկանչ
- révolte** *f* 1. խռովություն, ապստամբություն, ընդվզում 2. դժգոհություն; բողոք ◊ être en ~ խռովություն բարձրացնել; en pleine ~ խռովության թեժ պահին; provoquer une ~ խռովության մղել
- révolté, -e** *adj* 1. ապստամբած, ըմբոստացած 2. զայրալից, զայրացած, վրդովված
- révolter** *vt* 1. ապստամբություն հրահրել, ոտքի հանել, ընդվզել, խռովություն բարձրացնել 2. դժգոհություն առաջացնել
- révolu, -e** *adj* ավարտված, վերջացած; անցած, անցած-գնացած
- révolution** *f* 1. հեղափոխություն 2. հեղաշրջում; լիակատար շրջադարձ, շեշտակի բեկում ◊ la Grande Révolution Socialiste d'Octobre Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխություն; Révolution française Ֆրանսիական հեղափոխություն; en ~ հեղափոխությամբ բռնկված ~ culturelle մշակութային հեղափոխություն  
 ~ d'Etat պետական հեղաշրջում  
 ~ industrielle արդյունաբերական հեղափոխություն  
 ~ de palais պալատական հեղաշրջում  
 ~ prolétarienne արդյետարական հեղափոխություն
- révolutionnaire** *adj* հեղափոխական ◊ conscience ~ հեղափոխական գիտակցություն; doctrine ~ հեղափոխական ուսմունք՝ տեսություն; esprit ~ հեղափոխականություն; essor ~ հեղափոխական վերելք; mouvement ~ հեղափոխական շարժում
- révolutionnaire** *m, f* հեղափոխական
- révoquer** *vt* 1. չեղյալ համարել, վերացնել, արգելել 2. արձակել, հետ կանչել, պաշտոնից ազատել, լիազորություններից զրկել ~ un député պատգամավորին հետ կանչել  
 ~ en doute կասկածի ենթարկել
- revue** *f* 1. վերանայում, վերաքննում, պաշտոնական տեսչական ստուգում, ստուգատես 2. *նազվ*. զորահանդես, զորատես 3. հանդես,

- ամսագիր  $\diamond$  faire la ~ de qch ստուգում անցկացնել; faire une ~ des actions de զո քննության ենթարկել մեկի արարքները; passer en ~ ստուգատես անցկացնել; քննության ենթարկել  
~ annuelle տարեկան ստուգատես  
~ de presse մամուլի տեսություն
- rhéнан**, -e *adj* հռենոսյան, Հռենոսի
- rhétorique** *f* ճարտասանություն, հռետորություն  $\diamond$  employer toute sa ~ գործի դնել իր ողջ պերճախոսությունը
- rideau** *m*: ~ de fer երկաթե վարագույր
- rigide** *adj* *փխբ.* աննկուն, անկոտրում, անհողորդ, անդրդվելի, անսասան, կայուն, հաստատուն; խիստ, կոշտ  $\diamond$  une politique ~ կոշտ քաղաքականություն
- rigidité** *f* *փխբ.* կոշտություն, խստություն, դաժանություն; կայունություն, հաստատունություն
- rigourement** *adv* 1. խիստ, խստորեն, խստիվ, խստությամբ 2. ճշգրտորեն, անշեղորեն, անպայման, պարտադիր  $\diamond$  cela est ~ vrai սա իսկական ճշմարտություն է; cela est ~ démontré սա ճշտորեն (տառացիորեն ճիշտ) ապացուցված է
- rigoureux**, -se *adj* 1. խիստ, խստաբարո, խստապահանջ (մարդու մասին) 2. խիստ, ծանր, դաժան (պատժի մասին և այլն) 3. ստույգ, ճշգրիտ, անշեղ  $\diamond$  analyse ~se ճշգրիտ վերլուծություն; un esprit ~ խիստ տրամաբանական միտք; mesures ~ses խիստ միջոցներ; au sens ~ իսկական իմաստով
- rigueur** *f* 1. խստություն, խստապահանջություն, դաժանություն 2. ճշտություն, ճշտգրտություն, ստույգություն  $\diamond$  être de ~ պահանջվել; l'habit est de ~ ներկայանալ ֆրակով (հրավերքի մակագրություն); les mesures de ~ nécessaires անհրաժեշտ խիստ միջոցներ; à la ~ ծայրահեղ դեպքում; dans la ~ de la loi օրենքին համապատասխան; de ~ անհրաժեշտ, պարտադիր; en ~ առավելագույն ճշգրտությամբ; terme de ~ վերջին ժամկետը (առանց տարկետման); en toute ~ ամենայն խստությամբ; user de ~ envers զո խստիվ միջոցներ ձեռնարկել մեկի դեմ  
~ de la peine պատժի խստություն
- riposte** *f* 1. արագ պատասխան; առարկում, առարկություն, հակաճառություն, հակառակում 2. հակահարված, հարձակման հետ մղում  $\diamond$  avoir la ~ prompte (կամ facile) խոսքի տակ չմնալ; donner la ~ հակահարված տալ; prompt à la ~ արագ կողմնորոշվող, հնարամիտ  
~ graduée *nuaq.* տարբերակված պատասխան գործողություններ
- riposter** *vi* 1. արագ պատասխանել, հակադարձել; առարկել, հակաճառել, հակառակվել 2. հակահարված տալ
- risque** *m* վտանգ; ռիսկ, խիզախում  $\diamond$  assumer le ~ վտանգն իր վրա վերցնել; comporter des ~s վտանգների պարունակել; courir

un ~ ռիսկի ենթարկել, ռիսկի դիմել, վտանգել; gérer les ~s վտանգները կառավարել; minimiser les ~s վտանգները նվազագույնի հասցնել; prendre la décision à ses ~s et perils վճիռ կայացնել սեփական պատասխանատվությամբ; présenter un ~ վտանգ ներկայացնել; à tout ~ բախտաբերի, բախտապավեն; ամեն դեպքում; protéger contre les ~s պաշտպանել վտանգներից; provisionner les ~s ապահովագրել հնարավոր վտանգները; au ~ de... վտանգելով; s'exposer à des ~s վտանգների ենթարկվել; supporter les ~s վտանգներ կրել ~ à l'exportation արտահանելու հնարավոր վտանգներ ~ financiers ֆինանսական հնարավոր վտանգներ ~ spéculatifs չարաշահական հնարավոր վտանգներ

**risqué**, -e *adj* վտանգավոր

**risquer** *vt* վտանգի ենթարկել, վտանգել, խիզախել, ռիսկ անել ~ sa chance բախտը փորձել ~ le coup խիզախել, ռիսկ անել ~ le tout pour le tout *խսկց*. ամեն ինչ բախտախաղի դնել ~ sa vie կյանքը վտանգել

**rit**, **rite** *m* ծիսակատարություն, արարողություն, կարգ, ծես, ծիսակարգ

**rival**, -e *m, f* 1. մրցակից, ախոյան 2. *ռազմ*. հակառակորդ

**rivaliser** *vi* մրցել, մրցակցության մեջ մտնել, մրցակցել

**rivalité** *f* մրցակցություն, մրցություն

**roi** *m* թագավոր, արքա ◊ digne de ~

թագավորավայել; Sa Majesté le Roi Նորին Մեծություն թագավորը; de par le ~ *պտմ*. հանուն թագավորի; pour le roi de Prusse ձրի, շատ էժան; du temps du ~ Dagobert անհիշելի ժամանակներում

~ d'Arménie հայոց թագավոր

~ du pétrole նավթային արքա

~ des rois արքայից արքա

**rôle** *m* 1. ցանկ, ցուցակ, ցուցակագրություն; գրանցամատյան, ռեեստր; *հրվք*. քննության ենթակա գործերի ցանկ 2. դեր, դիրք (հասարակության մեջ) ◊ à tour de ~ հերթով, հերթականությամբ ~ de confiance պատասխանատու դեր ~ des contributions հարկային ցուցակ ~ dirigeant ղեկավար դեր

**roman**, -e *adj* ռոմանական ◊ les langues ~es ռոմանական լեզուներ

**romand**, -e *adj* : Suisse ~e ֆրանսիական Շվեյցարիա

**romanisation** *f* *պտմ*. ռոմանացում, հռոմեական մշակույթի և լատիներենի տարածում

**rompre** *vt* 1. ջարդել, կտրել, փշրել 2. խզել, ընդհատել, դադարեցնել 3. խախտել, խափանել, խզել ◊ applaudir à tout ~ բուռն ծափահարել; à tout ~ բուռն, բարձրաձայն, խլացուցիչ կերպով ~ la conversation խոսակցությունը դադարեցնել ~ ses fers շղթաները փշրել ~ la glace *փխք*. սառույցը կտրել, հաշտության առաջին քայլը անել, լարվածությունը վերացնել

- ~ la paix խաղաղությունը խախտել
- ~ les relations diplomatiques դիվանագիտական հարաբերությունները խզել
- ~ un serment երդմնագանց լինել
- ~ un traité պայմանագիրը խախտել
- rompu**, -e *adj* 1. ջարդված, փշրված 2. հոգնած, ուժասպառ 3. հմուտ, փորձառու ◊ à bâtons ~s անկասկած, կցկտուր կերպով; ընդհատումներով, երբեմն, պատահաբար, ժամանակ առ ժամանակ; avoir la main ~e հմտանալ
- ~ aux affaires գործերում փորձված
- ronflant**, -e *adj* 1. բարձր, բարձրաձայն; աղմկոտ 2. *փխր.* ճոռոմ, վերամբարձ, փքուն ◊ phrases ~es վերամբարձ՝ փքուն նախադասություններ; promesses ~es վերամբարձ խոստումներ
- rotation** *f* 1. պտույտ, պտտվելը 2. շրջանառություն 3. հերթագայություն, կադրերի, անձնակազմի փոփոխելիություն; պաշտոնի հերթափոխություն 4. *նազմ.* ռոտացիա
- ~ du capital դրամագլխի շրջանառություն
- ~ des fonctions գործառույթների շրջանառություն
- ~ des stocks ապրանքաշրջանառություն
- ~ de la terre երկրագնդի պտտվելը
- rotationnel**, -le *adj* 1. պտտվող 2. փոփոխական, հերթագայող ◊ présidence ~le փոփոխական՝
- հերթագայող նախագահություն
- roulant**, -e *adj* շրջանառու ◊ fonds ~s *տնտ.* շրջանառու միջոցներ
- roulement** *m* 1. պտույտ, դարձ 2. շրջանառություն 3. տեղափոխում, փոխադրում (ծառայության գծով); պաշտոնի փոխանցում, հանձնում ◊ fonds de ~ շրջանառու կապիտալ; par ~ հերթի կարգով
- ~ de fonds դրամաշրջանառություն
- ~ de marchandises ապրանքաշրջանառություն
- roumain**, -e *adj* ռումինական
- royal**, -e *adj* 1. թագավորական, կայսերական 2. շքեղ, վեհ, վսեմաշուք, վեհատեսիլ, արքայավայել, արքայական ◊ honneur ~ արքայական պատիվ; prérogatives ~es արքայական արտոնություններ, բացառիկ իրավունքներ
- royaliste** *adj* միապետական, ռոյալիստական ◊ gouvernement ~ միապետական կառավարություն
- royaliste** *m, f ըրդ.* միապետական, ռոյալիստ
- royaume** *m* թագավորություն, գահակալություն, տերություն ◊ le Royaume Uni Միացյալ թագավորություն; le Royaume Uni de Grande Bretagne et d'Irlande du Nord Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորություն
- royauté** *f* 1. թագավորական իշխանություն, միապետություն 2. տիրապետություն, իշխանություն, գերիշխում

- ~ de l'esprit մտքի տիրապետություն
- R.S.V.P.** (répondez s'il vous plaît) խնդրվում է պատասխանել (նամակագրության մեջ ընդունված հասպվում)
- rude** *adj* 1. անհարթ, խորդուբորդ 2. դժվարին 3. դաժան 4. կոպիտ, անտաշ  
~ adversaire վտանգավոր հակառակորդ  
~s, temps ծանր՝ դաժան ժամանակներ
- rudimentaire** *adj* տարրական, նախնական ◊ à l'état ~ սաղմնային վիճակում
- rue** *f* փողոց ◊ l'homme de la rue շարքային մարդ
- ruée** *f* սրընթաց առաջխաղացում, բուռն գրոհ, սրընթաց հարձակում, զանգվածային ներխուժում ◊ la ~ vers l'or ոսկու տենդ
- ruine** *f* 1. կործանում, ավերածություն 2. սնանկացում ◊ aller à la ~ անկման հասնել; tomber en ~ քանդվել, կործանվել, ավերվել, խորտակվել
- ruiner** *vt* 1. քանդել, ավերել, խորտակել, ամայացնել 2. սնանկացնել
- ruines** *f pl* փլատակներ, ավերակներ
- rumeur** *f* 1. աղմուկ, դրդյուն 2. աղմուկ, դժգոհություն, խոսակցություն, ասեկոսե, լուրեր ◊ des ~s circulent, des ~s courent լուրեր են շրջում  
~ publique խոսակցություն, ասեկոսե
- rupture** *f* 1. խախտում, դադարեցում, ընդհատում 2. վեճ, զժտություն, պառակտում, պառակտվածություն 3. *դվնգ*. խզում, դադարեցում  
~ d'un contrat պայմանագրի խախտում  
~ d'équilibre հավասարակշռության խախտում  
~ de la paix խաղաղության խախտում  
~ des relations diplomatiques դիվանագիտական հարաբերությունների խզում
- rural**, -e *adj* գյուղական, գյուղի, դաշտային ◊ code ~ օրենսգիրք գյուղական տնտեսության վերաբերյալ; localité ~e գյուղական վայր
- ruse** *f* խորամանկություն; նենգություն, խարդախություն ◊ user de ~ խորամանկել, կեղծել, խաբել, խորամանկություն բանեցնել  
~ de guerre ռազմական խորամանկություն  
~ de Sioux նուրբ, բացառիկ խորամանկություն
- rusé**, -e *adj* խորամանկ, դավադիր, նենգ, խարդախ
- rythme** *m* տեմպ, չափ, ընթացք, արագություն, ռիթմ ◊ manquer de ~ աշխուժություն չունենալ (պիեսի, ֆիլմի մասին); marquer le ~ չափ տալ; au ~ accéléré արագ թափով, արագացված տեմպով  
~ de réalisation des programmes ծրագրեր կատարելու արագություն

## S

- sabotage** *m* 1. սաբոտաժ, նենգադուլ  
2. վնասարարություն, դիվերսիա  
◇ *acte de* ~ դիվերսիոն գործողություն, քայքայիչ՝ վնասարար գործողություն
- saboter** *vt* 1. վնասարարություն անել, վնաս հասցնել, նենգադուլել, փչացնել 2. սաբոտաժ անել, սաբոտաժով զբաղվել
- saboteur**, *-se m, f* 1. սաբոտաժ կատարող, նենգադուլավոր 2. դիվերսանտ, վնասարար
- sac** *m* կողոպտում, թալանում ◇ *mettre une ville à* ~ քաղաքը թալանել՝ կողոպտել
- saccadé**, *-e adj* ընդհատվող, ընդհատում, անհավասար, անհամաչափ, թռիչքաձև
- saccager** *vt* 1. կողոպտել, թալանել, ավերել, ամայացնել 2. սնանկացնել 3. *խսկց.* քարուքանդ անել, տակնուվրա անել
- sacré**, *-e adj* սուրբ, սրբազան, անխախտ, անխախտելի ◇ *devoir* ~ սրբազան պարտք
- sacrer** *vt* թագադրել; ձեռնադրել, աստիճան՝ կոչում տալ՝ շնորհել
- sacrifice** *m* 1. զոհ, զոհողություն, 2. զոհաբերություն, զոհատվություն  
◇ *faire de grands* ~s մեծ զոհաբերություններ կատարել
- sacrifier** *vt* զոհաբերել, զոհել, նվիրաբերել  
~ *ses intérêts à*... իր շահերը զոհաբերել, իր շահերից հրաժարվել՝ հանուն ինչ-որ բանի՝ ինչ-որ մեկի
- sacrilège** *m* սրբապղծություն ◇ *commettre un* ~ սրբապղծել
- sagace** *adj* խորաթափանց, հեռատես, իմաստուն
- sagacité** *f* խորաթափանցություն, հեռատեսություն
- sage** *m, f* 1. իմաստուն 2. խորհրդատու (որոշ կազմակերպություններում); կոնսուլտանտ
- sagesse** *f* 1. իմաստություն 2. խոհեմություն, ողջամտություն, խելամտություն, խելացիություն, շրջահայացություն
- saigner** 1. *vi* արյունահոսել 2. *vt* արյուն վերցնել  
~ *à blanc* արյունաքամ անել, ուժասպառ անել
- saillant**, *-e adj* ակնհայտ, ցայտուն, աչքի ընկնող, արտակարգ, բացառիկ, ակնառու ◇ *caractéristique* ~e ցայտուն առանձնահատկություն; *points* ~s du discours ելույթի աչքի ընկնող կետերը; *principes* ~s ընդգծված սկզբունքներ
- sain**, *-e adj* 1. առողջ 2. ողջամիտ, խելացի, խոհեմ; բանական, տրամաբանական, խելամիտ ◇ *économie* ~e բնականոն զարգացող տնտեսություն; *jugement* ~ առողջ դատողություն
- saint**, *-e adj* սուրբ, աստվածային; սրբազան, վեհ, նվիրական ◇ *union* Sainte Alliance Սուրբ Միություն

- saint**, -e *m, f* սուրբ մարդ, սրբություն  
~ des ~s սրբության սրբոց
- Saint-Barthélemy** *f* Բարդուղիմեոսյան գիշեր
- Saint –Père** *m* սուրբ հայր (Հռոմի Պապ)
- saisie** *f* 1. *հրվք.* կալանք դնելը (գույքի վրա), կալանք 2. բռնագրավում, վաճառքի արգելում  
~ forcée հարկադրական կալանք  
~ immobilière անշարժ գույքի վրա կալանք դնելը  
~ d'un journal թերթի վաճառքը արգելելը  
~ mobilière շարժական գույքի վրա կալանք դնելը  
~ du pouvoir իշխանության զավթում
- saisir** *vt* 1. բռնել, ճանկել, խլել, վերցնել, հափշտակել 2. գրավել, զավթել, նվաճել, տիրանալ, վերցնել 3. հասկանալ, ըմբռնել, կռահել 4. գույքի վրա կալանք դնել, բռնագրավել 5. քննարկման ներկայացնել որևէ բան 6. օգտվել (առիթից և այլն)  $\diamond$  être ~i համակված լինել որևէ զգացմունքով  
~ l'assemblée d'une proposition, d'un projet խորհրդի քննարկմանը ներկայացնել որևէ առաջարկություն՝ նախագիծ  
~ l'essentiel բուն իմաստը կռահել  
~ l'idée ըմբռնել միտքը  
~ l'intention de qn կռահել մեկի մտադրությունը  
~ le journal թերթը հանել շրջանառությունից  
~ l'occasion առիթից օգտվել
- ~ le pouvoir իշխանությունը զավթել  
~ un tribunal d'une affaire գործը դատարան տալ
- salaire** *m* աշխատավարձ, վարձատրություն  $\diamond$  blocage des ~s աշխատավարձի սառեցում  
~ de base հիմնական աշխատավարձ  
~ horaire ժամավարձ  
~ à la journée օրավարձ  
~ légal անվանական աշխատավարձ  
~ mensuel ամսական աշխատավարձ  
~ minimum garanti երաշխավորված աշխատավարձի նվազագույնը  
~ net մաքուր աշխատավարձ  
~ aux pièces գործավարձ  
~ réel ռեալ (իրական) աշխատավարձ  
~ vital ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնը
- salarier** *m* վարձու աշխատանք
- salarié**, -e *m, f* վարձու բանվոր, վարձու աշխատող  
~ agricole գյուղաշխատող, բատրակ
- salarier** *vt* *հզվք.* 1. աշխատավարձ վճարել 2. դրամական նպաստ տալ, դրամով օժանդակել
- sale** *adj* 1. կեղտոտ, աղտոտ, ցեխոտ, ապականված 2. զզվելի, զարշելի, ստոր, անմաքուր, նողկալի  
~ guerre զարշելի՝ կեղտոտ պատերազմ
- salir** *vt* 1. աղտոտել, կեղտոտել, ապականել 2. *փխք.* սևացնել մեկին

**salle** *f* սրահ, դահլիճ, սենյակ; պալատ (բարձրագույն ներկայացուցչություն կամ օրենսդրական հաստատություն պետության մեջ)  
 ~ d'audience դատական նիստերի դահլիճ  
 ~ de conférences, ~ de réunion նիստերի դահլիճ; լսարան  
 ~ de conseil, ~ de délibération նիստերի դահլիճ  
 ~ d'honneur հանդիսադահլիճ, հանդիսությունների սրահ  
 ~ des pas perdus դատարանի ընդունարան; դատական կուլուարների՝ կողարահներ  
 ~ de vente աճուրդի սրահ

**salubrité** *f* 1. առողջության համար բարենպաստ պայմաններ, բուժիչ հասկություններ 2. հիգիենա, առողջացում, կազդուրում ◊ mesures de ~ առողջարար միջոցառումներ  
 ~ publique առողջապահություն

**saluer** *vt* 1. բարևել, ողջունել, գլուխ տալ, գլուխ խոնարհել 2. *nauv.* պատիվ տալ  
 ~ l'avènement de la liberté ազդարարել ազատության մասին, հռչակել ազատություն

**salut** *m* 1. փրկություն 2. ողջուն, բարև 3. պատիվ տալը 4. հրավառություն ◊ Comité du ~ public *պոմ.* Հանրային փրկության կոմիտե; faire le ~ militaire պատիվ տալ; faire son ~ փրկվել  
 ~ au drapeau դրոշին պատիվ տալը  
 ~ public հանրային բարօրություն

**salutation** *f* բարև, ողջուն ◊ mes ~s

բարևներով; ~s distinguées խորին հարգանքներով (նամակը ավարտող բանաձև)

**salve** *f* 1. հրանոթային համազարկ 2. հրավառություն  
 ~ d'applaudissements ծափերի որոտ

**sanction** *f* 1. հավանություն, թույլտվություն, հրաման, համաձայնություն 2. *իրվք.* սանկցիա, վավերացում, հաստատում 3. *իրվք.* պատիժ, տույժ, սանկցիա, *pl* պատժամիջոցներ ◊ encourir les ~s պատժամիջոցների ենթարկվել; prendre (կամ appliquer, imposer) des ~s պատժամիջոցներ կիրառել; recevoir la ~ de... ստանալ մեկի հավանությունը; թույլատրվել  
 ~ pénale քրեական պատժամիջոց  
 ~ punitive պատժիչ սանկցիա  
 ~s économiques տնտեսական պատժամիջոցներ  
 ~s pécuniaires դրամական տուգանքներ

**sanctionner** *vt* 1. հավանություն, թույլտվություն տալ, վավերացնել, հաստատել 2. պատժել, պատժամիջոցներ կիրառել

**sang** *m* արյուն ◊ avide de ~ արյունատենչ, արնախում; avoir du ~ dans les veines քաջ՝ համարձակ՝ խիզախ՝ վճռական լինել; cracher le ~ արյուն թքել; effusion de ~ արյունահեղություն; être couvert de ~ արյունաթաթախ լինել; exposer son ~ վտանգել կյանքը; lien de ~ արյունակցություն; perdre du ~ արյուն կորցնել;



- perdre tout son ~ արյունաքամ լինել; suer ~ et eau արյուն-քրտինք մտնել; tremper ses mains dans le ~ ձեռքերն արյան մեջ թաթախել
- sang-froid** *m* սառնասրտություն ◊ garder son ~ սառնասրտություն պահպանել; perdre son ~ սառնասրտությունը կորցնել
- sans-gêne** *m* աննրբանկատություն, անքաղաքավարություն, անբռնազբոսիկություն
- sans-parti** *m* անկուսակցական
- sans-partie** *m, f* անհայրենիք մարդ
- sans-travail** *m* գործազուրկ մարդ
- santé** *f* առողջություն ◊ la Santé, la prison de la Santé Սանտե բանտը Փարիզում  
~ publique առողջապահություն
- sape** *f* 1. *ռազմ.* փոս, խրամատ 2. ականահատում, պայթեցում ◊ activité de ~ քայքայիչ գործունեություն; travail de ~ պայթեցման աշխատանք; la ~ des préjugés նախապաշարումներն արմատախիլ անելը՝ ոչնչացնելը
- saper** *vt* պայթեցնել, խարխալել  
~ les fondements հիմքերը խարխալել  
~ le pouvoir իշխանությունը քայքայել՝ տակից պայթեցնել
- sasser** *vt* մաղել  
~ et ressasser *փխր.* մանրակրկիտ ուսումնասիրել
- satellite** *m* 1. արբանյակ 2. *քղք.* արբանյակ, կախյալ պետություն  
~ artificiel արհեստական արբանյակ
- satisfaction** *f* 1. բավականություն, հաճույք 2. գոհացում, բավարարում, բավարարվածություն ◊ ac-
- corder ~ à... բավարարել; constater avec ~ գոհունակությամբ արձանագրել; donner ~ բավարարել, գոհացնել; exprimer sa ~ devant (կամ du fait de) գոհունակություն արտահայտել (ինչ-որ բանի առթիվ); obtenir ~ բավարարում ստանալ, գործը շահել; réclamer ~ բավարարություն պահանջել; à la ~ générale ի բավականություն բոլորի
- satisfaire** 1. *vt* բավարարել, գոհացնել 2. *vi* կատարել, պահանջածը տալ  
~ l'attente արդարացնել սպասումը  
~ une demande խնդրանքը բավարարել  
~ à son devoir իր պարտքը կատարել  
~ à un engagement պարտավորությունը կատարել  
~ à un paiement վճարում կատարել
- sauf** *prép* բացի, բացառությամբ, մի կողմ թողած  
~ défalcation des frais ծախսերը հանելուց հետո  
~ erreur եթե սխալմունք չկա  
~ événement imprévu եթե չնախատեսված դեպք տեղի չունենա  
~ ce qui est prévu բացառությամբ նրանից, ինչ նախատեսված է  
~ votre respect ձեր թույլտվությամբ, թույլ տվեք ասել
- sauf-conduit** *m* անցաթուղթ, անցագիր
- sauter** *vi* 1. ցատկել, ոստնել, ոստյուն կատարել, թռչել 2. պայթել,

- hoņu ցնդել ◊ la chose saute aux yeux դա աչքի է զարնում; դա սկնհայտ է; faire ~ պայթեցնել; faire ~ un vaisseau նավը պայթեցնել  
 ~ au grade de... բարձրանալ, ավելի բարձր դիրքի՝ կոչման հասնել  
 ~ d'une matière à une autre մեկ առարկայից մյուսը անցնել
- sauvegarde** *f* պահպանում, պահպանություն, պաշտպանություն ◊ se placer sous la ~ de la justice մտնել օրենքի պահպանության տակ; sous la ~ պահպանության տակ; sous la ~ et sous l'empire des principes du droit միջազգային իրավունքի սկզբունքների պահպանության և տիրապետության տակ  
 ~ de la Constitution սահմանադրության պաշտպանություն  
 ~ de justice *հրվք.* չափահասների իրավունքների պահպանություն  
 ~ de la paix խաղաղության պահպանում
- sauvegarder** *vt* պահպանել, պահել, պաշտպանել, հսկել  
 ~ les droits իրավունքները պաշտպանել  
 ~ la paix խաղաղությունը պաշտպանել  
 ~ sa réputation անունը, վարկը պահպանել
- sauve-qui-peut** *m* խուճապահար փախուստ, խուճապ ◊ sauve qui peut! փախե՛ք, փրկվե՛ք, փախի՛ր՝ ով կարող է
- sauver** *vt* փրկել, ազատել ◊ se ~ 1. փրկվել, ազատվել 2. փրկվել, ճողոպտել ◊ se ~ de prison բանտից փախչել; se ~ à toutes jambes փախուստով ազատվել  
 ~ sa peau *խսկց.* իր կաշին փրկել
- savamment** *adv* 1. գիտականորեն; գործիմացությամբ 2. հմտորեն, հմտությամբ, ճարպկորեն, վարպետորեն
- savant** *m* գիտնական  
 ~ de réputation universelle համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական
- savoir** *vt* 1. իմանալ, գիտենալ, տիրապետել, ճանաչել, ծանոթ լինել 2. կարողանալ, կարենալ, ի վիճակի լինել, հնարավորություն ունենալ ◊ faire ~ հայտնել, տեղյակ պահել, իմացնել, հաղորդել, տեղեկացնել, ծանուցել; on sait que... հայտնի է, որ...; comme on le sait ինչպես հայտնի է...;  
 ~ gré à զո երախտապարտ՝ շնորհակալ լինել մեկին
- sbire** *m* *սրիմ.* սբիր, ոստիկանական լրտես՝ գործակալ
- scandale** *m* 1. ամոթ, խայտառակություն 2. աղմուկ, քաշքշուկ, ամոթաբեր կռիվ, աղմկոտ վիճաբանություն 3. խայտառակ իրադարձություն, ամոթալի մերկացում ◊ faire du ~ աղմուկ բարձրացնել, կռիվ սարքել
- scander** *vt* վանկաշեշտել, արտասանել; բացականչել, աղաղակել, բղավել, ճչալ  
 ~ en coeur միաբերան բացականչել, աղաղակել
- scandinave** *adj* սկանդինավյան, սկանդինավական
- sceau** *m* 1. կնիք, կապարակնիք 2.

- փխք.* հետք, դրոշմ ◊ apposer le ~ կնիք դնել; garde des Sceaux պետական կնիքը պահպանող; արդարադատության նախարար Ֆրանսիայում; rompre (կամ briser) le ~ կնիքը քանդել; sous le ~ du secret որպես գաղտնիք; sous le ~ du serment երդվելով, երդում տալով  
 ~ contrefait կեղծ կնիք  
 ~ de l'Etat պետական կնիք  
 ~ du génie հանճարի դրոշմ
- scellé** *m* (*հաճախ pl*) կնիք, կապարակնիք ◊ bris de ~s կնիքի քանդում; apposer (կամ mettre) les ~s sur qch ինչ-որ բան կնքել, կնիք դնել ինչ-որ բանի վրա
- sceller** *vt* 1. կնիք դնել, կնքել, կապարակնքել 2. կնքել, արգելքի տակ դնել 3. *փխք.* ամրապնդել, վավերացնել, հաստատել ◊ l'union ~ée dans le sang versé en commun միություն՝ հաստատված միասին թափված արյամբ; ~ é à jamais առհավետ ամրապնդված  
 ~ un acte փաստաթուղթը վավերացնել կնիքով  
 ~ l'alliance միությունը ամրապնդել  
 ~ une réconciliation հաշտությունը ամրապնդել  
 ~ de son sang ամրապնդել արյամբ  
 ~ de sa signature վավերացնել ստորագրությամբ
- scepticisme** *m* սկեպտիցիզմ; թերահավատություն, կասկածամտություն, անվստահություն
- sceptique** *adj* սկեպտիկ, թերահավատ, հավատ չընծայող մարդ ◊ rester ~ sur...կասկած հայտնել, թերահավատություն զգալ ինչ-որ բանի նկատմամբ
- science** *f* 1. գիտություն 2. գիտելիք ◊ de ~ certaine հավաստի աղբյուրից  
 ~ infuse բնատուր խելք  
 ~s exactes ճշգրիտ գիտություններ  
 ~s humaines հումանիտար գիտություններ  
 ~s naturelles բնական գիտություններ
- scientifique** *m, f* գիտնական, գիտության գործիչ
- scientifiquement** *adv* գիտականորեն
- scinder** *vt* 1. բաժանել, մասնատել, պառակտել 2. բաժան-բաժան անել (ձայները, կարծիքները)
- scission** *f* 1. պառակտում, քայքայում, մասնատում, տարրալուծում 2. ձայների, կարծիքների բաժանում
- scissionniste** *adj* պառակտիչ, պառակտողական
- scolastique** *adj* սխոլաստիկ, սխոլաստիկական, կյանքից կտրված
- scolastique** *f* սխոլաստիկա; տառակերություն, կյանքից կտրվածություն
- scrupule** *m* 1. փափկանկատություն, նրբանկատություն, կասկածամտություն (արարքի, վարքագծի ճշտության մեջ) 2. խղճմտանք 3. բարեխիղճ վերաբերմունք, պահանջկոտություն, մանրակրկիտություն, ճշտակատարություն, ճշգրտություն ◊ avoir ~ տատանվել, չհամարձակվել; avoir des ~s

կասկածներից տանջվել; խղճի խայթ զգալ; se faire des ~s երկմտել, խղճի խայթ զգալ; sans ~ առանց խղճի խայթ զգալու; առանց ամաչելու, քաշվելու

**scrupuleusement** *adv* մանրակրկտորեն, մանրակրկիտ կերպով, հանգամանորեն, մանրագնին կերպով, խնամքով, բարեխղճորեն

**scrutateur** *m* ձայները հաշվող հաշվիչ (քվեարկության ժամանակ)

**scruteur** *m* հաշվիչ հանձնաժողովի անդամ

**scrutin** *m* 1. ընտրություններ 2. քվեարկություն  $\diamond$  déclarer un ~ acquis հաստատել քվեարկության արդյունքները; dépouillement du ~ ձայների հաշվարկ; mode de ~ ընտրությունների կարգը; ouvrir [close] le ~ սկսել [ավարտել] քվեարկությունը; premier tour du ~ քվեարկության առաջին փուլը; tableau des ~s քվեարկության արդյունքների ցուցանակ  
~ par appel nominal անվանական քվեարկություն  
~ d'arrondissement քվեարկության շրջանային համակարգ, քվեարկություն շրջաններով  
~ de ballotage վերաքվեարկություն, կրկնաքվեարկում  
~ de liste թեկնածուների քվեարկություն ըստ ցուցակի  
~ majoritaire ընտրություններ մեծամասնական կարգով  
~ plurinominal թեկնածուների քվեարկություն մի քանի տեղի համար  
~ proportionnel, ~ avec représenta-

tion proportionnelle համամասնական ներկայացուցչությամբ ընտրակարգ  
~ public à la tribune բաց քվեարկություն ամբիոնից  
~ secret փակ, գաղտնի քվեարկություն  
~ uninominal թեկնածուի քվեարկություն մեկ տեղի համար

**séance** *f* նիստ, ժողով  $\diamond$  annoncer une suspension de ~ հայտարարել նիստի ընդմիջում; avoir ~ նիստին մասնակցելու իրավունք ունենալ; déclarer la ~ ouverte նիստը հայտարարել բացված; être en ~ նիստ անել, նիստ գումարել; ouvrir [lever, suspendre] la ~ նիստը բացել [փակել, ընդհատել]; prendre une décision ~ tenante ընդունել անհապաղ որոշում; la ~ s'achève sur l'intervention de N. (intervention de N. achève la ~) նիստը ավարտվում է N-ի ելույթով (N-ի ելույթը եզրափակում է նիստը); la ~ est placée sous la présidence de N. նիստը անցնում է N-ի նախագահությամբ; la ~ reprend նիստը վերսկսվում է; tenir une ~ նիստ գումարել  
~ d'ouverture [de clôture] առաջին [եզրափակիչ] նիստ  
~ du matin [du jour, de l'après-midi, du soir, de nuit] առավոտյան [ցերեկային, երեկոյան] նիստ  
~ plénière լիակազմ, պլենար նիստ  
~ publique [à huis clos] բաց [դռնփակ] նիստ

- ~ *tenante* նիստի ընթացքում  
 ~ *de travail* աշխատանքային նիստ
- séant**, -e *adj* նիստի մասնակից
- sécession** *f* (տարածքը մասերի) բաժանում, անջատում; կազմից դուրս գալը (միության, ընկերության), պատակտում  $\diamond$  la guerre de Secession *քղք.* քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում, հարավային 11 նահանգների փորձը՝ 1860-61 թթ. դուրս գալու ԱՄՆ-ի կազմից
- sécessionnisme** *m* *քղք.* անջատվողականություն, սեպարատիզմ
- sécessionniste** *m, f* *քղք.* անջատվողական անձ, անջատման կողմնակից, սեպարատիստ
- sècheresse** *f* 1. երաշտ, չորայնություն 2. աղքատիկություն, խղճոնկություն (մտքի)
- second**, -e *adj* 1. երկրորդ 2. ուրիշ, այլ 3. կողմնակի, երկրորդային, կրկնական  $\diamond$  causes ~es երկրորդային պատճառներ; enseignement du ~ degré երկրորդ աստիճանի՝ մակարդակի ուսուցում; la Seconde Guerre mondiale երկրորդ համաշխարհային պատերազմ
- second**, e *m, f* օգնական, տեղակալ
- secondaire** *adj* 1. միջնակարգ 2. երկրորդական  $\diamond$  école ~ միջնակարգ դպրոց; enseignement ~ միջնակարգ կրթություն; études ~s միջնակարգ կրթություն
- secondairement** *adv* կրկին անգամ, երկրորդ անգամ, երկրորդաբար
- secondement** *adv* երկրորդ
- seconder** *vt* օգնել, օժանդակել, աջակցել, աջակցություն ցույց տալ; նպաստել
- secouer** *vt* թափահարել, ցնցել, տատանել, տարուբերել, թոթափել  
 ~ le joug թոթափել լուծը  
 ~ les préjugés ազատվել նախապաշարումներից
- secourable** *adj* օգնող, օգնության պատրաստ  $\diamond$  tendre une main ~ օգնության ձեռք մեկնել
- secourir** *vt* օգնել, օգնություն ցույց տալ, աջակցել, սատարել, օժանդակել
- secours** *m* 1. օգնություն, աջակցություն, օժանդակություն 2. նպաստ, դրամական օգնություն  $\diamond$  être d'un grand ~ մեծ հեմարան՝ նեցուկ լինել; prêter (կամ porter) ~ օգնություն ցույց տալ; refuser du ~ մերժել օգնության հարցում  
 ~ mutuel փոխօգնություն; փոխօգնության կազմակերպություն  
 ~ urgent շտապ օգնություն
- secours** *m pl* *նազմ.* օգնական ուժեր, օգնություն
- secret**, -ète *adj* գաղտնի, թաքուն, ծածուկ; կոնսպիրատիվ, գաղտնի, ընդհատակյա  $\diamond$  accord ~ գաղտնի համաձայնագիր; agent de police ~ète գաղտնի ոստիկան; diplomatie ~ète գաղտնի դիվանագիտություն; message ~ գաղտնի հաղորդագրություն; police ~ète գաղտնի ոստիկանություն; scrutin ~ գաղտնի քվեարկություն; services ~s գաղտնի ծառայություններ; tenir une chose ~ète գաղտնի պահել ինչ-որ բան
- secret** *m* 1. գաղտնիք 2. գաղտնիու-

- բյուն  $\diamond$  avoir (կամ trouver) le ~ de l'affaire գործը բացահայտել; garder (կամ observer, respecter) le ~ գաղտնիքը պահել; mettre un prisonnier au ~ բանտարկյալին փակել մենախցում; en ~ գաղտնաբար, գաղտնի կերպով, թաքուն, առանց վկաների, գաղտագողի
- ~ absolu բացարձակ գաղտնիք  
 ~ administratif ծառայողական գաղտնիք  
 ~ d'affaires գործնական գաղտնիք  
 ~ bancaire բանկային գաղտնիք  
 ~ d'Etat պետական գաղտնիք  
 ~ d'une opération militaire մարտական գործողության գաղտնիություն  
 ~ professionnel մասնագիտական (ծառայողական) գաղտնիք  
 ~ de télécommunications հեռահաղորդակցության գաղտնիություն
- secrétaire** *m, f* քարտուղար, քարտուղարուհի  $\diamond$  Secrétaire Général du Conseil de l'Europe Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար  
 ~ administratif վարչական քարտուղար  
 ~ d'ambassade դեսպանատան քարտուղար  
 ~ de la conférence գիտաժողովի քարտուղար  
 ~ d'Etat պետքարտուղար, նախարարի տեղակալ (Ֆրանսիայում); պետքարտուղար (ԱՄՆ-ում)  
 ~ d'Etat adjoint պետքարտուղարի օգնական (ԱՄՆ-ում)
- ~ exécutif գործադիր քարտուղար  
 ~ général գլխավոր քարտուղար; գործերի կառավարիչ (կառավարության և այլն)  
 ~ particulier անձնական քարտուղար  
 ~ scientifique գիտական քարտուղար
- secrétariat** *m* 1. քարտուղարի աշխատանք, գործավարություն 2. քարտուղարություն, գրասենյակի աշխատակազմ, գրասենյակ  $\diamond$  charger զո d'assurer le ~ հանձնարարել մեկին՝ ղեկավարելու քարտուղարությունը  
 ~ général գլխավոր քարտուղարի պաշտոնը  
 ~ permanent մշտական քարտուղարություն
- secrètement** *adv* գաղտնաբար, թաքուն, ծածուկ
- sectaire** *adj* 1. աղանդավորական 2. մոլեռանդ  $\diamond$  troubles ~s մոլեռանդների հուզումներ
- sectarisme** *m* 1. աղանդավորություն 2. մոլեռանդություն
- secteur** *m* 1. շրջան, հատված, մաս 2. մասնաճյուղ, ոլորտ, բնագավառ 3. բաժին, բաժանմունք 3. *nvaq*. ճակատամաս, գոտի, գոնա  
 ~ bancaire բանկային բնագավառ՝ ոլորտ  
 ~ de défense պաշտպանական գոտի՝ ճակատամաս  
 ~ économique տնտեսական բնագավառ  
 ~ fortifié ամրացված շրջան  
 ~ industriel արդյունաբերական ոլորտ

- ~ institutionnel կազմակերպչական և իրավական մասնաճյուղ  
 ~ de l'investissement ներդրումային ոլորտ  
 ~ privé մասնավոր հատված  
 ~ public պետական ոլորտ  
 ~ tertiaire սպասարկման ոլորտ, սպասարկու մասնաճյուղ
- section** *f* 1. բաժին, ստորաբաժին; բաժանմունք 2. բաժին, մաս, ենթաբաժին  
 ~ électorale ընտրական տեղամաս  
 ~ d'un traité պայմանագրի հոդված՝ ենթաբաժին
- sectionnement** *m* բաժանում, մասնատում
- sectionner** *vt* բաժանել, մասնատել
- séculaire** *adj* 1. դարավոր, հարյուրամյա 2. վաղնջական, վաղեմի, հնամենի ◊ plusieurs fois ~ բազմադարյան
- séculier**, -ère *adj* աշխարհիկ, աշխարհական ◊ bras ~ *սյուն*. աշխարհիկ իշխանություն; քաղաքացիական դատարան
- secundo** *adv* երկրորդ
- sécurité** *f* անվտանգություն. հուսալիություն; ապահովություն, երաշխիք, ◊ assurer la ~ անվտանգությունը ապահովել; Conseil de ~ Անվտանգության խորհուրդ; garantir la ~ collective ապահովել կոլեկտիվ անվտանգություն; mesures de ~ անվտանգության միջոցառումներ; Ministère de la Sécurité nationale Ազգային անվտանգության նախարարություն; pacte de ~ անվտանգության դաշինք՝ պայմանագիր; renforcer (կամ consolider) la ~ անվտանգությունը ամրապնդել՝ ուժեղացնել; pour plus de ~ էլ ավելի մեծ անվտանգության համար  
 ~ collective կոլեկտիվ անվտանգություն  
 ~ générale համընդհանուր անվտանգություն  
 ~ internationale միջազգային անվտանգություն  
 ~ matérielle նյութական ապահովություն  
 ~ nationale (d'Etat) ազգային (պետական) անվտանգություն  
 ~ publique հասարակական անվտանգություն  
 ~ du travail անվտանգության տեխնիկա  
 ~ sociale սոցիալական ապահովություն
- sédentaire** *adj* նստակյաց, մշտաբնակ ◊ peuples ~s նստակյաց ժողովուրդներ; vie ~ նստակյաց կյանք, նստակեցություն
- sédentairement** *adv* նստակյացորեն
- sédentarité** *f* նստակեցություն
- séditieux**, -euse *adj* խռովարար, խռովահույզ, դավադիր, սադրիչ
- séditieux**, -euse *m, f* խռովարար, ապստամբ
- sédition** *f* խռովություն, գայլույթ, ապստամբություն
- séduction** *f* 1. գայթակհություն, մոլորեցում 2. *հնգծ*. կաշառում, կաշառելը
- séduire** *vt* 1. գայթակհել, հմայել, հրապուրել 2. *հնգծ*. կաշառել, կաշառք տալ  
 ~ les témoins վկաներին կաշառել
- ségrégatif**, -ve *adj* խտրական, գա-

- տիչ, բաժանիչ; մեկուսացնող, անջատողական
- ségrégation** *f* 1. առանձնացում, անջատում, զատում 2. մեկուսացում 3. խտրականություն, ջոկողություն  
 ~ raciale ռասայական խտրականություն  
 ~ sociale սոցիալական շերտավորում
- seigneur** *m* 1. *պտմ.* սինյոր, տեր, տիրակալ, իշխան, վեհապետ 2. պարոն, մեծատոհմիկ, երևելի անձ 3. (le Seigneur) *եկղց.* երկնային տիրակալ, Աստված ◊ vivre en (grand) ~, être grand ~ աղայավարի՝ ճոխ կյանքով ապրել  
 ~ terrien կալվածատեր
- seigneurial**, -e *adj* 1. *պտմ.* հողական, ավատապետական 2. կալվածատիրական, կալվածատիրոջ, իշխանական
- sein** *m* 1. ընդերք 2. *փխբ.* խորքեր ◊ au ~ de... խորքում, ընդերքում; շարքերում, ներսում; au ~ de l'Etat պետության համակարգում; au ~ de la nature բնության գրկում  
 ~ de la terre հողի ընդերք
- seing** *m* ստորագրություն ◊ acte sous ~ privé նոտարի կողմից չվավերացված փաստաթուղթ; գրավոր տեսքով կնքված գործարք
- séjour** *m* 1. բնակություն, կեցություն, ժամանակավոր մնալը՝ ապրելը 2. բնակության վայր, կացարան ◊ lors de son ~ բնակության ընթացքում; un permis de ~ անձնագիր
- ~ forcé արտաքսում
- séjourner** *vi* ժամանակավոր ապրել՝ մնալ՝ կենալ՝ բնակվել
- select** *adj* *խսկց. հնցծ.* ընտիր, ընտրովի, լավագույն
- sélection** *f* 1. ընտրում, ջոկում; ընտրություն 2. հավաքածու, ընտրանի ◊ commission de ~ ընտրական հանձնաժողով  
 ~ de films հատուկ ընտրված ֆիլմերի շարք  
 ~ professionnelle մասնագիտական ընտրություն
- self-défense** *f* ինքնապաշտպանություն
- self-gouvernement** *m* ինքնակառավարում, ինքնավարություն, ավտոնոմիա, ինքնուրույնություն, անկախություն  
 ~ local տեղական ինքնակառավարում
- sellette** *f* *պտմ.* դատապարտյալի աթոռ ◊ être sur la ~ մեղադրյալի կարգավիճակում լինել; mettre qn sur la ~ հարցաքննել մեկին
- selon** *prép* համապատասխան, ըստ, համաձայն, համեմատ, նայած ◊ agir ~ les lois գործել օրենքի համաձայն  
 ~ son avis նրա կարծիքով  
 ~ les circonstances նայած հանգամանքներին  
 ~ la presse ըստ մամուլի տեղեկատվության
- semblant** *m* տեսք, ձև, մմանություն, թվացյալություն ◊ faire ~ de... ձևացնել, ձևանալ թե...; faux ~ կեղծավորություն; խաբուսիկություն  
 ~ d'amitié թվացյալ ընկերություն



**sembler** *vi* թվալ, կարծել, երևալ; il ~e que... թվում է, թե, կարծես թե; ըստ երևույթին; si bon vous ~e եթե ճիշտ եք համարում, եթե հարմար եք գտնում

**semelle** *f* ներբան, կոշկատակ  $\diamond$  ne pas avancer (կամ bouger) d'une ~ ոչ մի քայլ առաջ չգնալ; ne pas reculer (կամ céder) d'une ~ ոչ մի քայլ չնահանջել, տեղի չտալ; ոչ մի թիզ չզիջել

**semer** *vi* սերմանել, տարածել, սփռել  
~ la discorde երկպառակություն սերմանել  
~ la zizanie *խսկց*. երկպառակություն սերմանել

**semeur** *m* սերմանող, տարածող (անձ)  
~ de faux bruits կեղծ լուրեր տարածող  
~ de panique խուճապարար

**semi** *préf* կիսա...

**semi-autonome** *adj* կիսաինքնավար

**semi-chômeur** *m* կիսագործագուրկ

**semi-colonial**, - *e adj* կիսագաղութային

**semi-colonie** *f* կիսագաղութ

**semi-dépendant**, -*e adj* կիսակախյալ  $\diamond$  pays~ կիսակախյալ երկիր

**semi-légal**, -*e adj* կիսաօրինական

**semi-légalité** *f* կիսաօրինականություն

**semi-militaire** *adj* կիսազինվորական

**sénateur** *m* սենատոր

**sénatorial**, - *e adj* սենատորական

**sénatus-consulte** *m* *պտմ*. սենատորական որոշում

**sénéchal** *m* սենեշալ (թագավորա-

կան ծառայապետ, տեղական դատական իշխանության ներկայացուցիչ ֆեոդալական Ֆրանսիայում); grand ~ պալատական նախարար (Ֆրանսիայում)

**sénégalais**, -*e adj* սենեգալական, Մենեգալի

**sens** *m* 1. զգացում, զգայություն, զգայարան 2. բանականություն, դատողություն, խելք, գիտակցություն 3. իմաստ, նշանակություն  $\diamond$  cela n'a pas le ~ commun դա դեմ է բանականությանը; homme de bon ~ ողջամիտ մարդ; perdre le ~ des réalités կորցնել իրականության զգացողությունը; au ~ de la présente convention ներկա կոնվենցիայի կիրարկմամբ  
~ auditif (կամ de l'ouïe) լսողություն  
~, bon ողջախոհություն  
~ de la discipline կարգապահության ենթարկվելու ունակություն, կարգավարժություն  
~ figuré փոխաբերական իմաստ  
~ gustatif ճաշակելիք  
~ de la langue լեզվական հոտառություն  
~ moral բարոյական գիտակցություն  
~ olfactif հոտառություն  
~ propre ուղղակի, բուն իմաստ  
~ de responsabilité պատասխանատվության զգացում  
~, sixième վեցերորդ զգայարան, ինտուիցիա  
~ du tact (կամ du toucher) շոշափելիք  
~ visuel տեսողություն

- spontanéité** *f* 1. տարերայնություն, ինքնաբերություն, ինքնաբերականություն 2. անմիջականություն, բնականություն
- spontanément** *adv* 1. տարերայնորեն, ինքնաբերաբար 2. անմիջականորեն, բնականորեն
- stabilisation** *f* կայունացում, հաստատունացում, ամրապնդում  
~ de la paix խաղաղության կայունացում  
~ de la situation politique քաղաքական իրադրության կայունացում
- stabiliser** *vt* կայունացնել, հաստատուն դարձնել, ամրապնդել
- stabilité** *f* կայունություն, հաստատունություն, ամրություն; մշտականություն, անփոփոխություն, տևականություն ◊ contrat de ~ գների կայունացման պայմանագիր (կառավարության և ձեռնարկությունների միջև); rétablir la ~ կայունացնել  
~ des changes արժույթների փոխարժեքի կայունացում  
~ des cours, ~ des prix գների կայունացում  
~ financière ֆինանսական կայունություն  
~ légalе իրավական դաշտի կայունություն  
~ du marché շուկայի կայունություն  
~ politique քաղաքական կայունություն
- stable** *adj* կայուն, հաստատուն, ամուր, հավասարակշռված ◊ équilibre ~ կայուն հավասարակշռություն; prix ~ կայուն՝ անփոփոխ գին



- stade** *m* փուլ, շրջան, ժամանակաշրջան, ժամանակամիջոց
- staff** *m* աշխատակազմ, անձնակազմ
- stagnant**, -e *adj* 1. կանգնած, չհոսող, անշարժ (ջրի մասին) 2. լճացած, քարացած  $\diamond$  l'état ~ des affaires լճացում գործերում; être ~ լճանալ, տեղում դուփել
- stagnation** *f* 1. լճացում, անշարժ վիճակ, արտադրության անկում 2. *փ/հսք.* քարացածություն  $\diamond$  en ~ լճացած, փտող; époque de ~ լճացման շրջան  
~ des affaires գործնական ակտիվության անկում  
~ du commerce international լճացում խաղաղ տնտեսության մեջ
- standard** *m* ստանդարտ, չափանմուշ, չափօրինակ, սահմանված չափ, չափանիշ  
~ de vie կենսամակարդակ  
~s communs ընդհանուր չափանիշներ  
~s internationaux միջազգային ստանդարտներ
- standardisation** *f* ստանդարտավորում, նորմավորում; միօրինակացում
- standardisé**, -e *adj* ստանդարտ, միօրինակ, միանման, յուրօրինակությունից զուրկ
- standardiser** *vt* ստանդարտացնել, միօրինակացնել
- statistique** *f* վիճակագրություն; *pl* վիճակագրական տվյալներ  $\diamond$  établir des ~s վիճակագրություն կազմել; Statistiques financières internationales Միջազգային ֆինանսական վիճակագրություն
- ~ de l'économie nationale ժողովրդական տնտեսության հաշվառում  
~s globales disponibles ընդհանուր վիճակագրական տվյալներ  
~s internes ներքին վիճակագրական տվյալներ  
~s officielles des voix պաշտոնական տվյալներ քվեարկության արդյունքների վերաբերյալ  
~s primaires նախնական վիճակագրական տվյալներ  
~s publiées հրապարակված վիճակագրական տվյալներ
- statuer** *vt* 1. որոշել, վճռել, որոշում հանել, վճիռ կայացնել 2. կարգադրել  
~ en dernier ressort վերջնական որոշում կայացնել
- status quo** (*լատ.*) *m* ստատուս քվո, ներկայում կամ որոշակի ժամանակահատվածում գոյություն ունեցող փաստացի կամ իրավաբանական դրություն  
~ ante bellum մինչ պատերազմը գոյություն ունեցող իրավիճակը
- statut** *m* 1. ստատուտ, դրույթ, օրենք, օրենսդրություն 2. կարգավիճակ, ստատուտ 3. *pl* կանոնադրություն, կանոնագիրք (որևէ կազմակերպության)  $\diamond$  accepter les ~s կանոնադրություն ընդունել; amender les ~s կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնել; annuler le ~ օրենքը՝ իրավական ակտը չեղյալ ճանաչել; avoir le ~ կարգավիճակ ունենալ; conformément aux ~s կանոնադրության համապատասխան; contraire aux ~s կանոն-

- նադրությանը հակասող; déposer les ~s կազմակերպությունը պաշտոնապես գրանցել; éviter le ~ օրենքը շրջանցել; rédiger les ~ կանոնադրություն կազմել; selon les ~s կանոնադրության համաձայն  
 ~ de la Cour Internationale De Justice Միջազգային Դատարանի ստատուտ, օրենսդրություն  
 ~ de la fonction publique օրենք պետական ծառայողների մասին  
 ~ d'officier ministériel պաշտոնական անձի կարգավիճակ  
 ~ personnel օրենք, որը կիրառվում է ըստ բնակավայրի  
 ~s désuets հնացած կանոնադրություն  
 ~s originels սկզբնական կանոնադրություն  
 ~s du parti կուսակցության կանոնադրություն
- statuaire** *adj* 1. կանոնադրական, կանոնադրության համապատասխան 2. օրենքի ուժով գործող, օրենքի վրա հիմնված, օրենքով սահմանված, օրինական ◊ autorisation ~ օրենքով սահմանված իրավասություններ; droit ~ ստատուտային՝ օրենսդրական իրավունք
- sténogramme** *m* սղագրություն
- sténographie** *f* սղագրություն
- stérile** *adj* 1. անբերրի, անպտուղ, անպտղաբեր 2. *փխբ.* ամուլ, ստերջ, աղքատ, խղճուկ, անօգուտ, զուր, սին ◊ année ~ անպտղաբեր տարի; discussions ~s դատարկ վիճաբանություններ; gloire ~ սին փառք; travail ~ անպտուղ՝ զուր աշխատանք
- stérilité** *f*: ~ de pensées մտքի (խելքի) աղքատիկություն
- sterling** *m* ստերլինգ (Մեծ Բրիտանիայի դրամական միավոր)
- sterling** *adj*: livre ~ ֆունտ-ստերլինգ; zone ~ ստերլինգային գոտի՝ շրջան
- stewardesse** *f* օդանավի ուղեկցորդուհի
- stigmatiser** *vt* 1. խարանել, խարան դնել, դրոշմել 2. հետք թողնել 3. նշավակել, փառագրել, փառագուրկ անել, խայտառակել, անվանարկել
- stimulant**, -e *adj* խթանող, գրգռող
- stimulant** *m* խթան, շարժառիթ, դրդապատճառ, ազդակ
- stimulation** *f* 1. խթանում, խրախուսում, դրդում 2. գրգռում
- stimuler** *vt* 1. խթանել, դրդել, խրախուսել 2. աշխուժացնել, նոր ուժ ներարկել
- stimulus** *m* խթան, շարժառիթ, ազդակ, դրդապատճառ  
 ~ externe արտաքին շարժառիթ
- stipendié**, -e *adj* կաշառված
- stipendier** *vt* 1. *հնգծ.* վարձել, վարձակալել, վարձով վերցնել 2. կաշառել, կաշառք տալ
- stipulant**, -e *adj* պայմանավորող
- stipulation** *f* 1. պայմանագրի պայման կամ կետ 2. *դվնգ.* վերապահում, նախապայման 3. ճշտում, ճշգրտում  
 ~ d'un contrat պայմանագրի վերապահում  
 ~ des sanctions սանկացիաների վերապահում
- stipuler** *vt* 1. պայմանավորել, նա-

- խատեսել 2. նախապայման դնել, վերապահություն անել 3. ճշտել, ճշգրտել, նախօրոք որոշել  $\diamond$  ~é par la loi օրենքով նախատեսված
- stock** *m* 1. ապրանքների պաշար (պահեստում, շուկայում) 2. պահուստ, պահեստային միջոցներ  $\diamond$  avoir en ~ տրամադրության տակ ունենալ; compléter le ~ լրացնել պաշարը; constituer un ~ պաշար ստեղծել; constitution de ~s d'armes զենքի պահեստավորում; entamer les ~s պաշարներն օգտագործել; écouler les ~s պաշարները վաճառել; épuiser les ~s պաշարները սպառել; liquider les ~s ~ պաշարները վերացնել; maîtriser le ~ պաշարը հսկել; mettre en ~ պահեստավորել; refaire ses ~s պաշարներն ավելացնել ~s alimentaires սննդամթերքի պաշարներ ~s d'armes chimiques քիմիական զենքի պահուստներ ~s de blé հացահատիկի պահեստապաշար, հացահատիկային ֆոնդ ~s considérables զգալի պաշարներ
- stocké**, -e *adj* պահեստավորված
- stocker** *vt* 1. պահեստավորել 2. հավաքել, պաշարներ կուտակել, ժողովել
- stoïcien**, -ne *m, f* ամրակամ՝ անհողորդ մարդ
- stoïcisme** *m* *փիլ.* ստոիցիզմ
- stoïque** *adj* 1. *փիլ.* ստոիկյան 2. աներեր, անհողորդ, արի, դիմացկուն
- stoïquement** *adv* ամուր, աներեր կերպով
- stopper** *vt* կանգնեցնել, ընդհատել, դադարեցնել ~ le travail դադարեցնել աշխատանքը
- stratagème** *m* 1. ռազմական խորամանկություն 2. հնարք, խորամանկություն, ճարակություն
- stratège** *m* ռազմագետ; ռազմավար, դեկավար
- stratégie** *f* 1. ռազմավարություն, պատերազմ վարելու արվեստ 2. ռազմագիտություն, ռազմավարության տեսություն 3. ստրատեգիա, քաղաքական պայքար վարելու արվեստ ~ d'attrition, ~ d'épuisement ուժասպառ անելու, հյուծելու ռազմավարություն ~ diplomatique դիվանագիտական ռազմավարություն ~ économique տնտեսական ռազմավարություն ~ politique քաղաքական ռազմավարություն
- stratégique** *adj* 1. ստրատեգիական, ռազմավարական, ռազմագիտական, ռազմական կարևորություն ունեցող 2. էական՝ շատ կարևոր՝ հետագա նպատակների իրագործման համար  $\diamond$  bombardier ~ հեռահար գործողության ռմբակոծիչ; buts et objectifs ~s ռազմավարական նպատակներ և խնդիրներ; embargo ~ ստրատեգիական բեռնարգելք; importance ~ ռազմավարական կարևորություն; position ~ ռազմավարական դիրք՝ տեղադրություն

- strict** *adj* 1. ճշգրիտ, ճիշտ, ստույգ, որոշակի 2. խիստ, անշեղ, պարտադիր, անպայման  $\diamond$  observation ~e de... ինչ-որ բանի խստիվ պահպանում; au sens le plus ~ du mot բառի բուն իմաստով  
~e isolation լրիվ մեկուսացում  
~e neutralité չեզոքության անշեղ պահպանում  
~e verité զուտ ճշմարտություն
- strictement** *adv* խստիվ, խստորեն, խստությամբ, որոշակի, ճշգրտորեն, անշեղորեն  
~ confidentiel խիստ գաղտնի  
~ parlant խիստ ասած, ճիշտն ասած
- structure** *f* կառուցվածք, կառույց, կազմություն, կարգ  
~ administrative վարչական մարմնի կառուցվածք  
~ de classe դասային կառուցվածք  
~ de l'Etat պետական կարգ՝ կառուցվածք
- stupéfiant** *m* թմրեցնող միջոց, թմրանյութ
- subalterne** *adj* 1. ստորադաս, հպատակ, ենթակա 2. երկրորդական  $\diamond$  emploi ~ ստորադաս պաշտոն; employé ~ մանր ծառայող
- subdélégation** *f* վերալիազորում, վերափոխանում, վերափոխանում, իր լիազորությունների փոխանում
- subdéléguer** *vt* վերալիազորել, վերափոխանել, փոխանցել լիազորությունները
- subdiviser** *vt* ստորաբաժանել
- subdivision** *f* նազմ. ստորաբաժանում
- ~ aérienne նազմաօդային ստորաբաժանում
- subir** *vt* 1. ենթարկվել 2. դիմանալ, կրել, տանել  $\diamond$  le Conseil a ~i de sérieuses atteintes խորհուրդը ենթարկվեց լուրջ փորձությունների  
~ l'agression ագրեսիայի զոհ դառնալ  
~ une défaite պարտություն կրել  
~ un échec անհաջողություն կրել  
~ un examen քննություն հանձնել  
~ une influence ազդեցություն կրել  
~ un interrogatoire հարցաքննության ենթարկվել  
~ la loi ենթարկվել օրենքին  
~ sa peine իր պատիժը կրել  
~ des pertes կորուստներ կրել
- subit**, -e *adj* հանկարծակի, անսպասելի; հանկարծահաս, վաղահաս, անակնկալ
- subitement** *adv* հանկարծակի, անակնկալ ձևով, անսպասելիորեն
- subjugation** *f* նվաճում, հնազանդեցում, հպատակեցում, ենթարկում, ենթակայություն
- subjuguer** *vt* նվաճել, հնազանդեցնել, հպատակեցնել, իրեն ենթարկել
- sublime** *adj* վսեմ, վեհ, փառահեղ, աստվածային, ազնիվ  
~ dévouement անվերապահ նվիրվածություն
- submerger** *vt* 1. հեղեղել, ողողել 2. ջրասույգ անել, ընկղմել, խորտակել
- subodorer** *vt* փխր. նախագուշակել, գուշակել, կռահել; կանխատեսել, կանխորոշել
- subordination** *f* 1. ենթակարգու-

բյուն, ստորակարգություն, ստորադասություն 2. ենթակայություն, կախվածություն

**subordonné**, -e *adj* ստորադաս, ենթակա, կախյալ

**subordonner** *vt* հպատակեցնել, ենթարկել, հնազանդեցնել, ենթակայության տակ դնել, ստորադասել, կախման մեջ դնել

**subreptice** *adj* 1. անօրինական, կեղծ, խաբեբայությամբ արված 2. գաղտնի, թաքուն

**subrepticement** *adv* 1. խաբեբայական ճանապարհով 2. գաղտնաբար, թաքուն ձևով

**subreption** *f* խաբեություն, մոլորեցում, ճշմարտության թաքցնում

**subrogation** *f* *հրվք.* փոխարինում, իրավահարաբերության օբյեկտի կամ սուբյեկտի փոփոխություն, պարտատիրոջ իրավունքների մեջ մտնելը  
~ conventionnelle վարկատուի իրավունքի ստանձնում՝ համաձայնագրի ուժով  
~ personnelle սուբյեկտի փոխարինում  
~ réelle օբյեկտի փոխարինում

**subrogatoire** *adj* *հրվք.* փոխարինող

**subséquentement** *adv* *հրվք.* հետո, ավելի ուշ, հետագայում

**subséquent**, -e *adj* *հրվք.* հաջորդող, հաջորդ, հետագա, անմիջականորեն հետևող

**subside** *m* նպաստ, դրամական օժանդակություն, լրավճար, դոտացիա, փոխառություն արտոնյալ պայմաններով ◊ *couper les ~s* դրամական օժանդակությունից՝ նպաստից զրկել

**subsidiare** *adj* օժանդակ, օգնական, լրացուցիչ, հավելյալ

**subsidiarement** *adv* հավելյալ կերպով, լրացուցիչ, ի լրումն, որպես հավելում:

**subsidiar** *vt* դրամական օժանդակություն ցույց տալ, նպաստ տալ, սուբսիդավորել

**subsistance** *f* 1. գոյություն, կյանք 2. *pl* սպրուտի միջոցներ՝ մթերք, սնունդ, պարեն

**subsister** *vi* գոյություն ունենալ, գոյությունը պահպանել, ապրել, լինել

**substance** *f* 1. էություն, էականը; սուբստանցիա, անփոփոխ էություն 2. բովանդակություն ◊ *en ~* ըստ էության, հիմնականում, իրապես; համառոտակի, հակիրճ կերպով; *de peu de ~* բովանդագուրկ, մակերեսային; *riche de ~* բովանդակալից

**substantiel**, -le *adj* 1. էական, հիմնական, բովանդակալից 2. նշանակալից, կարևոր, մեծ, զգալի, շոշափելի, նկատելի ◊ *avantages ~s* մեծ առավելություններ; *changements ~s* նկատելի փոփոխություններ; *progrès ~* զգալի առաջընթաց

**substantiellement** *adv* էականորեն, էապես, ըստ էության, հիմնականում, զգալիորեն

**substituer** *vt* 1. փոխարինել, տեղը բռնել; ուրիշի տեղում նշանակվել 2. նենգափոխել, թաքուն փոխել, դուրս մղել

**substitut** *m* տեղակալ, փոխարինող  
~ *de l'accusateur* դատախազի օգնական

**substitutif**, -ve *adj* փոխարինող  
**substitution** *f* 1. փոխարինում 2. նենգափոխում, նենգափոխություն; կեղծիք, կեղծում  
 ~ des conditions պայմանների փոխարինում  
**substrat** *m* հիմք, սուբստրատ  
**subterfuge** *m* խորամանկություն, հնարք, պատրվակ, կեղծ պատճառաբանություն; խաբեբայություն, խաբեություն, սուտ ◊ user de ~s խորամանկությունների դիմել  
**subtil**, -e *adj* 1. խորաթափանց, սրաթափանց, սուր 2. նուրբ, նրբանկատ; մտացածին, հնարավի, շինծու ◊ argumentation trop ~e մտացածին, անհիմն փաստարկներ; esprit ~ խորաթափանցություն, սրաթափանցություն, սուր միտք; question ~e նուրբ հարց; raisonnement ~ սրաթափանց դատողություն  
**subtiliser** *vi* իմաստակել, խելքին գոռ տալ; ավելորդ մանրամասնությունների մեջ խորանալ  
**subtilités** *f* 1. մտքի սրություն, խորաթափանցություն 2. խորամանկություն, հնարամտություն, հնարք  
**subvenir** *vi* օգնության հասնել, օգնել  
 ~ aux besoins սատարել, մեկի կարիքները հոգալ  
 ~ aux dépenses ծախսերը փակել  
**subvention** *f* նպաստ, դրամական օժանդակություն, ֆինանսավորում, լրավճար ◊ accorder des ~s դրամաշնորհ տրամադրել  
 ~ de l'Etat պետական դրամական օժանդակություն

~s spéciales պետական հատուկ նպաստներ  
**subventionné** *adj* դրամաշնորհված, ֆինանսավորված, դրամով օժանդակված  
**subventionner** *vt* ֆինանսավորել, դրամական օժանդակություն ցույց տալ, դրամաշնորհել, լրավճար տրամադրել  
**subversif**, -ve *adj* քայքայիչ, պառակտիչ, վնասարար; կործանարար, աղետաբեր, կորստաբեր ◊ activité ~ve քայքայիչ գործունեություն  
**subversion** *f* քայքայիչ գործունեություն, վնասարարություն, տապալում, կործանում, խորտակում  
**subvertir** *vt* խորտակել, տապալել, կործանել; քայքայել, ավերել, վիժեցնել  
**succéder** *vi* 1. հետևել, հետևից գնալ 2. հետևել, հաջորդել; մեկի տեղը բռնել, մեկին փոխարինել 3. ժառանգել, ժառանգ լինել ◊ se ~ իրար հաջորդել  
**succès** *m* հաջողություն, նվաճում, հաղթանակ ◊ avec ~ հաջողությամբ, հաջող կերպով; avoir du ~ հաջողության հասնել  
 ~ éclatant փայլուն հաղթանակ  
 ~ en affaires հաջողություն գործերում  
**successeur** *m* 1. փոխարինող, իրավահաջորդ 2. ժառանգորդ  
**successif**, -ve *adj* 1. հաջորդական, անընդհատ, իրար հաջորդող 2. *իրվք.* ժառանգական, ժառանգության ◊ droit ~ ժառանգական իրավունք

- succession** *f* 1. հաջորդականություն, անընդհատականություն 2. ժառանգորդություն, ժառանգում, ժառանգություն, իրավահաջորդություն ◇ *par droit de ~* ժառանգման իրավունքով ~ *d'idées* դատողությունների հաջորդականություն
- successivement** *adv* հաջորդաբար, մեկը մյուսի հետևից, աստիճանաբար
- successoral**, *-e adj* *իրվք.* ժառանգական ◇ *loi ~e* ժառանգական իրավունք
- succint**, *-e adj* կարճ, համառոտ, հակիրճ, սեղմ, լակոնիկ
- succinctement** *adv* համառոտակի, կարճ, սեղմ, հակիրճ կերպով, լակոնիկ
- succomber** *vi* 1. ուժասպառ լինել, ուժասպառվել, ուժաթափվել, սաստիկ հոգնել, կքել (բեռի տակ) 2. չդիմանալ, տեղի տալ, ենթարկվել, զիջել, անձնատուր լինել 3. մեռնել ~ *sous le poids* ծանրությունից ուժասպառվել ~ *à la tentation* փորձությանը չդիմանալ
- succursale** *f* 1. մասնաճյուղ 2. բաժանմունք ◇ *ouvrir une ~* մասնաճյուղ՝ բաժին բացել ~ *d'une banque* բանկի մասնաճյուղ ~ *d'un magasin* խանութի մասնաճյուղ
- sud** *m* 1. հարավ 2. Sud Հարավ, հարավային երկրներ 3. *քղք.* Հարավ (գարգացող երկրներ)
- suf-africain**, *-e adj* հարավաֆրիկյան
- sud-américain**, *-e adj* հարավամերիկյան
- sud-européen**, *-ne adj* հարավեվրոպական
- sudiste** *m* 1. *պտմ.* հարավցի, Հարավի կողմնակից (Ամերիկայի Հարավային և Հյուսիսային նահանգների միջև տեղի ունեցած պատերազմի ժամանակ, 1861-1865 թթ.) 2. *քղք.* հարավցի, երկրի հարավային մասի ներկայացուցիչ
- suédois**, *-e adj* շվեդական
- suffire** *vi* բավարարել, բավականացնել ◇ *cela suffit* բավական է; *il suffit que...* բավական է, որ...
- suffisance** *f* 1. բավարար քանակություն, ունևորություն, լիություն, բարօրություն, բարեկեցություն 2. ինքնագոհություն, ինքնավստահություն, պարծենկոտություն
- suffisant**, *-e adj* 1. բավարար, բավականաչափ, գոհացուցիչ 2. ինքնագոհ, ինքնավստահ, պարծենկոտ ◇ *conditions nécessaires et ~es* անհրաժեշտ և բավարար պայմաններ; *résultats ~s* բավարար՝ գոհացուցիչ արդյունքներ
- suffrage** *m* 1. ընտրական իրավունք, ձայնի իրավունք, ընտրական ձայն, քվե 2. հավանություն ◇ *accorder son ~* հավանություն տալ; *droit de ~* ձայնի իրավունք; *réunir* (կամ *recueillir, obtenir, totaliser*) *les ~ s* քվեներ՝ ձայներ հավաքել՝ ստանալ ~ *direct* ուղղակի ընտրական իրավունք ~ *égal* հավասար ընտրական իրավունք

- ~ inégal անհավասար ընտրական իրավունք  
 ~ à plusieurs degrés բազմաստիճան քվեարկություն  
 ~ universel ընդհանուր քվեարկություն
- suggérer** *vt* 1. ներշնչել, դրդել, ակնարկել 2. թելադրել, հուշել, խորհուրդ տալ, առաջարկել  
 ~ une idée միտք ներշնչել
- suggestif**, *-ve adj* 1. որոշակի միտք ներշնչող, մտքեր առաջացնող, միտք խթանող, մտածել ստիպող 2. օրինակելի, փայլուն  $\diamond$  livre ~ որոշակի միտք հարուցող գիրք; un exemple ~ հատկանշական՝ տիպական օրինակ
- suggestion** *f* 1. առաջարկություն, խորհուրդ, միտք, ակնարկ, 2. ներշնչում, թելադրանք  
 ~ constructive դրական՝ կառուցողական առաջարկ  
 ~ pratique գործնական առաջարկ
- suggestionner** *vt* 1. առաջարկել, առաջադրել, թելադրել 2. ներշնչել, թելադրել
- suisse** *adj* շվեյցարական
- suite** *f* 1. շարունակություն 2. հետևանք, արդյունք 3. շքախումբ 4. կապ, հաջորդականություն  $\diamond$  donner ~ à une demande դիմումին ընթացք տալ; donner une ~ favorable à... հարցը լուծել դրականորեն; donner ~ à un projet նախագիծը կյանքի կոչել; entraîner à sa ~ իր հետևից տանել; esprit de ~ հաջորդականություն; faire suite à... հետևել, հաջորդել; marcher à la suite de... զո գնալ մեկի հետևից; à la ~ de... հետևանքով; à la ~ des travaux աշխատանքների արդյունքում; de ~ հաջորդաբար, իրար հետևից, կարգով; par la ~ հետագայում; sans ~ անկապ, կցկտուր  
 ~s graves լուրջ հետևանքներ  
 ~s de la guerre պատերազմի հետևանքներ
- suivant**, *-e adj* հաջորդ, հետևյալ, հաջորդող, հետևող, հետագա
- suivant** *prép.* նայած, նայելով, ըստ, համաձայն, համեմատ, համապատասխան  $\diamond$  agir ~ ses forces գործել ուժերը ներածին չափով  
 ~ le mérite ըստ արժանվույնի
- suivi**, *-e adj* 1. կապակցված, հետևողական 2. մշտական, անընդհատ  $\diamond$  discours ~ կապակցված խոսք
- suivre** *vt* 1. հետևել, հետևից գնալ, ուղեկցել 2. օրինակ վերցնել, հետևել 3. հետապնդել, հետամուտ լինել  $\diamond$  exemple à ~ ընդօրինակման արժանի օրինակ; faire ~ un suspect par un policier հանձնարարել ոստիկանին հետևելու կասկածելի անձին  
 ~ les chemins battus գնալ տրորված ճանապարհով  
 ~ un discours ուշադիր լսել ելույթը  
 ~ les événements հետևել իրադարձություններին  
 ~ l'opinion commune հետևել ընդհանուրի կարծիքին  
 ~ une politique քաղաքականություն վարել  
 ~ une profession որևէ մասնագիտությամբ զբաղվել



**sujet I** -te *adj* 1. ենթակայության տակ գտնվող, ստորադաս, ենթակա 2. հակված ◊ *cela est ~ à controverse* սա վիճահարույց է ~ *au caution* կասկածելի, կասկած հարուցող  
~ *à l'impôt* հարկման ենթակա  
~ *à plusieurs interprétation* տարբեր մեկնաբանություններ ենթադրող  
~ *au recrutement* զիվորական ծառայության ենթակա

**sujet I** -te *m, f* հպատակ

**sujet II** *m* 1. թեմա, նյութ, քննության առարկա 2. պատճառ, առիթ, հիմք 3. անձ, անձնավորություն, անհատ, սուբյեկտ 4. *դ/ն/զ.* միջազգային իրավունքի սուբյեկտ ◊ *avoir ~ de* հիմք ունենալ; *au ~ de ...*, *sur le ~ de...* առիթով; *à ce ~* այս կապակցությամբ; *devenir le ~ de...* որևէ բանի նյութ դառնալ  
~s *d'accusation* մեղադրանքի կետեր

**sujetion** *f* 1. ենթակայություն, կախվածություն, կախում, կախյալ վիճակ; հպատակություն 2. սահմանափակող գործոն, անհրաժեշտություն ◊ *tenir dans la ~* ենթակայության տակ պահել  
~ *aux lois* օրենքներին ենթարկելը

**summit** (*անգլ.*) սամմիթ, ամենաբարձր մակարդակի պաշտոնական հանդիպում, գագաթնաժողով

**superbénéfice** *m* գերշահույթ

**superficiel**, -le *adj* 1. մակերեսային, դրսի, արտաքին 2. *փխբ.* մակերեսային, ոչ խոր, ոչ հիմնավոր ◊ *connaissances ~les* մակերեսային գիտելիքներ

**superficiellement** *adv* մակերեսայնորեն, մակերեսորեն, հարևանցիորեն

**superflu**, -e *adj* ավելորդ, անհարկի, անօգուտ, անտեղի, զուր ◊ *il est ~* ավելորդ է; *information ~e* ավելորդ տեղեկություններ; *propos ~s* դատարկ՝ սին խոսքեր

**superfluité** *f* 1. ավելորդություն 2. ավելցուկ, հավելորդ 3. անչափավորություն, շռայլություն, անժուժկալություն, ի չարը գործ դնելը  
~ *de paroles* երկարաբանություն, շատախոսություն

**supérieur**, -e *adj* 1. բարձրագույն; գերագույն 2. գերազանցող ◊ *autorité ~e* գերագույն իշխանություն; *enseignement ~* բարձրագույն կրթություն; *être ~* aux événements հանգամանքներից վեր լինել; *être ~* à la situation իրավիճակից հաջողությամբ դուրս գալ; *homme ~* ակամավոր մարդ; *organes ~s du pouvoir* իշխանության բարձրագույն մարմիններ  
~ *en nombre* թվաքանակով գերազանցող

**supériorité** *f* գերազանցություն, գերակշռություն, առավելություն  
~ *aérienne* օդային գերակշռություն  
~ *marquée* բացահայտ առավելություն  
~ *numérique* թվային առավելություն

**superprofit** *m* գերշահույթ

**superpuissance** *f* 1. գերտերություն 2. հավասարը չունեցող ուժ, բարձրագույն իշխանություն

**superstructure** *f* վերաշինվածք,

- վերնակառույց  
~ économique տնտեսական վերնակառույց
- supervisor** *vt* 1. հսկել, վերահսկել, հետևել, ստուգել 2. վարել, կառավարել, տնօրինել
- superviseur** *m* հսկիչ, վերահսկիչ, վերակացու
- supervision** *f* վերահսկողություն, հսկողություն, ստուգում  $\diamond$  exercer une ~ հսկողություն իրականացնել  
~ administrative վարչական հսկողություն  
~ internationale միջազգային վերահսկողություն  
~ suople et efficace ճկուն և արդյունավետ հսկողություն
- suppléance** *f* 1. տեղակալի՝ օգնականի պաշտոն 2. ժամանակավոր պաշտոն
- suppléant**, -e *m, f* տեղակալ, օգնական
- suppléer** 1. *vi* փոխարինել, հատուցել, փոխհատուցել, լրացնել 2. *vt* ա) լրացնել, ավելացնել բ) ժամանակավորապես փոխարինել  
~ un défaut բացը լրացնել, թերությունը շտկել  
~ une somme d'argent ավելացնել պակասող գումարը
- supplément** *m* 1. ավելացում, լրացում 2. հավելում 3. հավելված (գրքի, թերթի, ամսագրի)  $\diamond$  demander un ~ d'information պահանջել լրացուցիչ տեղեկություններ  
~ de ressource լրացուցիչ դրամական միջոցներ
- supplémentaire** *adj* լրացուցիչ, հավելյալ  $\diamond$  heures ~s արտաժամյա աշխատանք; règles ~s լրացուցիչ կանոններ
- supplice** *m* 1. մարմնական պատիժ, խոշտանգում 2. տանջանք, տառապանք, կտտանք  $\diamond$  le dernier ~ մահապատիժ; être au ~ անտանելի տառապանքներ կրել; instruments de ~ տանջանքի գործիքներ
- suppliciant**, -e *adj* տառապազին, տառապալից, տանջալից, տանջող, չարչարող
- supplicier** *vt* 1. մահապատժի ենթարկել 2. տանջել, խոշտանգել, կտտանքների ենթարկել
- support** *m* հենարան, նեցուկ, աջակցություն, սատարում, օժանդակում, օգնություն  $\diamond$  moyens de ~ աջակցության միջոցներ
- supporter** *vt* 1. նեցուկ լինել, իր վրա պահել, հենարան լինել 2. դիմանալ, տանել, հանդուրժել  
~ les conséquences հատուցել հետևանքների համար  
~ les frais ծախսերը կրել  
~ une responsabilité պատասխանատվություն կրել
- supposé**, -e *adj* 1. կեղծ, հնարովի, շինծու, մտացածին, անիրական 2. ենթադրյալ, ենթադրելի, ենթադրվող, հնարավոր  $\diamond$  un fait ~ մտացածին փաստ
- supposer** *vt* ենթադրել, հնարավոր համարել, կարծել, ընդունել
- supposition** *f* 1. ենթադրություն, կարծիք, հիպոթեզ 2. *իրվք*. կեղծ վավերացում; կեղծ փաստաթուղթ ներկայացնելը  
~ de nom անվան յուրացում

**suppôt** *m* հանցակից, մեղսակից, վատ գործերի՝ աջակից՝ մասնակից անձ  $\diamond$  derniers ~s թափափուկ, տականք

**suppression** *f* 1. լուծարում, լուծարքի ենթարկելը, վերացնելը, չեղյալ հայտարարելը 2. *հրվք.* թաքցնելը

~ des blocs դաշինքների վերացում

~ des droits իրավունքներից զրկում

~ d'un emploi պաշտոնի լուծարում՝ կրճատում

~ des essais nucléaires միջուկային փորձարկումների դադարեցում

~ d'état երեխայի ծնունդը հաստատող փաստաթղթերը թաքցրնելը

~ d'une loi օրենքը չեղյալ հայտարարելը

~ de restrictions սահմանափակումների վերացում

**supprimé**, *-e adj* լուծարված, չեղյալ հայտարարված

**supprimer** *vt* 1. ոչնչացնել, վերացնել, լուծարել, չեղյալ հայտարարել 2. ջնջել, բաց թողնել

~ les détails մանրամասները բաց թողնել

~ les difficultés դժվարությունները վերացնել

~ un impôt հարկը վերացնել

**suprématie** *f* 1. գերակայություն, գերիշխանություն, գերիշխող դիրք, առաջնայնություն, գերազանցություն 2. *հնգծ.* գերագույն իշխանություն

~ de la loi օրենքի գերակայություն

**suprême** *adj* 1. գերագույն, բարձրագույն 2. վերջին  $\diamond$  autorité (կամ pouvoir) ~ գերագույն իշխանություն; chef ~ des armées ~ բանակի գերագույն զլխավոր հրամանատար; conseil ~ գերագույն խորհուրդ; Cour Suprême Գերագույն դատարան; efforts ~ s վերջին ճիգեր; organe ~ du pouvoir իշխանության գերագույն մարմին; tribunal ~ գերագույն դատարան; volonté ~ վերջին ցանկություն՝ կամք

**sûr**, *-e adj* 1. անվիճելի, անառարկելի 2. անվտանգ, ապահով 3. վստահ 4. հուսալի, վստահելի  $\diamond$  bien ~ իհարկե, անկասկած; être ~ de son coup վստահ լինել իր հաջողության մեջ; lieu ~ անվտանգ վայր; moyen ~ հուսալի միջոց; tenir pour ~ համոզված լինել

~ de réussir վստահ՝ հաջողության հասնելու գործում

**surabondance** *f* չափազանց առատություն, լիառատություն, ճոխություն, ավելցուկ

**suranné**, *-e adj* ժամկետանց (փաստաթուղթ); հնացած, դարձն ապրած, հնաճ

**surcharge** *f* 1. լրացուցիչ աշխատանք, գերբեռնվածություն 2. լրացուցիչ հարկ

~ de dépense ավելորդ ծախսեր, գերծախս

~ de travail լրացուցիչ աշխատանք

**surcharger** *vt* 1. ծանրաբեռնել 2. չափազանց մեծ հարկ դնել  $\diamond$  être ~é de travail աշխատանքով ծան-

րաբեռնված լինել  
**surcroît** *m* աճ, ավելացում, մեծացում, շատացում  $\diamond$  de ~ դրանից դուրս, բացի դրանից; en ~ du budget բյուջեից դուրս  
 ~ de dépenses ծախսերի ավելացում  
 ~ d'importations ներմուծումների աճ  
 ~ de ressources դրամական միջոցների աճ  
**surcroître** 1. *vt* չափից դուրս ավելացնել 2. *vi* աճել, մեծանալ, ավելանալ  
**surélévation** *f* չափից ավելի բարձրացում, ուռճացում (գների և այլն)  
**surélever** *vt* չափից դուրս բարձրացնել, ավելացնել, ուռճացնել  
 ~ les prix գները ուռճացնել  
**suûrement** *adv* ճշտորեն, իսկությամբ, հուսալիորեն, վատահար  
**suréminent**, -e *adj* բարձրագույն, ամենաբարձր, գերագույն; գերազանց, գերակշիռ  
**surémission** *f* թղթադրամի գերթողարկում  
**surenchère** *f* 1. գների բարձրացում, թանկացում; հրապարակային աճուրդով վաճառվող գույքի գնի ուռճացում՝ թանկացում 2. *փխր.* չափից դուրս խոստումներ 3. էսկալացիա, գործողությունների անընդհատ ծավալում  $\diamond$  faire ~ գինը բարձրացնել (աճուրդում)  
 ~ électorale նախընտրական խոստումներ  
 ~ de menaces սպառնալիքների էսկալացիա; նոր՝ ավելի ուժեղ

սպառնալիքներ  
**surenchérir** *vi* 1. գինը բարձրացնել, թանկացնել 2. թանկանալ 3. չափից դուրս խոստումներ տալ  
**surenchérissement** *m* գների նոր բարձրացում, նոր գնաճ  
**surestimation** *f* 1. վերագնահատում 2. գերագնահատում  
**surestimer** *vt* 1. վերագնահատել 2. գերագնահատել  $\diamond$  se ~ ինքն իրեն գերագնահատել  
**suûreté** *f* 1. անվտանգություն, ապահովություն 2. երաշխիք, երաշխավորություն 3. վստահություն  $\diamond$  donner des ~s à զո մեկին երաշխիքներ տալ; mesures de ~ նախազուշական միջոցներ; en ~ անվտանգ՝ ապահով տեղում; en ~ de conscience հանգիստ խղճով; la Sûreté խուզարկու ոստիկանություն (Ֆրանսիայում)  
 ~ de l'Etat պետական անվտանգություն  
 ~ individuelle անձի անձեռնմխելիություն  
 ~ nucléaire պաշտպանություն միջուկային զենքից  
 ~ publique հասարակական անվտանգություն  
 ~ de soi-même ինքնավստահություն  
**surexploitation** *f* գերշահագործում, չափից դուրս շահագործում  
**surface** *f* 1. մակերես, հարթություն, մակերևույթ 2. տարածություն  $\diamond$  avoir de la ~ *խսկց.* միջոցներ ունենալ, բարեկեցիկ ապրել; à la ~ du sol հողի մակերեսին  
 ~ d'emblavement ցանքատարածություն

- ~, grande մեծ հանրախանութ, սուպերմարկետ  
 ~ locative, ~ habitable ընդհանուր բնակելի տարածություն
- surfrappe** *f* դրամի վերահատում
- surgir** *vi* ծագել, առաջ գալ, առաջանալ, գոյանալ, երևալ, հանկարծակի հայտնվել  $\diamond$  faire ~ առաջացնել, առաջ բերել, ծնունդ տալ, հարուցել
- surgisement** *m* երևալը, հանկարծակի հայտնվելը, առաջանալը, գոյանալը, երևան գալը
- surhaussement** *m* բարձրացում (գների), թանկացում
- surhausser** *vt* բարձրացնել (գինը), թանկացնել
- surhumain**, -e *adj* գերմարդկային, անմարդկային
- surimposer** *vt* հարկը մեծացնել, ավելացնել; լրացուցիչ հարկ դնել
- surimposition** *f* հարկի ավելացում; հավելյալ հարկի դնելը
- surmenage** *m* 1. գերհոգնածություն, ուժասպառություն 2. գերլարվածություն, ծանրաբեռնվածություն
- sumener** *vt* սաստիկ հոգնեցնել, հոգնատանջ անել, ուժասպառ անել, հյուժել  
 ~ les écoliers աշակերտներին ծանրաբեռնել հանձնարարություններով
- surmontable** *adj* հաղթահարելի
- surmonter** *vt* 1. բարձրանալ, վեր խոյանալ 2. հաղթահարել; հաղթանակ տանել  
 ~ les difficultés դժվարությունները հաղթահարել  
 ~ les divergences տարաձայնությունները հաղթահարել
- ~ la fatigue հոգնածությունը հաղթահարել  
 ~ l'hostilité թշնամությունը հաղթահարել  
 ~ les obstacles խոչընդոտները հաղթահարել
- surenaturel**, -le *adj* 1. գերբնական 2. արտասովոր, անսովոր, չտեսնրված, բացառիկ
- suroccupé**, -e *adj* գերզբաղված, չափազանց զբաղված
- surpasser** *vt* գերազանցել, առավելություն ունենալ
- surpeuplé**, -e *adj* գերբնակեցված
- surpeuplement** *m* գերբնակեցում, գերբնակվածություն
- surpeupler** *vt* գերբնակեցնել, չափից խիտ բնակեցնել
- surplus** *m* 1. պահանջարկի չափերը գերազանցող արտադրանք 2. մնացորդ, ավելցուկ  $\diamond$  au ~ բացի այդ; ի դեպ, ընդ որում; de ~ լրացուցիչ
- surpopulation** *f* գերբնակչություն, գերբնակվածություն
- surprendre** *vt* 1. հանկարծակիի բերել, անակնկալի բերել 2. զարմացնել, ապշեցնել, շշմեցնել  
 ~ la bonne foi de ... չարաշահել մեկի վստահությունը  
 ~ l'ennemi հանկարծակիի բերել թշնամուն; հանկարծակիի հարձակվել թշնամու վրա  
 ~ en flagrant délit բռնել հանցանքի վայրում  
 ~ un voleur գողին հանկարծակիի բերել (գողության պահին)
- surprise** *f* 1. անսպասելի դեպք, անակնկալ, հանկարծակիություն 2. զարմանք, հիացում 3. հան-

- կարծակի հարձակում; բռնագրավում, գրավում, զավթում ◊ *attaque par* ~ անակնկալ հարձակում; *grève*- ~ գործադուլ՝ առանց մախազգուշացման; *visite* - ~ անսպասելի այց  
 ~ *de nuit* գիշերային հարձակում  
 ~ *stratégique* օպերատիվ հանկարծակիություն
- surproduction** *f* գերարտադրություն
- surprofit** *m* գերշահույթ
- surpuissant**, -e *adj* գերիզոր
- surseoir** *vi* տարկետել, ժամկետը երկարաձգել, հետաձգել; ընդհատել  
 ~ *à la saisie* գույքի վրա կալանքը հետաձգել
- sursis** *m* 1. *զինվ.* տարկետում 2. *իրվք.* ժամկետի հետաձգում ◊ *accorder un* ~ հետաձգել, տարկետել; *condamnation à* ~ պայմանական դատապարտում; *loi de* ~ օրենք պայմանական դատապարտման մասին; *mort en* ~ մահապարտ, մահվան դատապարտված  
 ~ *à l'exécution des peines* դատավճռի իրականացման հետաձգում; պայմանական դատապարտում  
 ~ *d'incorporation* զինակոչի հետաձգում
- surtaux** *m* ծանր հարկում, չափազանց մեծ հարկում, հարկերով ծանրաբեռնում
- surtaxe** *f* 1. լրացուցիչ հարկ 2. գերհարկում, գերհարկադրում; հավելագին
- surtaxer** *vt* 1. գերհարկել, գերհարկադրել, չափազանց մեծ հարկեր դնել 2. լրացուցիչ հարկ դնել
- surtravail** *m* հավելյալ՝ լրացուցիչ աշխատանք
- surveillance** *f* հսկողություն, հսկում, ստուգում, վերստուգում ◊ *exercer une* ~ հսկողություն իրականացնել; *se tenir en* ~ զգոն լինել, զգաստ լինել; *sous la* ~ *de...* հսկողության տակ; *tromper la* ~ *de* զոմնեկի զգոնությունը շեղել  
 ~ *douanière* մաքսային վերահսկում  
 ~ *d'ensemble* ընդհանուր հսկողություն  
 ~ *financière* ֆինանսական հսկողություն  
 ~ *médicale* բժշկական հսկողություն  
 ~ *multilatérale* բազմակողմանի հսկողություն
- survivance** *f* 1. վերապրուկ, մնացուկ 2. *հնցծ.* ժառանգորդության իրավունք
- survivant**, -e *adj* ողջ մնացած, փրկված, վերապրող
- survivre** *vi* 1. վերապրել, ավելի երկար ապրել (որևէ մեկից) 2. ողջ մնալ, փրկվել, ազատվել, պրծնել  
 ~ *à une catastrophe* աղետից փրկվել, ողջ մնալ
- survol** *m* 1. թռիչք (վրայով) 2. թռուցիկ ակնարկ, տեսություն ◊ *faire le* ~ *de ...* մեկնաբանել  
 ~ *du Pacifique* թռիչք Խաղաղ օվկիանոսի վրայով
- survoler** *vt* 1. թռչել, թռչել-անցնել, վրայով թռչել 2. մեկնաբանել, մակերեսորեն ծանոթանալ որևէ բանի հետ  
 ~ *une question* ա) թռուցիկ շա-

- րադրել հարցը բ) ծանոթանալ հարցի հետ
- sus** 1. *adv* courir ~ à l'ennemi նետվել հակառակորդի վրա 2. *prép* : en ~ de... բացի, զատ; en ~ des frais ծախսերից զատ; des frais en ~ ավելորդ ծախսեր
- susceptible** *adj* 1. դյուրագգաց, զգայունակ 2. շուտ վիրավորվող 3. չդիմադրող, հանձնվող, անձնատուր լինող, ենթարկվող; ընդամանակ, ենթակա◇ propositions ~s d'intéresser հետաքրքրություն ներկայացնող առաջարկություններ ~ d'amélioration բարելավման ենթակա  
~ d'être utilisé օգտագործման համար պիտանի
- susciter** *vt* հարուցել, առաջ բերել, առաջացնել, ստեղծել  
~ des obstacles խոչընդոտներ ստեղծել  
~ un vif intérêt աշխույժ հետաքրքրություն առաջ բերել
- susdit**, -e *adj* վերևում հիշատակված, վերոհիշյալ
- susmentionné**, -e *adj* վերոհիշյալ, վերոնշյալ
- susnommé**, -e *adj* վերևում անվանված, վերանվանյալ
- suspect**, -e *adj* կասկածելի, կասկած հարուցող, հավատ չներշնչող ◇ conduite ~e կասկածելի վարքագիծ; témoignage ~ կասկածելի վկայություն
- suspecter** *vt* կասկածել, չվստահել, հավատ չընծայել
- suspendre** *vt* 1. հետաձգել, երկարաձգել 2. դադարեցնել, ընդհատել (ժամանակավորապես) 3. (ժամանակավորապես) հեռացնել, ազատել (պաշտոնից և այլն)  
~ l'audience նիստը ընդհատել, հայտարարել ընդմիջում  
~ le débat ընդհատել բանավեճը  
~ l'exécution d'un arrêt հետաձգել մահապատիժը  
~ de ses fonctions պաշտոնից հեռացնել  
~ les hostilités դադարեցնել պատերազմական գործողությունները  
~ un journal ժամանակավորապես արգելել թերթը  
~ le jugement հետաձգել դատական նիստը  
~ les paiements դադարեցնել վճարումները  
~ les relations diplomatiques դադարեցնել դիվանագիտական հարաբերությունները  
~ une réunion ընդհատել ժողովը
- suspendu**, -e *adj* հետաձգված, երկարաձգված; ընդհատված, դադարեցված, կասեցված ◇ ~ e ընդհատված նիստ
- suspens** *m* անորոշություն, անորոշ վիճակ, անհայտություն, առկախ վիճակ, սպասողական վիճակ ◇ en ~ անորոշ, չլուծված; affaires en ~ անավարտ գործեր; question en ~ չլուծված խնդիր
- suspension** *f* (ժամանակավոր) դադարեցում, կասեցում, ընդհատում, հետաձգում  
~ d'armes կարճ զինադադար  
~ d'audience դատական նիստի ընդմիջում  
~ de la discussion քննարկման ընդմիջում

- ~ des droits civils քաղաքացիական իրավունքների կասեցում  
 ~ les essais de l'arme nucléaire միջուկային զենքի փորձարկումների դադարեցում  
 ~ des hostilités պատերազմական գործողությունների դադարեցում  
 ~ de poursuite հետապնդման դադարեցում  
 ~ de séance ընդմիջում
- suspicion** *f* կասկած ◊ tenir en ~ կասկածել
- suzerain**, -e *adj* *պտմ.* սյուզերենական, ավատիչխանական, գերագույն
- suzeraineté** *f* *պտմ.* 1. սյուզերենի իրավունք 2. սյուզերենություն, ավատիչխանություն
- symbole** *m* խորհրդանշան, խորհրդանիշ, պայմանական նշան
- symbolique** *adj* խորհրդանշական, սիմվոլիկ
- symboliser** *vt* 1. խորհրդանշել 2. սիմվոլների միջոցով ներկայացնել կամ պատկերել
- sympathie** *f* 1. համակրանք, համակրություն, քաջալերանք, հավանություն, փոխըմբռնում 2. բարյացակամություն 3. կարեկցություն, ցավակցություն, խղճահարություն ◊ accueillir qch avec ~ բարյացակամորեն վերաբերվել որևէ բանի; attirer (կամ inspirer) la ~ համակրելի լինել, համակրանք ներշնչել; avoir la ~ de զոօգտվել մեկի համակրանքից; éprouver (կամ avoir, montrer, témoigner) de la ~ pour զո համակրել, համակրանք տաժել; être en ~ avec զո համակրել մեկմեկու;
- gagner les ~s համակրանքը շահել
- sympathisant**, -e *adj* 1. համակրող 2. կարեկցական, կարեկից
- sympathisant**, -e *m, f* համակիր; համակրող անձ
- sympathiser** *vi* 1. համակրել 2. կարեկցել, ցավակցել
- symposium**, symposium *m* սիմպոզիում, համախորհրդակցություն, համաժողով
- symptôme** *m* ախտանիշ, նշան
- synchroniser** *vt* ժամանակով համապատասխանեցնել, սինխրոնիզացիայի ենթարկել, միաժամանակացնել, համաժամանակացնել  
 ~ le retrait des troupes et l'arrivée des forces internationales իրականացնել զորքերի դուրսբերում միջազգային ուժերի ժամանման հետ միաժամանակ
- syndical**, -e *adj* արհմիութենական ◊ mouvement ~ արհմիութենական շարժում; unité ~e արհմիութենական միասնականություն` համախմբվածություն
- syndicat** *m* 1. արհմիություն 2. միություն, սինդիկատ, կապիտալիստական խոշոր միավորում, կոնսորցիում ◊ membre de ~ արհմիության անդամ  
 ~ bancaire բանկերի խոշոր միավորում  
 ~ du bâtiment շինարարական բանվորների միություն  
 ~ financier ֆինանսական միություն  
 ~ d'initiative զբոսաշրջիկների սպասարկման միություն (Ֆրանսիայում)



~ minier հանքավորների միություն  
 ~ de patrons, ~ patronal գործարարների միություն  
 ~ de producteurs արդյունաբերողների միություն  
**syndiqué**, -e *m, f* արհմիության անդամ  
**syndiquer** *vt* միավորել արհմիության մեջ, արհմիության անդամ դարձնել ◊ se ~ միավորվել արհմիության մեջ, խոշոր միավորում ձևավորել  
**synopsis** *f* համառոտագիր, ամփոփում, կոնսպեկտ, ընդհանուր տեսություն  
**synoptique** *adj* համատեսական, հակիրճ, համառոտ ◊ rapport ~ համատեսական զեկույց; table ~ ամփոփ աղյուսակ  
**synthétiser** *vt* 1. համադրել, սինթեզել 2. ընդհանրացնել  
**syrien**, -ne *adj* սիրիական  
**systematique** *adj* 1. սիստեմատիկ, համակարգված 2. կանոնավոր, պարբերական, համալրված ◊ discrimination ~ հետևողական համակարգված խտրականություն; efforts ~s համալրված ջանքեր; refus ~ անփոփոխ մերժում; soutien ~ à une politique անփոփոխ՝ լիակատար օժանդակություն որևէ քաղաքականության  
**systematisation** *f* համակարգում,

դասակարգում, սիստեմավորում  
**systematiser** *vt* համակարգել, դասակարգել, սիստեմավորել  
**systeme** *m* 1. համակարգ, համալիր, կառուցվածք 2. կարգ, հասարակարգ 3. մեթոդ, եղանակ ◊ être dans le ~ հասարակության մեջ ապրել; sortir du ~ հասարակությունից դուրս ապրել  
 ~ bancaire publique պետական բանկային համակարգ  
 ~ de(s) change(s) արժուրային համակարգ  
 ~ de conduite վարվելաձև  
 ~ électoral ընտրական համակարգ  
 ~ féodal ֆեոդալական հասարակարգ  
 ~ fiscal հարկային համակարգ  
 ~ informatisé ինֆորմատացված համակարգ  
 ~ judiciaire դատական համակարգ  
 ~ nerveux նյարդային համակարգ  
 ~ planétaire մոլորակային համակարգություն  
 ~ de la sécurité sociale սոցիալական ապահովության համակարգ  
 ~ social սոցիալական հասարակարգ  
 ~ solaire արեգակնային համակարգ

## T

- tabou** *m* տաբու, արգելք (արգելված բան՝ նախնադարյան ցեղերի մոտ)
- tabouer** *vt* արգելք դնել, արգելել
- tacite** *adj* լուռ, լռիկ, լռակյաց, համբ; անխոս, անձայն  $\diamond$  consentement ~ լուռ համաձայնություն
- tâche** *f* առաջադրանք, աշխատանք, հանձնարարություն, խնդիր  $\diamond$  accomplir (կամ remplir) la ~, s'acquitter d'une ~ խնդիր կատարել; assumer la ~ իր վրա վերցնել խնդրի իրականացումը; avoir pour ~ խնդիր՝ նպատակ ունենալ; faire face à une ~ պատրաստ լինել խնդրի կատարման համար; fixer (կամ donner, poser) une ~ à զո խնդիր դնել մեկի առջև; se donner pour ~ իր առջև խնդիր դնել; se fixer (կամ s'imposer) la ~ իր առջև խնդիր դնել; une ~ nous incombe (կամ se dresse devant nous) մեր առջև ծառանում է մի խնդիր, մեր առջև խնդիր է դրվում  
~ urgente հրատապ, կենսական խնդիր
- tactique** *f* 1. տակտիկա, մարտավարություն 2. գործելակերպ, վարքագիծ  
~ de conciliation հաշտվողական մարտավարություն  
~ d'effacement ինքնամեկուսացման գործելակերպ
- taire** *vt* լռության մատնել, թաքցնել  
~ un fait փաստը լռության մատնել
- talon** *m* : ~ d'Achille Աքիլլեսյան գարշապար
- tambour** *m* թմբուկ  $\diamond$  mener ~ battant աշխուժորեն գործել; sans ~ ni trompette լռելյայն, գաղտնաբար, թաքուն  
~ battant թմբկահարություն
- tamis** *m* ցանց, մաղ  $\diamond$  passer au ~ *փխբ.* մանրամասն ստուգել; խիստ քննադատության ենթարկել; մշակել
- tamiser** *vt* մանրագնիկն հետագոտել, քննել
- tam-tam** *m* 1. տամտամ (թմբուկ) 2. *խսկց.* աղմուկ, աղմկարարություն; աղմկալի գովազդ, տարփողում  $\diamond$  faire du ~ աղմկել, գոռոռալ, աղմուկ բարձրացնել
- tangible** *adj* շոշափելի, զգալի, էական  $\diamond$  différence ~ ակնհայտ տարբերություն; preuves ~s իրենդեն ապացույցներ; résultats ~s շոշափելի արդյունքներ
- tapinois** : en ~ *loc. adv.* գաղտնաբար, գաղտնի կերպով, թաքուն, ծածուկ, գողտուկ, աննկատելիորեն
- tapis** *m* գորգ  $\diamond$  être [revenir] sur le ~ լինել [նորից դառնալ] խոսակցության կամ քննարկման առարկա; mettre (կամ jeter) qch sur le ~ որևէ հարց քննարկման դնել
- tarif** *m* 1. սակագուցակ, գնացուցակ, տարիֆ, հարկացուցակ,

սակագին, մաքս, տուրք 2. դրույք, աշխատավարձի չափ ◊ *appliquer un* ~ սակացուցակ կիրառել; *établir* (կամ *fixer*) un ~ սակացուցակ կազմել; *réduire le* ~ սակացուցակն իջեցնել; *relever le* ~ սակացուցակը բարձրացնել; *à* ~ *réduit* զեղչով, արտոնյալ կերպով  
 ~ *des douanes*, ~ *douanier* մաքսային տարիֆ, մաքսատուրք  
 ~ *à forfait* սակացուցակ ըստ համաձայնագրի  
 ~ *à gradation* տարբերական սակացուցակ  
 ~ *horaire* ժամավճար, ժամավարձ  
 ~ *de paiement* դրույքաչափ  
 ~ *préférentiel* արտոնյալ մաքսատուրք  
 ~ *protecteur* հովանավորական՝ պրոտեկցիոն տարիֆ  
 ~ *de responsabilités* անպատասխանության վճարումները սահմանելու սանդղակ  
 ~ *unitaire* միասնական սակագին  
 ~ *d'urgence* ժամկետային սակացուցակ  
 ~ *en vigueur* գործող տարիֆ  
**tarificatin** *f* սակացուցակի սահմանում, սակագնի սահմանում  
 ~ *des services* սպասարկման գնի սահմանում  
**tartuferie** *f* կեղծավորություն, երեսպաշտություն, կեղծ բարեպաշտություն  
**tâter** 1. *vt* շոշափել; շոշափելով զգալ; *փխք*. շոշափելով ստուգել, փորձել, տնտղել 2. *vi* փորձարկել, փորձել

~ *de la prison* բանտի համը տեսնել  
 ~ *le terrain* հող շոշափել, մտքերը՝ պլանները դուրս կորզել  
**taux** *m* 1. սակագին, սակ, աշխատավարձի չափ 2. փոխարժեք, գին 3. տոկոսային հարաբերություն, տոկոս, տոկոսադրույք 4. հարկման չափաքանակ՝ չափ ◊ *au* ~ *de* ... ըստ սակացուցակի, գնով; *au* ~ *de change* դրամական փոխարժեքով  
 ~ *des allocations* նպաստների չափ  
 ~ *de base bancaire* մեկնարկային բանկային սակագին  
 ~ *de l'impôt* հարկային դրույք  
 ~ *d'intérêt* տոկոսադրույք  
 ~ *légal* օրենքով հաստատված տոկոսադրույք, օրինական տոկոսադրույք  
 ~ *limite* առավելագույն հարկում  
 ~ *de marque* *տնտ.* վաճառքի և գնման գնի տոկոսային հարաբերություն  
 ~ *de profit* եկամտաչափ, շահութաչափ  
 ~ *réel* իրական տոկոսադրույք  
 ~ *des salaires* (աշխատավարձի) դրույքաչափ  
 ~ *uniforme* միատեսակ դրույք  
**taxation** *f* 1. հարկադրում, հարկում, հարկերի գանձում 2. գնահատում, սակորոշում, սակագրում, գնորոշում ◊ *système de* ~ կայուն գների համակարգ  
 ~ *des surprofits* գերշահույթի հաշվարկում  
**taxe** *f* 1. սակագին, սակ, հաստատուն սակագին 2. հարկ, գան-

ծում, տուրք 3. վարձ (ծառայության դիմաց) 4. դատական ծախքերի սահմանում  $\diamond$  exonérer d'une ~ հարկավճարումից ազատել  
 ~ sur le chiffre d'affaires ապրանքաշրջանառության հարկ  
 ~ communale համայնքային հարկ  
 ~ de compensation փոխհատուցման տուրք  
 ~ directe ուղղակի հարկ  
 ~ douanière մաքսատուրք  
 ~ d'Etat պետական տուրք  
 ~ à l'exportation արտահանման տուրք  
 ~ foncière հողային հարկ  
 ~ indirecte անուղղակի հարկ  
 ~ locale տեղական հարկ  
 ~ de luxe պերճանքի առարկաների վրա դրված հարկ  
 ~ à la production շահութահարկ  
 ~ sur le revenu եկամտահարկ  
 ~ de séjour օրավարձ (առողջարանում)  
 ~ de transport փոխադրական (տրանսպորտային) հարկ  
 ~ à ( sur) la valeur ajoutée (T.V.A.) ավելացված արժեքի հարկ (Ա.Ա.Հ.)

**taxer** *vt* 1. հաստատուն սակագին հաստատել, կայուն գին նշանակել, գնանշել 2. հարկադրել, հարկ դնել, հարկել 3. մեղադրել, հանդիմանել  
 ~ les vivres սննդամթերքի վրա հաստատուն գներ սահմանել

**tchécoslovaque** *adj* չեխոսլովակյան  
**tchèque** *adj* չեխական  
**technicien**, -ne *m, f* տեխնիկ, ինժեներ, մասնագետ

~ militaire ռազմական մասնագետ  
**technique** *adj* տեխնիկական  $\diamond$  agent ~ տեխնիկ; assistance ~ տեխնիկական աջակցություն; conseillers ~s d'un ministre նախարարի տեխնիկական խորհրդականներ; contrôle ~ տեխնիկական մանրամասներ; détails ~s տեխնիկական մանրամասներ; service ~ de l'entreprise ձեռնարկության տեխնիկական ծառայություն  
**technique** *f* 1. տեխնիկա 2. վարպետություն 3. հնար, մեթոդ, տեխնոլոգիա  $\diamond$  n'avoir pas la (bonne) ~ տեխնիկա չունենալ, տեխնիկային չտիրապետել  
 ~ de management *տնտ.* կառավարման մեթոդ  
**technologie** *f* 1. տեխնոլոգիա 2. տեխնիկա  
 ~ avancée առաջադիմական տեխնոլոգիա  
 ~s, hautes բարձր տեխնոլոգիաներ  
 ~s de l'information տեղեկատվական տեխնոլոգիաներ  
**témoignage** *m* 1. վկայություն, ցուցմունք 2. նշան, սպացույց  $\diamond$  faux ~ կեղծ վկայություն, կեղծ ցուցմունք; porter ~ վկայել; rendre ~ de... վկայել, հավաստել, հաստատել; s'en reporter aux ~s de... հիմնվել մեկի վկայության վրա; au ~ de... վկայությամբ; en ~ de...ի նշան; en ~ de reconnaissance ի նշան երախտագիտության  
 ~, faux կեղծ՝ սուտ վկայություն  
 ~ muet հանցանշան

~ de sympathie համակրանքի դրսևորում

**témoigner** *vt* 1. արտահայտել, վկայել, բացահայտել 2. *vi* վկայել, վկայությունն ցուցմունք տալ

**témoin** *m* *հրվք.* վկա ◊ appel aux ~s վկայաբերում; être ~ վկա լինել, վկայել; prendre qn à ~ վկայակոչել մեկին; récuser un ~ վկայի նկատմամբ բացարկ հայտարարել; *կրոն.* Témoins de Jéhovah Եհովայի վկաներ

~ à charge մեղադրող կողմի վկա

~ corrompu կաշառված վկա

~ à décharge պաշտպանող կողմի՝ պաշտպանության վկա

~, faux կեղծ վկա

~ muet հանցանշան

~ oculaire ականատես

**tempérer** *vt* չափավորել, մեղմել, մեղմացնել

~ l'impression du communiqué թուլացնել հայտարարության թողած տպավորությունը

**temporaire** *adj* ժամանակավոր, վաղանցիկ ◊ contrat ~ ժամանակավոր պայմանագիր; envoyé ~ *դվնգ.* ժամանակավոր դեսպանորդ, դիվանագիտական ժամանակավոր ներկայացուցիչ; mesure administrative ~ ժամանակավոր վարչական միջոցառում; pouvoir ~ ժամանակավոր իշխանություն; travail ~ ժամանակավոր աշխատանք

**temporalité** *f* աշխարհիկ իշխանություն

**temporel**, -le *adj* 1. ժամանակավոր, անցողիկ, վաղանցիկ 2. աշխարհիկ

**temporisation** *f* 1. սպասում, ժամանակի շահում, հապաղում 2. դանդաղում, ուշացում

**temporiser** *vi* հապաղել, ուշացնել, դանդաղել, սպասել, ժամանակ շահել

**temps** *m* 1. ժամանակ, ժամ 2. (նաև *pl*) ժամանակաշրջան, ժամանակներ ◊ avec le ~ ժամանակի հետ՝ ժամանակին զուգընթաց՝ ժամանակի ընթացքում; avoir du ~ ժամանակ ունենալ; emploi du ~ ժամատախտակ; espace (կամ laps) de ~ ժամանակահատված; être à court de ~ ժամանակի սղություն զգալ՝ ունենալ; gagner du ~ ժամանակ շահել; intervalle (կամ laps) de ~ ժամանակամիջոց; perdre du (կամ son) ~ ժամանակ կորցնել; passer le ~ à... ժամանակն անցկացնել ինչ-որ բան ամելու վրա, զբաղվել ինչ-որ բանով; rattrapper le ~ perdu վերադարձնել կորցրած ժամանակը; à ~ ճիշտ ժամանակին; en ~ utile ժամանակին; du ~ de Picasso Պիկասոյի ժամանակներում; toute chose à son ~ ամեն ինչ իր ժամանակին; tuer le ~ ժամանակ սպանել; unité de ~ ժամանակի միավոր

~ de parole ռեզլամենտ, ժողովակարգ, վարելակարգ, կանոնակարգ (ելույթի)

~ modernes, ~ nouveaux նոր ժամանակներ

~ universel (T.U.) համաշխարհային ժամանակ

**tenace** *adj* 1. դիմացկուն, ամուր, պինդ, չթուլացող, հաստատուն,

անփոփոխ 2. տոկուն, անսասան, աննկուն, կայուն, համառ, հաստատակամ, անզիջող, անհողողող, անկոտրում  $\diamond$  les préjugés ~s քարացած նախապաշարումներ

**ténacité** *f* 1. դիմացկունություն, ամրություն 2. տոկունություն, անսասանություն, կայունություն, աննկունություն, հաստատունություն 3. համառություն, հաստատակամություն

**tenant**, -e *adj* : séance ~e նիստի ընթացքում; *փխք.* տեղում, անմիջապես, իսկույն

**tenants** *m pl* : savoir tous les ~ et les aboutissants d'une affaire իմանալ գործի բոլոր հանգամանքները

**tendance** *f* 1. ձգտում, հակում, հակվածություն, միտում 2. *քղք.* ֆրակցիա; ուղղվածություն, գաղափարամիտություն  $\diamond$  avoir une ~ միտում ունենալ; une ~ s'accuse միտում է նկատվում

**tendre** *vi* 1. թեքել՝ տանել որոշ ուղղությամբ, ձգել դեպի, տրամադրված լինել 2. ձգտել, հակում՝ հակվածություն ունենալ  $\diamond$  se ~ լարվել, սրվել, վատանալ (հարաբերությունների մասին) ~ une embûche դավեր նյութել ~ à sa fin իր վախճանին մոտենալ

**tendu**, -e *adj* լարված, սրված  $\diamond$  rapports ~s լարված հարաբերություններ; situation ~e լարված՝ ճգնաժամային դրություն

**ténébreux**, -se *adj* 1. մութ, խավար, մթին 2. անհասկանալի, անորոշ, մանվածապատ  $\diamond$  phrases ~ses

անորոշ խոսքեր

**tenir** 1. *vi* ա) պահել, բռնել, ձեռքում ունենալ բ) պարունակել, բովանդակել գ) ունենալ դ) զբաղվել որևէ գործով, ղեկավարել ե) տեղեկանալ զ) հաշվի առնել, համարել 2. *vi* ա) դիմանալ բ) թանկ գնահատել, մեծ նշանակություն տալ, կարևոր համարել  $\diamond$  se ~ ա) բռնվել բ) կանգնել, գտնվել գ) իրեն պահել դ) իրեն համարել ե) իրեն զսպել զ) տեղի ունենալ, կատարվել; se ~ les bras croisés անգործության մատնվել; se ~ sur ses gardes զգույշ լինել, զգաստ լինել; se ~ sur la réserve սպասել; se ~ sur le qui-vive մարտական պատրաստության վիճակում լինել; se le ~ pour dit ի գիտություն ընդունել; ne pas ~ debout քննադատությանը չդիմանալ; il est tenu de déclarer նա պարտավորված է հայտարարել; cela tient à plusieurs raisons դա կախված է բազմաթիվ պատճառներից; qu'à cela ne tienne այդ մասին չարժե խոսել; tenir compte des interprétations նկատի առնելով մեկնաբանությունները; un registre tenu par le ministère նախարարության կողմից կազմվող ցուցակ ~ une assemblée ժողով անցկացնել ~ la barre կառավարման ղեկի մոտ լինել ~ compte de ... հաշվի առնել, ուշադրության առնել, նկատի առնել ~ au courant տեղեկացնել, գործի

ընթացքին տեղյակ պահել  
 ~ en dé fiance չվստահել, կասկածի տակ առնել  
 ~ un discours ճառ ասել, ճառել  
 ~ à l'écart հեռու մնալ, չխառնվել  
 ~ à honneur պատիվ համարել  
 ~ lieu de... փոխարինել, տեղը բռնել  
 ~ note de նկատի ունենալ  
թյուն, հապճեպություն  $\diamond$  *appliquer la procédure d'~* շտապ բուժական գործողություն կիրառել; *en cas d'~* ծայրահեղ անհրաժեշտության դեպքում; *demander l'~* պահանջել անհապաղ քննարկում՝ շտապ կարգով քննարկումներ; *discussion d'~* անհետաձգելի քննարկում; *état d'~* արտակարգ դրություն; *d'extrême ~* խիստ հրատապ; *mesures d'~* շտապ՝ անհետաձգելի միջոցառումներ; *parer à l'~* անել ամենանհրաժեշտը; *en première ~* առաջին հերթին; *un problème d'~* անհետաձգելի խնդիր; *secours d'~* անհետաձգելի օգնություն; *en toute ~* հապճեպորեն, շտապ կարգով; *d'~* անմիջապես, անհապաղ, առանց հետաձգելու ~ *pressante, extrême ~* ծայրահեղ հրատապություն

**urgent**, *-e adj* շատ անհրաժեշտ; անհապաղ, հրատապ, անհետաձգելի, շտապ, շուտափույթ  $\diamond$  *débat ~* հրատապ բանավեճ; *message ~* շտապ հաղորդագրություն; *mesures ~es* շտապ՝ անհետաձգելի միջոցառումներ; *raison ~e* ծանրակշիռ պատճառ  
~ *problème* հասունացած խնդիր

**urne** *f* քվեատուփ  $\diamond$  *aller aux ~ s* գնալ քվեարկելու, գնալ ընտրությունների; *déposer un bulletin dans l'~* ընտրաթերթիկը գցել քվեատուփ  
~ *électorale* քվեատուփ

**us** *m pl* բարքեր, սովորույթներ  $\diamond$  *les ~ et les coutumes* վարքուբարք

**usage** *m* 1. սովորույթ, սովորություն 2. փորձ, հմտություն, փորձառություն, ունակություն, սովորություն 3. գործածություն, օգտագործում, կիրառում, կիրառություն  $\diamond$  *conforme aux ~s* սովորական, ընդունված, ինչպես պահանջվում է; *contraire aux ~s* չընդունված, ոչ սովորական; *destiné à l'~* *personnel* նախատեսված անձնական օգտագործման համար; *être en ~* գործածության մեջ լինել; *être hors d'~* գործածությունից դուրս գալ; *faire ~ de ...* օգտագործել, կիրառել; *faire mauvais ~* չարաշահել, ոչ ճիշտ գործածել; *mettre en ~* գործածության մեջ դնել, շրջանառության մեջ դնել; *passer en ~* գործածության մեջ մտնել; *sortir d'~* ~ գործածությունից դուրս գալ; *à l'~ de...* օգտագործման համար է; *à l'~ externe* արտաքին գործածության համար; *à l'~ multiple* բազմակի օգտագործման համար; *à l'~ unique* մեկանգամյա օգտագործման համար; *pour l'~ administratif* վարչական կարիքների համար

~ *ancien* հին սովորություն  
~ *de la force* ուժի գործադրում  
~ *du monde* աշխարհի իմացություն  
~ *de la parole* խոսելու ունակություն  
~ *s en vigueur* գործող բարքեր

**usager** *m* 1. օգտագործող; գործածող, որևէ բանից օգտվող, սպառող; հաճախորդ 2. *իրավք*, ուրիշի

- գույքը տնօրինելու իրավունք ունեցող անձ  
 ~s du canal de Suez Սուեզի ջրանցքից օգտվող երկրներ  
 ~s d'une langue որևէ լեզվով խոսողներ, որևէ լեզվի կրողներ
- usé**, -e *adj* 1. տափակ, ծամծամված, ճղճիմ 2. ուժասպառ, հոգնատանջ, հյուծված ◊ sujet ~ ծեծված թեմա; théories ~es հնացած տեսություններ
- user** I 1. *vi* օգտագործել, կիրառել, գործածել 2. *vt* ա) ծախսել, սպառել, վատնել բ) հյուծել, ուժասպառ անել  
 ~ d'autorité իշխանությունը օգտագործել  
 ~ de finesse խորամանկորեն գործել  
 ~ ses forces ուժասպառ լինել, սաստիկ հոգնել  
 ~ de menaces et de violence դիմել սպառնալիքների և բռնության  
 ~ la santé առողջությունը քայքայել  
 ~ de tous les moyens բոլոր միջոցներն օգտագործել
- user** II *m* գործածություն
- usine** *f* գործարան  
 ~ de constructions mécaniques մեքենաշինական գործարան  
 ~ d'incinération արտադրության թափոնները այրող գործարան  
 ~ machines-outils հաստոցաշինական գործարան  
 ~ métallurgique մետաղագործական գործարան  
 ~ pilote փորձարարական գործարան
- ~ textile մանածագործական գործարան
- usité**, -e *adj* 1. գործածական, գործածելի, սովորական, առօրյա, ստրածված, լայնորեն հայտնի 2. կիրառվող, գործածվող ◊ être ~ գործածվել, կիրառվել
- usuel**, -le *adj* սովորական, առօրյա, գործածական
- usufruit** *m* *իրավք*. ուրիշի գույքի և գույքից ստացված եկամուտների ցմահ օգտագործման իրավունք
- usure** I *f* վաշխառություն, վաշխառվական տոկոսադրույք ◊ préter à ~ մեծ տոկոսներով պարտք տալ; rendre avec ~ վճարել վերադրով, մի բան էլ ավելի
- usure** II *f* 1. ուժասպառություն, հյուծվածություն 2. մաշվածություն ◊ guerre d'~ ուժասպառության, ուժերի հյուծման պատերազմ  
 ~ physique et morale ֆիզիկական և բարոյական ուժասպառություն
- usurpateur** *m* բռնատիրող, զավթիչ, բռնազավթիչ, հափշտակիչ
- usurpation** *f* 1. բռնատիրում, զավթում, ապօրինի գրավում (իշխանության և այլն) 2. ապօրինի յուրացում  
 ~ de fonction պաշտոնատար անձի՝ իշխանության յուրացում  
 ~ de nom ուրիշի անվան յուրացում  
 ~ de pouvoir դատական մարմնի լիազորությունների յուրացում (վարչական անձի կողմից)

- ~ de titre professionnel կոչման յուրացում
- usurpatoire** *adj* զավթողական, թալանչիական, բռնատիրական
- usurper** *vt* բռնագավթել, հափրչտակել, յուրացնել, խլել, բռնատիրել
- utile** *adj* օգտակար, օգտավետ, օգտաշատ, պետքական, պիտանի ◊ le Conseil peut prendre les dispositions ~s Խորհուրդը կարող է իրականացնել պատշաճ միջոցառումներ; en temps ~ ժամանակին, հարկ եղած ժամանակ
- utilement** *adv* օգուտով
- utilisable** *adj* օգտագործելի, կիրառելի, պիտանի, պետքական, հարկավոր
- utilisateur** *m* օգտագործող, սպառող
- utilisation** *f* օգտագործում, կիրառում, օգտահանություն (թափոնների)
- ~ d'autres langues լրացուցիչ լեզուների կիրառում
- ~ pacifique de l'énergie atomique ատոմային էներգիայի օգտագործում խաղաղ նպատակներով
- utiliser** *vt* օգտագործել, կիրառել, գործածել, գործադրել, կիրարկել
- ~ à fond սպառել, վերջացնել
- ~ en permanence մշտապես օգտագործել
- ~ le terrain տեղանքը օգտագործել, հարմարվել տեղանքին
- utilitaire** *adj* 1. օգտապաշտական, նեղ անձնական 2. գործնական, կիրառական, շահադիտական, շահ հետապնդող ◊ arts ~s կիրառական արվեստ; calculs ~s շահադիտական հաշվարկներ
- utilité** *f* օգուտ; օգտակարություն, օգտավետություն; շահավետություն ◊ affecter à diverses ~s նահասահմանել տարբեր կարիքների համար; être d'une grande ~ օգտակար լինել, մեծ օգուտ բերել; reconnu d'~ publique ճանաչված որպես հանրօգուտ՝ հասարակականորեն օգտավետ; sans ~ անօգուտ
- uti possedetis** (*լատ.*) պայմանագրի հիմք կամ սկզբունք, համաձայն որի հսկամարտող կողմերին փոխադարձության սկզբունքով հանձնվում են այն տարածքները, որոնք գավթվել են ռազմական գործողությունների ընթացքում
- utopie** *f* 1. *փիլ.* ուտոպիա 2. ցնորք, երագանք, անիրագործելի գաղափար
- utopique** *adj* 1. *փիլ.* ուտոպիական 2. ցնորական, անիրագործելի

## V

- vacance** *f* 1. թափուր պաշտոն, թափուր տեղ (աշխատանքի) 2. *pl* արձակուրդ, արձակուրդներ (ուսումնական)  $\diamond$  colonie de ~s հանգստի ճամբար; un lieu de ~s հանգստյան վայր, առողջարան; mettre en ~s արձակուրդ ուղարկել; pourvoir à une ~ թափուր պաշտոնը զբաղեցնել; prendre ses ~s արձակուրդ վերցնել; partir en ~s արձակուրդ գնալ  
~ du pouvoir անիշխանություն  
~, grandes, ~ d'été ամառային արձակուրդ  
~s parlementaires խորհրդարանական արձակուրդ  
~s payées հերթական արձակուրդ
- vacuum** *m* վակուում
- vade-mecum** *m* փոքր տեղեկատու, ուղեցույց
- vague** *f* 1. ալիք, կոհակ 2. ալիք, շարժում  
~ d'augmentation de prix գների աճ, գնաճ  
~ de grève գործադուլային ալիք  
~, nouvelle ա) երիտասարդ սերունդ բ) *փխք*. նոր ուղղություն, «նոր ալիք»  
~ de spéculations չարաշահումների ալիք
- vague** *adj* անորոշ, անհասկանալի, ոչ պարզ, աղոտ, ոչ հստակ  $\diamond$  conditions ~s ոչ հստակ պայմաններ; contrat ~ անորոշ պայմանագիր; formule ~ անորոշ ձևակերպում; langage ~ անհասկանալի լեզու; raisons ~s անհասկանալի պատճառներ՝ փաստարկներ  
~ promesse անորոշ՝ խուսափողական խոստում
- vague** *m* անորոշություն, անորոշ դրություն  $\diamond$  se perdre dans le ~ խոսել երկար և անհասկանալի; rester dans le ~ որոշակի պատասխան չստանալ; պարզորոշ պատկերացում չունենալ
- vain**, -e *adj* գուր, իգուր, անօգուտ, ապարդյուն, ավելորդ  
~s efforts ապարդյուն՝ գուր ջանքեր
- vaincre** *vt* 1. հաղթել, հաղթանակ տանել, պարտության մատնել 2. հաղթահարել, ճնշել, ջարդել, կոտրել, փշրել, ընկճել, գապել  $\diamond$  se laisser ~ իրեն հաղթել տալ, թույլ տալ, որ իրեն ճնշեն  
~ un obstacle արգելքը հաղթահարել  
~ la résistance de qn մեկի դիմադրությունը կոտրել
- vaincu**, -e *adj* պարտված  $\diamond$  s'avouer ~ իրեն պարտված ճանաչել
- vainqueur** *m* հաղթող, հաղթանակող, հաղթանակ տանող
- valable** *adj* 1. վավերական, գործող, իրավաբանական ուժ ունեցող, օրինական 2. ընդունելի, պիտանի, հիմնավորված, հարգելի, լուրջ 3. թանկարժեք, օգտակար,



արժեքավոր ◊ interlocuteur ~ *քղք.* բանակցություններ վարելու լիազորություններ ունեցող կողմ; motif ~ հարգելի պատճառ; raison ~ ծանրակշիռ փաստարկ; la thèse reste ~ դրույթը մնում է ուժի մեջ

**valablement** *adv* 1. օրինական կարգով, պատշաճ կերպով 2. հաջողությամբ, արդյունավետ, ճիշտ

**valeur** *f* 1. արժեք, գին 2. նշանակություն, արժեքավորություն, ուժ, կարևորություն; որակ, մեծություն 3. *փ/ք.* էական կարևորություն ունեցող երևույթ, առարկա, արժեք ◊ apprécier à sa juste ~ ա) գնահատել ըստ իրական արժեքի ք) գնահատել ըստ արժանվույցի; attacher de la ~ à qch մեծ կարևորություն հաղորդել որևէ բանի; calculer la ~ արժեքը հաշվել; diminuer la ~ արժեքն իջեցնել; estimer à sa juste ~ գնահատել ըստ իսկական արժեքի; être de ~ արժեք ներկայացնել; mettre en ~ արժևորել, ընդգծել, առանձնացնել, նկատելի դարձնել; oգուտ քաղել; mettre en ~ les terres յուրացնել հողերը; de première ~ առաջնակարգ նշանակության; de ~ արժեքավոր; sans ~ անարժեք; taxe à la ~ ajoutée (T.V.A.) ավելացված արժեքի հարկ ~ d'achat սկզբնական գին, գնման գին ~ ajoutée ավելացված՝ հավելյալ արժեք ~ brute համախառն արժեք ~ d'échange փոխանակային արժեք ~ d'une méthode մեթոդի արդյու-

նավետությունը

~ nominale անվանական արժեք ~ d'usage, ~ usuelle, ~ utile սպառողական արժեք

~ vénale, ~ de vente վաճառքի արժեք

~s historiques պատմական արժեքներ

~s universelles համամարդկային արժեքներ

~s morales բարոյական արժեքներ

**validation** *f* 1. *իք/ք.* հաստատում, վավերացում, օրինականացում 2. վավերական՝ օրինական ճանաչելը

**valide** *adj* *իք/ք.* իրական, վավերական, ուժի մեջ գտնվող, գործող, օրինական ◊ déclarer ~ վավերական ճանաչել; droit ~ գործող իրավունք; objection ~ ծանրակշիռ առարկություն; passeport ~ վավերական անձնագիր

**valider** *vt* 1. հաստատել, վավերացնել 2. *իք/ք.* վավերական՝ օրինական ճանաչել, օրենքի ուժ տալ

~ un acte վավերացնել փաստաթուղթը

~ une élection վավերացնել ընտրությունների արդյունքները

~ une séance նիստը ճանաչել իրավագոր

**validité** *f* 1. *իք/ք.* վավերականություն, օրինականություն 2. վավերականության ժամկետ, գործողության ժամկետ, պիտանելիություն ◊ contester la ~ վիճարկել օրինականությունը; durée de ~ initiale d'une convention կնվենցիայի գործողության նախ-

- նական ժամկետը  
 ~ de la loi օրենքի գործողություն  
 ~ d'une opinion կարծիքի հիմնավորվածություն  
 ~ d'un passeport անձնագրի վավերականության ժամկետ  
 ~ du titre արժեթղթի վավերականություն  
 ~ d'un traité (միջազգային) պայմանագրի վավերականություն
- valise** *f*: ~ diplomatique *ղվնգ*. վալիզ, դիվանագիտական սուրհանդակի փոստի պարկ, որն անձեռնմխելի է
- valoir** *vi* 1. արժենալ, գին ունենալ, արժեք ներկայացնել 2. պիտանի լինել  $\diamond$  ça vaut le coup արժե փորձել՝ ռիսկի դիմել; cela ne vaut pas la peine de ... իմաստ չունի, չարժե; cela ne vaut rien դա ոչ մի բանի պիտանի չէ; faire ~ ներկայացնել պատշաճ ձևով, ընդգծել, նկատելի՝ ցայտուն դարձնել, շեշտել; օգուտ քաղել; faire ~ ses droits իր իրավունքները պաշտպանել; se faire ~ իրեն ներկայացնել բարենպաստ ձևով; պարծենալ, գլուխը գովել; vaillamment vaillable ինչ ուզում է թող լինի  
 ~ de l'or ոսկու գին ունենալ  
 ~ la peine de... արժենալ, որ...
- valorisation** *f* 1. արժևորում 2. արժեքի արհեստական բարձրացում
- valoriser** *vt* 1. արժեք սահմանել, գնահատել, գին նշանակել 2. (արհեստականորեն) արժեքը՝ գինը բարձրացնել 3. կարևորել, արժևորել, կարևորություն տալ
- vandale** *m* վանդալ, բարբարոս, վայրագ մարդ
- vandaliser** *vt* բարբարոսություն անել, վայրագություն կատարել
- vandalisme** *m* բարբարոսություն, վայրագություն  $\diamond$  acte de ~ բարբարոսական արարք
- vantardise** *f* պարծենկոտություն, ինքնագովություն, սնապարծություն
- vaquer** *vi* 1. զբաղվել որևէ բանով 2. թափուր լինել  
 ~ à ses affaires (կամ occupations) զբաղվել իր պարտականությունների կատարմամբ, իր գործերով զբաղվել
- variabilité** *f* փոփոխականություն, փոփոխունություն, անկայունություն, անհուսալիություն  
 ~ des monnaies արժույթի անկայունություն
- variation** *f* 1. փոփոխություն, փոփոխում 2. տատանում  
 ~ de la valeur d'euro եվրոյի արժեքի փոփոխություն  
 ~s des cours փոխարժեքի տատանումներ  
 ~s monétaires արժույթային փոփոխություններ  
 ~s des prix գների փոփոխություններ  
 ~s saisonnières սեզոնային տատանումներ  
 ~s soudaines տարերային տատանումներ
- varier** 1. *vt* փոփոխել, տարափոխել, ձևափոխել, բազմազան դարձնել 2. *vi* ա) փոփոխվել բ) տարբերվել, զանազանվել  $\diamond$  les opinions se ~ent sur ce point այս հարցում կարծիքները չեն համընկնում՝ տարբերվում են; pour ~ հանուն բազմազանության

- variété** *f* 1. բազմազանություն 2. տարատեսակություն 3. *pl* խառնուրդ  
~ de risques ռիսկերի բազմազանություն
- varsovien**, -ne *adj* վարչավական
- vassal**, -e *adj* վասալային, կախյալ
- vassalisation** *f* 1. ստրկացում 2. ենթակայություն, ստորադասություն, հպատակություն, կախվածություն
- vassaliser** *vt* 1. ստրկացնել, ճորտացնել 2. կախման մեջ դնել
- vautrer** (se) *թավալ* տալ  $\diamond$  se ~ dans le vice անառակության մեջ թաղվել; se ~ à plat ventre ստորաքարշություն անել, քծնել, սողալ, շողոքոքթել
- vedette** *f* 1. *հնգծ.* զինվորական ժամապահ 2. պահականավակ 3. նշանավոր դերասան, «աստղ», հոշակավոր՝ ականավոր անձ  $\diamond$  donner la ~ առաջատար դեր տալ; en ~ տեսանելի տեղում (տպագրված); être en ~ հսկել, պահպանել; mot ~ վերնագրային բառ (բառահոդվածի)
- veille** *f* նախօրե, նախօրյակ  $\diamond$  à la ~ նախօրեին
- veiller** *vt* դիտել, հսկել, նայել, հետևել  
~ à la légalité օրինականության պահպան կանգնել, օրինականությունը պահպանել
- velléité** *f* թույլ ցանկություն, հավակնություն, փորձ անելը, մտադրություն  $\diamond$  avoir des ~s de résistance դիմադրելու թույլ փորձեր անել  
~ de lutte պայքարի փորձ
- velodrome** *m* հեծանվահրապարակ  $\diamond$  Velodrome d'Hiver (Vel'd'Hiv) ձմեռային հեծանվահրապարակ (ցույցերի, հավաքույթների վայր Փարիզում)
- vénal**, -e *adj* 1. գնման, գնելու, գնովի 2. *փխբ.* ծախու, վաճառվող, կաշառվող  $\diamond$  offices ~aux *պաճ.* վաճառվող պաշտոններ; presse ~e ծախու մամուլ; valeur ~e շուկայական կամ գնման արժեք
- vénalité** *f* 1. *պաճ.* ծախվածություն, կաշառվածություն, վաճառվածություն 2. *փխբ.* կաշառակերություն; կաշառվածություն  
~ des charges պաշտոնների ծախվածություն
- vendéen**, -ne *adj* վանդեական
- vendetta** *f* արյան վրեժ, վեհնետա (Կորսիկայում)
- vénéral** *adj* 1. պատվարժան, հարգելի, պատվելի, պատկանելի 2. սուրբ (կուսակրոն հոգևորականի մականուն ուղղափառ եկեղեցում)
- vénération** *f* 1. հարգանք, պատիվ, մեծարանք, ակնածանք, պատկառանք 2. երկրպագություն, պաշտամունք
- vénéraler** *vt* 1. հարգել, մեծարել, պատվել 2. երկրպագել, պաշտել
- vengeance** *f* վրեժ, վրիժառություն, վրեժխնդրություն, ռիս  $\diamond$  esprit de ~ վրեժխնդրություն; exercer sa ~ վրեժ լուծել; soif de ~ վրեժխնդրության ծարավ; tirer (կամ prendre) ~ de վրեժխնդիր լինել; par ~ վրեժխնդրությունից ելնելով, վրեժխնդրորեն
- venger** *vt* վրեժ լուծել, վրեժխնդիր լինել  $\diamond$  se ~ վրեժ լուծել, վրեժխնդիր լինել, ռիս հանել; se ~ d'un ennemi թշնամուց վրեժ լուծել  
~ une offense վիրավորանքի

համար վրեժխնդիր լինել  
**vengeur**, -eresse *adj* վրեժխնդիր, վրիժառու  
**venimeux**, -se *adj* *փխբ.* թունավոր, խոցող, խայթող, խայթիչ, թունոտ, կծու ◊ haine ~se թունոտ ատելություն; langue ~se չար լեզու  
**venir** *m* 1. թույն (օձի, միջատի) 2. շարություն, մաղձ, թույն ◊ homme sans ~ անվնաս, անչար մարդ; jeter (կամ cracher) tout son ~ արտահայտել հոգում կուտակվածը, դուրս թափել ամբողջ մաղձը  
 ~ de la calomnie զրպարտության թույն  
**venir** *vi* 1. գալ, ժամանել 2. պատահել, տեղի ունենալ 3. ծագել, սերել, առաջանալ ◊ à ~ գալիք, առաջիկա; en ~ à la conclusion եզրակացության գալ; faire ~ կանչել; բերել տալ; les générations à ~ ապագա՝ գալիք սերունդները  
 ~ au monde աշխարհ գալ  
 ~ à maturité հասունանալ  
 ~ à point հարմար՝ պատեհ ժամանակին գալ  
 ~ à supposer սկսել ենթադրել  
**venu**, -e *adj* հաջողված, բարեհաջող ◊ la phrase la mieux ~e ամենահաջողված՝ համապատասխան նախադասությունը  
**venu**, e *m, f* : être le (la) bien ~(e) ցանկալի հյուր լինել; soyez le (la) bien ~(e) ! բարի գալուստ  
**véracité** *f* 1. ճշմարտություն, ճշմարտախոսություն, ճշմարտասիրություն, արդարացիություն 2. ճշմարտանմանություն, ճշմար-

տացիություն, արժանահավատություն, վավերականություն, ստույգություն  
 ~ de la signature ստորագրության իսկություն  
 ~ du témoignage վկայի ցուցմունքների արժանահավատություն  
**verbal**, -e *adj* բանավոր, բերանացի, բառերով արտահայտված ◊ accord ~ բանավոր համաձայնություն; note ~e *ղվնգ.* բանավոր հայտագիր  
**verbalement** *adv* բառացի կերպով, բանավոր կերպով, բառերով  
**verbalisation** *f* արձանագրում  
**verbaliser** *vi* արձանագրություն կազմել, արձանագրել  
**verbalisme** *m* դատարկաբանություն, դատարկախոսություն  
**verbiage** *m* դատարկաբանություն, շաղակրատություն ◊ du pur ~ դատարկ շատախոսություն  
**verbosité** *f* երկարաբանություն, շատախոսություն  
**verdict** *m* 1. դատավճիռ, վճիռ, որոշում 2. երդվյալ ատենակալների կողմից կայացվող վճիռ կամ դատավճիռ ◊ rendre un ~ դատավճիռ կայացնել  
 ~ d'acquittement արդարացման դատավճիռ  
 ~ de culpabilité մեղադրական դատավճիռ  
**véreux**, -se *adj* կասկածելի, տարակուսելի, երկմտելի, անվստահելի, անազնիվ  
**véridicité** *f* 1. ճշմարտացիություն 2. արժանահավատություն, վավերականություն, ստույգություն, հավաստիություն; ճշմարտանմանություն

**véridique** *adj* 1. ճշմարիտ, արդարացի, ճշմարտացի 2. հավաստի, ստույգ, վավերական, ճիշտ, ճշմարտանման

**vérification** *f* ստուգում, վերահսկում, ճշտում  $\diamond$  commission de ~ des comptes վերստուգիչ հանձնաժողով; Commission de ~ des pouvoirs լիազորությունները ստուգող հանձնաժողով  
~ faite ստուգման՝ հետազոտման արդյունքում  
~ des pouvoirs լիազորությունները ստուգում

**vérifier** *vt* 1. ստուգել, վերահսկել, ճշտել, իսկությունը պարզել 2. հաստատել, վավերացնել  $\diamond$  se ~: se ~ entièrement լիովին հաստատվել  
~ et échanger les pleins pouvoirs լիազորությունները ստուգել և փոխանակություն կատարել  
~ les faits փաստերն ստուգել

**véritable** *adj* իսկական, ճշմարիտ, բուն, բնագրային, բնագիր

**vérité** *f* ճշմարտություն, իսկություն  $\diamond$  c'est la pure (կամ l'entière) ~ սա զուտ ճշմարտություն է; démêler la ~ ճշմարտության հասնել; à dire la ~ ճշմարիտն ասած, ճիշտն ասած; fausser la ~ ճշմարտությունը կեղծել

**verrou** *m* : sous les ~s բանում; փակի տակ

**versailles**, -e *adj* վերսալյան

**versé**, -e *hմուտ*, քաջատեղյակ, իրազեկ, բանիմաց, փորձված, փորձառու  $\diamond$  être ~ dans qch քաջատեղյակ՝ իրազեկ լինել

**versement** *m* մուծում, վճարում, վարձատրում

**verser** *vt* մուծել, մուծում կատարել, միջոցներ ներդնել  
~ au dossier գործին կցել  
~ des fonds կապիտալ ներդնել

**version** *f* 1. մեկնակերպ, տարբերակ 2. թարգմանություն (մի լեզվից մյուսը), ազատ թարգմանություն 3. մեկնաբանում, մեկնաբանություն, պարզաբանում 4. խմբագրում  $\diamond$  en ~ originale չկրկնօրինակված  
~ originale սկզբնական տեքստը, բնագիրը

**verso** *m* հակառակ կողմը (էջի, թերթի, փաստաթղթի)  $\diamond$  comme indiqué au ~ ինչպես նշված է հակառակ կողմում; voir au ~ տե՛ս հակառակ կողմը (փաստաթղթի)

**versus** (*vs.*) *prép* : ընդդեմ

**vertu** *f* 1. առաքինություն 2. *հնգծ*. քաջություն, խիզախություն, արիություն, անձնվիրություն, հերոսություն, սխրագործություն 3. ուժ, զորություն, հատկություն, արդյունավետություն 4. արժանիք  $\diamond$  en ~ de ուժով, հիման վրա; en ~ de l'article հոդվածի հիման վրա; en ~ de la loi օրենքի ուժով  
~ civile քաղաքացիական արիություն

**vestige** *m* հետք, նշան; մնացորդ  $\diamond$  les ~s վերապրուկներ, մնացուկներ; les ~s d'une ville քաղաքի ավերակները՝ փլատակները

**veto** *m* *դվնգ*. վետո, արգելք 2. կտրուկ (կատեգորիկ) առարկում, մերժում  $\diamond$  avoir droit de ~ վետոյի իրավունք ունենալ; droit de ~ վետոյի իրավունք; opposer (կամ mettre) son ~ վետո դնել, չհամաձայնել ինչ-որ բանի հետ, արգելել

~ absolu բացարձակ վետո  
 ~ présidentiel նախագահական վետո  
 ~ suspensif կասեցնող վետո  
**via** *prép.* վրայով, միջով, ճանապարհով (ընթացողու, տրանզիտի մասին)  
 ~ Paris Փարիզով  
**viabilité** *f* կենսունակություն  
**viable** *adj* կենսունակ ◊ un plan ~ իրականանալի ծրագիր; projets ~s կենսունակ ծրագրեր  
**vibrant**, -e *adj* սրտառու, անկեղծ, խորաբափանց, սրտալի ◊ hommage ~ ջերմ ողջույն  
**vice-amiral** *m* փոխծովակալ  
**vice-chancelier** *m* փոխկանցլեր, փոխվարչապետ  
**vice-consul** *m* փոխհյուպատոս, հյուպատոսության աստիճան  
**vice-consulat** *m* փոխհյուպատոսություն  
**vice-gouverneur** *m* փոխկառավարիչ  
**vice-ministre** *m* փոխնախարար, նախարարի տեղակալ  
**vice-présidence** *f* փոխնախագահություն  
**vice-président** *m* փոխնախագահ, վիցե-պրեզիդենտ  
**vice-roi** *m* փոխարքա, արքայի ներկայացուցիչ, կառավարիչ  
**vice-versa** *loc. adv.* հակառակ, հակադարձ  
**vicieux**, -se *adj* 1. արատավոր, թերի 2. սխալ, թյուր, անճիշտ ◊ cercle ~ արատավոր շրջան  
**vicissitude** *f* 1. փոփոխամտություն, անկայունություն 2. *pl* անակնկալներ, պատահականություններ, դժբախտություններ ~s de la fortune ճակատագրի

անակնկալներ  
 ~s des hommes մարդկային դժբախտություններ  
**victime** *f* զոհ, տուժած, տուժող ◊ faire des ~s զոհեր տալ; les peuples ~s de l'invasion étrangère օտարերկրյա ներխուժումից տուժած ժողովուրդներ; statut de ~ տուժածի կարգավիճակ; tomber ~ de զոհ գնալ, տուժել  
 ~ de la guerre civile քաղաքացիական պատերազմի զոհ  
 ~ de la violence բռնության զոհ  
**victoire** *f* հաղթանակ ◊ chanter (կամ crier) ~ հաղթանակ տոնել, հաջողությամբ պարծենալ; remporter la ~ հաղթանակ տանել  
 ~ inconditionnelle անվերապահ հաղթանակ  
 ~ à la Pyrrhus պյուրոսյան հաղթանակ (կասկածելի հաղթանակ, որը չի արդարացնում հանուն դրա տրված զոհերը)  
**victorieux**, -se *adj* հաղթական ◊ air ~ հաղթական տեսք; parti ~ aux élections ընտրություններում հաղթանակած կուսակցություն; preuves ~ses անհերքելի ապացույցներ  
**vide** *m* 1. դատարկություն, վակուում 2. բացակայություն ◊ combler les ~s թերությունները (պակասները) լրացնել; parler dans le ~ զուր տեղը՝ դատարկ տեղը խոսել; promettre dans le ~ դատարկ խոստումներ տալ; remplir un ~ դատարկությունը լցնել  
 ~ diplomatique դիվանագիտական վակուում  
 ~ juridique իրավաբանական դատարկություն; համապատաս-

- խան օրենսդրությունների բացակայություն
- vider** *vt* վերջ տալ, վերջացնել, մինչև վերջ հասցնել, ավարտել ◊ l'incident est ~é միջադեպը փակված է  
~ une question, ~ un différend հարցը լուծել, վեճը լուծել
- vie** *f* կյանք ◊ à ~ ցմահ, ամբողջ կյանքի համար; consacrer sa vie à ... կյանքը նվիրել մի բանի; exposer sa ~ au danger կյանքը վտանգի ենթարկել; faire la ~ dure à զո որևէ մեկի կյանքը թունավորել; question de ~ et de mort կենաց-մահու խնդիր; train de (կամ genre de) ~ կենսակերպ  
~ aisée նյութապես ապահով, բարեկեցիկ կյանք  
~ chère թանկություն  
~ conjugale ամուսնական կյանք  
~ économique տնտեսական կյանք  
~ éternelle հավերժական՝ հավիտենական կյանք  
~ familiale ընտանեկան կյանք  
~ humaine մարդկային կյանք  
~ privée անձնական կյանք  
~ publique հասարակական կյանք  
~ spirituelle հոգևոր կյանք
- viennois**, -e *adj* վիեննական
- vietnamien**, -ne *adj* վիետնամական
- vif**, -ve *adj* 1. կենդանի, ողջ 2. աշխույժ, ժիր, եռանդով լի, կայտառ 3. ուժեղ, սաստիկ, թունդ, մեծ 4. թեժ, ջերմ, բուռն ◊ attaque de ~ve force բաց ճակատով հարձակում; brûler ~ ողջ-ողջ այրել; débats ~s թեժ քննարկումներ; désir ~ սաստիկ ցանկություն; esprit ~ աշխույժ միտք; prendre ~ կենդանի բռնել, ողջ-ողջ բռնել; prière ~ve թախանձալի խնդրանք  
~ besoin սաստիկ կարիք  
~ succès մեծ հաջողություն  
~s applaudissements բուռն ծափահարություններ  
~ve discussion բուռն բանավեճ  
~ve fusillade ուժեղ փոխհրաձգություն
- vif** *m* խոցելի տեղ ◊ aborder le ~ du sujet գլխավոր հարցը շոշոփել; entrer dans le ~ du sujet սկսել շարադրել գլխավորը՝ հիմնականը; faits pris sur le ~ կյանքից վերցված փաստեր; piquer au ~ ամենագայուն՝ ամենախոցելի տեղին դիպչել, խորը վիրավորել
- vigilance** *f* զգոնություն, զգաստություն, աշարջություն ◊ faire preuve de ~ զգոնություն ցուցաբերել
- vigilant**, -e *adj* զգոն, զգաստ, աշարջ, շրջահայաց
- vigueur** *f* 1. ուժ, հզորություն, կարողություն 2. կորով, եռանդ 3. գործողություն, ուժ, կիրառություն (օրենքի և այլնի մասին) ◊ faire entrer en ~ գործողության մեջ դնել; entrer en ~ ուժի մեջ մտնել, գործադրվել; en ~ de գործողության մեջ, գործող; ուժի մեջ (օրենքի, սահմանադրության, պայմանագրի մասին); lois en ~ գործող օրենքներ; rester en ~ ուժի՝ գործողության մեջ լինել
- vindictive** *f* իրվք. վինդիկտ, հանցագործության հետապնդում  
~ publique, ~ populaire հանցագործություն կատարած անձի հետապնդում հասարակության անունից

**violation** *f* (կոպիտ) խախտում, ոտնահարում, զանցառում, պղծում  
 ◇ en ~ de la loi օրենքի խախտմամբ; en ~ des principes հակառակ սահմանված սկզբունքների  
 ~ de la confiance publique հասարակության վստահության չարաշահում  
 ~ délibérée des traités պայմանագրերի դիտավորյալ խախտում  
 ~ des dispositions որոշումների խախտում  
 ~ des droits իրավունքների խախտում  
 ~ des engagements պարտավորությունների խախտում  
 ~ des frontières սահմանների խախտում  
 ~ de la loi օրենքի խախտում, օրենքի ոտնահարում  
 ~ de la paix խաղաղության խախտում  
 ~ des règles կանոնների խախտում  
 ~ des territoires տարածքային անձեռնմխելիության խախտում

**violence** *f* 1. բռնություն, *pl* բռնի գործողություններ, բռնի միջոցներ 2. դաժանություն, վայրագություն ◇ acte de ~ բռնարարք; crimes de ~ *իրվք*. անձի նկատմամբ բռնության գործադրման հետ կապված հանցագործություններ; faire ~ à la loi օրենքը խեղաթյուրել; le reversement par la ~ բռնի տապալում; par ~ բռնի ճանապարհով; pratiquer la ~ բռնություն գործադրել; user de ~, employer la ~ բռնություն գործադրել

**violer** *vt* 1. խախտել, զանցառել, ոտնահարել (օրենքը, իրավունք-

ները, երդումը, պայմանագրերը և այլն) 2. բռնաձեռք, բռնադատել, բռնություն գործադրել, բռնաբարել 3. ներխուժել, պղծել  
 ~ la condition խախտել պայմանը  
 ~ la loi օրենքը զանց առնել, խախտել  
 ~ le secret գաղտնիքը խախտել  
 ~ la sépulture գերեզմանը պղծել

**V.I.P.** [*veipe*] *m, f* *անգլ.* very important person արտահայտությունից) *խսկց.* հույժ կարևոր անձ  
 ~ salon սենյակ բարձրաստիճան պաշտոնյաների համար (օդանավակայանում)  
 ~ traitement խիստ հարգալից վերաբերմունք

**virtuel**, -le *adj* հավանական, հնարավոր, թվացյալ

**virtuellement** *adv* ենթադրաբար, ենթադրությամբ, ենթադրելով

**virulent**, -e 1. թունավոր 2. *փխք.* չար, թունոտ, չարակամ, թշնամական ◇ campagne ~e de presse մամուլի չարական արշավ

**visa** *m* մուտքի կամ ելքի թույլտվություն, այցագիր, արտոնագիր ◇ apposer un ~ aller et retour վիզա դնել՝ ուղևորության մեկնելու և վերադարձի համար; autoriser la délivrance d'un ~ թույլատրել վիզա տալը; délivrer un ~ թույլտվություն տալ; faciliter la délivrance d'un ~ վիզա տալը արագացնել; mettre son ~ վիզա դնել; prolonger la validité d'un ~ վիզայի գործողության ժամկետը երկարացնել; le ~ expire... վիզայի գործողության ժամկետը լրանում է...



~ collectif մուտքի հավաքական արտոնագիր  
 ~ d'entrée մուտքի վիզա՝ թույլտվություն  
 ~ de séjour կենալու, մնալու վիզա  
 ~ de sortie ելքի վիզա՝ թույլտվություն  
 ~ de transit տարանցիկ վիզա  
 ~ de visite այցագիր, այցահրավեր  
**vis-à-vis** *adv* դեմառդեմ, դեմդիմաց  
**visée** *f pl* նշանակետ, մտադրություն, ծրագրված նպատակ, դիտավորություն, հավակնություն, փորձ անելը, գաղտնի մտադրություն  $\diamond$  changer de ~s մտադրությունները փոխել  
**viser** I 1. *vt* ա) նշան բռնել բ) շահադիտորեն հետամտել, համառորեն ձգտել՝ նկրտել ինչ-որ բանի 3. նկատի ունենալ, վերաբերել 2. *vi* ա) մտադրվել, աչք դնել բ) *փ/հր*. նպատակ ունենալ, հավակնել, ձգտել ձեռք բերելու, հետամուտ լինել, ձգտել հասնելու  $\diamond$  la politique qui ~e à détendre la cause de la paix խաղաղության պաշտպանությանը ուղղված քաղաքականություն; les dispositions contenues dans le règlement ~é à l'article 1 որոշումներ, որոնք պարունակվում են համար 1 հոդվածում հիշատակված դրույթի մեջ; ~ant à... ուղղված դեպի..., ուղղված այն բանին, որ..., նպատակ ունենալով...; contrôle interallié ~ant à empêcher le renouvellement de l'agression միջմիութենական վերահսկողություն, որի նպատակն է թույլ չտալ, որ ագրեսիան կրկնվի

~ haut մեծ հավակնություններ ունենալ, ձգտել բարձր դիրքերի  
 ~ à la présidence ձգտել նախագահի պաշտոնին  
**viser** II *vt* վիզա դնել, փաստաթուղթը վավերացնել, մուտքի (ելքի) թույլտվություն տալ  
**visière** *f*  $\diamond$  rompre en ~ կտրուկ խզել հարաբերությունները; կտրուկ հարձակվել մեկի վրա  
**visite** *f* 1. այցելություն, այց 2. բժշկական ստուգում, քննում, զննում 3. տեսչական ստուգում, զննում, չեզոք պետության նավի խուզարկում (պատերազմի ժամանակ)  $\diamond$  aller en ~ հյուր գնալ; effectuer (կամ faire) une ~ այցելություն կատարել, այցելել; être (կամ se trouver) en ~ հյուր լինել; heures de ~ այցելության ժամեր (հիվանդանոցում և այլն); rendre ~ à զո այցի գնալ մեկին; rendre sa ~ à զո պատասխան այց կատարել; se rendre en (կամ pour une) ~ officielle մեկնել պաշտոնական այցով  
 ~ d'adieu հրաժեշտի այց  
 ~ amicale, ~ d'amitié բարեկամական այց  
 ~ de condoléance ցավակցություն հայտնելու այց  
 ~ de courte durée կարճատև այց  
 ~ de courtoisie, ~ de politesse քաղաքավարական այց  
 ~ domiciliaire տան խուզարկություն  
 ~ de douane, ~ douanière մաքսային ստուգում  
 ~ non officielle ոչ պաշտոնական այց

~ officielle պաշտոնական այց  
 ~ privée մասնավոր այց  
 ~ sanitaire բժշկական շրջայց  
 ~ de travail աշխատանքային այց  
 ~ d'usage արձանագրային սովորական այց  
**visiter** *vt* 1. հյուր գնալ 2. այցելել  
 ~ les curiosités de la ville այցելել քաղաքի տեսարժան վայրերը  
**visiteur**, -se *m, f* 1. այցելու, հյուր 2. հսկիչ, տեսուչ  
 ~ de douane մաքսային տեսուչ  
 ~ de marque բարձրաստիճան հյուր  
**vital**, -e *adj* 1. կենսական 2. *փիլսոփ.* կենսական, կարևոր, էական, անհրաժեշտ, հրատապ  $\diamond$  espace  
 ~ կենսական տարածություն; importance ~e կենսական կարևորություն; intérêts ~ aux կենսական շահեր; question ~e կարևորագույն՝ հրատապ հարց  
**vitalité** *f* կենսունակություն, կենսական ուժ, կենսականություն  
**vivat** ! *interj.* կեցցե՛, ուռա՛  
**vivat** *m* ողջույնի բացականչություն, ուռա  
**vive** ! *interj.* կեցցե՛, ուռա  
**vœu** *m* 1. ուխտ, խոստում, երդում 2. ցանկություն, մաղթանք, բաղձանք, բարենաղթանք  $\diamond$  accomplir le ~ ուխտը՝ խոստումը կատարել; adresser ses ~x բարենաղթանքներ հղել; faire des ~x բարենաղթել; violer son ~ ուխտը դրժել  
 ~x de bonne année ամանորյա բարենաղթանքներ  
 ~x, meilleurs լավագույն ցանկություններ

**vogue** *f* հռչակ, փառք, համբավ, լայն ժողովրդականություն, հայտնիություն  $\diamond$  être en ~ մեծ հաջողություն ունենալ; նորաձև լինել; mettre en ~ ժողովրդականություն բերել; նորաձևության մեջ մտցնել  
**voie** *f* 1. ճանապարհ, ուղի 2. միջոց, ձև, եղանակ, գործելակերպ  $\diamond$  détourner de la bonne ~ ճիշտ ուղուց շեղվել; être dans la bonne [mauvaise] ~ լինել լավ [վատ] ուղու վրա; être en ~ d'accommodement հաշտության, համաձայնության ուղու վրա լինել; frayer la ~ *փիլսոփ.* ճանապարհ հարթել, ճանապարհ բանալ, խոչընդոտները վերացնել; mettre sur la ~ ճանապարհի վրա դնել, ճիշտ ցուցումներ տալ; en ~ de... ընթացքում, ձևավորման ընթացքում, ճանապարհին; en ~ d'accomplissement իրականացման ընթացքում; en ~ de formation կազմավորման ընթացքում; par la ~ de ... միջոցով, ճանապարհով; par ~ de compensation փոխհատուցման միջոցով; par la ~ diplomatique դիվանագիտական ճանապարհով; par ~ de dispositions administratives վարչական կարգադրությունների եղանակով; par une ~ détournée զարտուղի ճանապարհով; par ~ légale օրինական ճանապարհով; par la ~ des négociations բանակցությունների ճանապարհով  
 ~ aérienne օդային միջանցք, օդային ուղի  
 ~ de droit *իրվք.* օրինական եղանակ  
 ~ de recours *իրվք.* բողոքարկում

- ~s de communication հաղորդակ-  
ցության ուղիներ  
~s navigables, ~ de navigation  
ջրային ուղիներ
- voile** *m* 1. ծածկոց, ծածկույթ 2.  
վարագույր, քող, շղարշ  $\diamond$  jeter un  
~ sur qch ինչ-որ բան մոռացու-  
թյան մատնել; sous le ~ de l'amiti-  
é բարեկամության քողի տակ  
~ islamique չադրա
- voilé**, -e *adj* 1. ծածուկ, փակ, քողով  
ծածկված 2. *փխբ.* թաքնված,  
թաքուն, գաղտնի, քողարկված,  
սքողված  $\diamond$  inquiétude ~e թաքուն,  
գաղտնի անհանգստություն; sens  
~ քողարկված իմաստ
- voir** *vt* 1) տեսնել, նկատել 2. մտովի  
պատկերացնել, հասկանալ 3.  
ուսումնասիրել, քննել  $\diamond$  ceci est à  
~ սա ենթակա է քննության; cela  
n'a rien à ~ avec notre affaire դա  
ոչ մի կապ չունի մեր գործի հետ;  
y ~ clair հասկանալ, գլուխ հա-  
նել, ըմբռնել  
~ clair au travers de...ամբողջ ներ-  
քինը տեսնել, էության մեջ թա-  
փանցել  
~de bon [mauvais] œil բարեհա-  
ճորեն, բարյացակամորեն [ան-  
բարեհաճ, անբարյացակամ կեր-  
պով] նայել
- voire** *adv* նույնիսկ, մինչև իսկ,  
անգամ, մինչև անգամ  $\diamond$  inutile, ~  
(même) pernicieux անօգուտ է,  
նույնիսկ վնասակար
- voisinage** *m* հարևանություն, դրա-  
ցիություն; մոտիկություն, մեր-  
ձավորություն  $\diamond$  bon ~ բարիդրա-  
ցիական հարաբերություններ
- voix** *f* 1. ձայն 2. ընտրական ձայն,  
քվե 3. կարծիք, տեսակետ  $\diamond$  aller
- aux ~ մասնակցել քվեարկու-  
թյանը, քվեարկել; ձայներ հա-  
վաքել; départager les ~ վճռորոշ  
ձայն տալ; à deux ~ de majorité  
երկու ձայնի առավելությամբ;  
donner sa ~ իր ձայնը տալ; être  
battu aux ~ պարտություն կրել  
քվեարկության արդյունքում;  
à haute ~ բարձրաձայն; mettre aux  
~ քվեարկության դնել; obtenir la  
majorité des ~ ձայների մեծա-  
մասնությունը հավաքել; partage  
égal des ~ ձայների հավասար  
բաժանում; à pleine ~ ամբողջ  
ձայնով; pourcentage des ~ ձայ-  
ների բաշխումը տոկոսային  
առումով; à l'unanimité des ~  
միաձայն; de vive ~ բանավոր; à  
~ basse ցածրաձայն  
~ additionnelle լրացուցիչ ձայն  
~ consultative խորհրդատվական  
ձայն  
~ délibérative, ~ prépondérante  
որոշիչ ձայն  
~ du peuple ժողովրդի ձայն  
~ publique հասարակական կար-  
ծիք
- volontaire** *adj* հոժարական, ինքնա-  
կամ  $\diamond$  action ~ կամավոր կա-  
տարված գործողություն; contri-  
bution ~ կամավոր նվիրատու-  
թյուն; engagé ~ կամավոր զին-  
վոր; mort ~ ինքնասպանություն
- volontaire** *m, f* կամավոր, կամավո-  
րական  $\diamond$  recruter des ~s կամա-  
վորներ հավաքագրել; s'enrôler  
comme ~ կամավոր գրվել (զին-  
վորական ծառայության)
- volontariat** *m* կամավորություն  $\diamond$  sur  
la base du ~ կամավոր հիմունք-  
ներով

**volonté** *f* 1. կամք; կամքի ուժ 2. ցանկություն  $\diamond$  avoir de la ~ կամքի ուժ ունենալ; geste (կամ expression) de bonne ~ բարի կամքի արտահայտություն; les hommes de bonne ~ բարի կամքի մարդիկ; à ~ ըստ ցանկության; de bonne ~ հաճությամբ; de mauvaise ~ տհաճությամբ; rompre la ~ կամքը կտրել; sans ~ կամազուրկ  
 ~ ferme անհողողող կամք  
 ~ générale համընդհանուր կամք (Ռուսոյի փիլիսոփայության մեջ)  
 ~ inexorable à la paix խաղաղության համար անհողողող կամք  
 ~ du peuple ժողովրդի կամքը  
 ~ de puissance իշխանության ձգտում, իշխելու կամք (Նիցշեի փիլիսոփայության մեջ) ~s, dernières վերջին կամք, կտակ

**volte-face** *f* 1. լրիվ պտույտ, շրջադարձ 2. *փխթ.* հայացքների կտրուկ փոփոխություն  $\diamond$  faire ~ կտրուկ շրջադարձ կատարել

**volume** *m* ծավալ, չափ

**volumineux**, -se *adj* 1. ծավալուն, երկար, մեծածավալ 2. հաստափոր, բազմահատոր (գիրք և այլն)

**votant**, -e *m, f* 1. ընտրող, ընտրական իրավունք ունեցող 2. քվեարկության մասնակից  $\diamond$  enregistrement des ~s ընտրողների ցուցակագրում

**vote** *m* 1. քվեարկություն, քվեարկում 2. ձայն, քվե 3. ձայնի՝ քվեարկության իրավունք 4. քվեարկությամբ ընդունված որոշում, ձայների մեծամասնությամբ

ընդունված որոշում  $\diamond$  annuler un ~ քվեարկությունը ճանաչել անվավեր; bulletin de ~ քվեաթերթիկ; bureau de ~ ընտրատեղամաս; confirmer un ~ քվեարկությունը հաստատել; compter les ~s ձայները հաշվել; dépouillement des ~s քվեների՝ ձայների հաշվում; donner son ~ քվե տալ; explication de ~ քվեարկության հիմնավորում՝ պատճառաբանում; exercice du droit de vote ընտրական իրավունքի իրականացում; exprimer par son ~ une opinion dissidente արտահայտել հատուկ կարծիք; droit de ~ ձայնի իրավունք, քվեարկության իրավունք; motiver son ~ հանդես գալ քվեարկության շարժառիթներով; prendre part au ~ մասնակցել քվեարկությանը; priver du droit de ~ զրկել ձայնի իրավունքից; procéder au vote քվեարկությունը սկսել; rectifier son ~ ուղղել՝ փոխել իր քվեարկությունը; recueillir les ~s ձայներ հավաքել; revenir sur un ~ վիճարկել քվեարկության վավերականությունը; s'abstenir de ~ քվեարկությունից ձեռնպահ մնալ; sans droit de ~ առանց ձայնի իրավունքի; se mettre au ~ քվեարկել; soumettre (կամ inscrire) au ~ քվեարկության դնել; un ~ unanime intervient (որոշումն ընդունվում է միաձայն)  
 ~ affirmatif [négatif] քվեարկություն՝ կողմ, [դեմ]  
 ~ par bulletins փակ քվեարկություն  
 ~ de censure անվստահության քվե

~ de confiance վստահության քվե  
 ~ direct ուղղակի ընտրություններ  
 ~ sur l'ensemble ամբողջական քվեարկություն (օր.՝ օրենսդրության)  
 ~ limité սահմանափակ քվեարկություն  
 ~ à mains levées բաց քվեարկություն, քվեարկություն ձեռք բարձրացնելով  
 ~ à la majorité մեծամասնական քվեարկություն  
 ~ nominatif, ~ par appel nominal անվանական քվեարկություն  
 ~ obligatoire պարտադիր քվեարկություն  
 ~ plural բազմակի քվեարկություն  
 ~ préférentiel քվեարկության կարգ, որի դեպքում ընտրողն իր նախընտրությունն է տալիս թեկնածուներին՝ նշում կատարելով նրանց ազգանունների դիմաց  
 ~ par procuration քվեարկություն ներկայացուցչի միջոցով  
 ~ public բաց ընտրություններ  
 ~ sans débat քվեարկություն առանց քննարկման  
 ~ secret գաղտնի քվեարկություն  
 ~ uninominal քվեարկություն առանձին թեկնածուի համար, անվանական քվեարկություն  
**voter** 1. *vt* քվեարկել, քվե՝ ձայն տալ  
 2. *vt* քվեարկության դնել, քվեարկությամբ ընդունել  
 ~ par assis et levé քվեարկել ոտքի կանգնելով  
 ~ blanc քվեարկել չլրացված քվեաթերթով  
 ~ par boules (blanches ou noires) քվեարկել գնդիկներով (սպիտակ կամ սև)

~ par bulletins քվեարկել քվեաթերթիկների միջոցով  
 ~ la censure անվստահություն հայտնել կառավարությանը  
 ~ à droite, à gauche քվեարկել իրաջող աջերի, ձախերի  
 ~ une loi օրենք ընդունել քվեարկությամբ  
 ~ à main levée քվեարկել ձեռք բարձրացնելով, բաց քվեարկությամբ  
 ~ un projet de loi օրինագիծը քվեարկության դնել  
 ~ pour [contre] քվեարկել կողմ [դեմ]  
 ~ à l'unanimité քվեարկել միաձայն  
**votum separatum** (*լատ.*) հատուկ կարծիք  
**vouer** *vt* 1. դատապարտել, մատնել  
 2. հանդիսավոր կերպով խոստանալ՝ խոսք տալ ◊ se ~ իրեն նվիրաբերել, նվիրվել; se ~ aux études գիտությանը նվիրվել  
 ~ à l'échec complet անհաջողության՝ կործանման դատապարտել  
 ~ une très sincère camaraderie à... ընկերաբար՝ անկեղծորեն վերաբերվել...  
**vouloir** I *vt* 1. ցանկանալ, ուզենալ, կամենալ 2. պահանջել 3. բարեհաճել, հաճել ◊ en ~ à զո գայրանալ մեկի վրա; անբարյացակամություն՝ թշնամանք զգալ մեկի հանդեպ; sans le ~ անգիտակցաբար, բնագորաբար, ոչ դիտավորյալ կերպով, ակամայից; veuillez agréer... բարի եղեք, ընդունեք... (նամակի պայմանական արտահայտություն); la loi

veut օրենքը պահանջում է  
 ~ bien համաձայնել, համաձայնություն տալ, ոչինչ դեմ չունենալ  
 ~ bien se renseigner sur ... բարեհաճել տեղեկանալ  
 ~ dire նշանակել, արտահայտել  
**vouloir** II *m* կամք, կամեցողություն  
**voyage** *m* ճանապարհորդություն, ուղևորություն  $\diamond$  être en ~, faire un ~ ճանապարհորդություն կատարել; se mettre en ~ ճանապարհորդության մեկնել  
 ~ d'affaires գործնական ուղևորություն, գործուղում  
 ~ d'études գիտական ուղևորություն՝ հետազոտման, փորձարկման նպատակով  
**vu** *m* քննարկում, քննություն  $\diamond$  au ~ et au su de tout le monde բացեիբաց, բոլորի աչքի առաջ; sur le ~ des pièces փաստաթղթերը քննելիս՝ քննության ենթարկելիս  
 ~ d'un arrêt դատավճռի բովանդակությունը, իմաստը  
**vu** *prép* 1. նկատի ունենալով, հաշվի առնելով 2. *իրվք.* քննության առնելով  
 ~ son absence նկատի ունենալով նրա բացակայությունը  
 ~ les pièces du dossier քննելով գործը  
 ~ que... քանի որ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ...  
**vue** *f* 1. տեսողություն 2. տեսադաշտ, տեսանելիություն, աչքի առաջ լինելը, տեսարան 3. տեսակետ, կարծիք 4. մտադրություն, նպատակ, ակնկալիքներ,

դիտավորություններ  $\diamond$  avoir des ~s sur... մտադրություններ՝ ակնկալիքներ ունենալ; échange de ~s տեսակետների փոխանակում; garder qn à ~ մեկին հսկել՝ աչքից բաց չթողնել; մեկին հսկողության տակ պահել; mettre qch en ~ որևէ բան ի ցույց դնել՝ ուշադրության արժանացնել; nous n'avons d'autre ~ que... մենք չունենք այլ նպատակ, քան...; մենք միայն ուզում ենք, որ...; perdre de ~ տեսադաշտից կորցնել; point de ~ տեսակետ; une politique à courte ~ անհեռանկարային քաղաքականություն; en ~ տեսանելի; en ~ de rassembler որպեսզի միավորենք, միավորելու նպատակով  
 ~ générale ընդհանուր տեսք  
**vulgaire** *adj* 1. սովորական, հասարակ, ոչնչով աչքի չընկնող, միջակ 2. գռեհիկ, կոպիտ, անպատշաճ 3. քաղթենիական  $\diamond$  conception ~, interprétation ~ գռեհկացում; langue ~ *պոմ.* ժողովրդական-խոսակցական լեզու (ի տարբերություն գիտական լեզվի)  
**vulgarisateur**, -rice *m, f* 1. գռեհկացնող մարդ 2. ժողովրդականացնող, մասսայականացնող անձ  
**vulgarisation** *f* 1. գռեհկացում 2. ժողովրդականացում, մասսայականացում, տարածում  
**vulnérabilité** *f* խոցելիություն  
**vulnérable** *adj* խոցելի  $\diamond$  groupes ~ s de la société հասարակության խոցելի խմբեր

## W

- wallon**, -ne *adj* վալոնական, վալոնյան  
**wallonisme** *m* վալոնիզմ, բելգիաբանություն  
**warrant** *m* 1. *ֆին.* երաշխագիր, երաշխիքային փաստաթուղթ 2. վկայագիր ապրանքի պահեստավորման մասին, պահեստի անդորրագիր 3. գրավագիր, գրավադրման վկայագիր  
**warrantage** *m* *ֆին.* ապրանքի պահեստավորման երաշխավորում; հավաստագիր  
**warranté**, -e *adj* հաստատված, երաշխավորված  
~ par la loi օրենքով երաշխավորված, օրինական հիմք ունեցող  
**warranter** *vt* երաշխավորել, երաշխիք տալ, վավերացնել (ապրանքի պահեստավորումը)  
**week-end** *m* հանգիստ շաբաթ օրվանից մինչև երկուշաբթի, շաբաթավերջ

## X

- xénophile** *adj et s* օտարամոլ, օտարասեր  
**xénophilie** *f* օտարամոլություն, օտարասիրություն  
**xénophobe** *adj et s* այլատյաց, օտարներից ատող  
**xénophobie** *f* ատելություն օտարերկրացիների և ամեն տեսակ օտարի նկատմամբ, այլատյացություն

## Y

- Yankee** *m, f* յանկի, ամերիկացի  
**yankee** *adj* ամերիկական, ամերիկյան  
**yen** *m* իեն (ճապոնական դրամական միավոր)  
**yeoman** *m* մանր ֆերմեր, մանր հողասեփականատեր  
(Անգլիայում)  
**yougoslave** *adj* հարավսլավական  
**ypérite** *f* իպրիտ, մանանեխի գազ (մարտական թունավոր գազ)  
**yuan** *m* յուան (չինական դրամական միավոր)

## Z

- zélateur**, -rice *m, f* հետևորդ; նախանձախնդիր անձ
- zèle** *m* փութաջանություն, եռանդ, ճիգ, բուռն ձգտում, նկրտում ◊ faire du ~ եռանդով գործել, փութաջանություն ցուցաբերել, փութաջան լինել; mettre son ~ à... եռանդագին ձգտել
- zélé**, -e *adj* ջանասեր, ջանադիր, եռանդոտ, եռանդուն; նախանձախնդիր, փութաջան, ջերմեռանդ
- zéro** *m* 1. զրո 2. *փ/սք.* ոչնչություն ◊ partir de ~, commencer à ~ զրոյից սկսել; réduire à ~ զրոյի հավասարեցնել; ոչնչացնել
- zone** *f* գոտի, շերտ, տարածք, շրջան, ոլորտ ◊ la Zone Փարիզի քաղաքամերձ (արվարձանային) գոտի  
 ~ d'action *նազմ.* գործողության տարածաշրջան, գործողության գոտի  
 ~ d'activité գործունեության ոլորտ  
 ~ de l'arrière թիկունքի շրջան  
 ~ de barrage արգելափակիչ գոնա, խափանիչ կրակի գոնա  
 ~ battue, ~ rasée *նազմ.* ավերված՝ ոչնչացված՝ բնաջնջված տարածք  
 ~ communautaire Եվրոպական համագործակցության գոտի  
 ~ dénucléarisée միջուկազերծ գոտի  
 ~ désatomisée ատոմազերծ գոտի  
 ~ dollar դոլարի գոտի  
 ~ douanière մաքսային գոտի, արտոնազերծ գոտի  
 ~ euro եվրոյի գոտի  
 ~ exempte d'armes nucléaires անմիջուկազերծ գոտի  
 ~ franc ֆրանկի գոտի  
 ~ franche, ~ privilégiée *տնտ.* ազատ՝ հատուկ տնտեսական գոտի, մաքսազերծ գոտի  
 ~ de friction շփման գոտի  
 ~ frontalière սահմանային գոտի  
 ~ gazeée գազերով լիցքավորված կամ քիմիական հարձակման ենթարկված գոտի  
 ~ glaciale բեռնային գոտի  
 ~ industrielle արդյունաբերական գոտի  
 ~ d'influence ազդեցության ոլորտ  
 ~ interdite արգելված գոտի  
 ~ de libre échange ազատ առևտրի գոտի  
 ~ monétaire արժուքային գոտի  
 ~ morte մեռյալ գոտի  
 ~ neutre չեզոք գոտի  
 ~ occupée գրավյալ գոտի  
 ~ d'opération(s) ռազմական գործողությունների գոտի  
 ~ de relative stabilité հարաբերական կայունության գոտի  
 ~ sinistrée աղետի գոտի  
 ~ sterling ստեռլինգի գոտի
- zoné**, -e *adj* գոտիների բաժանված



**ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ՖՐԱՆՍԵՐԵՆ – ՀԱՅԵՐԵՆ**  
հասարակական-քաղաքական բառարան

**MYRA KARAPÉTIAN**

**DICTIONNAIRE DES POLITIQUES  
PUBLIQUES FRANÇAIS-ARMÉNIEN**

Սրբագրիչ՝ **Վ. Գերձյան**  
Համ. ձևավորումը՝ **Ա. Աղուզումցյանի**

Պատվեր՝ 38: Տպաքանակ՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

---

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52

2-38	11-38	21-38	31-38
	12-38	22-38	32-38
3-38			
	13-38	23-38	33-38
4-38			
	14-38	24-38	34-38
5-38			
	15-38	25-38	35-38
6-38			
	16-38	26-38	36-38
7-38			
	17-38	27-38	37-38
8-38			
	18-38	28-38	38-38
9-38			
	19-38	29-38	39-38
10-38			
	20-38	30-38	40-38